ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՅՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

V

ԵՐԵՎԱՆ 2008


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՅՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Սաֆրաստյանի
ընդհանուր խմբագրությամբ

V

11
A 96333



Երևան 2008

Национальная Академия Наук
Республики Армения
Институт востоковедения

ТЮРКОЛОГИЧЕСКИЕ И ОСМАНИСТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Под общей редакцией
Рубена Сафрастяна

V

Ереван 2008

National Academy of Sciences
of the Republic of Armenia
Institute of Oriental Studies

TURCIC AND OTTOMAN STUDIES

Editor:
Ruben Safrastyan

V

Yerevan 2008

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Ռուբեն Աֆրաստյան (նախագահ), Իակովոս Զ. Ակտսօգլու (Հունաստան), Մանվել Զուլալյան, Սերգեյ Մուրտուզալիև (Ռուսաստան), Միխայիլ Ավանիձե (Վրաստան), Արման Կիրակոսյան, Աշոտ Մելքոնյան, Ալեքսանդր Աֆարյան, Տաթևիկ Մանուկյան (պատասխանատու քարտուղար), Արտակ Շաքարյան (պատասխանատու քարտուղար)

Editorial Board:
Ruben Safrastyan (editor in chief), Jakovos Z.Aktsoglou (Greece), Manvel Zulalyan, Sergey Murtuzaliyev (Russia), Mikhail Svanidze (Georgia), Arman Kirakosyan, Ashot Melkonyan, Aleksandr Safaıyan, Tatevik Manukyan (responsible for the volume), Artak Shakaryan (responsible for the volume)

Սույն հատորը հրատարակվում է
ՌՈՒԲԵՆ ՍՈՒՐԵՆՅԱՆԻ և ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ մեկենասությամբ

«Թյուրքագիտական եվ օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարի V հատորում ընդգրկված հոդվածներում լուսաբանվում են Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների պատմության ու պատմագիտության մի շարք գիտական հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ:

Նախատեսվում է հասարակագետների, դիվանագետների, ուսանողների համար: Օգտակար կլինի նաև Թուրքիայի պատմությամբ, բանասիրությամբ, ներքին ու արտաքին քաղաքականությամբ, ինչպես նաև Հայկական հարցի ու ցեղասպանության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների Հայաստանի և արտերկրի լայն շրջանակների համար:

www.orient.sci.am

ISSN 1829-1430

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

OTTOMANICA

Վահան Բայբուրդյան
Թուրքական հարցը իրանա-եվրոպական քաղաքական հարաբերություններում (XVI-XVII դարերում) 12

Միխայիլ Սվանիձե (Վրաստան)
Սուլեյման I-ի առաջին արշավանքն Իրանի դեմ 1533-1535թթ. և էրզրումի փաշալըքի ստեղծումը 35

Սերգեյ Մուրտուզալիև (Ռուսաստան)
"Օսմանյան ժամանակաշրջանի բուլղարագիտությունը" XVIII դարի "Ռուսական պատմություններում" 37

Ռուբեն Աֆրաստյան
Օսմանյան քաղաքականությունը քրիստոնյաների հանդեպ թանզիմաթի շրջանում. նոր միտումներ 56

Անուշ Հովհաննիսյան
Ահմեդ Ջևդեթի "Մարուզաթը" որպես թանզիմաթի ուսումնասիրման աղբյուր 78

TURCICA

Վլադիմիր Գուսակով (Ուկրաինա)
VI-VII դդ. թյուրքերի կենտրոնասիական ծավալումը և նրանց փոխհարաբերությունների զարգացումը տեղական բնակչության հետ 85

Արշակ Կարապետյան
Թուրքիայի Հանրապետության պետական կարգի հիմունքների ամրագրումը 1924թ. Սահմանադրության մեջ 92

Վահրամ Տեր-Մաթևոսյան
Քեմալիզմի հանրապետական արմատների շուրջ. զարգացման վաղ փուլը 97

Աշոտ Աղոմոնյան
Թուրքական պատմագիտական համագումարների կազմակերպման նպատակների շուրջ 118

Ռուբեն Մելքոնյան
"Ունեցվածքի հարկը" կամ տնտեսության "թուրքացման" քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում 127

Արթուր Դումանյան
Բանակ-հասարակություն փոխհարաբերությունները Թուրքիայում 1960-70-ական թթ. 133

Լեւոն Հովսեփյան
Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 1990-ական թթ. որպես եվրասիական քաղաքականության կարեւորագույն ուղղություն. ձեռքբերում, թե՞ ձախողում — 158

Ժաննա Անդրեասյան
Ժողովրդավարական զարգացումները Թուրքմենստանում. հեռանկարների վերլուծություն — 177

Հասմիկ Ասատրյան
Թուրքերենի արևելյան խմբի բարբառները — 186

Սիրանույշ Գալշոյան
Գոյականականզմ բառաբարդումները Յաշար Քեմալի ստեղծագործություններում — 196

Քնարիկ Միրզոյան
Ժամանակակից թուրքերենի հետադրությունների կառուցվածքային և իմաստաբանական առանձնահատկությունները — 210

ARMENO-TURCICA

Հովհաննես Ջատիկյան
Սևրի պայմանագիրը Ն.Ադոնցի և Ա. Ջիվելեգովի գնահատմամբ — 217

Հայկարսում Նահապետյան
Թուրք արձակագիր Օրհան Փամուքը և հայկական հարցը — 225

Հասմիկ Ատեփանյան
Հայատառ թուրքերեն գրականությունը և հայ-թուրքական գրակա ն կապերն Օսմանյան կայսրության XIX դարում — 232

Լուսինե Ահակյան
Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում — 243

СОДЕРЖАНИЕ

OTTOMANICA

Ваган Байбурдян
Турецкий вопрос в ирано-европейских политических отношениях (XVI-XVII вв.) 12

Михаил Сванидзе (Грузия)
Первый поход Сулеймана I против Ирана 1533-1535 гг. и создание Эрзурумского пашалыка 35

Сергей Муртузалиев (Россия)
«Болгаристика османского периода» в «Российских историях» XVIII в. 37

Рубен Сафрастян
Османская политика по отношению к христианам в период танзимата: новые тенденции 56

Ануш Оганесян
"Марузат" Ахмеда Джевдета как источник для изучения таизимата 78

TURCICA

Владимир Гусаков (Украина)
Центральноазиатская экспансия тюрок в VI-VII вв., эволюция их взаимоотношений с местным населением 85

Аршак Карапетян
Укрепление основ государственного строя Турецкой Республики в Конституции 1924 года 92

Ваграм Тер-Матевосян
О республиканских корнях кемализма: ранняя фаза эволюции 97

Ашот Согомонян
О целях организации Турецких исторических конгрессов 118

Рубен Мелконян
"Налог на имущество" или политика туркизации экономики в республиканской Турции 127

Артур Думанян
Отношения между армией и обществом в Турции в 1960-70-х годах 133

Левон Овсепян
Политика Турции в Центральной Азии в 1990-х годах как важнейшее направление евразийской политики: успех или неудача? 158

Жанна Андреасян
Тенденции демократического развития в Туркменистане: анализ перспектив 177

Асмик Асатрян
Диалекты восточной группы турецкого языка 186

Сирануйш Галшоян
Номинативные комплексы в произведениях Яшара Кемаля 196

Кнарик Мирзоян
Структурно-семантические особенности послелогов в современном турецком языке 210

ARMENO-TURCICA

Ованнес Затикян
Севрский договор по оценке Н.Адонца и А.Дживелегова 217

Айкарам Наапетян
Турецкий прозаик Орхан Памук и Армянский вопрос 225

Асмик Степанян
Армянописная турецкая литература и армяно-турецкие литературные связи в Османской империи в XIX веке 232

Лусине Саакян
Армянские песни насильно исламизированных амшенцев как воспоминание об их идентичности и ее проявление 243

CONTENTS

OTTOMANICA

Vahan Bayburdyan
The Turkish Issue in the Iranian-European Political Relations (16-17th Centuries) 12

Mikhail Svanidze (Georgia)
The First Campaign of Suleyman I against Iran in 1533-1535 and the Formation of Erzurum Pashalik 35

Sergey Murtuzaliyev (Russia)
«Bulgarian Studies of the Ottoman Period» in the «Russian Histories» of the 18th Century 37

Ruben Safrastyan
Ottoman Policy towards Christians during Tanzimat: New Tendencies 56

Anush Hovhannisyan
«Maruzat» of Ahmed Cevdet as a Source for Study of Tanzimat 78

TURCICA

Vladimir Gusakov (Ukraine)
Central Asian Expansion of Turks in 6-7th Centuries, and the Evolution of Interrelations with Local Population 85

Arshak Karapetyan
The Consolidation of the State System Foundations of the Republic of Turkey in the Constitution of 1924 92

Vahram Ter-Matevosyan
On the Republican Origins of Kemalism: The Early Phase of Its Evolution 97

Ashot Soghomonyan
On the Purposes of Organizing of the Turkish Historiological Congresses 118

Ruben Melkonyan
"Property Tax" or the Policy of "Turkization" of Economy under Republican Turkey 127

Artur Dumanyan
The Army-Society Relations in Turkey in 1960-70's 133

Levon Hovsepyan
The Central Asian Policy of Turkey as the Most Important Direction of Eurasian Politics in 1990's: Success or Failure? 158

Zhanna Andreasyan
Democratic Developments in Turkmenistan: the Analysis of Perspectives 177

Hasmik Asatryan
The Dialects of the Eastern Group of the Turkish Language 186

Siranuysh Galshoyan
Nominative Complexes in Yashar Kemal's Works 196
Knarik Mirzoyan
The Structural and Semantic Features of Postpositions in Contemporary Turkish Language 210

ARMENO-TURCICA
Hovhannes Zatikyan
Sevres Treaty according to the Assessements of N.Adonts and A.Jivelegov 217
Haykaram Nahapetyan
Turkish Prosaist Orhan Pamuk and the Armenian Issue 225
Hasmik Stepanyan
Turkish Literature in Armenian Characters and Armenian-Turkish Literary Relations in the Ottoman Empire in 19th Century 232
Lusine Sahakyan
The Armenian Songs of Forcefully Muslimizied Hemshinlis as a Memory and a Representation of Their Identity 243

OTTOMANICA

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԻՐԱՆԱ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ)

1453թ. թուրք-օսմանների կողմից Կ.Պոլսի գրավումը սկզբնավորեց նոր փուլ համաքրիստոնեական քաղաքական մտածողության մեջ: Այսուհետև այդ քաղաքի ազատագրման գաղափարը դառնում էր քրիստոնյա աշխարհի արտաքին քաղաքականության գերակա խնդիրներից մեկը: Բյուգանդական մայրաքաղաքի գրավումը թուրքերի առջև բաց արեց նոր, բացառիկ բարենպաստ հնարավորություններ արևմուտքում հետագա նվաճումների համար: Օսմանյան բանակները անկասելի թափով շարժվում էին առաջ: Սարսափը պատել էր ամբողջ Եվրոպային: Քրիստոնեական աշխարհի վրա սուրացող սպառնալիքը անխտիր համակել էր բոլոր պետություններին:

Իրենց տիրապետությունը հաստատելով գրեթե ողջ Բալկանյան թերակղզու վրա, օսմանյան սուլթանները սկսեցին զորաշարժ կատարել նաև դեպի արևելք՝ Անատոլիայի խորքերը, դեպի Անդրկովկաս ու Ատրպատական դուրս գալու հեռահար ծրագրով: Կարծես պատմական անհրաժեշտության տրամաբանությամբ XVI դարի հենց արշալույսին քաղաքական ասպարեզ էր իջնում մի նոր պետական կազմավորում՝ Սեֆևիների իրանական պետությունը, որը շուտով դարձավ իրանական ազգային միասնական մի հզոր տերություն, իր վրա ստանձնելով մի դժվարին առաքելություն՝ թուրք-օսմանների դեպի արևելք ծավալման կասեցումը: Տարածաշրջանային այդ նոր ուժային կենտրոնը կոչված էր նաև խաղալու մերձավորարևելյան կայունությունն ապահովող գործոնի դեր մի միջավայրում, որը հանդիսանում էր ազգերի ու ժողովուրդների ներհակ շահերի, հետևաբար ներքին անվերջանալի պատերազմների ու խռովությունների ասպարեզ:

Ապացուցված իրողություն է, որ Սեֆևյան պետության ստեղծումով փաստորեն Իրանը փրկվեց նրան սպառնացող երկակի, գուցե և եռակի վտանգից. արևմուտքից Օսմանյան Թուրքիայի, արևելքից Շեյբանիների ուզբեկ-սուննիական պետության և հարավից՝ Պարսից ծոցի շրջանից պորտուգալական-իսպանական և անգլիական գաղութացման սպառնալիքից:[1]

Բնական է, որ դեպի իրենց հզորության գագաթը անզուսպ կերպով մագլցող երկու հարևան պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի խաղաղ համակեցությունը դառնում էր ուղղակի անհնարին: Հետևաբար Մերձավոր ու Միջին Արևելքում բացվում էր նոր պատերազմների ու բախումների դուռ, որն այս անգամ իսլամ-քրիստոնեություն հակամարտության արդյունք չէր, այլ կրում էր ներկրոնական առճակատման բնույթ իսլամի երկու ուղղությունների՝ սուննիզմի և շիիզմի միջև: Հայտնի է, որ իրանական ժողովրդի դարավոր պայքարը նվաճողների,

մասնավորապես երկրում հաստատված սուննիական դինաստիաների դեմ, որպես կանոն, ընդունել է սուննիների և շիաների միջև կրոնական պայքարի բովանդակություն: Հետևաբար պատահական չէ, որ իսլամի շիա ուղղությունը իր պետության կրոն հռչակած եռանդուն ու վճռական Սեֆյան առաջին շահ Իսմայիլ I (1502-1524) մարտահրավեր էր նետել ողջ սուննիական իսլամին:[2] Այսպիսով, մահմեդական աշխարհը ներքաշվում էր անվերջանալի ու արյունոտ քաղաքական-կրոնական պատերազմների հորձանուտը: Շահ Իսմայիլը հայտարարել էր, որ գրավելու է իսլամի առաջին սրբավայր Մեքքան: Նրա ղզլբաշական հեծելազորը փոթորկի նման անցնում էր Անատոլիայի տարածքով՝ ճանապարհներին ասպատակ սփռելով և թափանցելով շատ հեռուները: Կասկածից վեր է, որ կրոնական դրոշների ներքո կողմերի միջև ծավալված պայքարը իրականում ուներ քաղաքական ենթահող: Իրանա-թուրքական զինված առճակատումն ընթանում էր տարածքների՝ Անդրկովկասի, Ատրպատականի, Մերձկասպյան շրջանի, Արաբական Իրաքի համար, ինչպես նաև արևելքը արևմուտքի հետ կապող ռազմավարական և միջազգային առևտրական ճանապարհների վրա հսկողություն սահմանելու համար:[3]

Ողջ մահմեդական և քրիստոնեական աշխարհը շունչները պահած սպասում էին այդ վիթխարի ուժերի միջև սկսված պայքարի հանգուցալուծմանը: Արևելքում Օսմանյան Թուրքիայի համար պայքարի երկրորդ ճակատի բացումը թուրքական նվաճողականության զոհ դարձած արևմուտքի քրիստոնյա պետություններին նոր հույսեր էր ներշնչում: Երկու ճակատով կռվելու վտանգավոր պարտադրանքից խուսափելու և ժամանակ շահելու միտումով սուլթան Բայազեդ II (1481-1512), որն իր հայեցողական ու միստիկ խառնվածքի պատճառով ստացել էր «դերվիշ» մականունը, 1504թ. շահ Իսմայիլի մոտ ուղարկեց մի դեսպանություն՝ շնորհավորելու համար նրա հաջողությունները: Սակայն դա չկանգնեցրեց ղզլբաշների շարժումը դեպի օսմանյան տարածքները: Ավելին, Ստամբուլը ակնառու կերպով տեսնում էր, որ ողջ Արևելյան և Հարավային Անատոլիան արձագանքում է շահ Իսմայիլի կրոնական կոչերին, որի հետևանքով շիական իսլամը գնալով լայն տարածում է գտնում Փոքր Ասիայում բնակվող թյուրքալեզու քոչվորական ցեղերի շրջանում: Օսմանյան տիրապետող շրջանների համար հատկապես ահեղ նախազգուշացում հանդիսացավ 1511թ. Փոքր Ասիայի արևելյան շրջաններում բռնկված հուժկու ապստամբությունը, որն ընթանում էր շահ Իսմայիլին և շիւսկանությունը պաշտպանելու կարգախոսների ներքո: Օսմանյան պետական դեմքերը համոզվեցին, որ նոր հայտնված արևելյան վտանգավոր հակառակորդը ձգտում է իրենց պետությունը նվաճել ոչ միայն «դրսից», այլև «ներսից», նրա դեմ կրոնական դրոշի ներքո քաղաքական շարժումներ հրահրելու ճանապարհով:

Օսմանյան գահը ստանձնած Սելիմ I (1512-1520) «Յավուզին» լուրջ անհանգստություն էր պատճառում Սեֆյան Իրանի արագ հզորացումը, նրա հարաճուն կերպով ուժեղացող նվաճողական ձգտումները և

քաղաքական կշռի մեծացումը ողջ տարածաշրջանում: Ուստի նա որոշում է ռազմական հանգուցալուծում տալ արևելքում իր պետության դեմ հառնած ահավոր սպառնալիքին: Որպես իր այդ վճռի գաղափարական հիմնավորում սուլթանը առաջ քաշեց ուղղադավան իսլամի պաշտպանության վարկածը «հերձվածող» շիաների հարձակումներից: Կրոնական պատերազմի կարգախոսների ներքո Ատամբուլը օսմանյան վիթխարի ռազմական մեքենան շարժեց Սեֆյան Իրանի դեմ: 1514թ. օգոստոսի 23-ին Չալդրանի դաշտավայրում տեղի ունեցած արյունոտ ճակատամարտում թեև պարսիկները կռվեցին անվեհեր խիզախությամբ, սակայն տանուլ տվեցին ճակատամարտը: Դրա հետևանքով Սեֆյան պետության նվաճողական քաղաքականության թափը արևմտյան ուղղությամբ կոտրվեց: Խորտակվեցին շահ Իսմայիլի այն հույսերը, որ ինքը կկարողանա իր պետության սահմաններն ընդարձակել Փոր Ասիայի և Միջագետքի ուղղությամբ: Ճակատամարտը նաև շրջադարձային նշանակություն ունեցավ թուրք-իրանական հարաբերություններում այն առումով, որ Իրանը այսուհետև բավականին տևական ժամանակ հանդես էր գալու պաշտպանվողի, իսկ Օսմանյան Թուրքիան հարձակվողի դերում: Սեֆյան պետությունը հասկացավ, որ գործ ունի ուժեղ և ահարկու հակառակորդի հետ, որի դեմ դժվար է մեն-մենակ, առանց դաշնակիցների գոյության պայքար մղել: Այդ գիտակցված իրողությունը, սակայն, շահ Իսմայիլ I օրոք գործնական կենսագործում չստացավ, թեև Վենետիկի հանրապետությունը, որը մշտապես պատերազմներ էր մղում Օսմանյան Թուրքիայի դեմ, դեսպաններ էր ուղարկում շահի մոտ ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքար մղելու առաջարկներով:[4]

Կյանքի 37-րդ տարում 1524թ. հանկարծամահ եղած շահ Իսմայիլ I Սեֆյան գահի վրա փոխարինեց Թահմազ (Թահմասպ) I (1524-1576): Սրա օրոք թուրք-իրանական պատերազմները դարձան շարունակական: Միաժամանակ կրկին ակտիվացել էին նաև Միջին Ասիայի ուզբեկական խանությունները, որոնք համարյա անընդմեջ արշավանքներ էին կազմակերպում դեպի Սեֆյան պետության արևելյան տարածքները: Նման իրադրության պայմաններում Սեֆյան արքունիքում սկսել էին գիտակցել, որ թուրքական հարցում առկա է իրանա-ռուսական շահերի ընդհանրություն, հետևաբար նաև համագործակցության հնարավորություն: Դա մի ժամանակաշրջան էր, երբ ստեղծվում էր կենտրոնացված ռուսական պետությունը: Խոսելով Իվան III (1462-1505) ժամանակաշրջանի Ռուսաստանի մասին Կ. Մարքսը գրում էր. «Ապշահար Եվրոպան, որը Իվանի կառավարման սկզբում հազիվ թե գիտեր Մոսկովիայի գոյության մասին... զարմացած էր իր արևելյան սահմանների մոտ հսկայական կայսրության անակնկալ հայտնվելու առթիվ»:[5]

Երիտասարդ ու զարգացման ավյունով լի այդ պետությունը, որը ձգտում էր բոլոր կողմերով ծավալվել ու տարածվել, զրկված էր սակայն Կասպից ծով դուրս գալու ելքից: Այդ խնդրի լուծման ճանապարհին Մոսկովյան պետությունը իր արտաքին քաղաքականության առաջնահերթություննե-

րից մեկն էր համարում իր հիմնական ջրային զարկերակի՝ Վոլգա գետի ազատագրումը Կազանի և Աստրախանի թաթարական խաների տիրապետությունից: 1552թ. Կազանի, իսկ 1556թ. Աստրախանի խանությունների նվաճմամբ Ռուսաստանը ապահովեց իր ազատ ելքը դեպի Կասպից ծով:

Օսմանյան Թուրքիան և նրա դաշնակիցները՝ Մերձվոլգյան և Ղրիմի թաթարները, կովկասի լեռնականները և առհասարակ դավանակից օսմանցիների հետ կապված այդ ընդարձակ երկրամասի սուննի մահմեդականները ծայրահեղ թշնամանքով ընդունեցին ռուսական պետության առաջխաղացումը դեպի հարավ, դրա մեջ տեսնելով լուրջ սպառնալիք իրենց ռազմավարական հեռահար ծրագրերին:[8]

Օսմանյան պետությանը նաև մեծ մտահոգություն էր պատճառում այն հավանականությունը, որ շահերի միասնության հիմքի վրա Սեֆյան Իրանի և Ռուսաստանի միջև կարող է կնքվել հակաթուրքական դաշինք: Ատամբուլի համար ոչ պակաս մղձավանջային իրողություն էր նաև այդ երկու երկրների միջև անմիջական առևտրական կապերի հաստատման հավանականությունը, որի գործնական իրականացման դեպքում Փոքր Ասիայի վրայով անցնող թուրքական տարանցիկ քարավանային ուղին կարող էր դուրս մղվել ավելի կարճ ու ձեռնտու Վոլգա-Կասպյան առևտրական ճանապարհի կողմից, հսկայական վնասներ հասցնելով օսմանյան գանձարանին:

Այս բոլորի ետնախորքի վրա միանգամայն պարզ է դառնում այն իրողությունը, որ ողջ XVI-XVII դարերի ընթացքում Սեֆյան Իրանի դեմ մղած իր անընդմեջ պատերազմների ժամանակ թուրքական զինվորականությունը ռազմական հաղթանակների մեջ տեսնում էր նաև Ռուսաստանի առաջխաղացումը դեպի հարավ արգելակելու և կանխելու միջոց:

Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով, դեռևս շահ Իսմայիլ I կենդանության ժամանակ, 1521թ., Սեֆյան արքունիքը Մոսկվա էր ուղարկել մի պատվիրակություն, որի խնդիրն էր ռուսական կառավարությունից ձեռք բերել թնդանոթներ, զենք ու սպառազինություն, ինչպես նաև զինագործ վարպետներ: Ի դեպ, դա ռուս-իրանական դիվանագիտական շփման առաջին դեպքն է, որն արձանագրված է ռուսական աղբյուրներում՝: Իսկ Սեֆյան և Մոսկովյան պետությունների միջև դեսպանների մակարդակով դիվանագիտական առաքելությունների առաջին փոխանակությունը տեղի է ունեցել 1552-1553 թվականներին[8], երբ շահ Թահմասպ I կողմից որպես դեսպան Մոսկվա է ուղարկվում Սեյիդ Հուսեյնը: Նրա խնդիրն էր նախ ռուսական պետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և ապա ռուսներին տեղեկացնելը, որ 1548թ. սուլթան Սուլեյման I Ղանունիի (1520-1566) զորքերը նոր արշավանք են սկսել Իրանի դեմ, նպատակ ունենալով զավթել ողջ Անդրկովկասը, իսկ ապա շարժվել դեպի Միջին Ասիա, դրանով իսկ սպառնալիք ստեղծելով ռուսական պետության հարավային սահմանների համար[9]:

Մոսկվայում իրանական դեսպանության նկատմամբ դրսևորեցին ուշադրության պատշաճ նշաններ: Պատճառը հասկալի էր. այդ ժամա-

նաև արդեն ռուսական պետության և Օսմանյան տերության շահերը անմիջականորեն բախվում էին: Թուրքերը իրենց նվաճողական քաղաքականությունն ուղղել էին ոչ միայն հարավ-արևելյան Եվրոպայի , այլև ռուսական պետության դեմ: Սուլթանի հրամանով Ղրիմի խանությունը ավերիչ ասպատակաթյան էր ենթարկում ռուսական հարավային հողերը, երբեմն հասնելով մինչև Ռյազան և Մոսկվա, և ստրկության քշելով տասնյակ հազարավոր ռուս մարդկանց և կրակի ճարակ դարձնելով գյուղերն ու քաղաքները: Այդ արշավանքների հիմնական նպատակակետերից մեկը Աստրախանն էր, որի կորուստը արգելք էր ստեղծում օսմանյան պետության լայնահուն ստրատեգիական ծրագրերի առջև Դնեպրից մինչև Ուրալ Մոսկովյան պետության սահմանները օղակի մեջ վերցնելու ուղղությամբ: Աստրախանը պետք էր թուրքերին նաև Միջին Ասիայի դավանակից խանությունների հետ ուղիղ հաղորդակցություն ունենալու, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի վրայով դեպի Իրան ճանապարհ բաց անելու համար, որպեսզի թիկունքից հարվածեն Իրանին[10]:

Մոսկվայում հիանալի հասկանում էին, որ Սեֆյան Իրանի համար ստեղծվել է վերին աստիճանի ծանր վիճակ. արևմուտքից նրան սպառնում էր Օսմանյան Թուրքիան, արևելքից ուզբեկ շեյբանիները, հյուսիսից սուլթանի վասալներ Ղրիմի խանը, նողայական թաթարները, Դաղստանի կազիկումուխների (կազիկումիքների) տիրակալ Շամխալը և այլ թշնամիներ: Այդ թշնամական շրջապատման և քաղաքական մեկուսացման վիճակից դուրս գալու համար շահը բնականաբար որոշակի հույսեր էր կապելու Մոսկովյան պետության հետ[11]:

1555թ. մայիսի 29-ին Ամասիայում ստորագրված իրանա-թուրքական հաշտության պայմանագիրը թեև միառժամանակ կողմերին բերեց խաղաղություն, սակայն այն չէր կարող բացառել նոր պատերազմների հնարավորությունը: Ուստի 1561 և 1568 թվականներին Թահմասպ I երկու նոր դեսպանություններ ուղարկեց Իվան IV մոտ[12]: Որպես պատասխան, Մոսկովյան կառավարությունը 1569թ. մայիսի 14-ին Իրան ուղարկեց Ալեքսեյ Խոզմիկովի դեսպանությունը, որն իր հետ տանում էր 100 թնդանոթ և 500 հրացան: Դա էական օգնություն էր շահին, քանի որ այդ ժամանակ իրանական բանակը համարյա չուներ հրետանի և հրազեն:

Մոսկվայի այդ քայլը Ստամբուլում դիտվեց որպես իր հակառակորդ Իրանին ռազմական օգնության ցուցաբերում: Դա սրեց մոսկովյան կառավարության հարաբերությունները սուլթան Սելիմ II (1566-1574) և Ղրիմի խան Դևլեթ Գիրեյի հետ: 1569թ. վերջիններս փորձեցին զինված ճանապարհով ռուսներից խլել Աստրախանը: Ըստ էության դա Օսմանյան Թուրքիայի առաջին պատերազմն էր Ռուսաստանի դեմ[13]: Այդ պատերազմի նախաձեռնող մեծ վեզիր Սոքոլլու-փաշան օսմանյան պետական գործիչների մեջ առաջիններից մեկն էր, որը սկսել էր գիտակցել ռուսական վտանգի ահագնությունը: Այն չեզոքացնելու համար նա մշակել էր գործողությունների մի վիթխարածավալ ծրագիր, որի վերջնական նպատակն էր դադարեցնել ռուսների ծավալումը դեպի հարավ և միաժամանակ

նպաստել օսմանցիների առաջխաղացմանը դեպի արևելք: Սոքոլլուն ծրագրել էր Դոնի և Վոլգայի միջև կառուցել մի ջրանցք[15], որը հնարավորություն կտար Սև ծովը (որն արդեն դարձել էր թուրքական ներքին լիճ) միացնել Կասպից ծովի հետ: Նպատակը պարզ էր՝ շրջանցիկ ճանապարհով նոր ուղի բացել դեպի Կովկաս, Իրան և Կենտրոնական Ասիա: Սոքոլլուի ծրագիրը, սակայն, մատնվեց կատարյալ ձախողման: Ռուսների կողմից հանդիպելով հուժկու դիմադրության, թուրքական բանակը կորցրեց իր բարոյական ոգին և դիմեց խուճապահար փախուստի դեպի Ղրիմ, անծայրածիր տափաստաններում կորցնելով մեծ թվով յանիչարիների: Այդ անհաջողությունից հավասարակշռությունը կորցրած սուլթանը հրամայեց Դևլեթ Գիրեյին ավերիչ ասպատակ սփռել ռուսական հողերում: 1571թ. իրենց հետևում թողնելով մահ և ավերածություն, թաթարները հասան մինչև Մոսկվա, հրո ճարակ դարձնելով ողջ մայրաքաղաքը[16]:

1570թ. սկսվել էր թուրք-վենետիկյան հերթական մի պատերազմ, որի ընթացքում Հռոմի պապի նախաձեռնությամբ կազմավորվեց «Սրբազան լիգա» թուրքերի դեմ պատերազմ մղելու համար, որին անդամակցեցին Իսպանիան, Մալթան, Ջենովան, Սավոյան և Իտալիայի մի շարք այլ պետություններ: Հատկապես 1571թ. հոկտեմբերի 7-ին Լեպանտո քաղաքի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտում «Սրբազան լիգայի» միացյալ նավատորմը ջախջախեց թուրքերին:

Այդ պատերազմի ընթացքում Վենետիկի հանրապետությունը փորձում էր հանձինս Սեֆյան Իրանի օսմանցիների թիկունքում ձեռք բերել դաշնակից: Այդ առաքելությամբ 1571թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին Սեֆյանների մայրաքաղաք Ղազվինում էին գտնվում վենետիկյան երկու դեսպանություններ, որոնք շահին առաջարկեցին ռազմական դաշինք[17]: Սակայն վախենալով Սելիմ II կողմից Իրանի նկատմամբ նոր արշավանք կազմակերպելու հավանականությունից, շահ Թահմասպ I մերժեց այդ առաջարկը:

1577թ. հունվարի 1-ին ավարտելով պատերազմը Հաբսբուրգների գերմանական կայսրության հետ, այնուամենայնիվ 1578թ. Օսմանյան Թուրքիան հերթական պատերազմը սկսեց Սեֆյան պետության դեմ: Լալա Մուստաֆա փաշայի 100 հազարանոց բանակը Ղրիմի թաթարների օգնությամբ երեք խոշոր պարտությունների մատնելով սեֆյաններին, ռազմակալման ենթարկեց Վրաստանը, Ատրպատականը և Շիրվանը, դուրս գալով Կասպից ծովի ափերը: Իսկ արևելքում ուզբեկները գրավեցին Խորասանը, Հերաթն ու Ահսթանը: Ստեղծված պատեհ առիթը ձեռքից բաց չթողեցին նաև հինդուսները, գրավելով Ղանդահարը: Այսպիսով, 1578-1590թթ. Սեֆյան պետության հետ հաջող պատերազմի հետևանքով օսմանցիներին հաջողվեց կտրել Վոլգա-Կասպյան առևտրական ճանապարհը, որն անմիջականորեն դիպչում էր և՛ Սեֆյանների և՛ Մոսկովյան պետության շահերին: Ուստի այս երկու պետությունները շահագրգռված էին միավորելու իրենց ռազմական ջանքերը ընդհանուր թշնամու դեմ:

ՀԻՄՆԸՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ընդհուպ մինչև XVII դարի 30-ական թվականների վերջը հենց սա էր ընկած նրանց դիվանագիտական հարաբերությունների հիմքում:

Սեֆյան գահը ժառանգած շահ Սուլթան Մոհամմադ Խուդաբենդեն (1577-1587) եռանդուն փորձեր էր անում նախապատերազմյան ստատուս-քվոյի հիմքի վրա պայմանավորվելու թուրքերի հետ՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ: Այդ նպատակով նա 1579-1582թթ. սուլթան Մուրադ III (1574-1595) մոտ ուղարկեց երեք դեսպանություններ, որոնք բոլորն էլ որևէ արդյունքի չհանգեցրին[17]: Ընդհակառակը, հրաժարվելով հետագա բանակցություններից, թուրքերը միանգամից երկու բանակ շարժեցին Իրանի վրա Սիքալ և Ֆերհադ փաշաների հրամանատարությամբ[18]:

Սեֆյան պետության համար ստեղծված այդ դժվարին օրերին 1579թ. շահ Խուդաբենդեն Վենետիկ ուղարկեց մի դեսպանություն Հաջի Մոհամմադի գլխավորությամբ, խնդրելով ռազմական օգնություն[19], մի բան, որ դրանից ութ տարի առաջ շահ Թահմասպ I մերժել էր Վենետիկի սենատին, նույնիսկ չընդունելով նրա դեսպաններին:

1586թ. գարնանը և ամռանը նոր պարտություններ կրելով Օսմանյան կայսրությունից և արևելքում ուզբեկներին զիջելով նոր տարածքներ, կիսակույր և անընդունակ շահ Խուդաբենդեն, գիտակցելով, որ Լիվոնյան պատերազմի ավարտից հետո Մոսկովյան պետությունը այլևս չի կարող համակերպվել թուրքերի ներկայության հետ Կասպից ծովի շրջանում, ռազմական դաշինքի խնդրանքով որոշեց դիմել Մոսկվային: 1586թ. ամռանը նա իր մերձավորներից մեկին՝ Ղադի-բեկին ուղարկեց Ֆյոդոր Իվանովիչ ցարին հանձնելու իր նամակը, որտեղ նա հավաստիացնում էր, որ ինքը անկեղծորեն ցանկանում է Մոսկովյան պետության հետ ունենալ բարեկամական հարաբերություններ: Շահի ներկայացուցիչը նաև բանավոր հանձնարարական ուներ պարզելու, թե արդյոք ռուսները կարող են ռազմական օգնություն ցուցաբերել Իրանին, կամ համատեղ ռազմական գործողություններ իրականացնել Ատրպատական և Անդրկովկաս ներխուժած օսմանցիների դեմ: Թեև մոսկովյան կառավարությունը շեշտված ուշադրության նշաններ դրսևորեց շահի ներկայացուցչի նկատմամբ, սակայն գիտակցում էր, որ ռազմական դաշինքը կամ թեկուզ ռազմական համագործակցությունը Սեֆյան պետության հետ կնշանակեր խզում Օսմանյան կայսրության հետ, ինչին Ռուսաստանը պատրաստ չէր, ուստի դիմեց ծամծմված ու անորոշ պատասխանի մարտավարությանը: Այդ բոլորով հանդերձ, Մոսկովյան պետությունը շարունակում էր լուրջ ուշադրություն դարձնել արևելյան գործերի նկատմամբ: Դրա վկայությունն է հանդիսանում այն, որ Մոսկվայում Ղադի-բեկի առաքելության ավարտից անմիջապես հետո 1588թ. Իրան ուղարկվեց պատասխան դեսպանություն Գ.Բ. Վասիլչիկովի գլխավորությամբ: Բորիս Գոդունովը, որը սկսած 1587 թվականից փաստորեն ինքն էր կառավարում երկիրը, հրահանգավորել էր իր դեսպանին, նախ Սեֆյան պետության հետ հաստատել կայուն և բարիդրացիական հարաբերություններ (այդ թվում նաև

առևտրական) և երկրորդ՝ հստակ խոստումներ չտալ, բայց և չմերժել շահական առաջարկը Թուրքիայի դեմ համատեղ պայքար մղելու հարցում: Բանակցությունների այս ֆորմատը վկայում էր այն մասին, որ Մոսկվայում գիտակցում էին, որ վաղ թե ուշ ռազմական բախումը Օսմանյան կայսրության հետ անխուսափելի է, ուստի չէին ցանկանում կորցնել ապագա դաշնակցին, նրան օգտագործելու պահը վերապահելով իրենց:

Մինչդեռ Սեֆյան պետության վիճակը գնալով դառնում էր ավելի ու ավելի անհուսալի: Օսմանցիների դեմ պատերազմում նա շարունակում էր կրել անհաջողություններ: Երկու ճակատով կռվելը այդ պետության համար պարզապես ուժից վեր մի բան էր: Արևելքում համարյա ողջ Խորասանը Մեշհեդ քաղաքով գրավելով հանդերձ, որտեղ գտնվում էր շիաների համար սրբազան իմամ Ռեզայի դամբարանը, 1588թ. կեսերին ուզբեկները գրավեցին նաև Նիշապուրը և Հերաթ քաղաք-ամրոցը: Արևմուտքից օսմանյան բանակը Ֆերհադ-փաշայի հրամանատարությամբ առաջ էր շարժվում դեպի Անդրկովկասի խորքերը: 1588թ. հոկտեմբերին Գյանջան գրավելուց հետո թուրքական զորքերը ուղղություն վերցրին դեպի Ղարաբաղ[10]: Կասպից ծովի ափամերձ Գիլանի հարուստ նահանգը, որը Մազանդարանի հետ միասին հուն-մետաքսի արտադրության կարևորագույն կենտրոններից էր և որը մեծ եկամուտ էր բերում շահական գանձարանին, Ահմեդ-խան Լարինջանցու ապստամբության հետևանքով՝ անջատվեց Սեֆյան պետության կազմից:

Արտաքին քաղաքական անհաջողություններին գումարվում էր նաև ներքին անկայունությունը: Նման պայմաններում Սեֆյան գահին բազմեց Աբբաս I (1587-1629): Սա վերին աստիճանի զգույշ, խորամանկ, կամային հատկություններով օժտված, ինքնավստահ, բավարար չափով հեռատես ու նպատակասլաց քաղաքական ու ռազմական գործիչ էր:

1588թ. հուլիս-օգոստոսին դեսպանորդի մակարդակով Սեֆյան պետության մայրաքաղաք Ղազվին ժամանեց սուլթանի ներկայացուցիչը, շահ Աբբասին առաջարկելով հաշտություն: Որպես նախապայման թուրքական դեսպանորդը առաջ քաշեց շահի վեցամյա եղբորորդի Հայդար Միրզային սուլթանին պատանդ հանձնելը: Շահն անմիջապես ընդունեց այդ պայմանը, քանի որ միևնույնն է, նա որոշել էր ոչնչացնել իր այդ ազգականին, նրան համարելով գահի վտանգավոր հավակնորդ: 1589թ. շահական արքունիքը մի մեծ դեսպանություն ուղարկեց Ստամբուլ հաշտության կնքելու համար: Չևականորեն այն ղեկավարում էր Հայդար Միրզան, սակայն իրականում գլխավոր անձը, որը լիազորված էր խաղաղության պայմանագիր կնքելու համար մեհդի ղուլի-խան Ուսթաջլուն էր, որին կոչում էին նաև Չևուշլու[11]: Դեսպանական շքախումբը բաղկացած էր 1000 հոգուց, շեշտելու համար Սեֆյան պետության հզորությունն ու պետական վարկը[12]: Սակայն իրականում դեսպանությունը օսմանյան մայրաքաղաք էր մեկնում հաշտություն խնդրելու համար:

Որոշ ժամանակ անց, 1589թ. Աբբաս I-ը Մոսկվա ուղարկեց մի նոր դեսպանություն Բուդաղ-բեյի և Անդի-բեյի գլխավորությամբ[13]: Այս դես-

պանության հիմնական նպատակն էր իրանա-թուրքական խաղաղության պայմանագիր կնքելու բանակցությունների ակտիվ փուլում ազդել թուրք դիվանագետների վրա, որոնք վախենում էին Սեֆյանների դաշինքից Մոսկովյան պետության հետ: Շահական դեսպանությունը հանձնարարություն չուներ ռուսներին առաջարկելու իրանա-ռուսական ռազմական դաշինք ընդդեմ օսմանցիների: Նման դաշինքի գաղափարը տվյալ պահին իսպառ կորցրել էր իր հրատապությունը, քանի որ թուրք-իրանական բանակցությունները ուժգին թափով ընթանում էին առաջ: Շահի ձգտումն էր միայն ստանալ ռուսական պետության ռազմական օգնությունը, ինչպես նաև երաշխիքներ հյուսիսում իրանական սահմանների անձեռնմխելիության վերաբերյալ: Ընդ որում, այդ բոլորի դիմաց նա ակնարկ անգամ չէր անում փոխհատուցման վերաբերյալ:

Ստամբուլում բանակցություններն ավարտվեցին 1590թ. մարտի 21-ին իրանա-թուրքական պայմանագրի ստորագրմամբ, որն իրավամբ Սեֆյան պետության համար ստորացուցիչ ու ծանր պայմանագիր էր, որը թելադրված էր հաղթանակած թուրքերի կողմից: Այդ պայմանագրով Իրանը կորցնում էր Արևելյան Վրաստանը, Արևելյան Հայաստանը, Ատրպատական, Թաւրիզ, Մարաղա և Զենջան քաղաքներով հանդերձ, (բացի Արդեբիլից և Թալիշից), Արդելանը կամ Իրանական Քրդստանը, Լուրիսթանի մի մասը, Արաբական Իրաքը, կովկասյան ազերիներով բնակեցված երկրամասը և Շիրվանը[24]:

Շահը պարտավորվում էր նաև տարեկան 200 բեռ մետաքս վճարել օսմանցիներին որպես ռազմատուգանք, ինչպես նաև չմիջամտել թուրք-ռուսական հարաբերություններին, որն ըստ էության նշանակում էր թույլ տալ թուրքերին հիմնավորվելու Կասպից ծովի հյուսիս-արևմտյան ափերին: Սուլթան Մուրադ III պահանջով պայմանագրի մեջ մտցվեց նաև Սեֆյանների պետական ու կրոնական հեղինակությունը նվաստացնող մի կետ այն մասին, որ այսուհետև արքունի աղոթքի ժամանակ («խութբա») Իրանում շիաների կողմից չպետք է նզովքի ենթարկվեն սուննի թուրքերի կողմից պաշտելի առաջին երեք «բարեպաշտ» խալիֆները:

Հիշյալ պայմանագիրը ստորագրելու համար շահ Աբբասը դաժանորեն պատժեց Մեհդի ղուլի-խանին, նրան դատապարտելով մահվան, թեև այլ սպասելիք չէր կարող ունենալ, որովհետև որպես պարտված կողմ ինքն էր հաղթանակած թշնամուց խնդրել հաշտություն:

1590-ական թվականներին եվրոպական պետություններն և Ռուսաստանը ակտիվորեն քննարկում էին հակաթուրքական լիգա ստեղծելու հարցը, որի մեջ ենթադրվում էր, որ պետք է մտնեն Ավստրիան, Հռոմի պապը, Վենետիկը, Լեհաստանը և Ռուսաստանը: Ուշագրավ է, որ կայսր Ռուդոլֆ II և Բորիս Գոդունովը հանդես էին գալիս որպես ջատագովներ, որպեսզի Սեֆյան Իրանը ևս ներգրավվի այդ ռազմաքաղաքական դաշինքի մեջ: Ընդ որում Բորիս Գոդունովը այդ նպատակով Մոսկվայում նույնիսկ կազմակերպեց իրանական դեսպան Հաջի Խոսրովի և ավստրիական դեսպան Նիկոլայ Վարկաչի հանդիպումը: Այդ նույն նպատակով

Մոսկվայում որոշվեց Իրան ուղարկել Վ. Տյուֆյակինի և Ս. Եմելյանովի դեսպանությունը, որը Մոսկվայից դուրս եկավ 1597թ. մայիսին, սակայն այդպես էլ տեղ չհասավ, քանի որ երկու դեսպաններն էլ ճանապարհին վախճանվեցին և ի վիճակի չեղան իրականացնելու իրենց առաքելությունը[25]:

1590թ. կնքված Ստամբուլի հաշտության պայմանագրի ընձեռած խաղաղ դադարը շահ Աբբասը օգտագործեց երկրի վարչական ապարատը վերակառուցելու, ռազմական բարեփոխում իրականացնելու և դրա շնորհիվ մարտունակ բանակ ստեղծելու, ներքին ապստամբությունները ճնշելու և արևելքից ուզբեկներին վռնդելու համար: 1797-1798թթ. նա գլխովին ջախջախեց ուզբեկներին և հետ նվաճեց Խորասանը, Հերաթը, Մերվը և Սիսթանը: Դրանով իրանական պետության համար հնարավորություն ապահովվեց հանգիստ նախապատրաստվելու պատերազմի օսմանցիների դեմ, քանի որ երկու ճակատով կռվելու անհրաժեշտությունը այլևս վերացել էր: Թվում էր, թե այդ բոլորից հետո շահը վերստին կվերսկսի իր հակաթուրքական ուղղվածության բանակցությունները: Սակայն հակառակ այդ սպասելիքների, շահական արքունիքը իր ուշադրությունը կենտրոնացրեց Օսմանյան կայսրության նկատմամբ թշնամական առճակատման մեջ գտնվող, կամ ուղղակի նրա դեմ պատերազմող արևմտաեվրոպական պետությունների շրջանում ռազմական դաշնակիցներ որոնելու գործին: Այսպիսով, թվում էր թե շահական արքունիքի և մոսկովյան պետության միջև տասներեքամյա բանակցությունները օսմանցիների դեմ դաշինք կնքելու վերաբերյալ, որոնք սկսվել էին դեռևս 1586 թվականին շահ Խուդաբենդեի կողմից, պետք է հանգեցնեին շահ Աբբասի կողմից դրանց տրամաբանական վախճանին: Սակայն ինչպես նշվեց, շահը ընտրեց այլ ճանապարհ, թեև դրանից հետո ևս նա մեծագույն դիվանագիտական ճկունությամբ Ռուսաստանի հետ խաղը առաջ էր տանում այնպես, որ իբր ոչինչ չի փոխվել և Իրանը նախկինի պես ցանկանում է հակաթուրքական դաշինքի հարցում մոսկովյան պետության հետ շարունակել երկխոսությունը: Որո՞նք էին շահի որդեգրած քաղաքական այդ նոր ուղեգծի ներքին դրդապատճառները: Այդ հարցի առթիվ դժբախտաբար աղբյուրները զլանում են մեկնաբանություններ տալուց: Ամենայն հավանականությամբ պետք է ենթադրել, որ շահ Աբբասը հանգել էր այն եզրակացության, որ մոսկովյան պետության հետ իր վարած բանակցությունները հեռանկարային չեն ոչ միայն այն պատճառով, որ այդ պետությունը դեռևս պատրաստ չէ մեծ պատերազմի մեջ մտնելու Օսմանյան պետության և Ղրիմի խանի միացյալ ուժերի ու նրանց դաշնակիցների հետ, այլև իր անվտանգությունը սպառնալիքի տակ չի դնի հանուն Իրանի շահերի: Իսկ առավել ծանրակշիռ փաստարկն այն էր, որ Առսկովյան պետությունը արդեն XVIդարի վերջերից անզուսպ ձգտում էր դրսևորում դեպի հարավ, տիրանալու համար Սեֆյան պետության տիրույթներ հանդիսացող Անդրկովկասին և Մերձկասպյան շրջաններին: Հետևաբար շահը ի դեմս այդ պետության տեսնում էր ոչ միայն իր ապագա ախոյանին, այլև ոխերիմ

թշնամուն: Ուշագրավ է նաև նշել, որ եթե շահ Սուլթան Մոհամմադ Խուդաբենդեն հակաօսմանյան դաշինքի դիմաց մոսկովյան պետությանը խոստանում էր նրան զիջել Դերբենտը և Բաքուն, ապա նրա որդին՝ շահ Աբբաս I-ը, Մոսկվայի հետ իր դիվանագիտական շփումների ժամանակ այլևս չէր արծարծում այդ հարցը: Տպավորությունն այնպիսին է, որ 1587-ից մինչև 1590-ական թվականներն ընկած շրջանում մոսկովյան պետության հետ շահական արքունիքի հարաբերություններում վերջինիս մտահոգությունն այն էր, որպեսզի ապահովվի իր հյուսիսային սահմանների անվտանգությունը:

Մինչև եվրոպական պետությունների հետ դիվանագիտական կապերի հաստատումը շահ Աբբաս I իրեն հատուկ շրջահայեցությամբ ու հետևողականությամբ ուսումնասիրում էր այդ խնդրի հետ կապված մանրամասները: «Քարմելյանների տարեգրությունից» տեղեկանում ենք, որ առհասարակ շահը մեծ հետաքրքրություն է դրսևորել օտարերկրյա գործերի նկատմամբ: Նա հիանալի տեղեկացված էր արտաքին քաղաքական, հատկապես եվրոպական գործերի վերաբերյալ[26]:

1598թ. Սեֆյանների մայրաքաղաք Ղազվին են ժամանում անգլիացի էնտոնի և Ռոբերտ Շիրլի եղբայրները, որոնք բրիտանական կառավարության անունից առաջարկում են շահին Անգլիայի հետ հաստատել առևտրական հարաբերություններ, միաժամանակ ակնարկելով ռազմական դաշինք կնքելու հնարավորության մասին: Հենց այդ նույն օրերին Իրանում գտնվող պորտուգալացի կաթոլիկ կրոնավորներ դոմինիկյան միաբանության անդամ Նիկոլո դի Մելոն և ֆրանցիսկյան Ալֆոնսո Կորդերոն խորհուրդ են տալիս շահին դեսպանություն ուղարկել Եվրոպա հակաթուրքական դաշինքի վերաբերյալ բանակցություններ վարելու համար[27]: Անսալով նրանց խորհուրդներին, 1599թ. հուլիսին շահը եվրոպա է ուղարկում իր առաջին դեսպանությունը, որի պաշտոնական ղեկավարը թեև համարվում էր Հոսեյին Ալի-բեկ Բայաթը, սակայն լայն լիազորություններով էր օժտված էնտոնի Շիրլին: Դեսպանությունը իր հետ տանում էր շահի նամակները՝ ուղղված Եվրոպայի ամենաազդեցիկ տիրակալներին՝ Հռոմի պապին, գերմանիայի կայսրին, Անգլիայի թագուհուն, Շոտլանդիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի թագավորներին և Վենետիկի դոժին[28]: Դեսպանությանը հանձնարարված էր բանակցություններ վարել Իրանի և եվրոպական տերությունների միջև հակաօսմանյան ռազմական դաշինք կնքելու, ինչպես նաև իրանական հում-մետաքսի վաճառքի վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար[29]: Ընդորում, էնտոնի Շիրլին լիազորված էր Եվրոպայում հավաստիացնելու, որ շահը պատրաստ է Իրանի սահմանները բաց անել եվրոպական վաճառականների առջև, նրանց տրամադրելով անձի ազատության և անեցվածքի անվտանգության երաշխիքներ: Միաժամանակ Շիրլիին հանձնարարված էր հավաստիացնել Պողոս V պապին, որ եթե եվրոպական պետությունները օգնեն Իրանին Օսմանյան պետության դեմ մղվող պայքարում, ապա շահը կստիպի Իրանում բնակվող բոլոր քրիստոնյաներին՝

հայերին, վրացիներին, հակոբիկյաններին, նեստորականներին և այլն ընդունելու կաթոլիկություն և Հռոմի պապի գերագահությունը[30]:

Ուշագրավ է նշել, որ թեև Բայաթի դեսպանությունը Եվրոպա էր մեկնում Մոսկվայի վրայով, սակայն նա լիազորված չէր այնտեղ բանակցել Օսմանյան կայսրության հետ կապված հարցերի վերաբերյալ: Այդ դեսպանության գործունեությունը կատարյալ ձախողման մատնվեց: Նրա կազմից ոչ ոք չվերադարձավ Իրան: Եվրոպա հասնելուն պես էնտոնի Շիրլին լքեց դեսպանությանը և մեկնեց Լոնդոն: Դեսպանության երեք քարտուղարները՝ Ալի ղուլի-խանը, Բոնայեդ-բեկը և դեսպանի եղբորորդի Օլադ-բեկը (կամ Օրուջ բեկը) դավանափոխ լինելով և ընդունելով կաթոլիկություն մնացին Իսպանիայում՝ կնքվելով դոն Ֆիլիպ, դոն Դիեգո և դոն Ժուան (դոն Խուան) անուններով: Դեսպանության կազմից մահմեդական մի բարձր հոգևորական (մուջդեհիդ) Պորտուգալիայում սպանվեց կրոնական մի մոլեռանդի կողմից: Իսկ դեսպանության մի քանի ծառայողներ ճիզվիթների կողմից դավանափոխ արվեցին և մնացին Հռոմում[31]:

Եվրոպական միապետների հետ կապեր հաստատելու իր ձեռնարկած քայլերի կապակցությամբ մոսկովյան կառավարության կասկածներն ու անվստահությունը չհարուցելու միտումով, շահ Աբբասը Բայաթի դեսպանության հետ համարյա միաժամանակ Մոսկվա ուղարկեց փեր Ղուլի բեկի դեսպանությունը, որը թեև լավ ընդունելության արժանացավ, սակայն որևէ արդյունք չարձանագրեց[32]: Ընդհանրապես դեսպանությունը շահից որևէ հանձնարարական չուներ քաղաքական հարցեր շոշափելու և ամեն կերպ խուսափում էր հակաօսմանյան դաշինքի վերաբերյալ ռուս դիվանագետների հարցադրումներից:

Փաստերը վկայում են, որ նախապատրաստվելով մեծ պատերազմի Օսմանյան կայսրության հետ, շահ Աբբաս I ծավալել էր բազմաճակատ ու խորքային դիվանագիտական գործունեություն եթե ոչ դաշնակիցներ, ապա գեթ համակիրներ ձեռք բերելու համար: Նա, օրինակ, փորձում էր իր համար պարզել, թե արդյոք հնարավոր չէ այդ նպատակի համար օգտագործել նաև Հնդկաստանի տիրակալ, Մեծ Մողոլ Աքբարին: Այդ նպատակով նա 1590 թ» Հնդկաստան ուղարկեց Յադեգար Ալի սուլթան ռումլուի, իսկ 1597թ. Մանուչեհր-բեկի դեսպանությունները, Մեծ Մողոլին առաջարկելով դաշինք ուզբեկ շեյբանիների դեմ: Սակայն երկու դեպքում էլ Հնդկաստանից շահը ցանկալի պատասխան չստացավ[33]: Այդ անհաջողությունները, սակայն, բնավ չէին վհատեցնում Իրանի անխոնջ տիրակալին, որը օսմանցիների նկատմամբ իր հաղթանակի հույսերը առաջին հերթին կապում էր իր ստեղծած նոր բանակի մարտունակության հետ: Դրանով հանդերձ, նա շարունակում էր իր դիվանագիտական շփումները եվրոպական պետությունների հետ: Այսպես, օրինակ, 1602թ. Իրան ժամանեցին ավստրիական կայսր Ռուդոլֆ II դեսպաններ, իրավունքի դոկտոր Ատեֆսուն (էթյեն) Կակուշը և Գեորգ Տեքդանդեր ֆոն-դեր Հաբելը, որոնց խնդիրն էր խնդրել շահ Աբբասի օգնությունը ընդդեմ Ավստրիայի դեմ պատերազմող թուրքերի[34]: Նույն թվականին իսպանա-

կան Ֆիլիպ III թագավորի հրամանով Գոայից Իրան ուղևորվեց ավգուստինյան կրոնավոր Անտոնիո դե Գուվեան[35]:

Եվրոպական տիրակալների հետ վարած շահի բանակցությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը անվերապահորեն բերում է այն համոզման, որ օժտված լինելով հաստատուն քաղաքական կամքով, զարմանալի եռանդով, անկոտրում վճռակամությամբ ու նպատակասլացությամբ «շահ Աբբաս Մեծը», ինչպես անվանել են նրան իր ժամանակակիցները, այնքան էլ մեծ հույսեր չէր կապում իր և եվրոպական պետությունների միջև հակաօսմանյան ռազմական դաշինք կնքելու հնարավորության հետ:

1603թ. օգտվելով Օսմանյան կայսրության ներքին քաղաքական դժվարություններից, շահ Աբբաս I սկսեց վաղուց ի վեր իր կողմից նախապատրաստվող պատերազմ-ռեվանշը: Այդ կապակցությամբ նա կրկնապատկված եռանդով ձեռնամուխ եղավ դիվանագիտական ակտիվության: 1603թ. Մոսկվա ուղարկվեց Լաչին-բեկի դեսպանությունը: Այդ նույն թվականին Վենետիկ մեկնեց Ֆեթհի-բեկի դեսպանությունը, որի 12 անդամներից երեքը հայեր էին[36]: Առհասարակ ի թիվս կաթոլիկ միսիոներների, ճանապարհորդների և այլն, որպես բանագնացներ շահ Աբբասը լայնորեն օգտագործում էր նաև Նոր Ջուղայի և այլ վայրերի հայ վաճառականներին, որոնք առևտրական գործերով հաճախ էին լինում եվրոպական տարբեր երկրներում և այնտեղ ունեին լայն կապեր[37]: Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեյի վկայությամբ հայերը, որպես քրիստոնյաներ, ավելի ազատ մուտք ունեին եվրոպական երկրներ, քան մահմեդականները, որոնց նկատմամբ հատկապես կաթոլիկական երկրներում, վերաբերվում էին շեշտված անբարյացակամությամբ ու կասկածանքով[38]:

1606թ. նոյեմբերի 11-ին Սիտվատորոգում Ավստրիայի հետ կնքելով հաշտություն և արևմուտքում դուրս գալով տևական ու հյուծիչ պատերազմից, Օսմանյան կայսրությունը իր ազատված ուժերը նետեց դեպի արևելք՝ Սեֆյան Իրանի դեմ: Վերջինս կանգնեց այդ հզոր ուժի դեմ մենմենակ պայքարելու փաստի առջև: Արևմուտքում դաշնակիցներ գտնելու հարցը շահի համար դառնում էր կենսական խնդիր: Հույժ անհրաժեշտություն էր, որ Եվրոպայում կամ Միջերկրածովյան ավազանի շրջանում օսմանցիների դեմ բացվի երկրորդ ճակատ:

Քանի որ թուրքերի դեմ պատերազմի պայմաններում շահ Աբբասը հնարավորություն չուներ օսմանյան կայսրության հետ թշնամական առճակատման մեջ գտնվող Վենետիկի հանրապետություն ուղարկելու հատուկ դեսպանություն, 1607թ. նա նոր ջուղայեցի վաճառական խոջա Շիոշի միջոցով Վենետիկի դոժին ուղարկեցի նամակ, որտեղ տեղեկացնում էր, որ ինքը պատերազմ է մղում օսմանցիների հետ և ցանկալի է համարում, որ Վենետիկը և առհասարակ եվրոպական տերությունները հանդես գան «ընդհանուր թշնամու դեմ»[39]: Շիոշի առաքելության մասին հայտնի է միայն, որ նա հանդիսավոր ընդունելություն է գտնում դոժի և վենետիկյան սենատի կողմից և Կրետե կղզուց Նորես անունով թարգ-

մանչի միջոցով հաղորդում է շահի պատգամները և հանձնում նրա նամակներն ու իր դիվանագիտական լիազորությունների վերաբերյալ հավատարմագրերը[43]:

1607թ. իսպանական թագավոր Ֆիլիպ III հրամանով երկրորդ անգամ Իրան ժամանած կրոնավոր Անտոնիո դե Գուվեան շահ Աբբասին է հանձնում իր միապետի նամակը, որտեղ նա հայտնում է, որ իր առևտրական նավատորմը Միջերկրական ծովում մեծապես տուժում է թուրք ծովահենների հարձակումների հետևանքով, ուստի ինքը պատրաստ է կնքելու իսպանա-իրանական հակաօսմանյան ռազմական դաշինք և որպես առաջին քայլ կորող է Միջերկրական ծովում կործանիչ հարված հասցնել թուրքերին[44]:

Իսպանական կառավարության դիվանագիտական այդ նախաձեռնությունը հետաքրքրեց շահ Աբբասին և վերջինս որոշեց Եվրոպա ուղարկել մի մեծ դեսպանություն, որի ղեկավար կազմում գտնվում էին ղզլբաշական բարձրաստիճան դեմքերից մեկը՝ Դենգիզ բեկ Ղուրչի Ռումլուն, անգլիացի Ռոբերտ Շիրլին և նոր ջուղայեցի անվանի վաճառական խոջա Եղիգարի որդի 32-ամյա խոջա Աֆարը[45]: Նրա հայրը Հալեպում վենետիկյան հյուպատոսի վկայությամբ, հանդիսանում էր Վենետիկի առևտրական գործակալը Իրանում: Հյուպատոսը Աֆարի մասին արտահայտվում էր որպես վստահության արժանի մի մարդու և Վենետիկի հանրապետությանը խորհուրդ էր տալիս ուշադրության նշաններ ցուցաբերել նրա նկատմամբ[46]:

Աղբյուրներից երևում է, որ դեսպանության փաստացի ղեկավարը Ռոբերտ Շիրլին էր: Թեև նրա եղբայրը՝ էնտոնի Շիրլին, ինչպես նշվել է վերևում, չէր արդարացրել շահի հույսերը և Եվրոպայից չէր վերադարձել Իրան, շահը կատարելապես վստահում էր Ռոբերտ Շիրլիին, որը ազնվորեն ծառայում էր իրանական բանակում, նպաստելով նրա վերազինմանն ու մարզմանը: Ավելին, 1605թ. նոյեմբերի 6-ին նա աչքի էր ընկել Չալդրանի դաշտավայրում թուրքերի հետ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ իր 300 հոգիանոց հեծյալ ջոկատով խիզախորեն մարտնչել էր և նույնիսկ վիրավորվելով դուրս չէր եկել մարտից: 1607թ. շահը նրան ամուսնացրել էր չերքեզական առաջնորդ Իսմայիլ-խանի աղջկա հետ[47], դրանով նրան արժանացնելով մեծ պատվի:

Շահը հանձնարարել էր Ռոբերտ Շիրլիին բանակցել եվրոպական միապետների հետ Օսմանյան կայսրության դեմ նրանց համախմբելու և հնարավորության դեպքում նաև Իրանի մասնակցությամբ դաշինք ստեղծելու համար:

Փաստերը վկայում են, որ դեսպանության կազմում խոջա Աֆարը հանդիսանում էր շահի վստահված անձը, որից ստացել էր հատուկ հրահանգներ, ինչպես նաև հավատարմագրեր, առանձին պաշտոնական նամակներ և այլն, որոնք հասցեագրված էին Հռոմի պապին, իսպանական թագավորին, Թոսկանայի մեծ հերցոգին, Վենետիկի դոժին և Իտալիայում քարմելյանների միաբանության ղեկավարներին[48]: Պատահական

չէ. որ շահին ուղղված եվրոպական միապետների պաշտոնական նամակներում ևս որպես դեսպան և շահի լիազոր ներկայացուցիչ հիշատակվում է խոջա Սաֆարի անունը:

Դուրս գալով Սեֆյան պետության մայրաքաղաք Սպահանից 1608թ. փետրվարի 12-ին, դեսպանությունը Աստրախանից Վոլգայով նավարկելով մեծ արկածներով հասավ Մոսկվա, քանի որ 1608թ. վերջին և 1609թ. սկզբին Մոսկովյան պետության մեջ ծայր էր առել ներքին պատերազմ Վասիլի Շույսկու և Կեղծ Դմիտրի II միջև: Դեսպանությունը եղավ եվրոպական մի շարք մայրաքաղաքներում: Կրակովում, որտեղ հանդիսավոր ընդունելության արժանացավ Սիգիզմունդ III թագավորի կողմից, Պրահայում, Հռոմում, Սադրիդում և այլն: Իսպանիայում գտնվելու ժամանակ խոջա Սաֆարի և դենգիզ-բեկի միջև ծագում են տարաձայնություններ և ի նշան բողոքի, խոջա Սաֆարը բաժանվում է դեսպանությունից և Վենետիկում, Հռոմում, Թոսկանայում, Միլանում և մի շարք այլ քաղաքներում վարում առանձին բանակցություններ: Իրանցի պատմաբան Նասրոլլա Ֆալսաֆին հրապարակել է Նեապոլի ազգային գրադարանի «Շահ Աբբաս I դարաշրջանի նամակներն ու փաստաթղթերը» հավաքածուից հարուստ նյութեր, որոնք վկայում են եվրոպական մայրաքաղաքներում խոջա Սաֆարի վարած բանակցությունների մանրամասների մասին: Այդ փաստաթղթերից մեկում առկա է շահին ուղղված խոջա Սաֆարի նամակը, որտեղ նա գրում է. «Երբ պապին (Հռոմի Վ.Բ.) զեկուցեցի ձեր արքունական խնդրանքի մասին (խոսքը հակաթուրքական դաշինքի մասին է Վ.Բ.), ինձ պատասխանեց, որ գարնանը հրամայելու է եվրոպայի բոլոր տիրակալներին, որ նրանք շարժվեն թուրքերի վրա: Այնուհետև նա ասաց, որ բոլոր թուրքական ցեղերին սրբելու և վերացնելու ենք երկրի երեսից, որպեսզի մեր (Իրանի) և նրանց (Եվրոպայի) միջև իշխի կատարյալ հանգստությունը»: Նման հոխորտալից հայտարարություններին պապը չի մոռանում նաև ավելացնել, որ ինքը խնդրում է շահին, որ նա իր բարձր հովանավորությունը տարածի կաթոլիկ միսիոներների նկատմամբ[47]:

Ի դեպ, Իրան վերադառնալուց հետո խոջա Սաֆարը զեկուցում է շահին Դենգիզ-բեկի հետ իր վեճի մասին: 1614թ. գործը քննության ենթարկելուց հետո շահը ղզլբաշականց այդ բարձրաստիճան անձին դատապարտում է մահվան իրեն հանձնարարված առաքելությունը պասիվ կատարելու մեղանդրանքով[48]:

Այսպիսով, հիշյալ դեսպանության գործունեությունը ևս որևէ շոշափելի արդյունք չտվեց և ամեն ինչ սահմանափակվեց խոստումներ տալու և շահին «օրորելու» շրջանակներում: Նույնպիսի ճակատագրի արժանացան նաև շահի կողմից իսպանիա՝ Ֆիլիպ III (1598-1621) մոտ ուղարկված Անտոնիո դե Գուվեայի դեսպանությունը (1607թ.), նույն միապետի մոտ մեկնած Փաքիզե Իմամ Ղուլի-բեկի դեսպանությունը, որին ուղեկցում էր նաև պորտուգալական դեսպան Լուի Պերեյրա դե Լասերդը[49] և այլն:

Դիվանագիտական գործունեության արևելյան ուղղությունը ևս ոչ մի դրական ծեռքբերում չարձանագրեց: Այսպես, 1609թ. գարնանը Հնդկաստանի նոր կայսր Ջհանգիրի (1605-1627) գահակալության առթիվ շնորհավորելու պատրվակով Հնդկաստան ուղարկված Ալի Սուլթան Թալեշի դեսպանությունը, որն իր հետ տանում էր մեծ քանակությամբ թանկարժեք նվերներ, Մեծ Մողոլի կողմից ոչ մի կոնկրետ խոստում չստացավ դեպի Արևելք անզուսպ ձգտում դրսևորող Օսմանյան կայսրության դեմ ուժերը համախմբելու վերաբերյալ[50]:

1609-1612թթ. շահական արքունիքը նոր դեսպաններ չէր ուղարկում Եվրոպա, սպասելով իր նախկին դեսպանությունների արդյունքներին: Բացառություն էր կազմում 1611թ. վերջին կաթոլիկ կրոնավոր, քարմելյան միաբանության անդամ Թադեուսի դեսպանությունը Հռոմի պապի մոտ[51]: շահի այդ պասիվության պատճառը թերևս կայանում էր նրանում, որ նա սեփական ուժերով, առանց կողմնակի օգնության, կարողացել էր թուրքերից գրավել այն ամենը, ինչ ծրագրել էր առաջին հերթին գրավել: Արդեն 1609թ. իրանա-թուրքական պատերազմական գործողություններում նկատվում էր հարաբերական հանգիստ, մանավանդ որ օսմանցիները զբաղված էին ջալալիների ապստամբությունների ճնշման գործով և միաժամանակ դադարեցրել էին ռազմական ճնշումը Իրանի նկատմամբ:

Այսպիսով, շահ Աբբաս I օրոք Եվրոպայի և Մոսկովյան պետության հետ բոլոր դիվանագիտական շփումները, բանակցությունները և այլն ոչ մի շոշափելի արդյունքի չհանգեցրին հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու հարցում: Միանգամայն ակներև էր, որ նախ եվրոպական տերությունների միջև հակասություններն այն աստիճանի սուր և խորն էին, որ նույնիսկ թուրքական ներխուժման վտանգը ի վիճակի չէր նրանց միավորելու: Չի կարելի նաև անտեսել այն իրողությունը, որ եվրոպական մի շարք պետություններ, ինչպես օրինակ, Ֆրանսիան, Անգլիան, Հոլանդիան, Իսպանիան և այլն, խիստ շահագրգռված էին Լևանտյան առևտրի մեջ, որն ամբողջապես գտնվում էր թուրք-օսմանների հսկողության ներքո, հետևաբար իրենց ծեռնտու չէր բացահայտ առճակատման մեջ մտնել Օսմանյան կայսրության հետ: Բոլոր տվյալները վկայում են այն մասին, որ շահ Աբբաս I հիանալի հասկացել էր այդ բոլորը և թերևս - հենց այդ պատճառով նա իր դեսպաններին և դիվանագիտական գործակալներին չէր տրամադրում համապատասխան լիազորություններ համաձայնագրեր ու պայմանագրեր կնքելու համար, նրանց իրավունքները սահմանափակելով լոկ բանակցություններ վարելու շրջանակներում: Կասկածից վեր է, որ հեռատես, շրջահայաց ու խորամանկ շահը նաև գիտակցում էր, որ, ինչպես եվրոպական տերությունների, այնպես էլ մոսկովյան պետության քաղաքական շահերը պահանջում են, որ արևելքում Իրանը և Օսմանյան Թուրքիան մշտապես գտնվեն պատերազմական վիճակում, քանի որ Օսմանյան կայսրության համար «երկրորդ ճակատի» մշտական առկայությունը իրենց համար կապահովի գործողությունների ազատություն, Եվրոպայում կկոտրի օսմանյան հարվածող բանակների

թափը և դրանով իսկ աստիճանաբար «կմաշեցնի» ու կթուլացնի իրենց այդ ահարկու թշնամուն, որի ներխուժման սպառնալիքը կախված էր ողջ Եվրոպայի, այդ թվում նաև Ռուսաստանի վրա: Միանգամայն ակներև է, որ եվրոպական դիվանագիտության այդ քայլերին Իրանը պատասխանում էր նույնատիպ քաղաքականությամբ, իր հերթին աշխատելով արևմուտքում թուրքերի դեմ ստեղծել մի թշնամական ճակատ՝ Իրանի գործը թեթևացնելու համար:

Հայտնի է նաև, որ 1605 թվականից սկսած շահ Աբբասը ծեռնամուխ էր եղել զենքի օգնությամբ ռուսական ազդեցությունը Արևելյան Վրաստանում վերացնելու գործին, այն մահմեդական խանության վերածելու նպատակով: Գաղտնիք չէ, որ այդ շրջանում վրացական հարցը արդեն վեր էր ածվել իրանա-ռուսական հակասությունների հիմնական կնճիռներից մեկի: Վերջապես շահ Աբբաս I Օսմանյան կայսրության հետ թշնամական առճակատման պայմաններում իր հաջողության հիմնական կռվանն էր համարում իր ստեղծած նոր և մարտունակ բանակը, որը քանիցս ցուցադրել էր իր ընդունակությունը ոչ միայն յանիչարիական զորքերին դիմակայելու, այլև նրանց պարտության մատնելու: Չպետք է մոռանալ նաև, որ օսմանյան զավթիչները Սեֆյան Իրանի գրավյալ տարածքներում, հատկապես քրիստոնյա Հայաստանում և Վրաստանում ստեղծել էին անագորույն դաժանության արյունոտ մի վարչակարգ, որը առաջ էր բերում տեղական բնակչության զայրույթն ու դիմադրությունը, դրանով իսկ նպաստելով շահական զորքերի հաջողությանը:

1612թ. շահ Աբբաս I հաղթանակ տարավ օսմանցիների նկատմամբ, որը հնարավորություն տվեց Իրանին չեղյալ հայտարարել ու վերացնել 1590թ. Ստամբուլում կնքված իր համար ծանր հաշտության պայմանագիրը: 1623-1624թթ. շահը թուրքերից գրավեց Բաղդադը, Մոսուլը, Բասրան և շիաների սրբակենտրոն քաղաքներ Քերբալան ու Նաջաֆը, որոնք մինչև 1534թ.պատկանում էին Իրանին: Օսմանյան կայսրությունը չէր կարող հաշտվել այդ կորուստների հետ, մանավանդ որ Արաբական Իրաքի վրայով էին անցնում Իրանից դեպի Միջերկրածովյան ավազանը և Լևանտի երկրները տանող ցամաքային տարանցիկ կարևորագույն ճանապարհները:

Следует сразу оговорить, что и Али-паша и Фуад-паша не считали свои поиски путей преобразования империи противоречащими духу и букве Корана.[27] Более того, для реформаторского движения на протяжении всего XIXв. характерно желание согласовать неизбежность преобразований с предписаниями и нормами ислама. Однако надо иметь в виду, что при всей своей противоречивости, непоследовательности, реакционности, программа "слияния", предполагавшая перенесение на османскую почву, хотя и в трансформированном виде, некоторых европейских институтов и идей, с неизбежностью ломала воспитывавшиеся веками, традиционные представления и ценности мусульманского общества.[28] Вполне понятно поэтому, что реформы не могли встретить понимание и поддержку не только среди основной массы населения, но и среди людей образованных, высших государственных чиновников типа Джевдета. Слабость социальной базы не раз отмечалась туркологами как одна из причин неудач танзиматских преобразований. Поэтому сравнительный анализ воззрений Али, Фуада и Джевдет-паши позволяет, на наш взгляд, более полно оценить характер реформаторского движения.

ПРИМЕЧАНИЯ

1. См. Напр.: А. Д. Новичев, Борьба между реформаторами и консерваторами в период танзимата /1839-1853/, "Тюркологический сборник", 1973, М., 1975, с. 82-108; E. Z. Karàl, Obstacles rencontrés pendant le mouvement de modernisation de l'Empire Ottoman. 'Economie et société dans l'Empire Ottoman (Fin du XYIII^{e} - Debut du XX^{è} siecle), Paris, 1983, pp. 11-12,
2. И. Л. Фадеева. Официальные доктрины в идеологии и политике Османской империи /османизм-панисламизм/. М., 1985; Р. А. Сафрастян, Доктрина османизма в политической жизни Османской империи, Ереван, 1985. Обе эти монографии, несмотря на некоторые различия в оценках и выводах их авторов, вносят определенный вклад в изучение проблем истории общественно-политической мысли Турции в эпоху реформ.
3. Ulem – мусульманский ученый-богослов.
4. О нем см. напр.: Ebul'ula Mardin. Medenî hukuk cephesinden Ahmet Cevdet Paşa (1825-1895) Ist.,
5. 1946.

6. См.; Ahmet Cevdet Paşa, Maruzat, "Türk Tarih Encümeni Mecmuası", (в дальнейшем – TOEM), No. 44, 78-80, 82, 84, 87- 89,91-93. /араб. шрифт/.
7. О программе "слияния" см.: Р. А. Сафрастян. Доктрина османизма..., с. 33-47.
8. Cevdet Paşa, Tezakir, no. 10, Ank., 1953, s.85.
9. В полемике о законности прав халифов османской династии на релилгиозную власть в мусульманском мире, разгоревшейся в конце XIXв , Джевдет выступил в поддержку султана Абдул Хамида II. См. Cevdet Paşa, Tezakir, no. 12, Ank., 1953, s. 148-149.
10. Цит. по: Р.А.Сафрастян. Доктрина османизма... с. 39
11. См.: Cevdet Paşa, Maruzat, ÒÎÅÌ, No. 44, lst., 1334, s.103.
12. См.: Tarih-i Cevdet. lst.,1334 (1893), bas.2,c.1,s.14. /араб, шрифт/. Любопытно, что в предисловии к тому, где Джевдет пишет об истории ислама, он отмечает заслуги двух "великих миллетов" - арабов и турок. Т.о. в понятие "миллет" он вносил не только религиозный, но и этнический смысл.
13. См.: Р.А. Сафрастян. Доктрина османизма... с.38
14. A. Cevdet, M. Fuat, Kavaid-i Osmaniye, lst., 1268. Î íåé ïîäðîáíåå ñì.: D. Kushner. The rise of turkish nationalism (1876-1908), London, 1977, pp.57, 59, 76.
15. Теоретическое уравнение прав мусульман и христиан перед законом содержалось в статьях провозглашенного в 1856г. хатт-и хумаюна.
16. Цит. по: И.Л. Фадеева, Официальные доктрины... с,88.
17. Цит. по: Р.А. Сафрастян, Доктрина османизма... с.40.
18. Cevdet Paşa, Maruzat, TOEM, No. 87, lst., 1341, s.269-270.
19. Cevdet Paşa, Maruzat, TOEM, No. 44, lst., 1334, s.103.
20. Там же.
21. В довольно общих выражениях вопрос о воинской службе немусульман в армии был сформулирован еще в хатт-е 1856г. Позднее, в 1870-1871гг. появились более конкретные проекты и предложения по этому вопросу. Все эти проекты, однако, не получили практического решения в эпоху реформ. Об этом см.: И. Я. Фадеева, Официальные доктрины... с.71-72.
22. Интерес представляет эволюция понятия "ватан" /"отечество"/. Еще в 1790г. Али-ефенди, переводчик турецкого посольства во Франции, описывая мероприятия Французского правительства по заботе об инвалидах войны, рассказывал о человеке, пострадавшем за родину. Добросовестный переводчик и не догадывался, что он впервые вводит понятие "отечество", которое в его политическом значении стало осознаваться турецкой общественной мыслью лишь в середине XIXв. См.: Ahmed Refik, Morali El-Seyyid Ali Efendinin Sefaretnamesi. - TOEM, No.20-23, lst.,1332, s. 72. Первым официальным

документом, в котором употреблялось выражение "любовь к отечеству" /"ватан мухаббети"/, был хатт-и хумаюн 1856г. Воспитанию "всех османских подданных" в духе единства и верности правительству большое значение придавали паши-реформаторы. Впоследствии, в процессе генезиса идей Али и Фуада о "слиянии" "новыми османами" была сформулирована концепция "османского отечества" и "османского патриотизма". Об этом см.: S. Mardin, The genesis of Young Ottoman thought. Princetone, New Jersey, 1962.

23. Cevdet Đàşa, Maruzat, TOEM, No.87, Ist.1341 s.273.
24. Там же.
25. Там же.
26. H.Bowen, Ahmad Djewdet Pasha. - EI, vol. I, London, 1956, p.286.
27. Там же.
28. "... по нашей вере ислам есть полное... выражение всех истин и всех знаний, ... исламу принадлежит всегда всякое полезное открытие, все новое в сфере знаний, от какого бы источника оно ни происходило..., - писал Фуад-паша.- Таким образом, ничто не препятствует нам заимствовать законы и новые средства, придуманные в Европе..." /Цит. по: И.Л.Фадеева. Официальные доктрины... с. 93./. Известно также выражение Фуада о том, что "ислам на протяжении столетий был... прекрасным инструментом прогресса; сегодня ислам представляет часы, которые отстают и которые необходимо завести". /Цит. по: Р.А.Сафрастян Доктрина османизма... с.39-40./.
29. Например, Мустафа Решид-паша считал, что хатт 1856г. ущемлял интересы мусульман, а "новые османы" называли его "ферманом о преимуществах" для христиан. / Cevdet Đàşà. Tezakir, No. 10, Ank.,1953t, s.73/.

TURCICA

ВЛАДИМИР ГУСАКОВ
(Украина)

ЦЕНТРАЛЬНОАЗИАТСКАЯ ЭКСПАНСИЯ ТЮРОК В VI-VII ВВ., ЭВОЛЮЦИЯ ИХ ВЗАИМООТНОШЕНИЙ С МЕСТНЫМ НАСЕЛЕНИЕМ

VI-VII вв. очень важный период в тюркской и мировой истории. Это время существования и военной активности Великого тюркского каганата (вначале единого, а впоследствии разделенного надвое) – гигантского государства, пожалуй, впервые в мировой истории объединившего воедино континентальные евразийские пространства от Дона до Халхин-Гола. В этом смысле, кстати, Тюркский каганат является не только достоянием сугубо тюркской истории, но и выступает геополитическим предтечей всех последующих евразийских интеграционных проектов.

Тюркская экспансия в земледельческих районах Центральной Азии резко активизировалась в середине VI в. (время наивысшего могущества каганата) и развивалась с неослабевающей силой до середины следующего столетия. В последующий период консолидация местных сил, распад и ослабление каганата, а также начало китайского и арабского соперничества в регионе свели на нет все предыдущие тюркские успехи. Тюркам пришлось ждать еще триста лет, прежде чем они смогли под руководством сельджуков вновь захватить страны Центральной Азии, а в последующем и большую часть мусульманского востока.

На протяжении VI-VII вв. тюркская экспансия в Центральной Азии прошла несколько этапов. На этих этапах серьезно менялась общая политическая обстановка, внутриполитическое положение самого каганата и центральноазиатских государств, определенную эволюцию претерпели взаимоотношения кочевников тюрок и местного земледельческого населения.

В середине VI в., до той поры разрозненные и потому не представлявшие серьезной угрозы соседям тюркские племена объединились в мощную военную империю – каганат (551-744). Возникший на Алтае, первоначально как союз племен, последнии скоро обрел невиданную доселе военную мощь, позволившую ему подавить и подчинить все прочие, конкурировавшие с тюрками в обширной евразийской лесостепной зоне кочевые этно-племенные группы. Объединив под своей властью Туркестан, оазисы Синьцзяна, Семиречье и Монголию, нанеся поражение китайским царствам Вэй, Чжоу и Ци, тюрки обратили свою энергию на покорение земледельческих районов Центральной Азии.

Последние располагались преимущественно в центральноазиатском междуречье (между Амударьей и Сырдарьей). Традиционно эта историко-географическая область назывались Согдианой (Согдом), она редко когда

была единой и состояла из множества лоскутных наследных владений вокруг крупных торговых городов и оазисов, границы которых определялись естественными рубежами.

Подробное описание местной политической географии оставили нам образованные китайские миссионеры, побывавшие в странах «*Западного края*» в исследуемый нами период[1]. Особенно следует выделить работы Сюань Цзяня (наиболее подробное описание региона, основанное не только на личных наблюдениях, но и на широком использовании расспросных данных) и Пэй Цзюя (его работа ценна, прежде всего, тем, что к ней прилагалась карта «*Западного края*»).

Среди наиболее значимых владений они упоминают Самарканд, занимавший территорию по течению рек Зеравшан и Кашкадарья (китайцы называют его Кан, - возможно, это сокращение древнего авестийского *Кангюй*) и Бухару. С востока к Самарканду примыкала Уструшана, а к ней в свою очередь Фергана. Севернее находились Чач и Хорезм. Юго-восточнее Самарканда - Маймург (небольшое владение с центром в Ривдаде)[2].

К югу от Самарканда в Каршинском оазисе располагалось сравнительно небольшое владение Кеш. С юга оно было ограничено горами, между которыми пролегало стратегически важное узкое ущелье - «*железные ворота*», действительно запертое воротами. Лишь пройдя через него, можно было попасть в пределы Тохаристана[3].

Границы Тохаристана во многом соответствовали границам древней Бактрии (Балх) – в его пределы входили районы Северного Афганистана, Южного Таджикистана и Узбекистана. Относившееся к Северному Тохаристану Термезское владение занимало низовья Сурхандарьи. Выше него по среднему течению этой реки, лежал Чаганиан, Ахарун располагался по ее истокам в Гиссарской долине. На юге нынешней Туркмении находился Мерв.

Политическая раздробленность (всего в списке стран «*Западного края*» числится 27 отдельных владений) серьезно ослабляла обороноспособность региона и облегчала задачу его завоевателям. В период великого переселения народов южные районы Центральной Азии подверглись нашествию гуннов-эфталитов, основавших в нач. VI в. на завоеванных территориях собственное государство. И хотя города и оазисы центральноазиатского междуречья сохраняли при гуннах автономное положение и даже продолжали управляться местными аристократическими династиями о собственной независимой роли в международных делах и главное, международной торговле им пришлось временно забыть[4].

В силу указанных обстоятельств согдийцы крайне тяготились господством эфталитов и надеялись избавиться от него хотя бы и при помощи тюрок. Серьезным союзником тюрок в борьбе с гуннами за обладание оазисами междуречья стал Сасанидский Иран Правители Ирана, лишь недавно сами переставшие платить дань эфталитам, вынашивали агрес-

сивные планы по расширению своих восточных владений. Иранцы с готовностью пошли на совместные с каганатом действия, направленные против общего врага. Антигуннский союз был закреплен брачным договором, по которому шах Ирана Хосров I должен был получить в жены дочь кагана[5].

В «Шахнамэ» Фирдоуси подробно описан ход событий приведших к разгрому эфталитов[6]. Около 563-564 г. тюркский каган с большим войском вторгся в пределы Эфталитского государства и захватил область Чач. Вторжение сопровождалось грабежами и насилием, было перебито значительное количество населения Царь гуннов Гатифар спешно начал собирать около Бухары войско из Балха, Шугнана, Амуля, Замма, Хутталя (Вахш), Термеза и Вашгерда. За это время тюрки продвинулись на юг и сосредоточились около Маймурга.

Решающие боевые действия развернулись где-то на окраине Бухарского оазиса. Они длились восемь дней и закончились полным поражением эфталитов. Остатки разбитого войска бежали на юг, где гунны выбрали себе нового царя (Гатифар, очевидно пал в бою). Это был Фаганиш, владетель Чаганиана. Когда известия об этих событиях достигли Ирана, Хосров Сасанид выступил с армией для «*искоренения зла*».

Описание этих событий у Фирдоуси в принципе не противоречит сведениям, имеющимся в других источниках, за исключением характеристики поведения иранского шаха. Он, несомненно, действовал согласованно с тюрками и вовсе не был нейтральным наблюдателем событий, происходивших в центральноазиатском междуречье.

Территория Эфталитского государства была поделена между победителями, причем границей между сферами влияния двух империй стала река Амударья[7]. Следует отметить, что на данном этапе тюрки вполне довольствовались установлением свого номинального господства в регионе и после окончания войны покинули его, откочевав на север, в родные предгорья Тарбагатая, Саура и Тяньшаня.

Взаимоотношения между согдийцами и тюрками в период, последовавший непосредственно за разгромом гуннов были вполне мирными, а где-то даже и дружескими. Тюрки покровительствовали возрождению транзитной торговли по Великому шелковому пути, необходимой им для сбыта награбленной в Китае добычи. Все это способствовало укреплению их альянса с местной верхушкой. Попытка защитить интересы своих новых подданных в торговых конфликтах с Ираном даже привела к новой войне тюрков и Сасанидов в 588 г., оставившей глубокий след, как в письменных источниках того времени, так и в эпических преданиях[8].

Ситуация кардинально изменилась после 603 г., когда междоусобицы привели к официальному разделению тюркской державы на два каганата: Западный и Восточный. Тюрки Западного каганата, центром которого стал город Суяб (городище Акбешим в Чуйской долине) отныне были лишены возможности участвовать в прибыльных для кочевников походах в Китай,

что заставило их обратить более серьезное внимание на эксплуатацию номинально принадлежащих им согдийских владений. Если в начальный период тюрки, разгромив эфталитов, довольствовались получением дани с местных правителей и признанием верховенства кагана, то начале VII в. положение меняется – тюрки стремятся установить здесь свою непосредственную власть.

В 605-606 гг. они захватили Чач, убили местного владетеля и поставили на его место некоего Деле (Тегина) Фучжи. С этого момента здесь прочно водворилась тюркская династия. Со временем тюркские правители утвердились также в Шумане и Ахаруне.

Тогда же тюрки сделали попытку упорядочить систему взимания дани. Каган Чуло (603-610) назначил для этой цели двух малых каганов. Один из них обитал где-то севернее Чача и управлял «*хускими*», т.е. согдийскими, государствами.

Наиболее активные попытки укрепить власть каганата над указанными государствами были предприняты каганом Тун шеху (Тон джабгу каган) (618-630). Он вообще перевел местных владетелей на положение наместников, дав им, титулы *сылифа*, и назначил смотрителей из тюрок (*тутуков*), которые наблюдали за их правлением и сбором дани.

На годы правления Тун шеху выпадает и новая тюркско-иранская война. Иранские войска под предводительством полководца Смбат Багратуни совершают два похода на правобережный Тохаристан с целью присоединения местных владений к Ирану. Немедленно отреагировавшие тюрки, во главе с каганом (Тун шеху) не только остановили продвижение иранских войск, но и сами переправились через Амударыо и разбили находившиеся там сасанидские гарнизоны. Таким образом, Тун шеху удалось значительно расширить подвластную западным тюркам территорию на юге. Они подчинили себе Тохаристан и центральные области Афганистана[9]. Возможно, и северо-западные области современного Пакистана также оказались под властью тюрок, или, во всяком случае, в какой-то зависимости от них[10]. Вся вновь приобретенная территория, лежавшая южнее «*железных ворот*», была передана каганом Тун шеху в управление своему старшему сыну Дадушаду, который обосновался в Кундузе[11].

Для противодействия усиливавшемуся год от года военно-политическому и экономическому диктату тюрок в долине Зеравшана и Кашкадарьинском оазисе возникла оборонительная согдийская конфедерация. Во главе указанной конфедерации встал Самарканд, которому были подчинены восемь различных владений. В целом это объединение именовалось Согдом, что видно из двойного титула самаркандских владетелей: «*ихшид Согда, афшин Самарканда*». Однако все входившие в объединение субъекты сохраняли независимость, как во внутренних, так и во внешних делах. Это вполне определенно засвидетельствовано их многочисленными самостоятельными посольствами в иноземные государства.

Когда и при каких обстоятельствах сложилась эта конфедерация, источники не сообщают, но, учитывая существовавшую тогда политическую обстановку, есть достаточные основания думать, что она была обусловлена стремлением местных владетелей обеспечить себе безопасность от агрессивных действий тюрок. Доказательством реальной силы этого объединения в защите интересов местного населения является сообщение о браке дочери западнотюркского кагана Датоу (575-603) с владетелем Кана. Заключение подобного брака, несомненно, свидетельствует о ведущей роли Самаркандского Согда и о желании тюрок укрепить с ним дружеские (родственные) отношения. Даже неизменно победоносный Тун шеху, также как и Датоу, считал необходимым поддерживать родственные отношения с кандским владетелем, выдав за него свою дочь[12].

Впрочем, успехи тюрок носили кратковременный характер. После смерти Тун шеху среди них снова начались смуты, что позволило подвластным народам «*Западного края*» избавиться от тюркской зависимости. Однако драматические события, разыгрывавшиеся в степи, имели часто отрицательные последствия для земледельческих областей, так как последние нередко становились ареной междоусобной борьбы кочевников. В 630 г. один из заключительных эпизодов схватки претендентов на власть в каганате разыгрался непосредственно в центральноазиатском междуречье. Сын Тун шеху - Шили Деле после смерти своего отца был вынужден бежать от его убийцы в *Кангюй* (имеются в виду Самарканд и возглавляемая им конфедерация согдианских владений), с владетелем которого Шили Деле был связан родственными отношениями[13].

Следующие двадцать пять лет в отношениях тюрок и согдийцев сохранялась враждебность. Тюрки совершали регулярные грабительские походы в земледельческие районы, уводили пленных, а эпизодически им даже удавалось вновь подчинить их себе. Так было при каганах Ипи Шаболо шеху (639-641) и Нифу Шаболо шеху (651-658). В 649 г. тюрки убили ферганского правителя Циби и захватили северную часть этой области. Здесь, в Касане, обосновался один из представителей правящего рода Западного каганата. Южная же часть Ферганы осталась под властью представителей старой местной династии, резиденцией которой стал другой город Хумынь.

В 657 г. Западнотюркский каганат пал. С его падением исчезла постоянная угроза захвата земледельческих областей Центральной Азии тюркскими кочевниками. Парадоксально, но это же подтолкнуло регион к политической дезинтеграции. В конце VII в. обширная конфедерация фактически распалась, ей подчинялись, кроме самого Самарканда лишь Маймург, Иштихан и в какой-то степени Кеш и Насаф – все незначительные владения.

Первым, по всей вероятности, отделился Бухарский оазис, где в это время начался процесс усиления нового центра – Варданы. Правитель последней на рубеже VII-VIII вв. даже выступил в качестве претендента на

верховную власть над всем Бухарским оазисом. В конце VII в. на политической карте появляется ряд новых, хотя и небольших владений, возникших в результате усиления крупных *дихканов* (Куфтан на Сурхандарье, Хузар в Кашкадарьинском оазисе и др.).

Предоставленные самим себе центральноазиатские государства вступили в полосу междоусобных конфликтов и войн. Практически непрекращающаяся вооруженная борьба разобщила и ослабила регион, сделав его в нач. VIII в. легкой добычей арабских завоевателей.

ПРИМЕЧАНИЯ

1. Beal S. Si-yu-ki. Buddhist record of the Western world. – London, 1884; Beal S. The life of Hiuen-Tsiang, by the shaman Hwui-Li. – London, 1914.; Chavannes E. Documents sur les Ton-Kieu (Turcs) occidentaux. – St.Petersbourg, 1903. Достоверные данные о политической обстановке в Центральной Азии в период раннего средневековья можно почерпнуть из армянских источников. Их авторы пользовались свидетельствами армян, занимавших высокие посты в иранской армии и имевших возможность лично оценить ситуацию в центральноазиатском регионе. Для нашей темы наибольшую ценность представляют сочинение епископа Себеоса (посвящено истории Армении с древнейших времен до 661 г.н.э.). а также Ашхарацуйц – географическое сочинение, автором которого считают Анания Ширакаци. Хотя в основе этого сочинения лежит «География» Клавдия Птолемея (II в.н.э.), географическая номенклатура греческого оригинала в армянском тексте переработана в соответствии с требованиями VI-VII вв. *См.*: Абегян М. История древнеармянской литературы. – Ереван, 1975; Мкртчян Л.Х. Армянские источники о Средней Азии V-VII вв. – М., 1979.; Тревер К.В. Кушаны, хиониты, и эфталиты по армянским источникам IV-VII вв. // Советская археология. – Т. XXI. – 1954. – С. 136-137. Также в качестве источников могут быть использованы древнетюркские (орхонские) рунические надписи, найденные на территории Сибири, Киргизии и Монголии. Сведения их о странах Центральной Азии не очень обильны, зато достоверны. Центральноазиатские области упоминаются в них в контексте описания походов тюрок на запад. *См.*: Васильев Д.Д. Графический фонд памятников тюркской рунической письменности Азиатского региона (опыт систематизации). – М., 1983; Кляшторный С. Г. Древнетюркские рунические надписи как источник по истории Средней Азии. – М., 1964.
2. Shiratori K. A study on Su-te or Sogdiana // Memoirs of the Research Department of the Toyo Bunko (The Oriental Library). – Tokyo, 1928. - № 2. – P. 132.
3. Так следует из записок Сюань Цзяна. См.: Beal S. Si-yu-ki. – Vol. III – P. 36.

4. Непрерывность правящих династий, свидетельствующая о значительной степени автономии центральноазиатских владении, находит множество подтверждений. Например, правители Большого и Малого Ань (китайские названия двух владений в Бухарском оазисе) неизменно подчеркивали непрерывность правления их династий (первая – в двадцати двух поколениях, вторая – в десяти). Относительно Ферганы, также известно, что местная династия правила непрерывно примерно с IV в. н.э. Преемственность в династии, правившей в Кане (Самарканде) не прерывалась со II в. до н.э. Схожая ситуация наблюдалась и в других владениях. *См.*: Бичурин Н. Я. Собрание сведений о народах, обитавших в Средней Азии в древние времена. – М.; Л., 1950. – Т. II. – С. 271, 312, 319.
5. "Annales quos scripsit Abu Djafar Mohammed ibn Djafar at-Tabari", cum aliis ed. M.J. De Goeje. – Vol. II // Lugduni Batavonum. – P. 899.
6. Птицын Г.В. К вопросу о географии «Шахнамэ» // Труды Отдела Востока Государственного Эрмитажа. – Л., 1947. – Т. IV. – С. 293-312.
7. Гафуров Б.Г. Таджики. – Душанбе, 1989. – С. 279.
8. Конфликт произошел из-за категорического запрета согдийцам торговать хлопчатобумажными и шелковыми тканями на рынках Ирана, а также провозить их транзитом в другие страны, главным образом Византиискую империю (иранцы сами наживались на посреднической торговле и не хотели делиться прибылями с конкурентами). Получив от персов отказ, согдийцы в поисках новых рынков сбыта шелка, а тюрки для заключения перспективного союза с Византией, впоследствии воспользовались другой дорогой – вдоль северного побережья Каспийского моря, через Северный Кавказ. Возглавляемое согдийцем Маниахом посольство кагана в Константинополь было успешным – удалось заключить военно-политический союз империи с тюрками, направленный против Сасанидского Ирана. Не остались в накладе и согдийцы. Они открыли новые рынки сбыта для своих товаров, минуя иранское посредничество. Косвенным подтверждением интенсивности византийско-согдийско-тюркских торговых связей является появление в Крыму (на новом пути из Центральной Азии в Византию) города Судак. Название этого города, возможно, происходит от согдийского Сугдак, что значит маленький Согд. *См.*: Гафуров Б. Г. Таджики. – С. 218-220; Пигулевская Н. Византия на путях в Индию. – М., 1951. – С. 203 и сл. Лучшее описание иранского похода 588 г. и всей кампании содержится у Льва Гумилева. *См.*: Гумилев Л.Н Древние тюрки. – М., 1993. – С. 120-135.
9. Beal S. The life of Hiuen-Tsiang... – P. 47.
10. Гафуров Б.Г. Таджики. – Душанбе, 1989. – С. 280.
11. Chavannes E. Documents...- P. 14.
12. Chavannes E. Documents...- P. 26, 54.
13. Chavannes E. Documents...- P. 24, 135.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ 1924թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1923թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիայի անկախ հանրապետության հռչակումից հետո էլ 1921թ. Սահմանադրական օրենքին զուգահեռ շարունակում էին գործել 1876թ. օսմանյան Սահմանադրության բազմաթիվ դրույթներ[1]: Այդպիսի իրավական կարգավորումը, սակայն, չէր կարող բավարար լինել ազգային պետություն ստեղծելու նպատակ հետապնդող թուրքական քաղաքական իշխանության պահանջների իրագործման համար: Այդ պատճառով, վերջիններիս նախաձեռնությամբ, երկրորդ ընտրված Թուրքիայի ազգային մեծ ժողովում (այսուհետ՝ ԹԱՄԺ) շրջանառության մեջ դրվեց նոր սահմանադրության մի նախագիծ, որը խարսխված էր ազգի ինքնիշխանության, իշխանությունների միասնության և մեջլիսի գերակայության սկզբունքների վրա:

Նոր սահմանադրության նախագծի հիմքում դրվեցին Ֆրանսիայի 1875 և Լեհաստանի 1921թ. սահմանադրական օրենքների ուսումնասիրությունները[2]: Նախագծի քննարկումները բուռն բանավեճեր ծնեցին իշխանամետ և ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների միջև: Որոշակիորեն բացարձականացնելով ազգային ինքնիշխանության սկզբունքը և դրա կենսագործման առաջնահերթ պայման համարելով երկրում խորհրդարանի գերակա դիրքի ապահովումը, մերժվեց առաջ քաշված երկպալատ օրենսդիր մարմնի կազմավորման առաջարկը և նախապատվություն տրվեց միապալատ խորհրդարանի մոդելին[3]: Գործադիր իշխանության՝ մեջլիսի կառավարության ձևաչափում գործելու գաղափարը և ցանկացած հակազդեցությունների և փոփոխությունների առնչությամբ ԹԱՄԺ-ին ռադիկալ և արագ որոշումներ կայացնելու հնարավորություն տալու առաջարկները միայն նպաստեցին միապալատ օրենսդիր մարմնի սահմանադրական ամրագրմանը:

Նախագծում ներառված դրույթները, որոնք նախագահին օժտում էին մեջլիսին հակակշռող լիազորություններով՝ նույնպես մերժվեցին նմանատիպ պատճառաբանություններով: Նախագահի՝ արտամեջլիսական ընտրության եղանակի, մեջլիսից ավելի երկար պաշտոնավարելու (7 տարի) հնարավորության (նախագծի 31, 32 հոդդ), կառավարության տեսակետի հաշվառմամբ մեջլիսի նոր ընտրությունների վերաբերյալ որոշում կայացնելու, (նախագծի հոդ 25), օրենքը ևս մեկ անգամ քննարկելու նպատակով մեջլիս վերադարձնելու դեպքում այն վերստին ձայների միայն 2/3ով ընդունելու (նախագծի հոդ 36) վերաբերյալ դրույթները նույնպես մերժվեցին: Ընդունվեց միայն գլխավոր հրամանատարության վերաբերյալ առաջարկը այն էլ մեղմացված տարբերակով (նախագծի հոդ. 40): Նախագծում բոլոր զինված ուժերի (ցամաքային և ծովային) գլխավոր հրամանատարությունը վերապահվում էր նախագահին: Սա-

կայն այս առաջարկի երկար քննարկումներից և բանավեճերից հետո նախագահին ընդամենը ներկայացուցչական մի դեր վերապահվեց (ԹԱՄԺ պատկանող գլխավոր հրամանատարությունը նախագահի կողմից ներկայացվելու որոշում ընդունելով)[4]:

1924թ. Սահմանադրության գործողության մեջ մտնելով դադարեցին գործել 1921թ. Սահմանադրական օրենքը և սուլթանական 1876թ. Սահմանադրությունը (հոդ. 104): Այսպիսով վերջ տրվեց 1921թ.-ից մինչև նոր սահմանադրության ընդունման միջև ընկած ժամանակաշրջանում առկա «երկակի սահմանադրական կարգավորմանը»[5]:

1924թ. ապրիլի 20-ին ԹԱՄԺ կողմից ընդունված Սահմանադրությունը բաղկացած էր 6 գլուխներից և 105 հոդվածներից:

Առաջին գլուխ՝ Հիմնական դրույթներ (1-8-րդ հոդվածներ),

Երկրորդ գլուխ՝ Օրենսդիր իշխանություն (9-30-րդ հոդվածներ),

Երրորդ գլուխ՝ Գործադիր իշխանություն (31-52-րդ հոդվածներ),

Չորրորդ գլուխ՝ Դատական իշխանություն (53-67-րդ հոդվածներ),

Հինգերորդ գլուխ՝ Թուրքերի հանրային իրավունքներ (68-88-րդ - հոդվածներ),

Վեցերորդ գլուխ՝ Տարբեր հոդվածներ (89-105-րդ հոդվածներ):

Առաջին գլխում ներառված էին Սահմանադրության հիմնարար սզբունքները: Այս գլխում տեղ գտած դրույթների համաձայն Թուրքիան հռչակվում էր հարապետություն՚, ուր ինքնիշխանությունն առանց որևէ սահմանափակման և պայմանի պատկանում էր ազգին: Որպես ազգի միակ օրինական ներկայացուցիչ՝ հռչակվում էր ԹԱՄԺ-ը: Ազգի անունից գերագույն իշխանական իրավազորությունների իրականացումը վերապահվում էր միայն նրան, որի ձեռքերում էին կենտրոնացված օրենսդիր և գործադիր իշխանությունները: Ազգային ժողովն օրենսդիր իշխանությունն իրականացնում էր անձամբ, իսկ իրեն պատկանող գործադիր իշխանությունը իր միջից ընտրված հանրապետության նախագահի և վերջինիս կողմից նշանակվող Նախարարների խորհրդի կողմից: Կառավարության գործունեությունը վերահսկվում էր ԹԱՄԺ-ի կողմից, որը յուրաքանչյուր ժամանակ կարող էր հսկել և պաշտոնանկ անել այն: Հիմնական դրույթներում պետական լեզու էր հայտարարվում թուրքերենը, իսկ մայրաքաղաք՝ Անկարան:

1937թ. դեկտեմբերի 5-ի փոփոխությունների արդյունքում[7] Սահմանադրության 2-րդ հոդվածում ավելացվեցին իշխող ժողովրդական հանրեպատական կուսակցության ծրագրում դեռևս 1931թ. ներառված 6 սկզբունքները[8], որոնց համաձայն Թուրքիան հռչակվում էր հանրապետական, ազգային, ժողովրդական, էտատիկ, աշխարհիկ և հեղափոխական պետություն: Այս սկզբունքների ամրագրումը կոչված էր արտացոլելու միակուսակցական համակարգի պայմաններում թուրքական քաղաքական իշխանության գաղափարախոսության էությունը և ընդգծելու իշխող ժողովրդահանրապետական կուսակցության և պետական իշխանության կապը: Դրանց մեկնաբանությունները տրվել էին ժողովրդահան-

ռապետական կուսակցության ծրագրում և հաշվի առնելով ժամանակի քաղաքական համակարգի գրեթե բացարձակ միակուսակցական բնույթը[9]: Մեր կարծիքով Սահմանադրության վերոհիշյալ դրույթներին անդրադառնալիս կարելի է հղում անել այդ ծրագրին, որպես յուրօրինակ պաշտոնական մեկնաբանության: Ըստ Ժողովրդահանրապետական կուսակցության ծրագրի հանրապետականությունը մեկնա-բանվում էր որպես թուրք ազգի իշխանությունը և տիրապետությունը լավագույնս արտահայտող կառավարման ձև (և ըստ սյդմ ավելի հարմար թուրք ազգին և համապատասխան նրա ազնվական ոգուն)[10]: Ազգայնականության սկզբունքի համաձայն Թուրքական հանրապետության սահմաններում թուրքերեն խոսող, թուրքական մշակույթում մեծացած և թուրքական իդեալը իր իդեալ ճանաչող յուրաքանչյուր ոք հայտարարվում էր թուրք անկախ իր կրոնից[11]: Իսկ ժողովրդականությունը մեկնաբանվում էր օրենքի առաջ հավասարությամբ, ժողովրդավարականությամբ, ազգի ընդհանուր իրավունքներից դուրս արևէ անհատի կամ խմբավորման համար արտոնությունների չճանաչմամբ, դասակարգային պայքարի մերժմամբ[12]: Էտատիզմը պետական մասնակցությունն է երկրի տնտեսության մեջ՝ օտարերկրյա կապիտալի ազդեցության վերացման և արդյունաբերության հիմնական ճյուղերը պետության ձեռքերում կենտրոնացնելու նպատակով[13]: Աշխարհիկությունը (լաիցիզմ) մեկնաբանվում էր ոչ միայն որպես կրոնական գաղափարների անջատում պետական և աշխարհիկ գործերից և քաղաքականությունից, այլև ժամանակի քաղաքակրթության և գիտության սկզբունքներին և ձևերին համապատասխանող, աշխարհիկ կարիքները բավարարող օրենսդրության ստեղծում: Սակայն կուսակցության ծրագրում հատուկ նշվում էր, որ լաիցիզմը չի կարելի նույնացնել աթեիզմի հետ[14]: Հեղափոխականությունը դա «թուրք ազգի կողմից իրականացված հեղափոխությունից ծագած և զարգացած սկզբունքներին հավատարմությունը և պաշտպանությունն» էր[15]:

Սահմանադրության մեջ օրենսդիր և գործադիր իշխանություններին, նրանց փոխադարձ զսպումներին ու հակակշիռներին էին նվիրված երկրորդ և երրորդ գլուխները:

Երկրորդ գլխում ընդգրկված էին դրույթներ, որոնք առանցքային նշանակություն ունեին ԹԱՍԺ պատգամավորի կարգավիճակի համար: Սահմանադրությամբ նախատեսվում էր ընտրական ակտիվ իրավունքի իրականացումը 22 տարեկանից, իսկ պասսիվ իրավունքների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն տարիքային սահման էր նշվում 30 տարեկանը[16]: Հիմնական օրենքում ամրագրված էին նաև այն պայմանները, որոնց առկայությունն արգելք էր հանդիսանում պատգամավորական թեկնածության առաջադրման համար: Պատգամավոր չէին կարող ընտրվել անձինք, որոնք գտնվում էին արտասահմանյան պետական ծառայության մեջ, դատապարտվել էին ծանր պատժի կամ պատժի այնպիսի հանցագործություններից մեկի համար ինչպիսիք են հափշտակությունը, կեղծարարությունը, խարդախությունը, վստահության չարաշահումը, չա-

րամիտ սնանկությունը, գտնվում էին խնամակալության տակ, հավակնում էին օտարերկրյա քաղաքացիության, զրկված էին քաղաքացիական իրավունքներից, թուրքերեն կարդալ և գրել չգիտեին (հոդ. 12): Սահմանադրության մեջ ամրագրված էր նաև նորընտիր պատգամավորի՝ պաշտոնը ստանձնելիս տրվող երդման տեքստը[17]: Պատգամավորի լիազորությունների ժամկետը ԹԱՄԺ լիազորություններին համապատասխան սահմանվում էր չորս տարի, նրան տրվում էր նաև վերընտրման հնարավորություն: Սահմանադրությամբ հռչակվում էր պատգամավորական մանդատի ազատությունը[18], դրա անհամատեղելիությունը պետական ծառայության հետ: Հռչակվում էր որ յուրաքանչյուր պատգամավոր հանդիսանում է ոչ միայն իր շրջանի, այլև ողջ երկրի ներկայացուցիչը: Երկրորդ գլխում դրույթներ էին ամրագրված նաև պատգամավորի սանձեռնամխելիության, դրանից զրկելու կարգի վերաբերյալ: Ընտրությունից առաջ կամ հետո կատարված հանցագործության մեջ մեղադրվող ԹԱՄԺ պատգամավորի հարցաքննությունը, ձերբակալությունը կամ դատաքննությունը կարող էր իրականացվել միայն մեջլիսի ընդհանուր նիստում ընդունված որոշման հիման վրա: Մեղադրական դատավճռի իրականացումը հետաձգվում էր մինչև պատգամավորական լիազորությունների ժամկետի ավարտը, սակայն այդ ժամանակահատվածի վրա վաղեմության ժամկետ չէր տարածվում: Նման դեպքերում պատգամավորը զրկվում էր մանդատից՝ բացառությամբ հոդ. 27-ով նախատեսված դեպքերի, երբ ԹԱՄԺ ներկա անդամների երկու երրորդով ընդունված որոշմամբ պատգամավորի դեմ պետական դավաճանության կամ կոռուպցիայի մեղադրանք էր առաջադրվում, կամ 12-րդ հոդվածում հիշատակված հանցագործություններից մեկով դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու դեպքում: Պատգամավորը օժտվում էր նաև ինդեմնիտետով. նա չէր կարող պատասխանատվության ենթարկվել իր կատարած քվեարկության, ելույթի և հայտնած կարծիքի համար, եթե դրանցում առկա չէին քրեական հանցագործության հատկանիշներ (օրինակ զրպարտություն, վիրավորանք և այլն): Սահմանադրության համաձայն պատգամավորներին տրվում էր նաև օրենսդրական նախաձեռնության իրավունք: Պատգամավորի լիազորությունները դադարում էին պետական ծառայության անցնելու, մանդատից հրաժարվելու, մեջլիսի աշխատանքներից երկու ամսվա անհարգելի բացակայության, նրա նկատմամբ օրենքով նախատեսված հիմքերով խնամակալության սահմանման, մահվան դեպքերում:

Սահմանադրությունը ամրագրում էր, որ ԹՄԱԺ-ը հավաքվում է ամեն տարի նոյեմբերի սկզբին առանց հատուկ հրավերի: Այդ ժամանակ էլ ԹԱՄԺ-ն իր կազմից մեկ տարով ընտրում էր ԹԱՄԺ նախագահին և նրա երեք տեղակալներին: Մեջլիսի աշխատանքներն ընդմիջվում էին առավելագույնը վեցամսյա ժամկետով՝ պատգամավորներին հնարավորություն ընձեռելով շրջել երկրում, ուսումնասիրել իրավիճակը, իրականացնել հսկողական գործառույթներ: Այդ ժամանակահատվածի մեջ ներառվում էր նաև պատգամավորի հանգստի համար հատկացվող ժամանակահատ-

վածը: Այդպիսի ընդմիջումների ժամանակ ԹԱԱԺ-ը կարող էր նիստի կանչվել հանրապետության նախագահի, ԹԱՄԺ նախագահի, ԹԱՄԺ պատգամավորների մեկ հինգերորդի պահանջով: Մեջլիսն իր նիստերն անցկացնում էր իր կանոնադրության համաձայն, դռնբաց: Դրանց բովանդակությունը հրապարակվում էր տպագիր մամուլում, եթե այլ բան չէր նախատեսվում ԹԱՄԺ որոշմամբ: ԹԱՄԺ բացառիկ իրավասությանն էին պատկանում օրենքների ընդունումը, փոփոխությունը, մեկնաբանումը և վերացումը, օտարերկրյա պետությունների հետ պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, պետական բյուջեի և բյուջեի կատարման վերաբերյալ օրենքների քննարկումն ու ընդունումը, դրամահատությունը, մեներշնորհային պայմանագրերի, ֆինանսական պարտավորություններ պարունակող պայմանագրերի և կոնցեսիաների հաստատումը և վերացումը, մասնակի կամ լրիվ համաներումը, պատժի մեղմացումն ու փոխարինումը, դատական քննության և մեղադրական դատավճիռների իրագործման կասեցումը, պատերազմի և խաղաղության հայտարարումը, մահապատժի վերջնական դատավճիռների հաստատումը[19]: Մեջլիսը կառավարության գործունեության նկատմամբ իր հսկողական գործառույթներն իրականացնում էր ոչ միայն բյուջետային օրենքների հաստատման, դրանց կատարման նկատմամբ հսկողության միջոցով, այլև հարցումների, հարցապնդումների, ինչպես նաև խորհրդարանական հետաքննությունների իրականացման միջոցով, որոնց իրականացման կարգը սահմանվում էր ԹԱՄԺ կանոնադրությամբ: ԹԱՄԺ գործունեության վաղաժամ դադարեցում հնարավոր էր միայն դրա անդամների բացարձակ մեծամասնության կողմ լինելու դեպքում, երբ կայացվում էր ԹԱՄԺ ինքնալուծարման և նոր խորհրդարանական ընտրությունների անցկացման որոշում: Որևէ այլ մարմնի տրված չէր ԹԱՄԺ լուծարման հարցի բարձրացման իրավունք ու հնարավորություն:

Սահմանադրությունը պետության գլուխ էր հռչակում նախագահին, որը որպես այդպիսին հատուկ հանդիսավոր դեպքերում նախագահում էր ԹԱՄԺ, ինչպես նաև, երբ անհրաժեշտ էր համարում, կառավարության նիստերը: Թուրքիայի հանրապետության նախագահն ընտրվում էր ԹԱՄԺ կողմից ընդհանուր նիստում սեփական անդամներից լեգիսլատուրայի ողջ ժամկետով՝ չորս տարով և կարող էր վերընտրվել, սակայն պաշտոնավարության ընթացքում նախագահը չէր կարող մասնակցել ԹԱՄԺ քննարկումներին, աշխատանքներին և քվեարկություններին: Թուրքիայի 1924թ. սահմանադրությամբ նախատեսված չէր վարչապետի ինստիտուտը և այն դեպքերում երբ նախագահը չէր կարող իրականացնել իր պարտականությունները, հիվանդության, արտասահմանյան ճանապարհորդության, մահվան, պաշտոնաթողության կամ այլ դեպքերում նրա պարտականությունները ժամանակավոր փոխարինման կարգով իրականացնում էր մեջլիսի նախագահը: Մեջլիսի նստաշրջանի ընթացքում նախագահի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում մեջլիսի կողմից անմիջապես պետք է ընտրվեր նոր նախագահ, իսկ եթե նման դեպք էր

պատահում մեջլիսի արձակուրդի ժամանակ, ապա մեջլիսի նախագահի կողմից անմիջապես հրավիրվում էր մեջլիս և իրականացվում էին նոր ընտրություններ, իսկ այն դեպքում երբ ԹԱՄԺ լիազորությունների ժամկետն ավարտվում էր կամ ընդունվում էր ինքնալուծարման վերաբերյալ որոշում, ապա նախագահն ընտրվում էր արդեն նոր ԹԱՄԺ կողմից: Սահմանադրության համաձայն նախագահի պաշտոնը ստանձնելիս տրվում էր երդում, որի տեքստը ամրագրված էր Սահմանադրության մեջ[22]: Յուրաքանչյուր տարվա նոյեմբերին նախագահը, կամ նրա հանձնարարությամբ վարչապետը, ԹԱՄԺ առջև հանդես էր գալիս ամենամյա ուղերձով կառավարության նախորդ տարվա գործունեության արդյունքների և այն միջոցառումների շարադրմամբ, որոնք նպատակահարմար էր համարվում իրականացնել հաջորդ տարվա ընթացքում: Սահմանադրության համաձայն նախագահը տասնօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում էր ԹԱՄԺ ընդունած օրենքները: Բացառությամբ հիմնական և բյուջետային օրենքների, նախագահն կարող էր չստորագրել և առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել օրենքը ԹԱՄԺ նորից քննարկման, սակայն ԹԱՄԺ կողմից նորից նախնական տեսքով ընդունվելու դեպքում պարտավոր էր հրապարակել այն օրենքով նախատեսված ժամկետներում: Նախագահը պատասխանատվության հարց կարող էր բարձրացվել ԹԱՄԺ առջև պետական դավաճանության համար: Նախագահը կառավարության ներկայացմամբ կարող էր վերացնել կամ նվազեցնել դատարանների կողմից նշանակված պատիժները հիվանդության կամ զառամյալ տարիքի հատուկ պատճառներով, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում էր ԹԱՄԺ կողմից հարուցված մեղադրանքներով դատապարտված նախարարներին:

Նախագահը ԹԱՄԺ անդամներից նշանակում էր վարչապետ, իսկ վերջինիս առաջարկությամբ՝ նախարարներին: Նախարարների խորհուրդը մեկշաբաթյա ժամկետում ԹԱՄԺ-ին ներկայացնում էր իր ծրագիրը, և համապարտ պատասխանատվություն կրում կառավարության վարած քաղաքականության համար, իսկ յուրաքանչյուր նախարար՝ կրում էր անձնական պատասխանատվություն իր իրավասության մեջ մտնող գործերի, իրեն ենթակա անձանց գործողությունների, ինչպես նաև իր կողմից իրականացված ընդհանուր քաղաքական ղեկավարության համար: Նախարարների պարտականությունները և պատասխանատվությունը, նախարարությունների կառուցվածքը սահմանվում էին հատուկ օրենքներով: Սահմանադրությունը թույլատրում էր նաև երկու նախարարական պորտֆելների ժամանակավոր համատեղում, եթե նախարարը գտնվում էր արձակուրդում կամ որևէ այլ պատճառով ի վիճակի չէր կատարել իր պարտականությունները: Նախարարական պաշտոնից հեռացմանը կարող էր հանգեցնել ինչպես վարչապետի առաջարկության հիման վրա նախագահի կողմից նրան պաշտոնից ազատելը, այնպես էլ Նախարարների խորհրդի անդամի դեմ Գերագույն դատարանում գործ հարուցելու ԹԱՄԺ որոշումը: Սահմանադրությունը կառավարությանն ընձեռում էր կարգու-

կանոնի հաստատման, օրենքների հետ կապված առանձին հարցերի մեկնաբանման նպատակով նաև կարգադրությունների ընդունման և Պետական խորհրդին ներկայացման հանրավորություն, եթե դրանք չէին պարունակում նոր դրույթներ: Այդ կարգադրություններն ուժի մեջ էին մտնում հանրապետության նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո: Այն դեպքում, եթե նշված ակտերը վիճարկվում էին որպես օրենքին հակասող, դրանց ճակատագիրը որոշում էր ԹԱՄԺ-ը:

Պետական խորհուրդը հիմնականում կոչված էր զբաղվելու լիազորությունների վերաբերյալ միջգերատեսչական վարչական հայցերի և վեճերի քննությամբ ու լուծմամբ, կառավարության կողմից նախապատրաստված օրինագծերի կամ իր ուսումնասիրությանը ներկայացված կոնցեսիոն պայմանագրերի կամ պետական կապալների վերաբերյալ եզրակացություն տալով: Նրա վրա կարող էին դրվել նաև Պետական խորհրդի մասին հատուկ օրենքում կամ այլ հետագա օրենքներում սահմանված այլ պարտականություններ (հոդ. 51): Պետական խորհրդի նախագահը և անդամներն ընտրվում էին ԹԱՄԺ կողմից իրենց՝ գիտելիքներով և փորձով հայտնի բարձրաստիճան անձանցից:

Դատական համակարգին էր նվիրված Սահմանադրության չորրորդ գլուխը:

Սահմանադրությամբ հռչակվում էր արդարադատություն իրականացնելիս դատարանների անկախությունը և ազատությունը, նրանց ենթարկվելը միայն օրենքին և ԹԱՄԺ կամ Նախարարների խորհրդի կողմից դրանց դատավճիռների և որոշումների վերափոխման կամ հետաձգման անթույլատրելիությունը: Դատարանների կառուցվածքը, պարտականությունները, ենթակայությունը, դատավորների որակավորումը, իրավունքներն ու պարտականությունները, աշխատավարձը, նրանց նշանակման և ազատման կարգը որոշվում էին հատուկ օրենքներով: Դատավորներին ուղղակիորեն արգելվում էր զբաղեցնել այլ հանրային կամ մասնավոր պաշտոններ, բացի նրանցից, որոնք նախատեսված էին օրենքով: Դատավարությունը կարող էր անցկացվել ինչպես դռնբաց, այնպես էլ դռնփակ նիստում դատավարության կանոններին համապատասխան: Դատարաններին արգելվում էր հրաժարվել իրենց իրավասության մեջ մտնող գործերի քննությունից, իսկ ընդդատության պատճառով հրաժարումը պետք է ամրագրվեր դատական որոշմամբ:

Սահմանադրությունը նորմեր էր պարունակում միայն Գերագույն դատարանի մասին, մնացած դատարաններին առնչվող հարցերը թողնելով օրենսդրական կարգավորմանը: Ըստ այդմ սահմանվում էր, որ Գերագույն դատարանը մշտապես գործող մարմին չէր: Այն կազմավորվում էր ԹԱՄԺ որոշմամբ, երբ վերջինս դա անհրաժեշտ էր համարում: Այն կոչված էր իրականացնելու էր Նախարարների խորհրդի նախագահի և անդամների, Պետական խորհրդի, Վճռաբեկ պալատի նախագահի և անդամների պաշտոնեական հանցագործությունների քննությունը: Գերագույն դատարանը կազմված էր 21 անդամներից, որոնցից 11-ը և 10-ը համապատաս-

խանաբար Վճռաբեկ պալատի և Պետական խորհրդի նախագահներից և անդամներից: Գերագույն դատարանի անդամներն իրենց կազմից գաղտնի քվեարկությամբ՝ ձայների բացարձակ մեծամասնությամբ ընտրում էին դատարանի նախագահ և նրա տեղակալ: Դատարանը գործը քննում էր նախագահողի և 14 անդամների կազմով: Մնացած 6 անդամները համարվում էին պահեստային, որպեսզի անհրաժեշտության դեպքում փոխարինեն դատարանի անդամների թափուր տեղերը: Պահեստային անդամներն ընտրվում էին վիճակահանությամբ՝ 3-ական՝ Վճռաբեկ պալատի և Պետական խորհրդի ընտրված անդամների թվից: Գերագույն դատարանի որոշումները կայացվում էին ձայների բացարձակ մեծամասնությամբ: Գերագույն դատարանում դատախազի պարտականություններն իրականացնում էր Գլխավոր դատախազը:

Թուրքիայի 1924թ. Սահմանադրությամբ ամրագրված կառավարման մոդելն իր բնույթով կարելի է համարել Ազ կառավարություն, որը հիմնված է օրենսդիր և գործադիր իշխանությունների միասնության և կենտրոնացման վրա: 1924թ. Սահմանադրությունը իր ոգով անկասկած ժողովրդավարական էր, սակայն դա ավելի շուտ ժողովրդավարության «մեծամասնական» կամ «Ռուսսոյական» հայեցակարգ էր, քան զսպումների և հակակշիռների բարդ համակարգի վրա հիմնված ազատական ժողովրդավարություն[2]: «Մեծամասնական» տեսության համաձայն «ինքնիշխանությունը» ազգի ընդհանուր կամքն է (որը պրակտիկայում պետք է մեկնաբանվի որպես մեծամասնության կամք) և որպես այդպիսին բացարձակ, անքակտելի և անսխալ: Ուստի օրենսդիրը ներկայացնում է ազգի իրական կամքը: Հետևաբար օրենսդիր իշխանության սահմանափակումը հավասարազոր է ազգային կամքի սահմանափակմանը, որն էլ հանգեցնում է ազգի ինքնիշխանության սահմանափակմանը: Ազգի ինքնշխանության սկզբունքը բացարձակացնող Թուրքիայի հանրապետության հիմնադիրների համար դրա որևէ ձևով կամ չափով սահմանափակման վերաբերյալ ցանկացած միտք արդեն անընդունելի էր և ենթակա չէր կարող լինել քննարկման: Այդպիսի սահմանափակումները ոչ անհրաժեշտ և ոչ էլ օգտակար կարող էին լինել, քանզի ժողովրդավարության Ռուսսոյական տեսության համաձայն ընդհանուր կամքը միշտ ճիշտ է: Ակնհայտ է, որ ժամանակակից ժողովրդավարական տեսությունները այլևս չեն հենվում ընդհանուր կամքի նման մետաֆիզիկական հայեցակարգի վրա: Սակայն Ռուսոոյական գաղափարները տևական ազդեցություն ունեցան Ֆրանսիական ժողովրդավարական մտքի վրա, որից ազդվել են նաև թուրք հեղափոխականները:

Չպետք է անտեսել, որ 1924թ. Սահմանադրությունը սուլթանության դեմ ուղղված երկար պայքարի արդյունք էր: Հետևաբար զարմանալի չէ որ համար մեկ սպառնալիքն ազգային շահերին համարվում է սուլթաններից եկողը: Հայտնի չէ, արդյոք 1924թ. Սահմանադրության «հայրերը» լիովին չէին գիտակցում, որ մեծամասնության բռնակալությունը հնարավոր է այնքան և վտանգավոր է այնքան, որքան անձնական բռնակալութ-

յունը, սակայն այս բավականին պարզունակ մոտեցումը ժողովրդավարությանը առկա էր 1924թ. Սահմանադրության շատ առումներում: Սահմանադրությամբ ԹԱՄԺ-ին լիիշխանությամբ օժտելը, նրա և գործադիրի փոխադարձ հսկողության հնարավորությունների, զսպումների և հակակշիռների համակարգի անհավասար բաշխումը բխեցվում էր ազգային անսահմանափակելի ինքնիշխանության գաղափարի որոշակի բացարձակեցումից, երբ ամրագրվում էր իշխանությունների թևերի միջև հարաբերությունների մի մոդել, որը խորհրդարանին ցանկացած ժամանակ հնարավորություն էր ընձեռում հսկել կառավարության գործունեությունը կառավարության ծրագրին հավանություն տալու կամ չտալու, խորհրդարանական հարցապնդումների, խորհրդարանական հետաքննությունների միջոցով, երբ Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված էր ցանկացած ժամանակ կառավարությանը պաշտոնանկելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ խորհրդարանին լուրջ հակազդելու լծակներ գործադիր իշխանությանը չէր տրվում: Ի տարբերություն խորհրդարանի կառավարությունը որևէ կերպ չեր կարող մասնակցել խոհրդարանի արձակման գործընթացին, որը նախատեսվում էր միայն ինքնալուծարման կամ ինքնաարձակման ձևաչափով: Նախագահին տրված չէր օրենսդրական նախաձեռնության իրավունք, իսկ նրան տրված վետոյի իրավունքը շատ թույլ լծակ էր, քանզի կիրառելի չէր բոլոր օրենքների նկատմամբ և հաղթահարվում էր խորհրդարանի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ: Այլ հարց է, որ նախագահի համար սահմանվում էր որոշակի բարենպաստ կարգավիճակ կապված իր կողմից արձակված հրամանագրերի համար անպատասխանատվության հետ, քանի որ նախագահական ակտերը վավերացվում էին վարչապետի և համապատասխան նախարարի կողմից, որոնք էլ պատասխանատվություն էին կրում դրանց համար: Նախագահի պատասխանատվության հարց կարող էր բարձրացվել ԹԱՄԺ-ում միայն հայրենիքի դավաճանության հետ կապված հարցերով: Նախագահին տրված բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը կրում էր ձևական բնույթ և զրկված էր պրակտիկ կիրառության հնարավորությունից:

Սակայն կառավարման նման մոդելի սահմանադրական ամրագրման և Թուրքիայում գոյություն ունեցող փաստական իրավիճակի մեջ տարբերություններն ակնհայտ էին: Գործնականում ԹԱՄԺ տեսական գերակայությունը հաճախ ձևափոխվում էր գործադիրի դոմինանտության, քանզի գործադիրը սովորաբար կազմված էր կուսակցության կամ խմբակցության ղեկավարներից, մինչդեռ օրենսդիրը ներառում էր քանակապես շատ, սակայն քաղաքականապես ավելի թույլ շարքային կուսակցականների: Առկա էր կուսակցական և կառավարման ապարատի միահյուսում, երբ կուսակցության ղեկավար անձինք զբաղեցնում էին բարձրագույն պետական պաշտոններ, իսկ տեղերում կառավարման պետական մարմինները գլխավորում էին կուսակցության շրջանային կազմակերպությունների ղեկավարները: Թե միակուսակցական (1924-1946), թե

բազմակուսակցական տարիներին գործադիրը գլխավորողների ավտորիտար ղեկավարության և ուժեղ կուսակցական կարգապահության պայմաններում ԹԱՄԺ դերը նվազեցվել էր երկրորդականի: Դա պայմանավորված էր նաև նախագահների՝ Աթաթյուրքի և Ինյոնյուի անձնական հատկանիշներով:

Կյանքի չէին կոչված Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքները նաև դատական իշխանության անկախության վերաբերյալ: Չնայած դատական իշխանության և դատարանների անկախության և միայն օրենքին ենթարկվելու, դրանց գործունեությանը և արդարադատության իրականացմանը ցանկացած միջամտության անթույլատրելիության սահմանադրական հռչակումներին և պահանջներին, գործնականում ստեղծված պայմանները ուղղակիորեն հնարավորություն չէին տալիս դրանց կենսագործման համար: Գործող օրենսդրության համաձայն դատավորները նշանակվում էին արդարադատության նախարարության կողմից: Արդարադատության նախարարությունն էր իրականում որոշում նաև դատավորների տեղափոխումների և պաշտոնեական առաջխաղացման կոչումների ու պատասխանատվության հետ կապված բոլոր հարցերը[23]: Այդպիսի պայմաններում խոսք չէր կարող լինել նրանց անկախության մասին: Սահմանադրությամբ չէր արգելվում արտակարգ դատարանների ստեղծումը: Թուրքիայում իշխանությունների կողմից ստեղծված արտակարգ դատարանները կոչված էին քննելու գործող կարգերի դեմ ուղղված ծանր հանցագործությունները, սակայն իրականում դրանք օգտագործվում էին իշխանությունների քաղաքական հակառակորդների վնասազերծման և ահաբեկման նպատակով[24]: Բացակայում էր նաև Սահմանադրությանը օրենքների համապատասխանության ստուգման օրենսդրորեն ամրագրված որևէ հնարավորություն: Սահմանադրական դատարան դատական համակարգում նախատեսված չէր, իսկ ընդհանուր իրավասության դատարաններին տրված չէր նման լիազորություն: Դա գրեթե անսահմանափակ հնարավորություններ էր ստեղծում ԹԱՄԺ համար ցանկացած օրենքի ընդունման ու կենսագործման համար, որոնք կարող էին ոչ միայն չհամապատասխանել սահմանադրական դրույթներին, այլև նույնիսկ ուղղակի հակասել դրանց[24]:

1924թ. Սահմանադրությամբ ողջ իշխանությամբ մեջլիսին օժտելը, և գործադիրին սահմանափակ հնարավորություններ ընձեռելը, բացի ազգային ինքնիշխանության սկզբունքի արտահայտություն հանդիսանալուց, երբեմն ստեղծում է նաև գործադիրի նկատմամբ էմոցիոնալ և անհարկի անվստահություն տպավորություն:

Սահմանադրական զսպումների և հակակշիռների անհամաչափությունը լուրջ խնդիր չէր առաջացնում միակուսակցական համակարգի գոյության տարիներին, քանզի միակուսակցական համակարգը ինքը ենթադրում էր ողջ իշխանության ուժեղ կենտրոնացում: Դա կարող է պատճառաբանվել և հիմնավորվել, որ ժամանակաշրջանի բարեփոխումները հազիվ թե հնարավոր լիներ իրականացնել մի քաղաքական համակարգի

կողմից, ուր այդպիսի իշխանությունը բաժանված և ցրված էր: Սակայն 1946թ. բազմակուսակցական համակարգին անցում կատարելուց հետո Սահմանադրության թերությունները ակնհայտ դարձան: Դա 1950-ական թթ. վերջերին զգալիորեն մեծացրեց լարումը իշխող դեմոկրատական կուսակցության և ընդդիրմադիր հանրապետականների միջև: 1960թ. գարնանը կառավարության կողմից իրականացված ավտորիտար միջոցառումները լայնածավալ հուզումներ առաջացրեցին երկրում: 1960թ. մայիսի 27-ին Թուրքական զինված ուժերը տապալեցին Սեներեսի կառավարությունը:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Özbüdün Ergün. Türk anayasa hukuku. Ankara. 2000. էջ 31:
2. Տե՛ս Yavuz H. K. Türkiede siyasal system arayısı ve yürütme güçlendirilmesi. Ankara. 2000. էջ 391
3. Tanör. Osmanlı – Türk Anayasal Gelismeleri.Istanbul. 1995 էջ 224:
Թուրքական պատմագիտական ընկերության գործունեության սկզբնական շրջանի ուսումնասիրությամբ կարելի է եզրակացնել, որ այդ ընկերությունը ստեղծվել է հատուկ նպատակներով ընկերության հիմնադիրները և «հովանավորները» հասարակությանը ուղղակի պարտադրել են տեղեկանալ ընկերության կողմից ներկայացվող պատմական նոր հայեցակարգին և ընդհանրապես բոլոր հրապարակումներին:

1932 թվականի փետրվարի 14-ին Աթաթուրքի հրամաններում թուրքական պատմագիտական առաջին համագումարից բացի տեղ է գտել ևս 3 խնդիր:

1. Վերջին ուսումնասիրությունների և փաստերի հիման վրա կրկին գրի առնել «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը:
2. Ուսումնասիրությունների համար պատրաստված 4 հատոր պատմության գրքերում անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո 1932-1933 ուսումնական տարվա համար հանձնել նոր հրատարակության:
3. Նախակրթարանների համար պատրաստել պատմության նոր դասագրքեր:

Այս հարցերը քննարկվեցին 1932 թվականի փետրվարի 25-ին սկսված և մինչև մարտի 10-ը տևած համագումարի 5 ժողովների ընթացքում, որտեղ հստակ հանձնարարություններ տրվեցին համապատասխան ստորաբաժանումներին: Աթաթուրքը խնդիր էր դրել, որ «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը պատրաստ լինի մինչև 1932թ.-ի աշնանը: 1932թ.-ի հուլիսի 13-ից մինչև հոկտեմբերի 17-ը Անկարայում և Ստամբուլում տեղի ունեցած նստաշրջանների ընթացքում կայացվեցին վերջնական որոշումներ այն մասին, թե ովքեր պետք է գրեն աշխատությունները և այն երբ է պատրաստ լինելու: Ըստ այդմ՝ որոշվեց պատմության բաժինը հանձնարարել Թուրքական պատմագիտական ընկերության անդամներին, իսկ մշակույթի բաժինը առանձին մասնագետների: Այսպիսով՝ ակնհայտ երևում է, որ թուրքական իշխանությունների խնդիրը ոչ թե պատմության իրական պատկերը ներկայացնելն էր, այլ ուղղակի նրանց հետաքրքրում էր հատկապես պատմության բաժինը «յուրովի» ներկայացնելու հարցը: Այլապես մշակույթի բաժինը և այդ բաժնի կողմից հրատարակված նյութերը նույնպես կարող էին պահել հատուկ հսկողության տակ: Սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այդ բաժնի աշխատանքներին Աթաթուրքը հիմնականում չի միջամտել:

Թուրքական պատմագիական առաջին համագումարից հինգ տարի հետո՝ 1937թ.-ի սեպտեմբերի 20-25-ը, Ստամբուլի Դոլմաբահչե պալատում գումարվեց թուրքական պատմական երկրորդ համագումարը[1]: Այս համագումարին առաջին անգամ հրավիրվել էին օտարերկրացի գիտնականներ[2]: Թուրքական պատմագիտական երկրորդ համագումարի կազմակերպման նպատակն էր օտարերկրացի գիտնականներին ներկայացնել թուրքական պատմական նոր հայեցակարգը և ուսումնասիրված տեղեկությունները: Բացի այդ՝ ուսումնասիրությունների գործընթացի վերաբերյալ համագումարի ընթացքում կազմակերպվել է ցուցահանդես, ուր ներկայացվել են Օսմանյան կայսրության վերջին շրջանին և Միջին Արևելքում զարգացող իրադարձություններին վերաբերող տարբեր նյութեր[3]: Թուրքական պատմագիտական երկրորդ համագումարին ներկայացված բոլոր ուսումնասիրությունները Աթաթուրքը կարդացել էր մեկ առ մեկ, որից հետո միայն թույլատրել էր դրանք ներկայացնել[3]:

Աթաթուրքը հսկողության տակ էր պահում համագումարի ընթացքում ներկայացված բոլոր հրապարակումներն ու ելույթները, քանի որ Թուրքական պատմագիտական ընկերության կողմից կազմակերպված համագումարին առաջին անգամ հրավիրվել էին նաև օտարերկրացի պատմաբաններ: Այդ իսկ պատճառով համագումարի աշխատանքները ընթանում էին ավելի «հավասարակշռված»:

1943թ.-ի նոյեմբերի 15-20-ը Անկարայում տեղի ունեցած Թուրքական պատմագիտական երրորդ համագումարի աշխատանքները 2-րդ համաշխարհային պատերազմի պատճառով սկսվեցին ուշացումով: Պատմության ուսումնասիրությունների աշխատանքներին ավելի մոտիկից հետևող Իսմեթ Ինոնյուն (որը դարձել էր Թուրքիայի Հանրապետության նախագահ 1938թ.) նպատակահարմար չգտավ երրորդ համագումարի աշխատանքները սկսել 1943թ.-ից ավելի ուշ[14]:

Թուրքական իշխանությունները դրա պատճառները կապում էին Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ: 1942թ.-ին Ստալինգրադի ճակատամարտից[15] հետո թուրքական իշխանությունների համար ամեն ինչ պարզ էր. արդեն պատերազմի հետագա ընթացքը կանխորոշված էր, և ուժերի նոր վերադասավորում տարածաշրջանում չէր կարող ակնկալվել: Նման պարագայում համագումարի աշխատանքները հարկավոր էր սկսել ոչ ուշ, քան 1943թ.-ին:

Երրորդ համագումարին Թուրքական պատմագիտական ընկերության գլխավոր քարտուղարն իր ելույթում նշում է. «Վերջին վեց տարիներին Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը իրագործելու նպատակով ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցառումները: Այդ ժամանակահատվածում կատարվել է Անատոլիայում մեծ պետության ստեղծման, խեթերի սփռման սահմանների ուսումնասիրությունը, հին Անատոլիայի, Միջին Ասիայի, Էգեյան ծովի ավազանի, հարավային Ռուսաստանի և արևելյան Եվրոպայի մշակույթների ուսումնասիրությունները, ինչպես նաև հրապարակվել են հազարավոր տարիներ ի վեր մեծ քաղաքակրթության բնակավայր հանդիսացող Անատոլիայի պատմությանը վերաբերող փաստաթղթեր[16]»:

Անհրաժեշտ է նշել, որ Թուրքական պատմագիտական ընկերության մասնագետները, իրենց ուսումնասիրությունների արդյունքում անդրադառնալով արաբներին, պարսիկներին, իրաքցիներին, սելջուկներին, ռուսներին, չինացիներին, թուրքական պաշտոնական պատմագրության մեջ հատկապես Փոքր Ասիայի (Անատոլիայի) վերաբերյալ հրապարակումներում որևէ կերպ չեն խոսում հայերի մասին:

Անատոլիայում բնակվող խեթերից մինչև օսմանյան ժամանակաշրջանին վերաբերող հրապարակումներում Թուրքական պատմագիտական ընկերությունն անդրադարձել է այդ տարածաշրջանում ապրող գրեթե բոլոր ժողովուրդներին՝ բացի հայերից[17]: Փաստորեն թուրք պատմաբանները հարցին անդրադարձել են այն տեսանկյունից, թե իբր թուրքերը այդ տարածաշրջանի ամենահին ժողովուրդն են:

Թուրքական պատմագիտական չորրորդ համագումարը տեղի է ունեցել 1948 թվականի նոյեմբերի 10-ից 14-ը Անկարայում՝ Լեզվի և պատմաաշխարհագրական ֆակուլտետի մասնաշենքում: Ինչպես ընկերության աշխատանքներին, այնպես էլ համագումարի կազմակերպմանը հետևում էին հանրապետության այն ժամանակվա նախագահ Ի. Ինոնյուն, վարչապետ Հ. Աաքաճ, Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Շ. Սարաջօղլուն, նախարարները և Գլխավոր շտաբի պետ Ս. Օմուրթաքը[18]:

Ընկերությունը շարունակում էր մնալ պետական հովանավորության ներքո և կատարում էր պետության առաջադրանքները: Ինչպես արդեն նշվել է, ընկերության առջև նպատակ էր դրված պատրաստել և աշխարհին ներկայացնել թուրքական պատմական նոր հայեցակարգը:

Թուրքական պատմագիտական չորրորդ համագումարին ի թիվս այլ նյութերի ներկայացվել է ուսումնասիրություն «Օսմանյան ղեկավարությունը և վրացիները» թեմայով: Այն հետագայում հրապարակվել է ընկերության պաշտոնական տեղեկագրում: Թուրք պատմաբաններին անհանգստություն է պատճառել վրացի երկու պատմաբանի կողմից ներկայացված «վրացական հարցը», որի արդյունքում էլ ուսումնասիրվել և հրապարակվել է Մահմուդ երկրորդի ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերը:

Վրացի պատմաբանները նշում են, որ թուրքերը չափազանց դաժան են վարվել վրացի ժողովրդի նկատմամբ, վրացիներին պարտադրել են մոռանալ իրենց կրոնը և ընդունել իսլամ: Այդ պատճառով էլ վրացի ժողովուրդը միավորվելով ռուսների հետ պատերազմել է օսմանցիների դեմ[19]:

Թուրքական պատմագիտական ընկերության պաշտոնական տեղեկագրերն ուսումնասիրելիս պարզվում է, որ մինչև 1950 - ական թվականների հրապարակումներն ընկերությունը գտնվելով պետական հովանավորության ներքո, կատարելով հանճնարարություն, գիտակցաբար իր ուսումնասիրություններում հազվադեպ և բոլորովին կարևորություն չներկայացնող դեպքերում է անդրադառնում հայերին (Հայաստանին)[20]: Դա պայմանավորված էր այդ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ որդեգրած մերժողական քաղաքականությամբ: Թուրքերը կարծում էին, որ մոռացության մատնելու և ընդհանրապես հայերին չանդրադառնալու պայմաններում հասարակության հիշողությունից ժամանակի ընթացքում դուրս կմնան ցեղասպանության այն իրողությունները, որոնք ոչ վաղ անցյալում՝ տեղի էին ունեցել օսմանական իշխանությունների կողմից, փաստորեն որոնց իրավահաջորդ են համարվում ինչպես քեմալական շրջանի, այնպես էլ ներկայիս թուրքական իշխանությունները:

Թուրքական պատմագիտական ընկերության 25-րդ տարեդարձի կապակցությամբ 1956թ. ապրիլի 12-17-ը տեղի ունեցավ Թուրքական պատմագիտական հինգերորդ համագումարը[21]: Այս անգամ նույնպես Օսմանյան պատմությանը վերաբերող հարցեր ներկայացնելիս թուրք պատ-

մաբանները անդրադարձան մի շարք երկրների այդ թվում նույնիսկ Հունգարիային և Բոսնիային՝ չանդրադառնալով Հայաստանին կամ հայերին[22]:

Փաստորեն 25 տարիների ուսումնասիրությունների արդյունքում թուրք պատմաբանները, որոնք գրում էին Թուրքիայի պաշտոնական պատմագրությունը, բոլոր հինգ համագումարների ընթացքում բոլորովին չեն անդրադարձել Հայաստանին: Թուրքական պատմագիտական հինգերորդ համագումարից հետո 1961 թվականի հոկտեմբերի 20-26-ին տեղի ունեցան Թուրքական պատմագիտական վեցերորդ, իսկ 1970 թվականի սեպտեմբերի 25-29-ին՝ յոթերորդ համագումարները, որոնք իրենց կարևորությամբ և անհրաժեշտությամբ ավելի քիչ էին աչքի ընկնում քան նախորդները, սակայն ընկերության որդեգրած ուղին պահպանվում էր նաև այս համագումարների ժամանակ[23]:

Թուրքական պատմագիտական ութերորդ համագումարը տեղի է ունեցել 1976թ.-ի հոկտեմբերի 11-ին: Թուրքական պատմագիտական ընկերության գլխավոր տնօրեն Ուլուղ Իղդեմիրն իր զեկույցում նշել է, որ ընկերությունը բոլոր հնարավորություններն ուղղել է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան 100 ամյակին նվիրված համագումարը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Նախապատրաստական աշխատանքներին հետևում էր այն ժամանակվա նախագահ Ֆահրի Քորութուրքը:

Ութերորդ համագումարին Աթաթուրքի 100 ամյակի կապակցությամբ առաջարկվել է կրկին հրատարակել Աթաթուրքի ելույթները, նախապատրաստել և հրատարակել Աթաթուրքի ելույթների և հայտարարությունների շարքը, վերջին տարիներին հրապարակ եկած փաստաթղթերի լույսի ներքո կրկին հրատարակել Աթաթուրքի կենսագրական մանրամասները, հրատարակել օտարերկրյա թերթերում ու ամսագրերում տեղ գտած բոլոր նյութերը, որոնցում անդրադարձել են Աթաթուրքի ժամանակաշրջանին, որպես մենագրություն հրատարակել Աթաթուրքի նամակները, որոնք վերաբերում են պատմությանն ուղղված նրա աշխատանքներին, 1981 թվականին Աթաթուրքի ծննդյան առթիվ հրավիրել Թուրքական պատմագիտական իններորդ համագումարը, կրկին գրել և մինչև իններորդ համագումարը հրատարակել «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը, կազմակերպել մրցույթ «Թուրքիայի պատմությունը հին ժամանակներից մինչև 1920-ական թվականները» մեկ հատորից բաղկացած գիրք, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետությանը նվիրված 1920-1970թթ.-ին վերաբերող պատմության գիրք գրելու համար, հատկացնել 50.000 լիրա մրցանակ Աթաթուրքի շրջանին վերաբերող ամենալավ աշխատության համար, հավաքել Աթաթուրքին վերաբերող բոլոր փաստաթղթերը և ստեղծել Աթաթուրքի արխիվը, կազմակերպել սեմինար նվիրված Աթաթուրքի կյանքին և ստեղծագործություններին, կազմել Աթաթուրքին և Հանրապետությանը նվիրված մատենագրություն՝ հավաքելով հրատարակված տեղական և օտարերկրյա բոլոր նյութերը, հրատարակել Աթաթուրքին նվիրված ալբոմ, ստեղծել Աթաթուրքի մասին պատմող կինոնկար[24]:

Փաստորեն Թուրքական պատմագիտական ութերորդ համագումարը ամբողջովին նվիրված էր Աթաթուրքին: Երկրի զինվորական իշխանությունները և ընկերության անդամները ցանկանում էին իրենց նման վերաբերմունքով ցույց տալ, թե ինչպիսի մեծ գործ է կատարել Աթաթուրքը՝ թուրքական պատմական նոր հայեցակարգը ամբողջ երկրում և արտերկրում շրջանառության մեջ դնելով:

1980թ.-ի սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած երկրորդ ռազմական հեղաշրջումը (Առաջինը տեղի է ունեցել 1960թ.-ի մայիսի 27-ին) թուրքական պատմական հայեցակարգը հանրությանը ներկայացնելու տեսանկյունից չափազանց օգտակար էր թուրքական իշխանությունների համար: Այդ ընթացքում ուշադրություն էր հրավիրվում հատկապես կրթության բնագավառի և պատմության ուսումնասիրման վրա:

Թուրքիայի Հանրապետության և Թուրքական պատմագիտական ընկերության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան 100 ամյակի կապակցությամբ 1981թ.-ի սեպտեմբերի 21-25-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, բանակի գեներալ Քենան Էվրենի գլխավորությամբ (այն ժամանակ նախագահի պարտականությունները կատարում էր Էվրենը) Անկյուրայում հրավիրվում է Թուրքական պատմագիտական իններորդ համագումարը, որի ընթացքում Էվրենը հանդես է գալիս ընդարձակ ելույթով և նշում, որ Թուրքական պատմագիտական ընկերությունն իր գործունեության ընթացքում հասել է մեծ հաջողությունների և պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները: Այնուհետև ելույթ են ունենում Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ պրոֆեսոր Էնվեր Զիյա Քարալը, ընկերության և իններորդ համագումարի գլխավոր քարտուղար դոկտոր, պրոֆեսոր Սեդաթ Ալփը, ինչպես նաև ընկերության գլխավոր տնօրեն Ուլուղ Իղդեմիրը: Էնվեր Զիյա Քարալը Թուրքիայում հայտնի է որպես Թուրքական պատմագիտական ընկերության ամենաժրաջան նախագահ, որի ղեկավարման ժամանակաշրջանում շատ ավելի ակտիվ և մատչելի կերպով է հանրությանը ներկայացվել թուրքական պատմական նոր հայեցակարգը: Նա հեղինակ է «Թուրքիայի Հանրապետության պատմությունը» (Ստամբուլ, 1944թ.) աշխատության:

Իններորդ համագումարին ներկայացվել են ուսումնասիրություններ՝ Հին Անատոլիայի (Փ.Ասիա), Միջին Ասիայի, Միջնադարյան Թուրքիայի պատմության և Օսմանյան պատմության վերաբերյալ: Օսմանյան պատմության բաժնում առաջին անգամ մեծ տեղ է հատկացվել Օսմանյան կայսրությունում ապրող հայ ազգաբնակչության հետ այդ երկրի հարաբերություններին[25]:

Շատ կարևոր է ընդգծել այն փաստը, որ Քարալի նախագահության ժամկետները համընկավ ASALA-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) հայտնի դեպքերին: Այդ տարիներին դարձյալ հրատարակվեցին Անատոլիային և թուրքերի ծագմանը վերաբերող ուսումնասիրություններ: Շատ ավելի հրապարակումներ հայտնվեցին Թուրքական պատմագիտական ընկերության օրգան հանդիսացող «Belleten»-ներում

հատկապես հայերի վերաբերյալ: Փաստորեն այս ամենը սկսվեց 1965 թվականին Երևանում տեղի ունեցած բողոքի ցույցի և ավելի ակտիվ 1973 թվականից սկսված ASALA-ի գործողություններից հետո, որը տևեց մինչև 1980-ական թվականները:

Չնայած նրան, որ հետագայում բավականաչափ նվազել է Թուրքական պատմագիտական ընկերության դերը պատմագրության ուսումնասիրման ոլորտում, այնուամենայնիվ մինչ օրս թուրք պատմաբանների առանձին աշխատություններում դեռևս մնում է քեմալիզմի ժամանակաշրջանի ազդեցությունը: Այս իրողությունը ցույց է տալիս քեմալական պատմության «նվաճումը», որին ժամանակի ընթացքում ձգտել են հասնել Թուրքիայի Հանրապետության իշխանությունները:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s. 1.

2.Դա այն նույն պատմաբանն է, որը զբաղվել է Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության հարցի ուսումնասիրությամբ և հայտնի է իր "Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi" վերտառությամբ աշխատությամբ:

3.İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 11, ss.158,

4.Տե՛ս նույն տեղում էջ 13:

5.İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 11.

6. Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, Münakaşalar , Ankara -, s.2.

7. Տե՛ս նույն տեղում էջ 96:

8. Տե՛ս նույն տեղում էջ 240:

9. Տե՛ս նույն տեղում էջ 574:

10.II Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Yayinevi, IX. Seri: No. 2, Kenan Matbaasi, Istanbul, 1943, s. XXXVII.

11.III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, տե՛ս նաև Türk Tarih Kurumu Yayin Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s.1.

12.Türk Tarih Kurumu Yayinlari, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1989, s.2.

13.İğdemir U., Cumhuriyetin 50 Yılında Türk Tarih Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1973, s. 41.

14.Այդ մասին տե՛ս III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. XXIX.

15.Այդ մասին տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 11, Երևան, 1985թ., էջ 97-99:

16.Այդ մասին տե՛ս III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. 14 – 15:

17.III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. 14-46.

18.IV Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1952, s. XI.
19.Sb'u ünıjü unqnıü tç 317:
20.Sb'u, "Belleten"-ün 1957p.-hg ühü¿ı 1965p.-ı:
21.V Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1960, s. IX.
22. Sb'u ünıjü unqnıü, tç 464:
23.İğdemir U., Cumhuriyetin 50 Yılında Türk Tarih Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1973, s. 45.
24.Afetinan A., "M.Kemal Atatürkün Doğumunun 100, yildönümü (19 mayis 1981) Türk Tarih Kurumunun Kuruluşunun 50. yildönümü (15 nisan 1981), Belleten, cilt.XLIV, sayı: 176, Ekim 1980, s. 633-634.
25.Pulat O., "IX Türk Tarih Kongresi", Belleten, Cilt: XLV/2, sayı:180, Ekim 1981, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara 1981, s. 587-588.

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՀԱՐԿԸ» ԿԱՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ԹՈՒՐՔԱՑՄԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ազգային-կրոնական փոքրամասնությունները կամ ոչ մուսուլմանները Օսմանյան կայսրությունում գրեթե միշտ ենթարկվել են տարաբնույթ հալածանքների՝ նրանց նկատմամբ կիրառվել են օրենքով ամրագրված սահմանափակումներ, խտրականություններ, բռնաճնշումների կոշտ քաղաքականություն և այլն: Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի հանրապետությունը Հայոց ցեղասպանության, հույների, ասորիների կոտորածների արդյունքում ժառանգեց անհամեմատ ավելի փոքրաթիվ ազգային-կրոնական փոքրամասնությունների համայնքներ, սակայն նրանց հանդեպ պետական քաղաքականությունը և վերաբերմունքը շարունակվեց նույնը՝ փոքրամասնությունները վտանգավոր են, թշնամի և օտար: Վստահաբար կարող ենք պնդել, որ ազգային փոքրամասնությունները հանրապետական Թուրքիայում դրա հիմնադրման սկզբից ևեթ ենթարկվել են տարատեսակ հալածանքների և բռնաճնշումների, չնայած որ Լոզանի պայմանագրով տեսականորեն պաշտպանված էին նրանց իրավունքները: Ոչ մուսուլմանների հանդեպ Թուրքիայի հանրապետությունում կիրառվել են բռնաճնշումների մի ամբողջ համալիր՝ աքսոր[1], ծուլում, կրոնական, քաղաքական, տնտեսական հալածանքներ՝ նպատակ հետապնդելով ձևավորել միատարր Թուրքիա:

Մույն հոդվածով փորձ է արվում ներկայացնել 1942թ. կիրառության մեջ մտած, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկի»-ի (“Varlık vergisi”) էությունը, որը հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում տնտեսական ոլորտում կրոնական փոքրամասնությունների դեմ գործադրված ամենախոշոր և ծանր հետևանքներ առաջացրած մի քայլ էր: «Ունեցվածքի հարկ»-ը կարելի է դասել քիչ ուսումնասիրված թեմաների շարքին և, ընդ որում, ոչ միայն հայաստանյան թուրքագիտության մեջ, այլև ընդհանրապես: Այս թեման տասնամյակներ շարունակ տաբու է եղել Թուրքիայում, պետական լուրջ հսկողությունը գրեթե չի թույլատրել փաստերի արտահոսք: Տարբեր երկրների մամուլում, այդ թվում և գիտական, սպրդած տեղեկությունները շատ հաճախ կրկնել են մեկը մյուսին և ունեցել, ըստ էության, մակերեսային բնույթ: Պետք է նշել, որ թուրքական աղբյուրները ևս ժլատ են գտնվել տեղեկություն տալու առումով, և մինչև վերջին տարիները ամենալուրջ թուրքական աղբյուր էր համարվում ժամանակի Ստամբուլի ֆինանսական վարչության պետ Ֆայիք Օքթեի 1951թ. տպագրած «Ունեցվածքի հարկի աղետը»[2] փաստագրական գիրքը, ուր նախկին պաշտոնյան մանրամասներ է ներկայացնում հարկային այս պատժամիջոցի մասին, որի գործադրմանը ինքն էլ բավական ակտիվ ներգրավված է եղել: Սակայն հարկ է նշել, որ վերջին տարիներին այս թեմայի վրա եղած տաբուն որոշակի ճաքեր է տվել, և ներկայումս Թուր-

քիայում կարելի է հանդիպել «Ունեցվածքի հարկ»-ի մասին տպագրված մեկ-երկու քիչ թե շատ անաչառ գրքերի ու հոդվածների, որոնք միևնույն ժամանակ բավական մեծ փաստագրական բազա են ընդգրկում: Թեմայի ուսումնասիրության համար տեղեկատվության կարևոր աղբյուր են ծառայում նաև այն մարդիկ, որոնց նկատմամբ անմիջականորեն կիրառվել է այս հարկատեսակը: Սակայն չպետք է կարծել, թե Թուրքիայում «Ունեցվածքի հարկ»-ի թեմայի մասին եղած տաբուն ընդհանրապես վերացել է. ուղղակի «եվրոպական երկիր» դառնալ ձգտող Թուրքիան ներկայումս, ըստ երևույթին, ստիպված է գոնե արտաքուստ որոշ քայլեր անել և, օրինակ, բացահայտ չխոչընդոտել նման գրքերի լույս ընծայումը կամ հալածել հեղինակներին, ինչը պատահել է քանիցս: Նույն Ֆայիք Օքթեի գրքի տպագրումից հետո, ինչպես և պետք էր սպասել, ծայր է առել քննադատության ու մեղադրանքի գործընթաց: Նույնիսկ հարկի կիրառման վերացումից տասնամյակներ հետո էլ Թուրքիայում այդ մասին գրելը անվտանգ չէ: Օրինակ, ստամբուլահայ երվանդ Օզուզունին «Ակոս» թերթի 1998թ. նոյեմբերի 13-ի համարում «Ունեցվածքի հարկի» մասին նրա գրած հոդվածի պատճառով մեղադրանք է հարուցվել թուրքական քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով, որը նախատեսում է 2-6 տարի ազատազրկում: Երկարատև դատական քաշքշուկներից հետո է միայն հոդվածագիրը արդարացվել:

Ինչպես խոստովանում է «Ունեցվածքի հարկի» խնդրով երկար տարիներ զբաղվող թուրք գիտնական Այհան Աքթարը, Թուրքիայի պետական արխիվների «Ունեցվածքի հարկի» հարցի հետ կապված նյութերը փակ են բոլոր հետազոտողների, այդ թվում և թուրքերի առջև: Այս հանգամանքն էլ Աքթարին ստիպել է հարկի մասին նյութեր փնտրել արտասահմանյան, ավելի կոնկրետ՝ ամերիկյան և անգլիական արխիվներում: Ի տարբերություն թուրքական պաշտոնական աղբյուրների, այս արխիվներում Աքթարը հայտնաբերել է բավական քանակությամբ վավերագրեր, որոնք վերաբերվում են ոչ միայն «Ունեցվածքի հարկ»-ին, այլև ընդհանրապես այդ ժամանակաշրջանում Թուրքիայում փոքրամասնությունների դեմ կիրառված զանազան հալածանքներին ու պատժամիջոցներին: Այդ տվյալները հիմնականում հավաքվել են ժամանակի Թուրքիայում աշխատող ամերիկյան և անգլիական դիվանագետների ներկայացրած զեկույցների հիման վրա: Այդ զեկույցներից շատերը, որոնք կրել են «գաղտնի» կամ «հույժ գաղտնի» դասիչները, ներկայումս հասու են սույն խնդրով զբաղվող գիտնականներին, և դրանցից մի քանիսը, որ վերաբերվում են «Ունեցվածքի հարկ»-ին, ներկայացված է նաև Աքթարի գրքում:

Եթե Թուրքիայում տպագրված գրքերը, որոնք քննադատում են «Ունեցվածքի հարկ»-ը, կարելի է մատների վրա հաշվել, ապա այդ հարկի կիրառությունը պաշտպանող «գիտական» գրքերը անհամեմատ ավելի շատ են: Բացի այդ, այս խնդրում ևս թուրքական գիտական շրջանակները փորձում են «օբյեկտիվ» լինել և իբր հարցին մոտենալ հենց այդ

տեսանկյունից՝ կտրուկ չքննադատելով և չպաշտպանելով «Ունեցվածքի հարկ»-ը: Սակայն նրանց այս մեթոդը՝ փաստերի և գնահատականների մանվածապատ ներկայացումը, հետապնդում է մեկ նպատակ՝ «օբյեկտիվ» թվալով իրականում պաշտպանել և արդարացնել այս հարկի կիրառման թուրքական պաշտոնական տեսակետը:

Խնդիրը ավելի համակողմանի պատկերացնելու համար կարևոր ենք համարում համառոտակի անդրադառնալ Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության ոչ մուսուլման քաղաքացիների՝ տնտեսության ոլորտում ունեցած դերին:

Հայտնի է, որ դարեր շարունակ Օսմանյան կայսրությունում տնտեսության մեջ գերիշխող դիրք էին գրավում ոչ մուսուլմանները: Ինչպես նկատում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը. «Կայսրության մեջ ստեղծվել էր յուրօրինակ մի դրություն. պետությունը թուրքական էր, բայց երկրի տնտեսության մեջ իշխող դիրքեր էին նվաճում ոչ թուրքերը, այլազգի «գյավուրները»»[4]: 20-րդ դարի սկզբին տնտեսության մեջ շարունակում էին իրենց գերակա դիրքերը պահպանել ոչ մուսուլմանները, մասնավորապես բանկերն ու ծնունդ առնող արդյունաբերական ձեռնարկությունները կառավարում էին հույները, իսկ հայերի ձեռքին էր առևտուրը[5]: Սակայն աստիճանաբար զարգացող թուրք բուրժուազիային քրիստոնյաների այս գերակա վիճակը անհանգստացնում էր և նա սկսում էր բոլոր միջոցներով պայքարել դրա դեմ: «Այլազգի բուրժուազիային արդյունաբերության բնագավառից, ներքին և արտաքին ասպարեզներից դուրս մղելը, շուկային միանձնյա տիրելը, տնտեսական ամուր դիրքեր նվաճելը դարձավ բարձրացող թուրք ազգային բուրժուազիայի գլխավոր մտահոգությունը»[6]: Այս գաղափարը հրահրվում և աջակցություն էր գտնում նաև թուրքական ազգայնական իշխանությունների կողմից, որոնք այլազգիների և, մասնավորապես, կրոնական փոքրամասնությունների նկատմամբ սկսեցին կիրառել նաև տնտեսական հալածանքների քաղաքականություն: Այսինքն՝ նրանց երազած միատարր Թուրքիայում տնտեսությունը նույնպես պետք է թուրքացվեր, ինչի իրականացման գործին լծվեցին թուրքական շատ պետական-քաղաքական գործիչներ: Դեռևս թյուրքականության գաղափարախոս Զիյա Գյոքալփը (1876-1924թթ.) թուրքական տնտեսության զարգացման մասին իր տեսական մտքերում, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործություններում առաջ էր քաշում էթնոկենտրոն՝ իմա թուրքական, տնտեսության գաղափարը, և ինչպես դիպուկ նկատում է թուրքագետ Ա. Սաֆարյանը. «Գյոքալփյան էթնոկենտրոն տնտեսագիտական հայեցակարգը անհանդուրժող էր թերևս ոչ այնքան օտարերկրյա կապիտալի, որքան ազգային փոքրամասնությունները ներկայացնող գործարարների նկատմամբ»[7]: Գյոքալփի տեսակետները հատկապես անհրաժեշտ է կարևորել, քանի որ շատ գիտնականների կարծիքով թյուրքականության գաղափարախոսի տեսական հայացքների և Թուրքիայի հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի հասարակական-քաղաքական բարեփոխումների մեջ կա ակնհայտ ընդհանրութ-

յուն[8]: Ավելացնենք նաև, որ պանթուրքիստական գաղափարների կրողներ և իրականացնողներ են եղել Թուրքիայի հանրապետության բազմաթիվ խոշոր քաղաքական գործիչներ: Օրինակ, Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ, հետագայում նախագահ Իսմեթ Ինենյուն 1925թ. Անկարայում «թուրքական օջախների» համագումարում իր ելույթի ժամանակ հայտարարել է. «Մենք բացահայտ ազգայնամոլներ ենք: Մենք ցանկացած գնով պետք է թուրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում»[9]: Իսկ Թուրքիայի հանրապետության արդարադատության նախարար Մահմութ Էսսադը 1930թ. արտահայտել է հետևյալ միտքը. «Մենք ապրում ենք ամենաազատ երկրում՝ Թուրքիայում, որտեղ թուրքը այս երկրի միակ տերն ու տիրակալն է: Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրավունք»[10]: Թուրքիայում հետզհետե աճող պանթուրքիզմի ալիքը էլ ավելի մեծ թափ ստացավ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի և դրան նախորդած տարիներին: Բոլոր առումներով միատարր Թուրքիայի տեսլականը, ինչպես նաև պանթյուրքական իդեալը՝ Թուրանը, սկսեցին ավելի իրատեսական թվալ թուրք ազգայնական իշխանություններին: Միևնույն ժամանակ համաշխարհային պատերազմը փայլուն հնարավորություն էր ստեղծում նրանց համար էլ ավելի ազատ ու անկաշկանդ իրականացնել ազգային-կրոնական փոքրամասնություններին հալածելու քաղաքականությունը: Պետք է նշել նաև, որ այդ տարիներին Թուրքիան կանգնած էր տնտեսական լուրջ խնդիրների առաջ: Հայտնի է, որ Թուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, գրավելով տարօրինակ «չեզոքություն», իրականում աջակցում էր ֆաշիստական Գերմանիային՝ համարվելով նրա չպատերազմող դաշնակիցը: Միևնույն ժամանակ Թուրքիան մեծացնում էր իր բանակը, որպեսզի հարմար պահի հարձակվի Կովկասի վրա: Բնականաբար մեծացող բանակը լրացուցիչ ծախսեր էր պահանջում: Այսպես, 1939թ. թուրքական բանակը 207 հազար էր, 1940թ. սկզբին 700 հազար, իսկ 1942թ. 1 միլլիոն[11]: Ըստ տարբեր հաշվարկների և աղբյուրների՝ ռազմական ծախսերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կազմում էին Թուրքիայի բյուջեի կեսից ավելին[12]:

Ինչպես նշել էինք, չնայած Հայոց ցեղասպանության, հույների, ասորիների կոտորածների Թուրքիայի հանրապետությունում այնուամենայնիվ մնացել էին ազգային փոքրամասնությունների որոշ բեկորներ, որոնք տնտեսական ոլորտում շարունակում էին գրավել որոշակի դիրք և դա զգալի էր հատկապես Ստամբուլում, որտեղ մեծ էր հայերի, հույների թիվը: Այդ տարիների թուրքական մամուլը, արտահայտելով նաև իշխող շրջանակների մտահոգությունը, բազմիցս անդրադառնում էր Ստամբուլը «օտար» տարրից, այն է՝ ոչ մուսուլման փոքրամասնությունից մաքրելու խնդրին[13]: Մնում էր գտնել այդ մաքրելու մեթոդները: Այն ժամանակվա ֆինանսների նախարար Ֆ. Աղմալըն հայտարարել է, որ ազգային փոքրամասնությունների նյութական և ֆիզիկական ճնշման համար նա ընտ-

րել է երիտթուրքերից տարբերվող մեթոդ[14]: Եվ բնական էր, որ տնտեսության ոլորտում գործող փոքրամասնությունների նկատմամբ պետք է կիրառվեին նաև տնտեսական լուրջ պատժամիջոցներ: Ազգային փոքրամասնություններին իրենց ունեցվածքից և գործից զրկելը դարձավ պետության տնտեսական քաղաքականության անկյունաքարը և, պետականորեն ու «օրենքներով» ամրագրված, սկսվեց տնտեսական տեռոր կամ ուղղակի պետական մասշտաբի թալան, որոնց զոհ դարձան Թուրքիայում ապրող ոչ մուսուլմանները: Երկրորդ համաշխարհային պատերազմի թեժ տարիներին՝ 1942թ., թուրքական կառավարությունը, վարչապետ Շուքրու Սարաջօղլուի գլխավորությամբ, Ազգային մեծ ժողովի հաստատմանը ներկայացրեց, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկ»-ի մասին օրենքը, որը ընդունվեց 1942թ. նոյեմբերի 11-ին խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ (օրենքի քվեարկությանը չեն մասնակցել հետագայում Դեմոկրատական կուսակցության հիմնական առանցքը կազմող 76 պատգամավոր)[15]: Դրանից հետո օրենքը (թիվ 4305) մտավ գործածության մեջ: ԹԱՄԺ-ում օրենքի ընդունումից առաջ՝ 1942թ. սեպտեմբերին, ֆինանսների նախարարությունը սկսել էր նահանգների ֆինանսական վարչություններից, բանկերից, անվտանգության ծառայությունից պահանջել փոքրամասնությունների նյութական վիճակի մասին տվյալներ[16]: Անզեն աչքով անգամ նկատելի էր, որ օրենքը բացահայտորեն ուղղված էր ազգային կրոնական փոքրամասնությունների դեմ: Նախ, կարևոր է նշել, որ դա իրականում չի կարելի որակել որպես օրենք, քանի որ դրանում բացակայում էին մի շարք օրենսդրական կարևոր սկզբունքներ և ոտնահարվում մարդու իրավունքների հիմնարար արժեքներ: Այսպես, «Ունեցվածքի հարկ»-ը հարկատուներին բաժանում էր 4 խմբի և այն էլ՝ ըստ կրոնական պատկանելության.

1.մուսուլմաններ
2. ոչ մուսուլմաններ
3. հավատափոխներ
4. օտարահպատակներ

Փաստորեն սրանով խախտվում էր այն սահմանադրական դրույթը, որի համաձայն բոլորը, այդ թվում և ոչ մուսուլմանները, Թուրքիայի իրավահավասար քաղաքացիներ էին, և սա ավելի շատ հիշեցնում էր օսմանյան տիրապետության շրջանը, երբ ոչ մուսուլմանները վճարում էին մուսուլմաններից տարբերվող հարկեր: Նախապես հարկատուները բաժանված էին 2 խմբի՝ մուսուլմաններ և ոչ մուսուլմաններ, ընդ որում ոչ մուսուլմանները պետք է հարկվեին տասնապատիկ ավել քան մուսուլմանները, սակայն ոչ մուսուլմանների խմբի մեջ մտնում էին նաև Թուրքիայում ապրող արտասահմանցիները և այդ պատճառով իշխանությունները ձևավորեցին ևս 2 խումբ օտարահպատակներ և հավատափոխներ[17]: Օտարահպատակների համար ոչ մուսուլմանների համեմատ ավելի մեղմ հարկաչափ սահմանվեց, և սա կարելի է կապել արտասահման-

յան երկրների ուղղակի կամ անուղղակի միջամտության հետ: Իսկ հավատափոխներին չընդգրկելով մուսուլմանների խմբի մեջ՝ թուրքական պետությունը ևս մեկ անգամ բացահայտ ցույց տվեց, որ այդ խավի հանդեպ վստահություն չի տածում և նրանց որպես «իսկական մուսուլմաններ» չի ընկալում: Կան փաստեր նաև, երբ, օրինակ, իսլամ ընդունած հայերը, հույները և հրեաները հարկվել են ոչ թե որպես մուսուլման կամ հավատափոխ, այլ որպես ոչ մուսուլման: Այսպես, օրինակ, Ստամբուլի Քադըքյոյ թաղամասից կրոնափոխ դեղավաճառ Գևորգը, որն ամուսնացած է եղել թրքուհու հետ և փոխել անգամ անունը՝ դառնալով Քեմալ, հարկվել էր ոչ թե որպես մուսուլման, այլ որպես հայ[18]: Հիմք ընդունելով կրոնական պատկանելությունը՝ խտրական վերաբերմունք էր ցուցաբերվում հարկատուների նկատմամբ և օրենքով նախատեսվում էր, որ մուսուլմանները պետք է վճարեին ունեցվածքի 12.5 տոկոսի չափով հարկ, ոչ մուսուլմանները 50 տոկոսի, հավատափոխները, այսինքն՝ իսլամացածները 25 տոկոս և օտարահպատակները 12.5 տոկոս: Քանի որ այն ժամանակվա Թուրքիայում ոչ մուսուլմանների ամենամեծ համայնքները հայերինը, հույներինը և հրեաներինն էին, բնականաբար, հարկն առավելապես ուղղված էր նրանց դեմ: Ուշագրավ է, որ 20-րդ դարի կեսին անգամ Թուրքիայում մարդիկ հարկվում էին ոչ թե ըստ ունեցվածքի, այլ ըստ էթնիկ ու կրոնական պատկանելության: Հարկաչափը սահմանելու և հավաքելու նպատակով ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք բաղկացած էին 6 հոգուց՝ նախագահը նահանգներում նահանգապետն էր, գավառներում՝ գավառապետը, ֆինանսների նախարարությունը ներկայացնում էր տեղի ֆինանսական վարչության կամ բաժնի ղեկավարը, մնացած անդամները առևտրի և գյուղատնտեսական պալատների ներկայացուցիչներն էին լինում'[19]: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում, որ բոլոր հանձնաժողովականները լինեին զտարյուն թուրքեր: Ամենևին երկրորդական չպետք է համարել, որ հանձնաժողովների կազմում կային զգալի թվով նախկին իթթիհադականներ: «Օրենքի» ամենամեծ հակաիրավական դրույթներից էր այն, որ հանձնաժողովը կամայական էր հարկի չափը որոշելու հարցում, այսինքն՝ չկար հստակ որևէ չափանիշ: Սակայն հակաիրավական կետերը այսքանով չէին սահմանափակվում. մարդու իրավունքները կոպտորեն ոտնահարող հաջորդ նորմն այն էր, որ հարկատուն իրավունք չուներ որևէ տեղ բողոքարկել հարկաչափը, այսինքն հանձնաժողովի կամայական սահմանած որոշումը բեկանման ենթակա չէր և վերջնական էր: Իսկ հանձնաժողովները հարկաչափը որոշելիս հաշվի չէին առնում հարկատուի իրական եկամուտները և հնարավորությունները ու հարկում էին նրան մոտավորապես, ըստ ցանկության և տրամադրության: Նման վերաբերմունք ունեցել են ոչ միայն հանձնաժողովականները, այլև Թուրքիայի ամենաբարձրաստիճան ղեկավարները: Այդպիսի մի որոշման մասին է պատմում ստամբուլահայ Սուրեն Բալօղլին, որի հանդեպ ևս կիրառվել է այդ հարկատեսակը: Ըստ նրա, սկզբում ամենացածր հարկը սահմանված է եղել 50 լիրան, սակայն

հետո նախագահ Իսմեթ Ինենյուն, պնդելով, թե դա շատ քիչ է, մի զրո էլ է ավելացրել, և այդպիսով ամենացածր հարկը դարձել է 500 լիրա: Ինքը՝ Սուրենը, որ եղել է մանրավաճառ, նշում է, որ իր կապիտալը ընդամենը 50 լիրա էր, իսկ հարկը 500 լիրա է պահանջվել, այսինքն՝ կապիտալի տասնապատիկը[20]: Հարկահավաքության գործընթացում մի շատ կարևոր մանրամասն էլ կա, որի վրա հատկապես ցանկանում ենք ուշադրություն հրավիրել. թուրքական իշխանությունները տարբերակում էին դնում նաև ոչ մուսուլմանների մեջ, և հայերը, մյուս ոչ մուսուլմանների համեմատ, հարկվում էին ամենաբարձր տոկոսներով և ամենաշատը: Այսպես, օրինակ՝ թուրք առևտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամուտի 4.7 տոկոսը, հույնը՝ 156 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը 232 տոկոսը, և փաստորեն հույն առևտրականը թուրքի համեմատ վճարում էր 31 անգամ, հրեան 36, իսկ հայը 47 անգամ ավելի գումար[21]: Հանձնաժողովների կամայական որոշումները շատ հաճախ ստեղծում էին անտրամաբանական պատկեր. օրինակ, ստամբուլյան «Թոքաթլյան հոթել» հյուրանոցի վերելակավար հայ տղայից պահանջված հարկի գումարը հավասար էր նրա 16 տարվա աշխատավարձին,[22] և նման օրինակները բազմաթիվ են: Հարկերի վճարման համար սահմանված էր 15-օրյա ժամկետ, որը հետո երկարացվեց մինչև 30 օր: Այդ ընթացքում, ովքեր չէին կարողանում վճարել հարկը, պետականացվում և աճուրդով վաճառվում էր նրանց շարժական և անշարժ գույքը, մինչ այդ հենց իրենք հարկատուներն էլ էին փորձում էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը: Ժամանակի թուրքական մամուլում կարելի էր հաճախ հանդիպել անշարժ գույքի վաճառքի հայտարարությունների: Նշենք նաև, որ գումարի չբավարարելու դեպքում բռնագրավման և վաճառքի էր ենթակա նաև հարկատուի մերձավոր ազգականների գույքը: Իսկ եթե այդ ճևով ձեռք բերված գումարն էլ չէր բավարարում հարկի վճարմանը, ապա հարկատուները աքսորվում էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին պետության հանդեպ իրենց «պարտքը»: Իսկ տաժանակրության հիմնական վայրը իր ցրտաշունչ կլիմայով հայտնի էրզրումի նահանգի Աշքալե գավառն էր, որին անվանում են նաև «թուրքական Սիբիր»:

«Ունեցվածքի հարկի» ընդունման պաշտոնական պատճառաբանությունը, ըստ վարչապետ Սարաջօղլուի, այն էր, որ դա ուղղված էր թուրքական լիրայի արժևորմանը, շրջանառության մեջ եղած դրամի նվազեցմանը, սև շուկայի, գների աճի և սպեկուլյանտների դեմ[23]: Սակայն օրենքի ընդունումից կարճ ժամանակ անց՝ 1943թ. հունվարի 21-ին, «Ջումհուրիյեթ» թերթում տպագրված նրա մտքերը շատ ավելի անկեղծ էին և բացահայտում էին հարկի իրական նպատակը. «Այս օրենքը իր ողջ խստությամբ կիրառվելու է այն մարդկանց նկատմամբ, ովքեր, օգտվելով այս երկրի հյուրընկալությունից, հարստացել են, բայց չնայած դրան այս դժվարին պահին խուսափում են կատարել իրենց պարտականությունները»[24]: Բնականաբար, «հյուրընկալությունից օգտվողներ» ասելով՝ Սարաջօղլուն նկատի ուներ ոչ մուսուլման փոքրամասնություններին:

Կարևոր է նշել որ օրենքը մինչև քվեարկությունը քննարկվել է իշխող ժողովրդա-հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբակցության գաղտնի նիստում, որի արձանագրությունները և քննարկված թեմաները չէին հրապարակվում: Այս առումով միակուսակցական ժամանակաշրջանի Թուրքիայի և մասնավորապես ԺՀԿ-ի գաղտնի հավաքների մասին հետաքրքիր տեղեկություն կա Օսման Աքանդերեի «Ազգային շեֆի ժամանակաշրջանը» գրքում՝ մեջբերված այդ տարիներին հրատարակվող «Միլլիյեթ» հանդեսից. «ԺՀԿ-ն այս բոլոր ներքին քննարկումները մեծ և սարսափելի «գաղտնիության» վարագույրի ետևում, մասոնական օթյակի նման իր մեջ էր պահում, տեղեկատվության արտահոսք թույլ չէր տալիս»[25]: ԺՀԿ-ի գաղտնի նիստում քննարկվածների մասին հայտնի է դառնում միայն 1971թ., այն տարիների պատգամավոր գրող Ֆայիք Ահմեթ Բարութչուի «Քաղաքական հուշեր. 1939-1954 թթ.» գրքից: Ըստ այդ աղբյուրի, վարչապետ Սարաջօղլուն գաղտնի նիստի ժամանակ խոսել է «Ունեցվածքի հարկի» իրական նպատակի մասին և ասել, որ դա ուղղված է հիմնականում ազգային փոքրամասնությունների դեմ և սնանկացնելով շուկայում գերակա դիրքեր ունեցող օտարներին, նպատակ ունի նրանց այնտեղից հեռացնել և թուրքական շուկան տալ թուրքերի ձեռքը[26]: Այստեղ ավելորդ չէ կանգ առնել նաև վարչապետ Շուքրյու Սարաջօղլուի անձի վրա նա բացահայտ պանթյուրքիստ էր և մինչև այժմ էլ այդ շրջանակների կողմից դասվում է 20-րդ դարի ամենահայտնի պանթյուրքիստների շարքում: Նա «Ունեցվածքի հարկ»-ի գլխավոր «ճարտարապետն» էր և մինչև իր կյանքի վերջը ապրում էր այն հավատով, որ դրանով մեծ ծառայություն է մատուցել Թուրքիային: Ստորև մեջբերվող նրա մի քանի արտահայտությունները բավական լավ պատկերացում են տալիս նրա կերպարի մասին: Այսպես, 1943թ. ԺՀԿ համագումարում Սարաջօղլուն հայտարարել է. «Կան 4 իրողություններ, որ հարկ է աշխարհը իմանա. դրանցից առաջինը այն է, որ մենք թուրք ենք, թուրքիստ ենք և ամեն օր էլ ավելի թուրքիստ ենք դառնալու»[27]: Վարչապետ նշանակվելուց հետո մեջլիսում իր առաջին ելույթի ժամանակ Սարաջօղլուն ասել է հետևյալը. «Մենք թուրք ենք, թուրքիստ ենք և միշտ թուրքիստ ենք մնալու: Մեզ համար թուրքականությունը ինչքան որ արյան, այնքան էլ խղճի և մշակույթի հարց է»[28]: Սարաջօղլուն բացահայտ հայտարարեց, որ չի զղջում «Ունեցվածքի հարկ»-ը կիրառելու համար նաև ավելի ուշ՝ 1950-ից հետո, երբ իշխանության եկած Դեմոկրատական կուսակցության և արդեն ընդդիմություն դարձած ԺՀԿ-ի միջև գզվռտոց էր սկսվել, ու ԴԿ-ն մեղադրում էր նախկին իշխանությանը ազգային փոքրամասնություններին ճնշելու համար[29]: Սարաջօղլուն խոստովանեց, որ «Ունեցվածքի հարկը» իր ստեղծագործությունն է և եթե պետք լինի, ինքն առանց երկմտելու նորից կդիմեր այդ նույն քայլին[30]: Ի դեպ, նրա այս քայլը մինչև այսօր էլ շատ թուրք հեղինակներ փառաբանում են և ներկայացնում որպես իսկական սկզբունքային քաղաքական գործչին հատուկ պահվածք: Ավելորդ չէ նշել, որ այդ տարիներին ԹԱՄԺ-ի պատգամավոր են եղել նաև

ազգային փոքրամասնությունների 4 ներկայացուցիչ, որոնք, լսելով նախատեսվող հարկի մասին շշուկներ, վարչապետ Սարաջօղլուին առաջարկել են չկիրառել հարկը, իսկ դրա դիմաց նրանք պարտավորվում էին հավաքել այնքան գումար, որքան նախատեսում էր հավաքել պետությունը: Սակայն Սարաջօղլուն պատճառաբանել է, թե Թուրքիան ժամանակակից պետություն է և չի կարող նման առաջարկ ընդունել[21]: Այս առաջարկը չընդունելը կարող էր ունենալ 2 պատճառ. նախ կբացահայտվեր, որ հարկն իրականում ուղղված է փոքրամասնությունների դեմ, երկրորդ, ու, մեր կարծիքով ամենակարևորը, կիսատ կմնար փոքրամասնություններին սնանկացնելու, շուկայից դուրս մղելու, նրանց մի մասին տաժանակրության աքսորելու և ֆիզիկապես ու բարոյապես ոչնչացնելու և ի վերջո Թուրքիան «օտար» տարրից մաքրելու ծրագիրը:

Կարելի է պնդել, որ ինչպես տարբեր ժամանակներում, այնպես էլ այդ տարիներին թուրքական բացահայտ և «խորքային» պետությունը իր ողջ լծակներով պայքարել է ներքին «թշնամու», այն է՝ փոքրամասնությունների դեմ: Դա է վկայում հենց «Ունեցվածքի հարկի» անցկացման ժամանակաշրջանում ԺՀԿ 9-րդ բյուրոյի (որը պատասխանատու էր փոքրամասնությունների հարցերով) պատրաստած մի զեկույցը, որտեղ պարզորոշ երևում է պետական ապարատի վերաբերմունքը ոչ մուսուլմանների նկատմամբ[22]. Զեկույցում մասնավորապես հայերի մասին տեղ են գտել հետևյալ տեսակետները. «Հայեր. Անատոլիայում վերածվել են կամաց-կամաց սակավացող փոքր համայնքի և քաղաքական ինչ որ եղանակով ձգտում են ավելացնել իրենց թվաքանակը: Հայերին նախ և առաջ Անատոլիայից «մաքրելով» պետք է տեղափոխել Ստամբուլ, այսպիսով հնարավոր կլինի վերահսկողության տակ վերցնել նաև բնակչության աճը»: Զեկույցում, հենվելով պատմական փորձի վրա, նշվում է հայերին Ստամբուլ տեղափոխելու համար մի հիմնավորում ևս. «Այս եղանակով և՛ նրանց թվաքանակի աճը կկանխվի, և՛ վաղը, անհրաժեշտության դեպքում, նրանք ավելի հավաքական ձևով կլինեն պետության աչքի առաջ և ձեռքի տակ»: Ըստ այդ զեկույցի, հայերը մի խումբ են, որ չեն ծուլվում, ուստի առաջարկվում է նրանց թվաքանակը պակասեցնել կամ բնակչության փոխանակման, կամ էլ այլ երկրներ նրանց գաղթը դյուրացնելու միջոցով[23]: Իսկ հույների համար նշվում է, որ նրանք արդեն իրենցից վտանգ չեն ներկայացնում և հիմնական կարևոր խնդիրը մինչև Կոստանդնուպոլսի գրավման 500 ամյակը՝ 1953թ., Ստամբուլում ոչ մի հույն չթողնելն է[24]:

Ինչպես նշել էինք, հարկ չվճարածներին սպառնում էր տաժանակրության ճամբարներում աշխատանք, որով էլ նրանք պետք է մարեին պետությանը ունեցած իրենց «պարտքը», սակայն չափազանց ուշագրավ է, որ աշխատանքային ճամբարներ ուղղարկվել են բացառապես ոչ մուսուլման հարկատուները, այսինքն՝ այստեղ ևս կիրառվել խտրականություն՝ ըստ կրոնական պատկանելության: Թուրքիայի կառավարության 1943թ. հունվարի 7-ի նիստում ընդունվել է թիվ 19288 աշխատանքի

պարտավորության կանոնակարգը: Այն ընդգրկում էր հետևյալ հոդվածները. 1-ին հոդվածով դասակարգվում էին ստիպողական աշխատանքի դատապարտված հարկատուները: Աշխատանքային ճամբարներ առաջինը գնալու էին ընդհանրապես հարկ չվճարածները, այնուհետև՝ մասնակի վճարածները և այսպես շարունակ: Նախատեսվում էր տաժանակիրներին վճարել որոշակի աշխատավարձ, որը կազմելու էր օրական 250 քուրուշ, որից 60-ը պահվելու էր սննդի, կացության և այլ ծախսերի համար, իսկ մնացածը պետք է հատկացվեր «Ունեցվածքի հարկ»-ի պարտքի մարմանը[35]: 15-րդ հոդվածի համաձայն հարկատուները պետք է աշխատեին մինչև «Ունեցվածքի հարկ»-ի լրիվ մարելը: Սակայն այս կետը շատ հարկատուների դեպքում առաջացնում էր ոչ տրամաբանական պատկեր և կարելի է ասել, որ դա նախատեսում էր ցմահ տաժանակրություն: Այսպես, օրինակ, այն հարկատուները, որոնց պարտքը 400-500 հազար լիրա և ավելին էր, որպեսզի իրենց ստացած աշխատավարձից ամբողջովին մուծեին պարտքը, պետք է աշխատեին մոտավորապես 1600 տարի[36]: Արդեն 1943թ. սկզբներին հարկ չվճարածները սկսեցին ներբակալվել տաժանակրության ճամբարներ ուղարկվելու համար: Ճամբարներից ամենահայտնին Փըրնաքքաբը գյուղինն էր, որը գտնվում էր Աշքալեից 22 կմ. հեռավորության վրա, Քոփ լեռան ստորոտում, և ծովի մակերևույթից բարձր է 1721 մետր: Տաժանակրության ճամբար է եղել նաև էսքիշեհիր նահանգի Սիվրիհիսար գավառում, ինչպես նաև մի քանի այլ վայրերում ևս: Աշխատանքային ճամբարների կյանքի և առօրյայի մասին մանրամասն և առաջին տվյալները կարելի է գտնել «Թասվիրի էֆքյար» թերթի թղթակից Ֆերիդուն Քանդեմիրի ռեպորտաժներում: Նա աքսորյալների հետ նույն գնացքով մեկնել է Աշքալե և 12 օր ապրելով այնտեղ ռեպորտաժներ պատրաստել, որոնք տպագրվել են թերթի 1943թ. հունվարի 28-ից փետրվարի 8-ի համարներում[37]: Օրինակ՝ ներկայացնելով փետրվարի 8-ի օրը ճամբարում, նա գրում է. «Օդի ջերմաստիճանը –28 է, և գյուղը ասես բևեռ լինի, աքսորյալները հույս հայտնեցին, որ նման սառնամանիքին իրենց չեն աշխատեցնի, սակայն նրանց պատասխանեցին. «Այստեղ սկզբունքը հետևյալն է՝ աշխատել մինչև սաստիկ ձյունամրրիկի բարձրանալը»»[38]. Իսկ հարկատուների աշխատանքը իրականում ձյուն մաքրելը, սառույց կոտրելն ու ճանապարհ բացելն էր: Գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընը իր «Հոգիս քեզնով է ուրախանում» գրքի նախապատրաստական փուլում այցելել է Աշքալե և զրուցել տեղի տարեց բնակիչների հետ, որոնք տեսել են աքսորյալների տանջանքները: Մեջբերենք դրանցից մի քանիսը. «Քոփ լերան վրայ երկու մարդու հասակ ունեցող ձիւնը մաքրել տուին Պոլսոյ էֆենտիներուն, որոնց ձեռքերը իրենց կեանքին մէջ բահ բրիչ բռնած չէին: Լաւ մարդիկ էին, էֆենտի մարդիկ էին: Այս մարդոց կոտորեցին օր ցերեկով»: Մեկ ուրիշը հիշում է. «Խեղճերուն ձեռքերը, ոտքերը սառեցան սաստիկ պաղէն: Աչքերովս տեսայ սառած մատներուն փրթիլը»[39]: «Եկածներու գրեթէ կէսը հիւանդացաւ: Սառեցան, կոտրեցան գացին այս սառոյց մարդիկը»[40]: Հայազգի գործարար, փայտի

առևտրով զբաղվող Փարսեհ (Բարսեղ) Գևրեքյանը, որի վրա դրված հարկը եղել է 150 000 թուրքական լիրա, 10 ամիս անցկացրել է տաժանակրության ճամբարներում[41]: Պատմելով ճամբարների կյանքի մասին՝ նա նշում է, որ այնտեղ հիմնական խնդիրներից է եղել սննդի հարցը և, օրինակ, Սիվրիհիսարի ճամբարում գտնվող տաժանակիրները ստիպված են եղել խմել մոտակա գետակի ջուրը ու, ինչպես հիշում է Փարսեհ Գևրեքյանը, նրանք ջուրը գետակից խմել են թաշկինակի օգնությամբ, որպեսզի պատահաբար գորտեր կուլ չտան[42]: Պատահական չէ, որ նման պայմաններում ճամբարներում տարածված են եղել տարբեր տեսակի հիվանդություններ և շատ տաժանակիրներ մահացել են: Այսինքն՝ մի կողմից բնակլիմայական, մյուս կողմից էլ՝ ստեղծված անտանելի պայմանները մարդկանց դատապարտել են մահվան: Ճամբարներում հավաքված հարկատուներից 1869-ը Ստամբուլից էին, 889-ը՝ Իզմիրից, 100-ը՝ Բուրսայից. Պաշտոնական տվյալների համաձայն միայն Աշքալե է ուղղարկվել 1400 ոչ մուսուլման հարկատու, որոնցից 1229-ը Ստամբուլից[43]: Աշքալեում հարկատուներից 21-ը (այլ տվյալներով ավելի շատերը) մահացել են[44]: Աքսորյալների շրջանում նույնիսկ ստեղծվել է ճամբարների անմարդկային պայմանների և առօրյայի մասին պատմող գրականություն՝ բանաստեղծություններ, երգեր:

Ավելորդ չէ նշել, որ «Ունեցվածքի հարկը» արժանացել է ժամանակի թուրքական մամուլի հավանությանը և ստացել նրա աներկբա աջակցությունը: Մամուլը հեղեղված է եղել օրենքը պաշտպանող հոդվածներով, որոնցում նկատելի են փոքրամասնություններին ուղված բացահայտ թշնամանքի, ատելության, սպառնալիքի տարրեր: «Ունեցվածքի հարկը» արժանացել է նաև ժամանակի թուրք մտավորականության մեծ մասի հավանությանը և դրական արձագանքին: Շատ պալատական և ոչ պալատական գրողներ հանդես են եկել հոդվածներով՝ ի պաշտպանություն այս օրենքի: Օրինակ, տնտեսագետ Համդի Բաշարը (1897-1971թթ.) գտնում էր, որ աշխարհի երեսին և ամբողջ պատմության ընթացքում դրանից ավելի արդար օրենք չի եղել[45]: Իսկ հայտնի գրող՝ Փեյամի Սաֆան (1899-1961թթ.) կարծիք էր հայտնում, որ Թուրքիայի հանրապետության հիմնադրումից ի վեր թուրքերի և փոքրամասնությունների միջև տարբերություն, խտրական վերաբերմունք չի եղել և եթե նույնիսկ եղել է, ապա դա միայն հօգուտ փոքրամասնությունների: Նա նշում է, որ փոքրամասնությունները ավելի շատ են վաստակում, ավելի լավ ապրում[46]: Իսկ գրող Ոեֆիք Հալիդ Քարայը (1888-1965 թթ.) հարցին մոտենում է Թուրքիայում փոքրամասնությունների և թուրքերի հարաբերություններում մինչև օրս էլ շատ կարևոր տեղ զբաղեցնող «մենք» և «նրանք» գաղափարախոսության տեսանկյունից, որտեղ «մենք»-ը թուրքերն էին կամ մուսուլմանները, իսկ «նրանք»-ը ոչ մուսուլման փոքրամասնությունները, այն է՝ Թուրքիայի «օտարները»: Նրա հոդվածում հանդիպում են տողեր, որոնք բացահայտորեն ի ցույց են հանում տարիներով կուտակված ատելությունը, նախանձը, խանդը և բացահայտում, որ «մտավորականը» «Ու-

նեցվածքի հարկը» ընկալում է որպես վրեժի և իրենց «վիրավորված ինքնագիտակցության» հատուցում[47]: «Ունեցվածքի հարկի» ջերմ պաշտպաններից էր նաև ժամանակի հայտնի գրող-հրապարակախոս Շևքեթ Սուրեյյա Այդեմիրը (1897-1974 թթ.): Իսկ ռասիստ-պանթուրանիստ Նեժդաթ Սանջարը կարծում էր, որ «Ունեցվածքի հարկը» նույնիսկ քիչ է փոքրամասնություններին, ովքեր չեն վճարել իրենց հարկերը[48]: Ուշագրավ է նաև «Թասվիրի էֆքյար» թերթի վերոհիշյալ թղթակից Ֆերիդուն Քանդեմիրի ռեպորտաժներից մեկում հանդիպող հետևյալ տեղեկությունը: Ինչպես նշել էինք, աքսորյալների առաջին քարավանի հետ նա մեկնել էր տաժանավայր և թերթի մի քանի համարներում ներկայացրել ինչպես ճանապարհը, այնպես էլ ճամբարների կյանքը: Այսպես, նկարագրելով 1943թ. հունվարի 28-ը, այսինքն՝ ճանապարհորդության առաջին օրը, Քանդեմիրը գրում է, որ երբ աքսորյալներին տեղափոխող գնացքը կանգ է առել կայարաններից մեկում, երկու փոքրիկ երեխաներ վազելով և սաստիկ ցրտից դողալով՝ եկել են գնացքի մոտ, որպեսզի տեսնեն աքսորյալներին: Իսկ լրագրող Քանդեմիրի այն հարցին, թե ինչ են անում, երեխաները միաձայն պատասխանել են, որ եկել են նայելու այն մարդկանց, ովքեր մինչ այդ օրը իրենց հաշվին հարստացել են և հիմա խուսափում են վճարել հարկերը[49]: Այսինքն՝ պետական մակարդակով քարոզչություն է տարվել, թե այդ մարդիկ հանցագործներ են ու մեղավոր շատերի չքավորության համար և այս ամենը, այսինքն՝ փոքրամասնությունների հանդեպ թշնամանքը, դեռ վաղ տարիքից արտացոլվել է նաև երեխաների հոգեբանության մեջ: Ի դեպ շատ աղբյուրներ վկայում են, որ մարդկանց մեծաքանակ խմբեր էին հավաքվում նաև Ստամբուլի կայարաններում ու տարաբնույթ անեծքներով տաժանակրության ճամբարներ ճանապարհում Թուրքիայի տնտեսական վատ վիճակի միակ «պատասխանատուներին»՝ «Ունեցվածքի հարկը» չվճարած ոչ մուսուլմաններին:

«Ունեցվածքի հարկ»-ը պատճառ է դարձել նաև անձնական ողբերգությունների, որոնք խորը հետքեր են թողել դա վերապրած մարդկանց հիշողություններում: Նմանատիպ դեպքերից մեջբերենք մեկ-երկուսը. ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, տւսրեց մի կին հարկի վերացումից շուրջ 40 տարի հետո մի հոդված է կարդացել հարկի մասին և այն հույսով, որ միգուցե պետությունը ետ է վերադարձնելու իրենից բռնագրաված գույքը, հարցրել է այդ հոդվածի հեղինակին, թե հնարավո՞ր է՝ պետությունը ետ տա իր հանգուցյալ ամուսնու յուղաներկ դիմանկարը, որը նրանից բռնագրավել են այդ ժամանակ[50]: Հարկատուների ունեցվածքի բռնագրավման գործընթացը նույնպես ուղեկցվել է կամայականություններով և բռնագրավման պատկերը մինչև հիմա էլ խոր հետք է թողել այդ ամենը վերապրած հատկապես երեխաների մոտ. Այսպես, «Ունեցվածքի հարկի» դաժանությունները վերապրած մի հույն կին փոխանցել է, որ իր հիշողության մեջ մինչև հիմա թարմ է այն պատկերը, երբ հարկադիր կատարման աշխատակիցները խլել են անգամ իր տիկնիկը, որով խաղալիս է եղել[51]:

Կարևոր հարց է նաև, թե փոքրամասնություններից խլված, պետականացված և աճուրդով վաճառված գույքը ո՞ւմ ձեռքն էր անցնում և, ինչպես ցույց են տալիս փաստերը, այդ ամբողջ գույքը գնել են թուրք գործարարները, թուրքական կազմակերպությունները, բանկերը[52] և այն էլ շատ էժան գներով: «Ունեցվածքի հարկը» չվճարած հարկատուների շարժական և անշարժ գույքի բռնագրավումից հետո հերթը հասնում էր նաև նրանց անձնական իրերին, մինչև անգամ հագուստներին: Այդ ժամանակ շատ հաճախ կազմակերպվում էին աճուրդներ, որոնց ժամանակ վաճառվում էր փոքրամասնություններից բռնագրավված գույքը[53]: Այս ապրանքների հիմնական գնորդները Անատոլիայից եկած նոր հարուստներն էին, և այնքան մեծ էր գնված ապրանքների քանակը, որ խնդիր էր դառնում նաև դրանց փոխադրումը, գնացքները չէին կարողանում տեղավորել և տեղափոխել այդ քանակի ապրանքը[54]: Կարևոր է արձանագրել, որ, ինչպես և սպասելի էր, ժամանակի թուրքական մամուլը սրան ևս արձագանքել է մեծ հրճվանքով, և բավական խոսուն են «Ջումհուրիյեթ» թերթում տեղ գտած հետևյալ միտքը. «Գոհունակությամբ գրել էինք, որ Բեյօղլուում գտնվող «Տիրոջ ծայնը» անվամբ շենքը գնել է Սումեր բանկը...Այսպիսով ազգայնացվում է (ընդգծումը մերն է Ռ. Մ.) ևս մեկ գեղեցիկ շենք»[55]: Այսինքն՝ պետականորեն փոքրամասնությունների հարստության բռնագրավումը և խլումը մամուլը համարում էր ազգայնացում: Ասի միևնույն պետության տարբեր էթնիկ ծագում ունեցող քաղաքացիների միջև խտրականության բացահայտ օրինակ է: Ի դեպ, նշենք, որ վերոհիշյալ «Տիրոջ ծայնը» շենքը պատկանել է հայազգի Վահրամ Ղազարյանին[56]: Երվանդ Օզուզունի վերոնշյալ հոդվածում տեղ է գտել նաև այն միտքը, որ «Ունեցվածքի հարկ»-ի հետևանքները բազմաշերտ են և չեն սահմանափակվել միայն տնտեսության թուրքացմամբ, այլև դրա պատճառով փաստորեն վերացել է թուրքահայ բուրժուազիան և այդ բուրժուազիայի մաս կազմող մտավորական դասը: Կարդացած, գրագետ, տարբեր լեզուների տիրապետող դասակարգը վերացավ՝ իր տեղը զիջելով իրենց ունեցվածքին էժան գներով տիրացած անատոլիական նոր հարուստներին, որոնց գերակշիռ մասը անգրագետ, անմշակույթ մարդիկ էին,- կարծում է Օզուզունը և շարունակում,- «Ունեցվածքի հարկը» հայերի համար փաստորեն նաև մշակութային կոտորած էր[57]: Սակայն այս հարցում թուրք հեղինակ Ոըդվան Աքարը ավելի կոշտ է արտահայտվում՝ նշելով. ««Ունեցվածքի հարկը» փոքրամասնությունների համար «տնտեսական ցեղասպանություն էր»»[58]:

Վերոհիշյալ Աքարի գրքում տեղ են գտել նաև հարցազրույցներ «Ունեցվածքի հարկի»-ն ուղղակի առնչություն ունեցած անձանց հետ, որոնցից է, օրինակ, նախկին վարչապետ Ֆերիք Մելենը, որը հարկի կիրառման տարիներին եղել է ֆինանսների նախարարության տեսուչ և աուղղակի հարկերի գլխավոր վարչության պետը: Նա խոստովանում է, որ մինչև «Ունեցվածքի հարկը» թուրքերը առևտրի բնագավառում կատարում էին երկրորդական-երրորդական կարգի գործեր և հատկապես հարկի

կիրառումից հետո Անատոլիայի թուրք առևտրական դասը՝ գալով Ստամբուլ, գործարար աշխարհում կարողացավ իր տեղը գտնել: «Ունեցվածքի հարկը» ահա այդ արդյունքը ունեցավ և միայն հարկի կիրառմամբ էր հնարավոր դրան հասնել[59]: «Ունեցվածքի հարկը» նպատակ ուներ տնտեսությունը թուրքացնել և դրանից հետո անատոլիական առևտրականները. օրինակ, Քոչերի, Սաբանջըների ընտանիքները իրենց համար ասպարեզ գտան[60]: Այնուհետև Սելենը նշում է, որ հարկի կետերից մեկը, որ դժվար թե հնարավոր լինի արդարացնել, Աշքալեի տաժանակրության ճամբարներն էին:

«Ունեցվածքի հարկը» կիրառությունից հանվել է 1944թ. մարտի 15-ին թիվ 4530 օրենքով: Այն շրջանառության մեջ է եղել շուրջ 16 ամիս և մինչ այդ չհավաքված հարկերը այդ օրենքով ներվում էին[61]: «Ունեցվածքի հարկի» չեղյալ հայտարարման ուղղությամբ աշխատանքները սկսել են 1943թ. վերջերին, և օրինակ՝ հարկատուները տաժանակրության ճամբարներից ետ վերադարձան այն պայմանով, որ իրենց պարտքը վճարեն արդեն աշխատելով ոչ թե ճամբարներում, այլ իրենց նախկին գործատեղերում[62]: Սակայն սա ևս կատարյալ ծաղր էր, որովհետև փոքրամասնությունները արդեն լիովին սնանկացել էին, նրանց ձեռքից խլվել էր շարժական, անշարժ գույքը, չունեին դրամ, որ գործ սկսեին և շատերը հեռացան Թուրքիայից, այսինքն՝ այն հիմնական նպատակին, որին ձգտում էին թուրք իշխանությունները, հասել էին: «Ունեցվածքի հարկ»-ը վաստորեն կարելի է ասել կատարեց իր միսիան, այն է՝ ոչնչացրեց ոչ մուսուլման փոքրամասնություններից կազմված բուրժուազիայի մեծ մասին, գրեթե լիովին թուրքացրեց տնտեսությունը, էլ ավելի խորացրեց վախի և անպաշտպանության մթնոլորտը և ստիպեց շատ մարդկանց «կամովին» թողնել Թուրքիան, ինչն էլ ԺՀԿ-ի վերը նշված 9-րդ բյուրոյի կողմից պատրաստված զեկույցի բաղկացուցիչ դրույթներից էր: Ազգային փոքրամասնություններին նյութապես, բարոյապես, հոգեպես և ֆիզիկապես կոտրելուց հետո միայն թուրքական իշխանությունները՝ տեղի տալով նաև արտաքին գործոնների ազդեցությանը, որպես «բարի կամքի» դրսևորում, վերացրեցին «Ունեցվածքի հարկ»-ի կիրառումը՝ շարունակելով իրենց սեթևեթանքները «անհասկացող» միջազգային հանրության առջև:

Ստորև մեջբերվող մարդահամարի արդյունքները, որոնք անցկացվել են Թուրքիայում տարբեր տարիներին, լավագույնս ցույց են տալիս հայերի արտագաղթի պատկերը.

Թուրքիայում, ըստ մայրենի լեզվի, անցկացված ընդհանուր մարդահամարներում հայ բնակչության նվազումը

Բնակավայրը	1927թ.	1935թ.	1965թ.
Յոզղաթ	1801	889	118

Սեբաստիա	4122	2094	117
Դիարբեքիր	955	582	132
Էյազիգ	2399	707	2
Էրզրում	14	37	13
Կեսարիա	435	845	9
Մալաթիա	2625	1614	148
Ստամբուլ	45255	39831	29479
Ընդհանուրը	64745	57599	33094

Հանրապետական շրջանում հայերի արտասահման գաղթելը անընդհատ շարունակվել է: Գավառահայությունը գաղթել է Ստամբուլ, այնտեղից էլ արտասահման և այսօր գավառներում բացահայտ հայեր գրեթե չեն մնացել: Այս ամենում մեծ են իհարկե թուրքացման քաղաքականության հետևանքները, շարունակական հալածանքները[63]:

Հետաքրքիր և չափազանց խոսուն փաստ է «Ունեցվածքի հարկ»-ի վերացման մասին Թուրքիայի մեջլիսում քննարկումների ժամանակ էսքիշեհիրի պատգամավոր էմին Սազաքի ելույթը, որը նշելով, թե օրենքը ներում է շնորհում հարկատուներին, ավելացնում է. «Բայց սրանց ժողովուրդը ինչպես է ներելու: Թեկուզ այս օրենքը նրանց ներում շնորհի էլ, այսպիսի մարդիկ այս ժողովրդի միջից պետք է ելնեն գնան ...Կառավարությունը միջոցառումներ չձեռնարկեց, սակայն ժողովուրդը իր վրեժը կլուծի, չեմ կարող ասել լինչի դատաստա՞ն կանի, թե ի՞նչ կանի»[64]. Ազգային ժողովի պատգամավորի խոսքերը արդյոք դրդիչ-հրահրիչ չե՞ն և արդյո՞ք հետագան չապացուցեց նրա կանխատեսումների ճշմարտացի լինելը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ներկայումս էլ վիճակը Թուրքիայում շատ չի տարբերվում և պետական պաշտոնյաների, քաղաքական գործիչների տեսական դատողությունները, միգուցե և ցանկությունները իրականություն են դառնում ազգայնամոլ երիտասարդության ձեռքերով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Օրինակ, 1929թ. ամռանը և դրան հաջորդող ամիսներին մոտ 30 000 հայ է աքսորվել Խարբերդի, Դիարբեքիրի և Սարդինի նահանգներից: Տե՛ս. Walker Christophor, Armenia: The survival of a nation, London, 1980, p.348, նույնը տե՛ս նաև. Hofmann Tessa, Armenians in Turkey today, (second edition) Uppsala, 2003, p. 15. Թուրքիայում ԱՄՆ-դեսպան Ռոբերտ Սքիններ 1934թ. մարտի 2-ին ԱՄՆ-ի արտգործ նախարարին ուղարկված զեկուցագրում, որը պահվել է հույժ գաղտնի դասիչի տակ, ներկայացվում է Թուրքիայի արևելյան շրջաններից հայերի՝ այդ թվականների աքսորի մասին: Այսպես, նշվում է, որ 1934թ. սկզբներին թուրքական իշխանությունները սկսել են «Անատոլիայից» հայերին աքսորել Ստամբուլ: Այդ հայերը ստիպված են եղել շատ էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը, որը դեսպանը համարում է ունեցվածքը լքելուն նույնական, և գնալ Ստամբուլ, որտեղ Հայոց պատրիարքարանը, բարեգործական տարբեր ընկերություններ աշխատել են օգնել նրանց աշխատանք գտնել, իսկ մինչ այդ ամեն ինչ արել են նրանց պահելու, ապաստարան և սնունդ տալու համար: Հայերի աքսորի իրական պատճառներից

են. համարվում այն, որ նրանք հաջողակ գործարարներ են, ունեն լավ աշխատանքներ և կարողանում են գումար վաստակել, ինչը առաջացնում է թուրքերի խանդը: Սակայն ավելի կարևոր և հիմնական պատճառ է դիտվում այն, որ այդ ամենը իրականում «Անատոլիան» լրիվ թուրքացնելու քաղաքականության մի մասն է: Records of the Department of state Relating to the Internal Affairs of Turkey, 1930-1944.Ամերիկյան դեսպան Ռոբերտ Սքիններից ԱՄՆ արտգործնախարարին, 867.4016 հայերը/11, Aktar A., Varlik vergisi ve "Türkleştirme" politikaları, İstanbul, 2000, s. 93.

[2] Ökte F., "Varlık vergisi faciası" , İstanbul, 1951.

[3] Aktar A., Varlik vergisi ve "Türkleştirme" politikaları, İstanbul, 2000, s. 11.

[4] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991. էջ 20:

[5] Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, Հայոց Մեծ եղեռն 90, Երևան, 2005. էջ 427-428, նույն տես. Тыркова А., Старая Турция и младотурки, П. 1916, стр. 131-132.

[6] Սիմոնյան Հր., նշված աշխ., էջ 21:

[7] Սաֆարյան Ա., նշված աշխ., էջ 430:

[8] Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալփը թուրք կանանց իրավունքների մասին, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, էջ 13:

[9] Новый Восток, кн. 16-17, М., 1926, стр. 180, ЭбхЫЭБ п»л ЭiЁ Аванесов С. С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963, стр. 13.

[10] Аванесов С.С. Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963, стр. 14:

[11] Հասրաթյան Մ., Օրեշկովա Ս, Պետրոսյան Յու., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 291:

[12] Кондакчян Р. П., Внутренная политика Турции в годы второй мировой войны, Ереван, 1978, стр. 52.

[13] Аванесов С.С. նշված աշխ., էջ 33:

[14] Ökte F., նշված աշխ., էջ 49

[15] Akar R., Aşkale yolcuları (varlık vergisi ve çalışma kampları), İstanbul, 2006, s.72:

[16] Նույն տեղում, էջ 67-68:

[17] Кондакчян Р. П., նշված աշխ. էջ 144:

[18] Ökte F., նշված աշխ , էջ 180

19 Akar R., նշված աշխ., էջ 78:

[20] Koloğlu Y. Hatırlıyorum (Türkiyede gayrimüslim hayatlar), İstanbul, 2003, s.56.

[21] Саркисов Е. К., Положение трудящихся масс в современной Турции, Ереван, 1955, стр. 58., նույնը տես նաև Гасратян М.А., О политике турецких провящих кругов в национальном вопросе, Проблемы современной Турции, Москва, 1963, стр. 138., Аванесов С.С. նշված աշխ.էջ 36:

[22] Саркисов Е. К., նշված աշխ., էջ 58:

[23] Akar R., նշված աշխ., էջ 58

[24] Նույն տեղում, էջ 11:

[25] Akandere O., Milli Şef Dönemi, İstanbul, 1998, s. 130, 251-րդ տողատակ, նույնը տե՛ս նաև. Akar R., նշված աշխ.,էջ 69:

[26] Barutçu F., Siyasi Anılar (1939-1954), İstanbul, 1977, s. 263, նույնը տե՛ս նաև. Akar R., նշված աշխ.,էջ 69-70:

[27] Cumhuriyet, 15.6.1943,.նույնը տե՛ս նաև Akar R., նշված աշխ.,էջ 200:

[28] Akşam, 6.8.1942, Akar R., նշված աշխ.,էջ 185

[29] Հետագայում պարզվեց որ դա իրականում պոպուլիզմ էր, և 1955թ. սեպտեմբերի 6-7-դեպքերը, երբ Ստամբուլում, Իզմիրում թալանվեցին ու կոտորվեցին բազմաթիվ հույներ, հայեր, ցույց տվեցին Դեմոկրատական կուսակցության և նրա իշխանության իրական բնութագիրը:
[30] Kafaoglu B., Varlik vergisi gerçeği, İstanbul, 2005, s. 15.
[31] Akar R., Նշված աշխ ,էջ 70:
[32] Նույն տեղում, էջ 190:
[33] Նույն տեղում, էջ 191:
[34] Նույն տեղում, էջ 191-192: Այս կոնտեքստում նշենք, որ թեկուզ մի փոքր ուշացումով, բայց, այնուամենայնիվ, թուրքական իշխանությունների այդ ծրագիրը կարելի է իրականացված համարել մանավանդ, եթե հաշվի առնենք Ստամբուլի հունական համայնքի այսօրվա թվաքանակը՝ մոտ 2000 մարդ:
[35] Նույն տեղում, էջ 113-115:
[36] Նույն տեղում, էջ 115:
[37] Նույն տեղում, էջ 119-120:
[38] Նույն տեղում, էջ 133:
[39] Եալչըն Ք., Հոգիս Քեզմով կը խայտայ, Երևան, 2003, էջ 99:
[40] Նույն տեղում, էջ 102:
[41] Հետաքրքիր է, որ ինչպես խոստովանում է Փարսեհ Գևրեքյանը ինքը մտերիմ է եղել Սարաջօղլուի հետ դեռևս այն ժամանակ, երբ նա զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի պաշտոնը, սակայն դա չի խանգարել վարչապետին կործանել իր ընկերոջը:
[42] Akar R., Նշված աշխ.,էջ 242:
43 Cumhuriyet 12.2.1943, նույնը տե՛ս նաև Akar R., Նշված աշխ.,էջ 137:
[44] Akar R., Նշված աշխ.,էջ 138:
[45] Cumhuriyet, 21.12.1942, նույնը տե՛ս նաև Akar R., Նշված աշխ.,էջ 193.
[46] Tasviri Efkar, 29.12.1942, նույնը տես նաև Akar R., Նշված աշխ.,էջ 194:
[47] Tasviri Efkar, 24.1.1943, նույնը տես նաև Akar R., Նշված աշխ.,էջ 194:
[48] Sancar N., "İsmet İnönü ile hesaplaşma, Ankara, 1973, s. 206-207, նույնը տես նաև Akar R., Նշված աշխ.,էջ 214:
[49] Akar R., Նշված աշխ.,էջ 121
[50] Նույն տեղում, էջ 229
[51] Նույն տեղում, էջ 163:
[52] Նույն տեղում էջ 155:
[53] Նույն տեղում, էջ 161:
[54] Նույն տեղում, էջ 162:
[55] Cumhuriyet,31.2.1943, նույնը տես նաև Akar R., Նշված աշխ.,էջ 156:
[56] Aktar A., Նշված աշխ.,էջ 205
[57] Özüzün E., Acı bir kilometre taşı ve kültür kırımı, Agos, 13.11.1998.
[58] Akar R., Նշված աշխ.,էջ 15:
[59] Նույն տեղում, էջ 234:
[60] Նույն տեղում, էջ 235: Քոչերը, Սաբանջըները ներկայումս Թուրքիայի ամենահարուստ ընտանիքներից են:
[61] Նույն տեղում, էջ 163:
[62] Նույն տեղում, էջ 165:
[63] Koloğlu Y. Azınlık gençleri anlatıyor, İstanbul, 2004, s 122.
64 Akar R., Նշված աշխ., էջ 165-166:

ԱՐԹՈՒՐ ՂՈՒԼԱՆՅԱՆ

ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1960-70-ԱԿԱՆ ԹԹ.

Ռազմական սոցիոլոգիայի[1] համակարգում հետազոտությունների կարևորագույն օբյեկտ են բանակ-հասարակություն (քաղաքացիական իշխանություններ) փոխհարաբերությունները: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների վերաբերյալ կատարված հետազոտություններ մեջ լայն տարածում է գտել էրիկ Նորդլինգերի տեսությունը, որը հարմար է Թուրքիայի օրինակը ներկայացնելու համար և սույն հոդվածի համար տեսական հենք է ծառայել: Նորդլինգերի տեսության համաձայն՝ բանակ-հասարակություն փոխհարաբերությունները կարելի է բաժանել երեք խմբի՝ *ավանդական (traditional), ազատական (liberal)* և *ներթափանցման (penetration)*[2]: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների *ավանդական* մոդելի ժամանակ քաղաքացիական և զինվորական իշխանությունն ամբողջական է, գտնվում է մեկ ղեկավարի ձեռքում, որը հիմնականում ազնվական ծագում ունի (ինչպես օրինակ՝ միջնադարյան միապետությունները): *Ազատական* մոդելի դեպքում բանակն ապաքաղաքականացված է, զինվորականներն անվերապահորեն ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին՝ անկախ վերջիններիս քաղաքական և գաղափարական ուղղվածությանը (տարածված է ժամանակակից արևմտյան երկրներում): Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների *ներթափանցման* մոդելի դեպքում բանակը սերտորեն փոխկապակցված է իշխանությունների հետ, և բանակում տարածված է իշխող կուսակցության գաղափարախոսությունը. բանակը քաղաքականացված է և պայքարում է իշխող ռեժիմի գաղափարախոսության համար[3] (Խորհրդային Միության տարբերակը):

Պետության քաղաքական կյանքում գործող բանակ-հասարակություն փոխհարաբերությունների տարբերակը հասկանալու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ *սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը* (երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, ներքաղաքական դրությունը և այլն) և *զինվորական համակարգի էությունը*[4] (բանակի քաղաքականացվածությունը, քաղաքական գաղափարախոսությունը, զինվորականության սոցիալական վիճակը, զինվորականության քաղաքական կյանքին միջամտության ավանդույթը և այլն)[5]: Սույն հոդվածով փորձ է կատարվում ուսումնասիրել բանակ-հասարակություն փոխհարաբերությունները Թուրքիայի քաղաքական կյանքում 1960-70-ական թթ.: Թեմայի ուսումնասիրումը խիստ արդիական է ոչ միայն Թուրքիայի այդ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման, այլ նաև ժամանակակից Թուրքիայում բանակի դերը և քաղաքական դինամիկ գործընթացների վրա բանակի ունեցած ազդեցությունն ավելի խորը հասկանալու և գնահատելու համար: Հոդվածի ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է 1960-70-ական թթ. Թուրքիայում

բանակ-հասարակություն հարաբերություններում նոր երևույթներ ի հայտ գալով, որոնք էլ առանցքային ազդեցություն ունեցան բանակի՝ քաղաքական կյանքում որպես որոշիչ գործոնի ձևավորման գործընթացի վրա:

Քեմալական Թուրքիայում բանակն այն առանցքային ուժն է, որը կանգնած է երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հիմքում: Զինվորականների գերիշխանությունը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում երկարատև և ուժեղ ավանդույթ ունի, որը կապված է ինչպես Օսմանյան կայսրության բնույթի, այնպես էլ՝ հանրապետական Թուրքիայի ստեղծման և կայացման գործընթացի հետ[7]: Թուրքիայի Հանրապետության հիմնադրման առաջին տարիներից զինվորականներն սկսեցին ակտիվ դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում: Երկրի նախագահ դարձավ ազգային շարժման առաջնորդ, մարշալ Մուստաֆա Քեմալը, վարչապետ՝ գեներալ Իսմեթ փաշան: Հանրապետության գոյության առաջին տարիները ցույց տվեցին, որ բանակի դերը Թուրքիայի քաղաքական կյանքում միանշանակ չէ: Ընդհանուր առմամբ բանակն էր իշխող ռեժիմի և բարեփոխումների իրականացման իրական հենասյունը, բայց միաժամանակ Մ. Քեմալի իշխանությանն ընդդիմադիր գեներալների (Ք. Քարաբեքիր, Ա. Ջեբեսոյ, Զ. էղիլմեզ) ակտիվ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին իրական սպառնալիքի տակ էր դնում Քեմալի իշխանությունն ու բարեփոխումների իրականացումը[8], ինչն էլ պատճառ հանդիսացավ, որ ընդդիմադիր գեներալները հեռացվեցին բանակից, որից հետո միայն Քեմալը վերջնականապես արգելեց քաղաքական գործունեությունը զինվորականության համար[9]: Այնուհետև քեմալականները սկսեցին մի կողմից ապաքաղաքականացնել բանակը՝ փորձելով զերծ պահել քաղաքական գործընթացներից, մյուս կողմից էլ բանակը դիտարկել որպես իշխանությունների իրական հենասյուն և քեմալական բարեփոխումների իրականացման գլխավոր երաշխիք: Իշխանությունները սկսեցին նպատակաուղղված քաղաքականություն իրականացնել՝ սպայական կազմին քեմալիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ: Թուրքական բանակի սպայական կազմի գաղափարական դաստիարակության գործում առանցքային նշանակություն ստացան քեմալիզմի սկզբունքները. անսահման սեր և հարգանք էր սերմանվում Աթաթյուրքի և նրա գաղափարախոսության հանդեպ: Այդ գործընթացի մեջ լայնորեն ներգրավվեցին ինչպես պետության քարոզչական մարմինները (մամուլ, գրականություն և այլն), այնպես էլ քաղաքական գործիչները: Այդպիսով, թուրքական իշխանությունների նպատակաուղղված քաղաքականության արդյունքում սպայական անձնակազմը խորապես ընդունեց քեմալիզմի գաղափարախոսությունը: Այն հատկապես խոր արմատներ գցեց երիտասարդ սպաների մեջ, որոնք իրենց համարում էին ոչ միայն քեմալիզմի ակտիվ կրողը, այլև՝ քեմալիզմի գաղափարախոսության առաջամարտիկը[10]: Թուրք հայտնի լրագրող Ահմեթ Ալի Քիրանդը նշում է, որ թուրքական սպայի համար Աթաթյուրքն ամեն ինչ է[11]:

1930-ական թթ. բանակն ընդհանուր առմամբ չէր խառնվում երկրում զարգացող քաղաքական գործընթացներին՝ միաժամանակ ամուր հենասյուն հանդիսանալով իշխող ռեժիմի համար: Սակայն արդեն 1940-ական թթ. սպայական կազմը որոշակիորեն սկսեց ներքաշվել քաղաքական գործընթացների մեջ, ինչը հատկապես ընդգծվեց, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիան անցում կատարեց դեպի բազմակուսակցական քաղաքական համակարգ, որի արդյունքում ի հայտ եկան տարբեր քաղաքական ուժեր (մինչ այդ գործում էր միայն Քեմալ Աթաթյուրքի հիմնադրած Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (հետայսու՝ ԺՀԿ)): Նորահայտ քաղաքական կուսակցություններից առավել ազդեցիկը Դեմոկրատական կուսակցությունն (ԴԿ) էր: ԴԿ-ն արդեն 1946 թ. խորհրդարանական ընտրություններում իր ընտրացուցակներում ընդգրկեց 15 բարձրագույն գեներալների և սպաների[12]: 1946 թ. խորհրդարանական ընտրություններից հետո բանակում սկսեցին կազմավորվել առաջին սպայական խմբավորումները[13]: Արդեն 1940-ական թթ. վերջերին սպայակազմի մի խումբ անդամներ, գեներալ Ֆ. Բելենի գլխավորությամբ, սկսեցին ռազմական հեղաշրջում նախապատրաստել՝ իշխանությունը ԺՀԿ-ից ԴԿ-ին փոխանցելու նպատակով: Սակայն ԴԿ ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո նրանք որոշեցին սպասել 1950 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներին[14]: Այդ ընտրությունները հաղթանակ բերեցին ԴԿ-ին, որը եկավ փոխարինելու 27 տարի երկրի ղեկն իր ձեռքում պահած ԺՀԿ-ին: Բանակի արձագանքը ԴԿ-ի հաղթանակին միանշանակ չէր: Դեմոկրատների կողմնակիցները բավարարված էին ընտրությունների արդյունքներից, վերը նշված Ֆ. Բելենի խմբավորումը դադարեցրեց իր գործունեությունը: Սակայն ԴԿ-ի հաղթանակը դժգոհություններ առաջացրեց ԺՀԿ-ին հավատարիմ գեներալների մոտ, որոնք հենվելով սպայական կազմի որոշ մասի վրա, պատրաստ էին հեղաշրջում իրականացնել՝ իշխանությունն Աթաթյուրքի հիմնած ԺՀԿ-ին վերադարձնելու նպատակով[15]: Պետք է նշել, որ դեմոկրատները, ստանալով գլխավոր շտաբի պետի աջակցությունը, հեշտությամբ ճնշեցին բանակում առաջացած դժգոհությունները:

ԴԿ-ի իշխանության տարիներին (1950-1960 թթ.) երկրում խորացան սոցիալ-տնտեսական դժվարությունները, քաղաքական մրցակիցների դեմ ճնշումները, իսլամական շարժումների ակտիվացումը, որոնք զինվորականության կողմից ընկալվում էին որպես նահանջ Քեմալի նախանշած ուղուց, և առաջացրեցին երիտասարդ սպայական կազմի դժգոհությունն իշխանությունների հանդեպ: 1950-ական թթ. կեսերից սպայակազմի մի խումբ երիտասարդ անդամներ ձեռնամուխ եղան ռազմական հեղաշրջում նախապատրաստելուն[16]:

1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ առաջին ռազմական հեղաշրջումը և երկրի ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ, *Milli Birlik Komitesi*)[17] ձեռքը, որի ղեկավար դարձավ գեներալ Ջեմալ Գյուրսելը: ԱՄԿ-ի գործունեութ-

յան առաջին իսկ ամիսներից լուրջ հակասություններ ի հայտ եկան նրա անդամների միջև՝ կապված երկրի ղեկավարման հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ը ներսում բաժանվեց երկու թևի՝ պահպանողականների և արմատականների: Պահպանողականների խումբը, որի կազմում էին ԱՄԿ-ի անդամ գեներալները՝ Զ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին (պետք է նշել, որ այս խմբի մեջքին կանգնած էր փորձառու Իսմեթ Ինյոնյուն): ԱՄԿ-ի արմատական թևին հարող անդամները պնդում էին, որ միայն ԴԿ-ին իշխանությունից հեռացնելով՝ զինվորականության «առաքելությունը» չի ավարտվում և պետք է իշխանության ղեկը պահել իրենց ձեռքում՝ երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Այդ պայքարում հաղթանակ տարան պահպանողականները, և նոյեմբերի 13-ին արմատականների խմբի բոլոր 14 անդամները հեռացվեցին ԱՄԿ-ից և զինված ուժերից[18]: Արմատականներին իր կազմից հեռացնելով, ԱՄԿ-ն որոշեց ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին:

Մայիսյան հեղաշրջումն ուներ *նախածեռնողական*[9] բնույթ. այն չիրականացվեց բանակի ղեկավարության կողմից, ինչպես դա տեղի ունեցավ զինվորականների հետագա «միջամտությունների» (1971 թ., 1997 թ.) և հեղաշրջման (1980 թ.) ժամանակ: «Մայիսի 27-ը» կազմակերպեցին և իրականացրեցին գլխավորապես միջին աստիճանակարգ ունեցող և հիմնականում քեմալիզմի սկզբունքներին անսահման նվիրված սպայական կազմի երիտասարդ անդամները (Թ. Այդեմիր, Դ. Աեյհան, Օ. էրքանը, Ֆ. Գյուվենթյուրք, Ա. Թյուրքեշ, Ս. Քոչաս, Ն. էսին, Ս. Քարաման և այլն): Հեղաշրջման նախածեռնողները իրենց գործողություններին «օրինականություն» հաղորդելու նպատակով միայն փորձեցին հեղաշրջման իրականացման գործընթացի մեջ ներգրավել բանակի վերնախավի որոշ անդամների[20]: Քանի որ հեղաշրջումն իրականացրեցին հիմնականում միջին աստիճանակարգ ունեցող սպաները, բանակում խախտվեց աստիճանակարգային կարգապահությունը: Մեհմեթ Ալի Բիրանդը նշում է, որ թուրքական բանակում հատուկ ուշադրություն է հատկացվում *աստիճանակարգության կարգապահությանը* (*rütbeye disiplini*)[21], հատկապես 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո: Աստիճանակարգության կարգապահությունը քննադատում է «նախածեռնողական գործողությունները» և պարտադրում գործել «հրամանի սկզբունքով», ինչը ենթադրում է անքննելի ենթակայություն առավել բարձր աստիճան ունեցող սպաների հրամանին, եթե նույնիսկ հրամանի ճիշտ լինելը կասկած է հարուցում: Բիրանդը նշում է, որ 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո խախտվեց աստիճանակարգության կարգապահությունը, ինչը դառնությամբ հիշվող սպի է թուրքական բարձրաստիճան զինվորականության համար[22]: 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո թուրքական բանակի գեներալները ձեռնամուխ եղան բանակում աստիճանակարգության կարգապահության հաստատման գործընթացին: Դրանով բարձրաստիճան զինվորականութ-

յունը փորձում էր բացառել ցածր զինվորական աստիճան ունեցող սպայության կողմից կազմակերպվող «նախաձեռնողական հեղաշրջումները», որն ըստ էության սպառնում էր նաև իրենց իշխանությանը: Այդ գործում բանակի ղեկավարությանն ակտիվորեն աջակցում էին նաև քաղաքացիական իշխանությունները, ինչն հասկանալի էր. բնականաբար ավելի հեշտ կլիներ վերահսկել մի քանի գեներալների կամ բավարարել նրանց պահանջները, ինչը բացառապես անհնար էր ամբողջ սպայական կազմի դեպքում: Պետք է նշել, որ քննարկվող ժամանակաշրջանում աստիճանակարգության կարգուկանոնը վերականգնելն այդքան էլ հեշտ գործ չէր. 1960 թ. հեղաշրջումից հետո բանակը չափազանց քաղաքականացված էր, իսկ առանց բանակն ապաքաղաքականացնելու գրեթե անհնար է աստիճանակարգության կարգուկանոնն հաստատել և բացառել զինվորականության «նախաձեռնողական» գործողությունները: 1960-ական թթ. սկզբներին զորամասերը քաղաքական ակումբներ էին հիշեցնում, որտեղ զինվորականները քննարկում էին այս կամ այն քաղաքական ուղղության առավելություններն ու թերությունները: Ե. Այդեմիրը նշում է, որ զորամասերը վերածվել էին քաղաքական կենտրոնների, որտեղ տեղի էին ունենում ցույցեր և բանավեճեր[23]: Այս իրողություններում բանակում ծնվեց նոր քաղաքական միավոր՝ Զինված ուժերի միությունը (ԶՈՒՄ - *Silahlı Kuvvetler Birliği*), որն աստիճանակարգության կարգապահությունը վերականգնելու գործընթացում կարևոր դերակատարում ունեցավ: ԶՈՒՄ-ի կանոնադրության առանցքային կետերից էր հրամանով գործելու անհրաժեշտությունը: ԶՈՒՄ-ը սրընթաց կերպով տարածվեց բանակում և ձեռնամուխ եղավ աստիճանակարգության վերականգնման և երիտասարդ սպայական կազմի մեջ «նախաձեռնողական գործողությունները» բացառելու գործին: ԶՈՒՄ-ը մեծապես նպաստեց բանակի աստիճանակարգության կարգապահության վերականգնմանը[24]:

Թուրքական բանակում աստիճանակարգության վերականգնման գործում նշանակալի դերակատարում ունեցավ նաև ՕՅԱՔ-ը (*Ordu Yardımlaşma Kurulu* - Բանակի փոխօգնության կազմակերպություն): Հարկ է նշել, որ 1960 թ. ռազմական հեղաշրջմանը խթանող պատճառներից մեկը զինվորականության նյութական անապահովությունն էր, ուստի ՕՅԱՔ-ը ստեղծվեց (1961 թ.) սպայական կազմի սոցիալական դրությունը բարելավելու նպատակով[25]: ՕՅԱՔ-ի ֆոնդը սկզբնական շրջանում ձևավորվում էր անդամավճարներից, սակայն հետագայում ՕՅԱՔ-ն ընդլայնելով իր տնտեսական գործունեության սահմանները՝ վերածվեց խոշոր ձեռնարկատիրական ընկերության[26]: ՕՅԱՔ-ի հիմնադրմամբ նյութական շահերն էլ ավելի համախմբեցին սպայությանը՝ վերացնելով բարձրաստիճան և միջին սպայության միջև 1960 թ-ից տիրող լարվածությունը[27]: ՕՅԱՔ-ը չափազանց կարևոր ազդեցություն ունեցավ բանակի՝ որպես քաղաքական գործոնի կայացման գործընթացում:

Բանակի վերնախավը, փորձելով ցածր աստիճանակարգ ունեցող սպայական կազմին հեռու պահել քաղաքականությունից, միաժամանակ

իր համար ճանապարհ էր բացում դեպի մեծ քաղաքականություն, և 1960 թ. հեղաշրջումից հետո սկսեց ակտիվորեն մասնակցել երկրի քաղաքական անցուդարձին: Դրան մեծապես նպաստեց այն, որ 1961 թ. սահմանադրության 111-րդ հոդվածով ստեղծվեց Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ): ԱԱԽ-ն իր կազմի մեջ ընդգրկում էր հանրապետության նախագահին, վարչապետին, կառավարության որոշ անդամների և ՋՈւ հրամանատարությանը: ԱԱԽ-ն թեև իր գործունեության առաջին տարիներին էական դերակատարում չէր ունենում երկրի քաղաքական կյանքում, սակայն արդեն 1960-ական թթ. վերջերին այն դարձել էր մի մարմին, որտեղ որոշվում էին երկրի բոլոր կարևորագույն խնդիրները՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառում: 1970 թ. թուրքական «Միլլիյեթ» թերթը գրում էր, որ Թուրքիայի սահմանադրության 111-րդ հոդվածով օրինականացվեց թուրքական զինված ուժերի մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին[28]: ԱԱԽ-ի միջոցով, փաստորեն, երկրի բարձրաստիճան զինվորականությունն ուղղակիորեն սկսեց մասնակցություն ունենալ երկրի համար կարևորագույն խնդիրների քննարկմանը, ինչը խթանեց բանակի ղեկավարության քաղաքականացումը:

Այդպիսով, «Մայիսի 27-ի» հեղաշրջումը և դրան հետևած իրադարձությունները մեծապես նպաստեցին բանակի վերնախավի քաղաքականացման գործընթացին: Արդեն 1960-ական թթ. սկսած բանակը դարձավ քաղաքական պայքարի հավասարազոր մասնակից, ժամանակ առ ժամանակ դուրս գալով առաջին պլան, իր ձեռքը վերցնելով իշխանությունը[29]:

1971 թ. մարտի 12-ին թուրքական բանակը «միջամտեց» երկրի քաղաքական անցուդարձին, որը պատմության մեջ մտավ «հուշագրային հեղաշրջում» անվանմամբ: Թուրքիայի ՋՈւ հրամանատարությունը հանրապետության նախագահ Ջևդեթ Աունային ներկայացրեց հուշագիր, որով պահանջվում էր կառավարության հրաժարականը՝ սպառնալով հակառակ դեպքում իր ձեռքը վերցնել երկրի իշխանությունը: Նույն օրը Սուլեյման Դեմիրելի ղեկավարած կառավարությունը հրաժարական տվեց և դադարեցրեց իր գործունեությունը: «Մարտի 12-ի» կազմակերպիչների առաջնային նպատակն էր կանխել ցածր զինվորական աստիճան ունեցող սպաների կողմից նախապատրաստվող *նախածեռնողական* ռազմական հեղաշրջումը[30]: Դեռ 1960-ական թթ. վերջերից երկրում սկսել էր գործել գաղտնի մի կազմակերպություն, որը ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում: Այդ կազմակերպության մեջ թոշակի անցած սպաների (1960 թ. հեղաշրջման կազմակերպիչներ Օ. Քյոքսալ, Հ. Քաչար, Զ. Մադանօղլու) և բանակի արմատական տրամադրված սպայակազմի անդամների (գնդապետ Ա. Քափքան) հետ միասին գործում էին նաև ձախ ուղղվածություն ունեցող քաղաքական գործիչներ (Դ. Ավջըօղլու): Այդ կազմակերպության գործունեությունը ղեկավարում էր Զ. Մադանօղլուն[31]: 1971 թ. սկզբին այն զգալի ուժ և ռեսուրսներ ուներ հեղաշրջում իրակա-

նացնելու համար: Սակայն զինվորական ղեկավարությանը հայտնի դարձան կազմակերպության ծրագրերը, և բանակի վերնախավը «մարտի 12-ի միջամտության» միջոցով կարողացավ խոչընդոտել դրանց: Մարտի 12-ի «միջամտությունից» անմիջապես հետո բանակից հեռացվեցին մեծ թվով սպաներ, սպայական կազմում բազմաթիվ տեղափոխություններ իրականացվեցին:

Այդպիսով, եթե մայիսի 27-ի հեղաշրջումը կազմակերպված էր հիմնականում արմատականների կողմից, ապա մարտի 12-ի «միջամտությունը» գլխավորապես ուղղված էր նրանց դեմ: 1971 թ. հեղաշրջման նախապատրաստումը, փաստորեն, արմատականների վերջին փորձն էր՝ ավարտին հասցնելու իրենց գործը սկսված «մայիսի 27-ին»: Թուրքիայի արմատական սպաները, ի տարբերություն արևելյան որոշ երկրների, որտեղ նմանօրինակ շարժումները հաջողության հասան, չկարողացան համախմբվել և ուժերի ճիշտ վերադասավորում կատարել: Խոշոր կապիտալը, բանակի ղեկավարությունը և կուսակցությունները կարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ և հաղթանակած դուրս գալ այդ պայքարից[32]:

«Մարտի 12-ի» անցումային շրջանում (1971-73 թթ.) բարձրաստիճան զինվորականության անմիջական հսկողությամբ տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների ժամանակ փոփոխության ենթարկվեց նաև սահմանադրության՝ Ազգային անվտանգության խորհրդի մասին դրույթը. ավելացվեցին ԱԱԽ-ի լիազորությունները, որոնք նպատակաուղղված էին ուժեղացնել բանակի վերահսկողական լծակները երկրի քաղաքական կյանքի վրա[33]:

«Մարտի 12-ի վարչակարգի» ժամանակաշրջանն ավարտվեց 1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններով: Զինվորականները խորհրդարանական ընտրություններին հաջորդած մի քանի տարիների ընթացքում գտնվում էին երկրորդ պլանում և ընդհանուր առմամբ չէին խառնվում երկրի քաղաքական անցուդարձին: Դա պայմանավորված էր հիմնականում երկու հանգամանքով: Նախ՝ «Մարտի 12-ի վարչակարգը» մեծապես վարկաբեկել էր զինվորականությանը, քանի որ թե՛ զինվորականների «միջամտությունը» քաղաքական կյանքին և թե՛ դրան հաջորդած պատժամիջոցների զանգվածային ալիքը ծախսկողմյան շարժումների նկատմամբ հիմնավորված և արդարացված չէր[34]: Արդյունքում զինվորականությունը մեծապես վարկաբեկվել էր, և նվազել էր նրա ուժն ու ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում[35], ինչն էլ արտահայտվեց 1973 թ. մարտին կայացած նախագահական ընտրությունների ժամանակ, երբ Ֆարուք Գյուրլերը հրաժարական տվեց ԳՇ պետի պաշտոնից և իր թեկնածությունն առաջադրեց նախագահական ընտրություններում, սակայն երկրի 2 խոշորագույն կուսակցությունները (ԱԿ և ԺՀԿ) հրաժարվեցին պաշտպանել Գյուրլերի թեկնածությունը և վերջինիս այդպես էլ չհաջողվեց ԹԱՄԺ-ում հավաքել ձայների անհրաժեշտ քանակ՝ նախագահ ընտրվելու համար[36]: Ֆ. Գյուրլերի նախագահ չընտրվելը փաստում է, որ տվյալ ժամանակահատվածում զինվորականության

ազդեցությունը քաղաքական դաշտում թույլ էր: Եվ, փաստորեն, այդ իրողություններում բանակը լուրջ ազդեցություն չէր կարող ունենալ 1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների և նրա հետագա ընթացքի վրա, ինչպես դա տեղի ունեցավ 1961 թ. խորհրդարանական ընտրություններից հետո:

Երկրորդ հանգամանքը կապված էր ԳՇ պետ Սեմիհ Սանջարի գործոնի հետ: Դեռ 1973 թ., երբ Ֆ. Գյուրլերը հրաժարական տվեց այդ պաշտոնից, նոր ԳՇ պետ ընտրելու անհրաժեշտություն ծագեց: Գյուրլերը ԳՇ պետի երկու գլխավոր թեկնածուների միջև՝ Մուհսին Բաթուր և Սեմիհ Սանջար, ընտրություն կատարեց հօգուտ երկրորդի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սանջարը ջերմ հարաբերություններ ուներ ԱԿ-ի ղեկավարության հետ: Այդ քայլով Գյուրլերը փորձեց շահել ԱԿ ղեկավարների վստահությունը և ստանալ վերջիններիս աջակցությունը նախագահական ընտրությունների ժամանակ: Սակայն ԱԿ ղեկավար Ա. Դեմիրելը, արդեն ունենալով ամուր հենասյուն ի դեմս Սանջարի և վերջինիս հավաստիացումները, որ բանակը չի միջամտի նախագահական ընտրությունների ընթացքին, հրաժարվեց պաշտպանել Ֆ. Գյուրլերի թեկնածությունը: Սեմիհ Սանջարն իր պաշտոնավարման ժամանակահատվածում (1973-1978 թթ.) լոյալ դիրքորոշում ուներ քաղաքացիական իշխանությունների նկատմամբ ընդհանրապես, Դեմիրելի ղեկավարած Ազգայնական ճակատ կոալիցիոն կառավարության (1975-1978 թթ.) նկատմամբ՝ մասնավորապես: Հետևաբար Սեմիհ Սանջարը փորձում էր բանակը հեռու պահել քաղաքական գործընթացներին ուղղակի միջամտելուց: Պատահական չէ, որ 1980 թ. ռազմական հեղաշրջման նախապատրաստման գործընթացն սկսվեց միայն Սեմիհ Սանջարի պաշտոնաթողությունից հետո՝ 1978 թ-ին:

1977 թ. հունիսի սկզբին բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Նամըք Քեմալ Էրսունը և մոտ 200 այլ ուղղվածության սպա, որոնք մեղադրվում էին պանթյուրքիստական ուժերի հետ միասին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու մեջ[37]: Հատկանշական է, որ Էրսունի ձախողված հեղաշրջման գլխավոր նախաձեռնողներից էր պանթյուրքիստական «գորշ գայլերի» շարժման ղեկավար Ալփարսլան Թյուրքեշը[38]:

1977 թ. ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնի համար երեք գլխավոր թեկնածու կար՝ առաջին բանակի հրամանատար, բանակի գեներալ Ադնան Էրսոյզը, երկրորդ բանակի հրամանատար, բանակի գեներալ Շյուքրյու Օլջայը և երրորդ բանակի հրամանատար, բանակի գեներալ Ալի Ֆեթհի Էսենները[39]: Ցամաքային զորքերի հրամանատարի թափուր պաշտոնը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ 1976 թ. մարտին լրացել էր ԳՇ պետ Սեմիհ Սանջարի պաշտոնավարման ժամկետը (ԳՇ պետը նշանակվում էր 3 տարի ժամկետով) և այն ամեն տարի մարտի 6-ին երկարացվում էր կառավարության կողմից (կառավարությունն իրավունք ուներ երեք անգամ, մեկ տարի ժամանակով երկարացնելու ԳՇ պետի պաշտոնավարման ժամկետը)[40], և ցամաքային զորքերի

նոր հրամանատարը դիտվում էր որպես ԳՇ հաջորդ պետի հիմնական թեկնածու: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 1980 թ. ապրիլին ավարտվում էր նախագահ Ֆահրի Քորություրքի պաշտոնավարման ժամկետը, նոր ԳՇ պետը հաջորդ նախագահի ամենահավանական փոխարինողն էր լինելու:

Վարչապետ Սուլեյման Դեմիրելի նախընտրած թեկնածուն Ալի Ֆեթհի էսեներն էր[41], և ԳՇ պետ Սեմիհ Սանջարն առաջարկեց էսեների թեկնածությունը: Սակայն էսեների թեկնածությունը թե՛ բանակի ներսում և թե՛ նախագահական նստավայրում որոշակի դժգոհություն առաջացրեց: Դժգոհությունների հիմնական պատճառն այն էր, որ էսեների նշանակումը խախտում էր աստիճանակարգության կարգապահությունը, քանի որ երեք թեկնածուներից ըստ աստիճանակարգի ավելի բարձր էր Սդնան էրսոզի պաշտոնը, երկրորդը Շյուքրյու Օլջայն էր և ապա՝ էսեներն էր: Այս պայմաններում, նախագահ Քորություրքը հրաժարվեց էսեներին նշանակել այդ պաշտոնում՝ պատճառաբանելով, որ *«բանակում աստիճանակարգության կարգ կա, և ես չեմ խախտի այն»*[42]: Կառավարության ղեկավար Ա. Դեմիրելն իր հերթին կտրականապես դեմ էր Ադնան էրսոզի թեկնածությանը, քանի որ վերջինս հայտնի էր ԺՀԿ-ի նկատմամբ իր համակրանքով[43]: Հարկ է նշել, այս փուլում ոչ մի ձևով չէր քննարկվում էգեյան բանակի հրամանատար Քենան էվրենի թեկնածությունը: Սակայն իրադրությունը կտրականապես փոխվեց օգոստոսի 30-ին:

1977 թ օգոստոսի 30-ին լրացավ երեք գլխավոր թեկնածուների (էրսոզ, Օլջայ, էսեներ) պաշտոնավարման ժամկետը, և երեքն էլ զորացրվեցին: Ցամաքային զորքերի հրամանատարի համար, ըստ աստիճանակարգի, ամենահարմար թեկնածուն դարձավ էգեյան բանակի հրամանատար, բանակի գեներալ Քենան էվրենը[44], ով և օգոստոսի 31-ին նշանակվեց Ցամաքայի զորքերի հրամանարի պաշտոնում[45] և հենց նրա պաշտոնավարման տարիներին տեղի ունեցավ «Սեպտեմբերի 12-ի» ռազմական հեղաշրջումը:

1978 թ. վարչապետ Բ. Էջևիթը հրաժարվեց ևս մեկ տարով երկարացնել ԳՇ պետ Ս. Սանջարի պաշտոնավարման ժամկետը, և Թուրքիայի ԳՇ պետ նշանակեց ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Քենան էվրենին[46]: էվրենն իր հերթին նոր նշանակումներ կատարեց բանակում՝ ամրապնդելով իր դիրքերը: Ցամաքային զորքերի հրամանատար նշանակվեց Նուրեթթին էրսինը, ռազմաօդային զորքերի հրամանատար՝ Թահսին Շահինքայան, ժանդարմերիայի հրամանատար՝ Սեդաթ Ջելասունը: ԳՇ պետի տեղակալ (այդ պաշտոնի կարևորությունն ընդգծելու նպատակով Թուրքիայում այն անվանում են ԳՇ 2-րդ պետ) նշանակվեց Հայդար Սալթըքը[47]: Առաջին բանակի (Ատամբուլի) հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Նեջդեթ Ուրյուղը: Այդպիսով 1978 թ. ձևավորվեց այն հիմնական ուժը, որը կազմակերպեց 1980 թ. ռազմական հեղաշրջումը: Արդեն 1978 թ-ից բանակի վերնախավն սկսեց քննարկել քաղաքական կյանքին միջամտելու անհրաժեշտությունը:

1970-ական թթ. Թուրքիայում ընդգծվեցին սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք շուտով վերաճեցին Թուրքիայում իր խորությամբ նախադեպը չունեցող տնտեսական և քաղաքական ճգնաժամի[48]: 1970-ական թթ. վերջերին երկիրը բաժանվել էր երկու բևեռների՝ աջերի և ձախերի: Ահաբեկչությունը սոսկալի ծավալներ էր ընդունել, որի արդյունքում օրական մոտ 20 մարդ էր սպանվում: Հաճախակի էին դարձել նաև բախումները կրոնական սունիի և ալևի համայնքների միջև: Թուրքիայում առկա էին հասունացող քաղաքացիական պատերազմին բնորոշ մի շարք նախանշաններ: Սակայն իրար անընդհատ փոխարինող էջևիթի և Դեմիրելի կառավարություններն էական փոփոխություն չէին մտցնում երկրի ներքաղաքական կյանքում: Թուրքիայում օրըստօրե խորանում էին ճգնաժամային երևույթները՝ ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, բևեռացումը հասարակության միջև, իսկ երկրի քաղաքական ուժերն զբաղված էին ներքաղաքական պայքարով և վճռական քայլեր չէին ձեռնարկում երկրում շրջադարձային փոփոխություններ իրականացնելու համար[49]: Այդ իրողություններում զինվորական վերնախավն սկսեց նոր ռազմական միջամտություն նախապատրաստել[50]:

1979 թ. դեկտեմբերի 27-ին Գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենը նախագահ Ֆահրի Քորություրքին հանձնեց նախազգուշացնող նամակ, որով զինվորականությունն իր մտահոգությունն էր հայտնում երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ և կոչ անում իշխանություններին կատարել իրենց պարտականությունները[51]: Դեկտեմբերի 27-ի «նախազգուշացնող նամակը» նպատակ էր հետապնդում ստուգել հասարակության և իշխանությունների արձագանքները բանակի միջամտությանը: «Նախազգուշացնող նամակը» ըստ էության ռազմական հեղաշրջման առաջին ազդանշանն էր:

1980 թ. սեպտեմբերի 12-ին ԶՈՒ հրամանատարությունը՝ ԳՇ - պետ Քենան Էվրենի գլխավորությամբ իրականացրեց ռազմական հեղաշրջում, որի արդյունքում երկրի ամբողջ իշխանությունն անցավ օժտված նորաստեղծ Ազգային անվտանգության խորհրդի ձեռքը (*Milli Güvenlik Konseyi*, այսուհետև՝ ԱԱԽ)[52]: Թուրքիայում սկսվեց «անցումային շրջանի» ժամանակաշրջանը, որը սովորաբար հաջորդում է ռազմական հեղաշրջումներին: 1980 թ. հեղաշրջման անցումային շրջանը նախորդ հեղաշրջման (1960 թ.) և զինվորականների «միջամտության» (1971 թ.) անցումային շրջանների համեմատ բավականին երկար տևեց՝ ավելի քան երեք տարի: Դա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառները խորն ու տարաբնույթ էին (ահաբեկչություն, ձախ շարժում, ներքաղաքական ճգնաժամ, իսլամական շարժում, տնտեսական ճգնաժամ և այլն) և հեղաշրջման նպատակն ուղղված չէր գլխավորապես մեկ կուսակցության կամ երևույթի դեմ, ինչպես դա տեղի ունեցավ 1960 թ. հեղաշրջման (այն հիմնականում ուղղված էր իշխող Դեմոկրատական կուսակցության դեմ) և

1971 թ. զինվորականների «միջամտության» ժամանակ (նպատակ էր հետապնդում կանխել ավելի ցածր աստիճանակարգ ունեցող զինվորականների կողմից նախապատրաստվող ռազմական հեղաշրջումը), և հետևաբար զինվորականներից ավելի երկար ժամանակ էր պահանջվելու հեղաշրջման պատճառները վերացնելու համար: Նախքան երկրի իշխանությունը քաղաքացիական ուժերին փոխանցելը զինվորականները ձեռնամուխ եղան երկրում քաղաքական համակարգի վերափոխումներ իրականացնելուն, որոնց միջոցով զինվորականությունը քաղաքական կյանքի վրա ազդելու բազմաթիվ լծակներ ստացավ, որոնք հնարավորություն տվեցին շարունակելու որոշիչ դերակատարում ունենալ երկրի քաղաքական կյանքում: Սակայն, ըստ էության, քաղաքական կյանքի վրա ազդելու բանակի գլխավոր լծակը շարունակելու է մնալ ռազմական հեղաշրջումը:

Այդպիսով, 1960-1970-ական թթ. Թուրքիայում բանակ-հասարակություն փոխհարաբերությունները, ըստ վերը նշված տեսության, կարելի է բնութագրել որպես *ներթափանցման* մոդել. բանակը Թուրքիայի քաղաքական կյանքում առանցքային նշանակություն ուներ, քաղաքականացված էր, ակտիվորեն մասնակցում էր երկրի քաղաքական անցուդարձին և հանդես էր գալիս որպես երկրի պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալիզմի հիմնական պաշտպան:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռազմական սոցիոլոգիայի հետազոտությունների կենտրոնում են ռազմական ինստիտուտը, դրա կապը և փոխհարաբերությունները հասարակության այլ ինստիտուտների հետ, ռազմական ինստիտուտի գործառնության արդյունավետության վրա ազդող գործոնները: Ռազմական սոցիոլոգիա. ուսումնական նյութերի ժողովածու. Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005, էջ 6;
2. Eric Nordlinger, Soldiers in Politics: Military Coups and Governments. New Jersey: Prentice Hall, 1977, pp. 10-19;
3. Eric Nordlinger, նշվ. աշխ., էջ 10-19;
4. Gerassimos Karabelias, Civil-Military Relations: A comparative analysis of the role of the military in the political transformation of post-war Turkey and Greece: 1980-1985. -- Final Report Submitted to North Atlantic Treaty Organization (NATO) in June 1980, pp. 15-16;
5. Morris Janowitz, Political Conflict, Essays in Political Sociology. Chicago: Quadrangle Books, 1970, p. 136;
6. Պետք է նշել, որ թեև մեկ հոդվածով անհնար է ներկայացնել այն բոլոր գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ձևավորման վրա, սակայն սույն հոդվածում մեր կողմից արված եզրակացությունները կատարվել են հնարավորինս այդ բոլոր գործոնները հաշվի առնելով:
7. С. Багдасарян, Роль армии в процессе модернизации Турции в 1960-1990-х годах. - Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXI), Երևան: Զանգակ-97, 2002, էջ 28;

8. George S. Harris, The Role of the Military in Turkish Politics - The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 56-60;
9. Ibid.;
10. В. М. Запорожец, А. А. Колесников, Турция: Общество и армия, том I, Ленинград, 1983, стр. 180;
11. Mehmet Ali Birand, Emret Komutanım. İstanbul: Milliyet Yayın., 1986, s. 92;
12. В. М. Запорожец, նշվ. աշխ., էջ 184;
13. Հատկանշական է, որ այդ խմբավորումների մեջ էին նաև Ջևդեթ Սունայը (1961-66 թթ. ՁՈՒ Գլխավոր շտաբի պետ, 1966-73 թ. հանրապետության նախագահ) և Սեմդուհ Թաղմաչը, ով 1971 թ. մարտի 12-ի միջամտության ժամանակ Գլխավոր շտաբի պետն էր: Abdi İpekçi ve Ömer Sami Çoşar, İhtilalın İçyüzü. İstanbul: Milliyet Yayın., 1965, 16-19;
14. George S. Harris, The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 54-66;
15. В. М. Запорожец, А. А. Колесников, стр. 186;
16. George S. Harris, The Causes of the 1960 Revolution in Turkey, The Middle East Journal, Vol. 24, No. 4, Autumn 1970, pp. 438-454;
17. ԱՄԿ-ն բաղկացած էր 38 անդամներից (5 գեներալ, 9 գնդապետ, 6 փոխգնդապետ, 11 մայոր, 7 կապիտան): Yılmaz Öztuna, Ayvaz Gökdemir, Türkiye'de Askeri Müdahaleler. İstanbul, 1987, s. 50;
18. Walter F. Weiker, The Turkish Revolution 1960-1961, Aspects of Military Politics. Washington: Brookings Institution, 1963, pp. 131-136, Dündar Seyhan, Gölgedeki Adam. Istanbul: Nurettin Uycan Matbaacı, 1966, s. 117-118;
19. Ռազմական հեղաշրջումներն կարելի է բաժանել երկու տեսակի՝ *նախաձեռնողական* և *հրամանի*: Նախաձեռնողական հեղաշրջումների ժամանակ ռազմական հեղաշրջումը կազմակերպում են ցածր աստիճանակարգ ունեցող զինվորականները՝ առանց հրամանատարության գիտության կամ համաձայնության (այդպիսի հեղաշրջումները հիմնականում ավելի արմատական են լինում): Հրամանի հեղաշրջումներն իրականացվում են բանակի հրամանատարության կողմից՝ պահպանելով աստիճանակարգության սկզբունքը: Morris Janowitz, The Military in the Political Development of New Nations. Chicago: The University of Chicago, 1965, pp. 68-70;
20. Հեղաշրջման կազմակերպիչներին 1950-ական թթ. վերջերին հաջողվեց այդ գործընթացների մեջ ներքաշել ցամաքային զորքերի հրամանատար Ջ. Գյուրսելին, ով սակայն 1960 թ մայիսի սկզբին պաշտոնանկ եղավ: Այս գեներալը, որը մասնակցում էր հեղաշրջման նախապատրաստմանը, Գլխավոր շտաբի թիկունքի պետ Ջ. Սադաքօղլուն էր: Պետք է նշել, որ Սադաքօղլուի և Գյուրսելի մասնակցությունը հեղաշրջմանը տեղի ունեցավ հեղաշրջման նախապատրաստման վերջնական փուլում, երբ հեղաշրջումն արդեն անխուսափելի էր: Sadi Koçaş, Atatürkten 12 Marta, Anılar, Cilt 1. İstanbul: May Yayın., 1977, pp. 401-407, 15-18;
21. Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984, s. 37-38;
22. Ibid ;
23. Şevket Aydemir, İkinci Adam, Cilt 3. İstanbul: Rezmi Kitabevi, 1975, s. 570;
24. Doğan Akyaz, Askeri Müdahalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine. İstanbul: İletişim Yayın., 2002, s. 160-165;

25. Արսեն Ավագյան, Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում. – Հայկական բանակ, 4 (50), 2006, էջ 71;
26. ՕՅԱԿ-ի մասին առավել մանրամասն տե՛ս Taha Parla, Türkiyede Merkantilist Militarizm 1960-1998. - Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul: Bilirkim Yayın., 2004, s. 201-224; İsmet Akça, Kolektif Bir Sermayedar Olarak Türk Silahlı Kuvvetleri. - Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul: Bilirkim Yayın., 2004, s. 225-270;
27. Արսեն Ավագյան, նշվ. աշխ., էջ 71;
28. Milliyet, 30 Ağustos 1970;
29. В. И. Данилов, Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии". Москва: Наука, 1991, стр. 8;
30. Gerassimos Karabelias, The Evolution of Civil-Military Relation of Post-war Turkey, 1980-95. – Middle Eastern Studies: Oct. 1999, 35, 4, p. 133;
31. Հատկանշական է, որ արմատական հեղաշրջում նախապատրաստող այդ կազմակերպությունը գլխավորում էր Ջ. Մադանօղլուն, ով 1960 թ. հեղաշրջումից հետո ԱՄԿ-ի սուջ պահպանողականների ղեկավարներից էր և քանք չէր խնայում ԱՄԿ-ի արմատականներին հեռու պահել քաղաքականությունից: Doğan Akyaz, Askeri Müdahalelerın Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine. İstanbul: İletişim Yaym., 2002, s. 272-290;
32. В. И. Данилов, Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия). Москва: Изд. Наука, 1985, стр. 164.
33. Ali Bayramoğlu, Asker ve Siyaset. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu. İstanbul: Bilirkim Yaym., 2004, s. 79-80;
34. 1971 թ. հետո թուրքական բարձրաստիճան զինվորականությունը քաղաքական կյանքին միջամտելուց առաջ ամեն քանք գործադրում էր որպեսզի այն հիմնավորված և արդարացված լինի հասարակության կողմից: Պետք է նշել, որ երբեմն թուրքական բարձրաստիճան զինվորականները նույնիսկ սադրիչ և ահաբեկչական գործողությունների են դիմում երկրում վախի մթնոլորտ ստեղծելու համար, որը զինվորականության «հիմնավորված» միջամտության անհրաժեշտությունը և անխուսափելիությունը ևս մեկ անգամ ընգծելու հնարավորություն է: 2007 թ. Թուրքիայում տեղի ունեցած մի քանի դաժան սպանություններ, որոնց թվում էր նաև Ակոս թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը, ամբողջովին տեղավորվում են այդ համատեքստում, սակայն այն առանձին վերլուծության առարկա է, որին էլ կանդրադառնանք մեր հետագա աշխատանքներում:
35. Tanel Demirel, Lessons of Military Regimes and Democracy: The Turkish case in a Comparative Perspective. - Armed Forces & Society, Vol. 31, No. 2, Winter 2005, p. 250;
36. Նախագահական ընտրությունների 15-րդ փուլում հանրապետության նախագահ ընտրվեց ադմիրալ Ֆահրի Քորություրքը: 1973 թ. նախագահական ընտրությունների մասին ավելի մանրամասն տե՛ս В. И. Данилов, Армия и политика в современной Турции. – Турция: история. эзкономика. Москва: Изд. Наука, 1978, стр. 21-24; Muhsin Batur , նշվ. աշխ., էջ 413-416;
37. Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ.. – Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ. Երևան: Ա-

սողիկ, 2006, էջ 103-113; Ertuğrul Alatlı, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980. İstanbul: Alfa Yayın., 2004, s. 184-185;

38. Soner Yalçın & Doğan Yurdakul, Bay-Pipo. İstanbul: Doğan Kitapçılık AŞ., 2000. s. 289-291;
39. Kenan Evren, Kenan Evren'in Anıları, Cilt-1. İstanbul: Milliyet Yay., 1990, s. 178;
40. Mehmet Ali Birand, 12 Eylül Saat: 04:00. İstanbul: Karacan Yay., 1984, s. 60;
41. Ալի Ֆեթհի էսեները 1983 թ. ստեղծված Մեծ Թուրքիայի կուսակցության նախագահն էր, որը զինվորականները արգելեցին՝ պատճառաբանելով, որ այն ղեկավարվում է Ս. Դեմիրելի կողմից:
42. Kenan Evren, նշվ. աշխ., էջ 178;
43. Mehmet Ali Birand, նշվ. աշխ., էջ 47;
44. Քենան Էվրենը ծնվել է 1918 թ. Ալշեհիր իլչեյում: 1949 թ. ավարտել է Ստամբուլի ռազմական ակադեմիան և ծառայության է անցել Թուրքական բանակում:Քենան Էվրենը մինչև ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնում նշանակվելը թուրքական բանակում բարձր պաշտոններ է զբաղեցրել ցամաքային զորքերի շտաբի պետ, ՊՇ 2-րդ պետ, էգեյան բանակի հրամանատար: Ք. Էվրենի կենսագրական մանրամասնությունները տե՛ս թուրքական ԶՈՒ պաշտոնական վեբ կայքում http://www.tsk.mil.tr/genel_konular/gnkurbask/kenanevren.htm
45. Kenan Evren, նշվ. աշխ., էջ 178-180;
46. Ertuğrul Alatlı, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980. İstanbul: Alfa Yayın., 2004, s. 261;
47. Mehmet Ali Birand, նշվ. աշխ., էջ 61-61;
48. П. П. Моисеев, Турция: программа ээкономической стабилизации: 1980 г.. - Турция – история и современность, сборник статей. Москва: Изд. Наука, 1988. стр. 211;
49. Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ. – Մերձավոր Արևելք հ. III. Երևան: Զանգակ-97, 2006, էջ 51-55;
50. Tanel Demirel. The Turkish Military's Decision to Intervene: 12 September 1980. – Armed Forces & Society, Vol. 29, No. 2, 2003, 253-280;
51. Türk Silahlı Kuvvetleri'nin Görüşü – 27 Aralık 1979 (Uyarı Mektubu) - Ertuğrul Alatlı, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980. İstanbul: Alfa Yayın., 2004, s. 456-457;
52. Թուրքիայում նախքան հեղաշրջումը գործող Ազգային անվտանգության խորհուրդը թուրքերեն «Milli Güvenlik Kurulu» էր: Այդ տարբերությունը հայերենում հնարավոր չեղավ ընդգծել:

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ 1990-Ա-ԿԱՆ ԹԹ. ՈՐՊԵՍ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՉԵՌՔԲԵՐՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՉԱԽՈՂՈՒՄ

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կենտրոնական Ասիան եւ Հարավային Կովկասը հայտնվեցին Թուրքիայի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների կենտրոնում: Հիմնվելով այդ տարածաշրջանի թյուրքալեզու երկրների (Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Ղրղզստան եւ Ադրբեջան) հետ իր էթնիկական-լեզվական, մշակութային եւ կրոնական ընդհանրությունների վրա՝ Թուրքիան իրեն էր վերապահում հետխորհրդային շրջանում առաջատարի դերակատարությունը այդ տարածաշրջաններում ազդեցության հաստատման գործում: Փաստորեն, դա որպես ազդեցիկ տարածաշրջանային տերություն հանդես գալու եզակի հնարավորություն էր Թուրքիայի համար, ուստի 1990-ական թթ. սկզբին Անկարան որդեգրեց տարածաշրջանային քաղաքականության նոր ռազմավարություն:

Լինելով Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ՝ Թուրքիան սառըպատերազմյան ժամանակաշրջանում հստակ դերակատարություն ուներ ՆԱՏՕ-ի հարավային գծի պաշտպանության գործում՝ կանխելով Խորհրդային Միության մուտքը միջերկրածովյան շրջաններ եւ Մերձավոր Արեւելք՝ այդպիսով իրականացնելով դաշինքի «զսպման ռազմավարությունը»: ԽՍՀՄ փլուզմամբ Թուրքիայի գեոստրատեգիական նշանակությունը Արեւմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի համար դարձավ ավելի քան անորոշ: Աշխարհաքաղաքական վերջին զարգացումները (այն է՝ ԽՍՀՄ փլուզումը) թուրքական վերնախավի մոտ առաջացրեցին արտաքին քաղաքական մեկուսացման եւ անապահովության խոր զգացում, ինչը հանգեցրեց Թուրքիայի ակտիվ արտաքին քաղաքականությանը Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքում ու Բալկաններում[1]: Թուրքական իշխանությունները մտավախություն ունեին, որ Սառը պատերազմի ավարտով Թուրքիան կկորցնի իր ռազմավարական նշանակությունը որպես ՆԱՏՕ-ի անդամ եւ կհայտնվի տարածաշրջանային քաղաքականության անորոշության մեջ: Թուրքիան սկսեց որոնել արտաքին քաղաքականության նոր ռազմավարություն, որտեղ առաջնային դեր են սկսում խաղալ Կենտրոնական Ասիայի նորանկախ թյուրքալեզու երկրները (Türkçe konuşan ülkeler): Չգտնելով Բալկաններից մինչեւ Չինաստան տարածվող թյուրքալեզու երկրների միության ստեղծմանը Թուրքիայի առաջնորդությամբ՝ այն կբարձրացներ իր աշխարհաքաղաքական նշանակությունը Արեւմուտքի հետ իր հարաբերություններում: Ինչպես նշում է թուրք վերլուծաբան Սեդաթ Լաչիները՝ «այդպիսի թյուրքական աշխարհի (Turk Dünyası) ստեղծման ռազմավարությունը «ոչ թե այլընտրանք էր եվրամիությանը կամ ընդհանրապես Արեւմուտքին, այլ ընդհա-

կառակը ուղղված էր Թուրքիայի արեւմտյան քաղաքականության հզորացմանը: Իր թիկունքին ունենալով թյուրքական աշխարհի աջակցությունը Թուրքիան Արեւմուտքի հետ իր հարաբերություններում ավելի հզոր կզգար»[2]: Թուրքիայի պաշտոնական շրջանակները Կենտրոնական Ասիայում թուրքական քաղաքական եւ տնտեսական ազդեցության մեծացման ռազմավարությունը դիտում էին նախ եւ առաջ Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային եւ միջազգային դերակատարի իր կարգավիճակի վերահաստատման եւ այդ համատեքստում «ազդեցիկ պետություն դառնալու» հնարավորություն[3]:

Կենտրոնական Ասիայի նորանկախ թյուրքալեզու երկրները կարող էին դառնալ Անկարայի համար որպես արտաքին քաղաքականության հեռահար այլընտրանք: Ա. Հանթինգթոնի ձեւակերպմամբ՝ «մերժելով Մեքքան եւ մերժվելով Բրյուսելի կողմից՝ Թուրքիան գնում է դեպի Տաշքենդ: ԽՍՀՄ փլուզումը հնարավորություն տվեց Թուրքիային՝ դառնալու «ծնունդ առնող թյուրքական քաղաքակրթության առաջնորդ»[4]:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի համար անհրաժեշտություն առաջացավ վերաիմաստավորելու իր ռազմավարական նշանակությունն ԱՄՆ-ի համար՝ ցույց տալու իր այլընտրանքային հնարավորություններն աշխարհաքաղաքական նոր զարգացումներում: Թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունների ձեւավորման գործում մեծ դերակատարում ունեցավ Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը (1989-1993թթ.), որի համառ ջանքերով Թուրքիան 1990 թ. Պարսից ծոցի պատերազմում ակտիվորեն աջակցեց ԱՄՆ-ին՝ Իրաքի դեմ գլխավորած ռազմական գործողություններում: Դրանով նա թուրք-ամերիկյան հարաբերությունները դրեց ռազմավարական նոր հիմքերի վրա եւ մեծացրեց իր երկրի գեոստրատեգիական դերն ԱՄՆ-ի համար[5]:

Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի նորանկախ երկրների հետ հարաբերությունների զարգացումը հիմնավորեցին Թուրքիայի կարեւորությունը եւ անհրաժեշտությունը եվրասիական տարածաշրջանում: Սառը պատերազմից հետո Արեւմուտքի մոտ իր նախկին նշանակությունը կորցնող Թուրքիայի համար Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ազդեցիկ դերակատարություն ստանձնելու առումով կարեւոր նախադրյալներ ստեղծվեցին: Նորանկախ երկրների հետ էթնիկական, լեզվական եւ կրոնական ընդհանրություններ ունեցող Թուրքիան իրեն տեսնում էր որպես կարեւոր մի կամուրջ այդ երկրների եւ Արեւմուտքի միջեւ հարաբերություններում[6]: Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմն իր հոդվածում նշում էր, որ Թուրքիան հետսառըպատերազմյան շրջանում ստանձնել է աշխարհաքաղաքական եւ ռազմավարական դերակատարություն Եվրոպայից մինչեւ Կենտրոնական Ասիա տարածվող լայն տարածաշրջանի կենտրոնում[7]: Թուրքական ղեկավարությունը տարբեր հանդիպումներում եւ տարբեր առիթներով բաց չէր թողնում նոր ձեւավորվող աշխարհաքաղաքական միջավայրում Թուրքիայի կարեւոր դերին անդրադառնալու հնարավորությունը: Վարչապետ Սուլեյման Դե-

միրելի (1991-1993թթ.) խոսքերով՝ ձեւավորվող հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիան դառնում է միջազգայնորեն ավելի կարեւոր շնորհիվ իր ռազմավարական դերի՝ որպես «ՆԱՏՕ-ի կայուն անդամ անկայուն մի տարածաշրջանում (նկատի ունի Կենտրոնական Ասիա-Հարավային Կովկաս)»: ԽՍՀՄ փլուզումը վերահաստատեց Թուրքիայի կարգավիճակը որպես տարածաշրջանային տնտեսական ուժի[8]: Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների նկատմամբ Թուրքիայի ակտիվ քաղաքականությունն աջակցություն էր գտնում Արեւմուտքի՝ հատկապես ԱՄՆ-ի կողմից, ինչն անհրաժեշտ էր Վաշինգտոնին՝ նվազեցնելու Ռուսաստանից այդ երկրների կախվածությունը, ինչպես նաեւ հակազդելու Իրանի, Աֆղանստանի եւ Չինաստանի ազդեցության ուժեղացմանն այդ տարածաշրջանում:[9] Տարածաշրջանի թյուրքալեզու երկրների հետ իր հարաբերություններում Թուրքիան վայելում էր ԱՄՆ-ի ակտիվ աջակցությունը, որի համար Թուրքիայի ներգրավումն այդ տարածաշրջանում դիտվում էր որպես ռազմավարական շահավետ գործոն իր աշխարհաքաղաքական շահերի համար, քանի որ Թուրքիային համարում էր կարեւոր գործընկեր Կենտրոնական Ասիայում վերահսկողություն սահմանելու համար: 1990-ական թթ. սկզբին ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունն ու Կենտրոնական հետախուզական վարչությունը, գիտակցելով հետսառըպատերազմյան շրջանում Թուրքիայի ազդեցության մեծացման նշանակությունը տարածաշրջանում, խրախուսում էին Թուրքիային ամերիկյան օժանդակության անհրաժեշտությունը[10]:

ԱՄՆ-ի հետախուզական եւ վերլուծական կենտրոնները աշխուժորեն քարոզում եւ պաշտպանում էին պանթյուրքիզմի գաղափարները, ոչ թե որպես աշխարհաքաղաքական հայեցակարգ, այլ քաղաքակրթական օրինակ[11]: Արեւմուտքը եւ հատկապես ԱՄՆ-ը, խիստ շահագրգռված էին նորանկախ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում պետական, հասարակական եւ տնտեսական զարգացման թուրքական տարբերակի արմատավորման գործում: Արեւմուտքի կողմից ակտիվորեն խրախուսվում էր «թուրքական մոդելի» ներդրումն այդ երկրներում՝ որպես իդեալական մոդել մահմեդական երկրների համար, քանի որ այն ենթադրում էր աշխարհիկ պետության, ժողովրդավարության*, ազատ շուկայական տնտեսվարման առկայություն, ինչն առավել նպատակահարմար էր Արեւմուտքին: «Թուրքական մոդելն», ըստ արեւմտյան քաղաքական գործիչների, իրենից ներկայացնում է «իսլամական ժողովրդավարության կատարյալ մոդել ընդդեմ իրանական իսլամական հեղափոխականության»: Մտավախություն կար, որ Կենտրոնական Ասիայում ստեղծված քաղաքական վակուումը կարող էր լցվել իսլամական հեղափոխականությամբ»[12]: Վաշինգտոնում 1992 թ. փետրվարին Ս. Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշը Թուրքիան ներկայացրեց որպես աշխարհիկ, ժողովրդավար պետության մոդել, որը կարող է կրկնօրինակվել Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների կողմից: Նորանկախ երկրներ իր կատարած այցի ժամանակ Եվրոպայի խորհրդի գլխավոր

քարտուղարը նշեց, որ «Թուրքիան այդ երկրներին է տալիս զարգացման արժանի մոդել»[13]. Իսկ Կենտրոնասիական երկրներ կատարած իր առաջին այցելության ժամանակ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերը խորհուրդ էր տալիս այդ երկրների ղեկավարներին իրենց քաղաքական համակարգի եւ տնտեսության զարգացման նպատակով ընդունել «թուրքական մոդելը»[14]: Ելույթ ունենալով Թուրք-ամերիկյան բիզնես խորհրդի գլխավոր ասամբլեայում՝ Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը նույնպես անդրադարձել է «թուրքական մոդելին». «Թուրքիայի եւ ԱՄՆ-ի տեսակետներն այս նոր ժամանակաշրջանի խնդիրների հետ կապված ունեն նմանություններ եւ հետաքրքրություններ: Թուրքիան անկայուն մի տարածաշրջանում կայունության կղզի է՝ հիմնված ժողովրդավարական կառուցվածքի եւ ազատ տնտեսվարման վրա: Թուրքիայի փորձառությունն ու արդյունքներն օրինակ են ծառայում նորանկախ երկրների համար»[15]:

1991 թ. վերջին, երբ ԽՍՀՄ փլուզումն արդեն իրողություն էր, Թուրքիան ակտիվացրեց իր գործունեությունը Կենտրոնական Ասիայի երկրներում: Վայելելով ԱՄՆ-ի աջակցությունը՝ Թուրքիան ակտիվորեն քաղաքական հարաբերությունների մեջ մտավ նորանկախ թյուրքալեզու երկրների հետ՝ իր առաջ դնելով սեփական աշխարհաքաղաքական հեռահար նպատակները:

Դեռեւս 1991 թ. աշնանը, Մոսկվայի թույլտվությամբ, տեղի ունեցավ թուրքական ղեկավարության պաշտոնական այցը կենտրոնասիական երկրներ՝ նպատակ ունենալով պարզել նրանց մտադրությունները հետագա հարաբերությունների զարգացման համար[16]: Թուրքիայի նախագահ Թ. Օզալը դարձավ թուրքական արտաքին քաղաքական նոր ռազմավարության հեղինակն ու գործադրողը, քանի որ «թյուրքական աշխարհի հետ հարաբերությունների հիմքերը նրա կողմից դրվեցին»[17]:

1991 թ. դեկտեմբերին Թուրքիան առաջինը ճանաչեց թյուրքալեզու երկրների անկախությունը եւ արդեն 1992 թ. սկզբին բացեց իր դիվանագիտական ներկայացուցչություններն այդ երկրների մայրաքաղաքներում: Թուրքական առաջին դեսպանությունը բացվեց Տաշքենդում՝ Թուրքիայի վարչապետ Ա. Դեմիրելի մասնակցությամբ[18]:

Սկզբնական շրջանում Կենտրոնական Ասիայի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը չափազանց հավակնոտ, էյֆորիկ բնույթ էր կրում եւ տեղավորվում էր նեոպանթյուրքիստական գաղափարախոսության եւ քաղաքականության համատեքստում: Թուրքիայի իշխանություններն իրատեսական գնահատումների փոխարեն արդեն «ուրվագծում էին ապագայի համաթյուրքական միության քարտեզը»: Թուրքիայի վարչապետ Թ. Օզալը Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում հնչեցրած իր ելույթում նշում էր, որ Սառը պատերազմի ավարտը եւ ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի համար տարածաշրջանում առաջնորդ դառնալու պատմական հնարավորություն են ստեղծել. «Թուրքիան չէր կարող մոռանալ նման հնարավորությունը, որ առաջին անգամ ստեղծվել է 400 տարի հետո»[19]:

Համաթյուրքական համերաշխության կարգախոսից ելնելով՝ Թուրքիայի արտգործնախարար Մ. Քարայայչընը, հայտարարեց, «թե այն հայտարարությունը, որ 20-րդ դարը պետք է լինի թյուրքական ժողովուրդների հարյուրամյակ, հավանաբար ուռճացված եմ, սակայն շատ հնարավոր է, որ դա լինի 21-րդ դարը»[20]:

Այդ շրջանում Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում նկատելի ազդեցություն են ձեռք բերում պանթյուրքիստական տրամադրությունները: Հիմնվելով պանթյուրքիզմի գաղափարախոսության տեսաբանների՝ Զիյա Գյոքալփի, Ֆուադ Քյոփրյուլյուի, Յուսուֆ Աքչուրայի հայցքների վրա որոշ քաղաքագետներ, հոդվածագիրներ, հասարակական գործիչներ նորովի էին իմաստավորում «թյուրքական միասնության» գաղափարը: Թուրք հոդվածագիրներն իրենց հոդվածումներում նշում էին, որ երկար տարիներ Թուրքիան, վախենալով մեղադրվել պանթյուրքիզմի մեջ, չի կարողացել զբաղվել արտաքին թյուրքերի խնդրով, ուստի անհրաժեշտություն էին համարում պետական մակարդակով համապատասխան գործողությունների ձեռնարկումը[21]: Նախկին զինվորական Մուզաֆեր Օզդաղն իր հսկայածավալ «Թուրքիան եւ թյուրքական աշխարհի աշխարհաքաղաքականությունը» գրքում անհրաժեշտություն է համարում թյուրքական համագործակցության ճանապարհին մի շարք քայլեր իրականացնել եւ ստեղծել Թյուրքական աշխարհի լրատվական գործակալություն, Թյուրքական աշխարհի խորհրդակցային, քաղաքակրթական կենտրոններ, Թյուրքական աշխարհի արվեստի թանգարան, Թուրան ֆինանսական կենտրոն եւ այլն[22]: Իսկ թուրք քաղաքական աշխարհագրության մասնագետ Ռամազան Օզեյն իր «Թյուրքական աշխարհի աշխարհաքաղաքական կարեւորությունը» հոդվածում նշում է ամբողջ աշխարհում շուրջ 250 միլիոնանոց թյուրքական աշխարհի գոյության մասին եւ միասնության հասնելու համար անհրաժեշտ համարում ստեղծել մի շարք հաստատություններ, այդ թվում նաեւ՝ Թյուրքական աշխարհի պաշտպանական դաշինք[23]: Թուրքիայում գիտական, քաղաքական լայն քննարկման առարկա դարձավ Եվրասիա հասկացությունը, որն ուրվագծում էր թուրքական արտաքին քաղաքականության ռազմավարությունը: Որոշ թուրք քաղաքագետներ, քաղաքական գործիչներ ու գիտնականներ Եվրասիան ընկալում են որպես հիմնականում թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված մի տարածաշրջան՝ նման մոտեցումները դարձնելով գաղափարական հիմնավորումներ[24]: Թուրք քաղաքական գործիչներն ընդհանուր առմամբ եվրսիական տարածաշրջանը դիտելով Թուրքիայի աշխարհաքաղաքական ծգտումների տեսանկյունից՝ այդ տարածաշրջանի սահմաններում էին ընդգրկում Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նորանկախ երկրները: Դեմիրելի խոսքերով՝ «Բալկանների, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի վերամիավորումը միջազգային հանրությանը Եվրասիան դարձրեց աշխարհաքաղաքական իրողություն, իսկ Թուրքիան իր եզակի մշակույթով, աշխար-

հագրությամբ եւ պատմությամբ գտնվում է այդ նոր քաղաքական եւ տնտեսական ամբողջության կենտրոնում»[25]:

1990-ական թթ. սկզբին պանթյուրքիստական տրամադրությունները Թուրքիայից բացի տարածում գտան նաեւ կենտրոնասիական թյուրքալեզու հանրապետություններում: Ազգայնական զարթոնքն այդ երկրներում որոշ առումով տեղի ունեցավ պանթյուրքական գաղափարախոսության միջոցով: 1992 թ. Ղազախստանի «Ժողովրդավարական» կուսակցության վեհաժողովը որոշեց Կազանից մինչեւ Ալմա-Աթա ձգվող թյուրքական պետության ստեղծման մասին, իսկ Ղազախական «Ժելտոքսան» շարժման առաջնորդ Կոժահմեդովն ակնարկեց «թյուրքական համագործակցություն», ինչպես նաեւ «Մեծ Թուրքեստան» ստեղծելու հնարավորության մասին: Նման մոտեցումները հատուկ էին նաեւ ղազախական մեկ այլ՝ «Ալաշ» շարժմանը[26]: Ուզբեկստանում պանթյուրքիստական գաղափարախոսության կրող կազմակերպություններից էին «Միություն» շարժումը եւ «Թուրքեստան» միավորումը[27]:

Նորանկախ թյուրքալեզու երկրներ ն արտաքին քաղաքական վերակողմնորոշման եւ միջազգային հարաբերություններում ներկայանալու խիստ կարիք ունեին եւ թուրքական կողմն այդ ուղղությամբ ակտիվ աջակցություն էր ցույց տալիս «այդ երկրների աջքեւ բացելով արեւմտյան միջազգային կազմակերպությունների դռները»[28]: 1992 թ. գարնանը նորանկախ թյուրքալեզու երկրներ կատարած իր այցի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Հ. Չեթինն իր երկրի անունից հանդես եկավ միջազգային կազմակերպություններում եւ ատյաններում թյուրքալեզու երկրների շահերը ներկայացնելու պատրաստակամությամբ: Թուրքիան ակտիվ քայլեր ձեռնարկեց միջազգային տարբեր կազմակերպություններին այդ երկրների անդամակցության ուղղությամբ[29]: Այդ քայլերն զգալիորեն բարձրացրեցին Թուրքիայի հեղինակությունը թյուրքալեզու երկրների ղեկավարների մոտ: Սկզբնական շրջանի բարձր մակարդակի հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները թուրքական եւ թյուրքալեզու երկրների ղեկավարների միջեւ, կարելի է բնութագրել որպես եղբայրական: Հարաբերությունների սկզբնական շրջանում թուրքական կողմը հաճախակի շռայլում էր հաճոյախոսություններ եւ խոստումներ հետագա ամուր եւ սերտ համագործակցության վերաբերյալ: Թյուրքալեզու երկրները վստահությամբ եւ համակրանքով էին վերաբերվում թուրքական նախաձեռնություններին: Նորանկախ այդ երկրների նախագահներն իրենց ելույթներում հաճախակի էին նշում զարգացման «թուրքական մոդելը» որդեգրելու պատրաստակամությունը: Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը Թուրքիա կատարած իր այցի ժամանակ նշեց, որ իր երկիրը որպես օրինակ է տեսնում Թուրքիան եւ հետեւելու է այդ օրինակին: Իսկ Ղրղզստանի նախագահ Ասկար Ակայեվի խոսքերով՝ «Թուրքիան ծագող աստղ է, որը պետք է ճիշտ ուղի ցույց տա մյուս թյուրքերին»: Նույն ոգով էին արտահայտվում նաեւ Թուրքմենստանի եւ Ղազախստանի նախագահները[30]:

Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների ղեկավարներն առանձնակի հակում էին ցուցաբերում դեպի Թուրքիան՝ ելնելով մի շարք հանգամանքներից: Նախ Թուրքիան որոշակի հաջողություններ էր գրանցել շուկայական տնտեսվարման բնագավառում եւ թուրքական ներդրումների հեռանկարը բավականին գրավիչ էր այդ երկրների տնտեսության զարգացման համար: Այդ երկրները Արեւմուտքի հետ իրենց հարաբերությունների հաստատումը տեսնում էին Թուրքիայի միջոցով եւ ակնկալում էին, որ ԱՄՆ-ը եւ եվրոպական պետություններն իրենց երկրներում կարող են ներդրումներ կատարել: Ռազմավարական առումով թուրքական ազդեցությունը տարածաշրջանում կմեղմեր իսլամական արմատականության վտանգը, ինչպես նաեւ Ռուսաստանից նորանկախ երկրների կախվածության թուլացմանը:

Թուրքական ղեկավարությունը նպատակ ուներ թյուրքալեզու երկրների մասնակցությամբ «թյուրքական միատարրությամբ» քաղաքական, տնտեսական ընդհանուր միություն ստեղծել համադաշնության սկզբունքով: 1992 թ. մայիսին Կենտրոնական Մսիա կատարած այցի ժամանակ Վարչապետ Դեմիրելն առաջարկեց թյուրքալեզու երկրների մասնակցությամբ քաղաքական միություն ստեղծել[31]: Համաթյուրքական համագործակցության հարցերը կարգավորելու եւ իստակեցնելու համար Թուրքիայի նախաձեռնությամբ որոշվեց գումարել թյուրքալեզու երկրների ղեկավարների գագաթնաժողով: 1992 թ. հոկտեմբերին Անկարայում կայացավ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների եւ Ադրբեջանի նախագահների առաջին գագաթնաժողովը, որի արդյունքները չարդարացրեցին թուրքական ղեկավարության սպասելիքները: Կենտրոնասիական երկրների ղեկավարները չընդունեցին էթնիկ ընդհանրության հիման վրա քաղաքական միություն ստեղծելու Թուրքիայի առաջարկները: Միաժամանակ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը հույս ուներ ձեռք բերել այդ երկրների ղեկավարների համաձայնությունը եւ հայտարարել Թյուրքական ընդհանուր շուկայի ստեղծման մասին եւ հիմնել Թյուրքական առեւտրի եւ զարգացման բանկ: Սակայն այդ երկրների ղեկավարները ավելի զգույշ գտնվելով՝ չէին ցանկանում իրենց կապել բացառապես «թյուրքական միավորմանը»: Նրանք ավելի հակված էին ապահովելու հավասարակշռությունը այլ երկրների միջեւ, ինչպես նաեւ քաղաքական եւ տնտեսական օժանդակությունն այլ պետություններից՝ մասնավորապես Ռուսաստանից եւ Իրանից[32]: Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբայեվը հայտարարեց, որ իր երկիրը, ձգտելով հաստատել իրավահավասար հարաբերություններ թյուրքալեզու հարեւանների հետ, առավել մեծ նշանակություն է տալիս քաղաքականության գործադրմանը եւ կողմնակից չէ էթնիկական կամ կրոնական հիմքի վրա որեւէ միավորման ստեղծմանը՝ առաջին հերթին չանտեսելով Անկախ պետությունների համագործակցության առջեւ ստանձնած պարտավորությունները[33]: Նման մոտեցումները հատուկ էին նաեւ մյուս կենտրոնասիական հանրապետությունների ղեկավարներին: Նորանկախ այդ հանրապետություննե-

րը, որդեգրելով անկախ զարգացման ուղին, չէին ցանկանում Թուրքիային ընդունել որպես «ավագ եղբայր-ağabey»[34], առավել եւս Թուրքիայի հետ հիմնել վերազգային միավորում: Համաթյուրքական առաջին գագաթնաժողովն իսկ պարզ դարձրեց «թյուրքական միասնությանն» ուղղված Թուրքիայի ոչ իրատեսական հավակնությունների խոցելիությունն ու ծախողումը եւ «նախնական էյֆորիան տեղը զիջեց զգուշավորությանն ու իրատեսականին»[35]:

Թուրքիան քայլեր ձեռնարկեց նաեւ կենտրոնասիական հանրապետություններին ներգրավել ակտիվ տարածաշրջանային համագործակցության մեջ՝ փորձելով ամրապնդել այդ երկրների հետ իր առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման ավելի ընդգրկուն մեխանիզմ: 1992 թ. նոյեմբերին Թուրքիայի նախաձեռնությամբ Ադրբեջանը, Տաջիկստանը եւ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետությունները դարձան Տնտեսական համագործակցության կազմակերպության անդամներ: Կազմակերպության շրջանակներում Թուրքիայի ցուցաբերած օժանդակությունը հիմնականում վերաբերում էր տնտեսության ոլորտի բարեփոխումներին, ներդրումային ծրագրերին, սառեւտրատնտեսական հարաբերությունների ամրապնդմանը[36]: Թուրքիան պաշտոնական հարաբերությունների հետ մեկտեղ այդ երկրների հետ սկսեց տարբեր մեխանիզմների եւ կազմակերպությունների միջոցով բազմաթիվ ոլորտներում կապերի հաստատմանը ստեղծելով մի շարք բազմաֆունկցիոնալ կազմակերպություններ: 1992 թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը կից ստեղծվեց Թյուրքական համագործակցության եւ զարգացման գործակալությունը (Türk Işbirliği ve Kalkınma Ajansı), որը կոչված էր համակարգելու Թուրքիայի եւ թյուրքալեզու երկրների միջեւ տնտեսության եւ այլ ոլորտներում համագործակցությունը[37]: Հիմնվեցին նաեւ կրթամշակութային, սոցիալական եւ այլ ոլորտներում համագործակցությանը նպաստող կազմակերպություններ եւ ֆոնդեր: 1993 թ. ստեղծվեց Թյուրքական մշակույթի եւ արվեստների միացյալ ադմինիստրացիան (Türk Kültür ve Sanatlar Ortak Yonetimi)[38]: 1993 թ. մարտին Թուրքիայում կայացավ առաջին «Թյուրքական երկրների եւ համայնքների կոնգրեսը (kurultay), որի նախաձեռնողը Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի կողմից հիմնադրված Թյուրքական երկրների եւ համայքների բարեկամության, եղբայրության եւ համագործակցության հիմնադրամն (TÜDEV) էր: Կոնգրեսին մասնակցում էին ներկայացուցիչներ ոչ միայն Կենտրոնական Ասիայի եւ Հարավային Կովկասի թյուրքալեզու երկրներից, այլ նաեւ Թաթարստանից, Բաշկիրիայից, Յակուտիայից: Լինելով ոչ պաշտոնական, կոնգրեսին մասնակցում էին նաեւ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը, վարչապետ Դեմիրելը եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Փաստորեն, նման նախաձեռնությունները, որոնք կրում էին պանթյուրքական ընույթ, հավանության էին արժանանում թուրքական վերնախավի կողմից[39]:

Սկզբնական շրջանի զգացմունքային տրամադրությունները կենտրոնասիական երկրներում աստիճանաբար իրենց տեղը զիջեցին ազգային շահերից բխող իրատեսական քաղաքականությանը. եթե Թուրքիայի եւ կենտրոնասիական հանրապետությունների հարաբերություններում սկզբնական շրջանում որպես միավորող գործոն նշվում էր պատմամշակութային ընդհանրությունների գոյությունը, ապա հետագայում կենտրոնասիական երկրների համար առաջնային դարձան սեփական քաղաքական եւ տնտեսական հետաքրքրությունները՝ գաղափարական կողմը ստորադասելով իրատեսական ազգային շահերին: Չնայած հարաբերությունների նախնական շրջանում թյուրքալեզու երկրների անկախության ձեռքբերմամբ եւ ազգայնական վերելքով պայմանավորված պանթյուրքական գաղափարները կարող էին որոշակի արձագանք գտնել, ապա հետագայում նույնիսկ հակազդեցության էին հանդիպում: Ուզբեկստանի «Արտաքին քաղաքական գործունեության հիմնական սկզբունքների մասին» օրենքում նշվում էր, որ «Ուզբեկստանը բոլոր պետությունների հետ կառուցում է իր հարաբերությունները իրավահավասարության եւ փոխշահավետության հիմքերի վրա՝ բացառելով միջպետական հարաբերությունների որեւէ գաղափարականացում»[40]:

Կենտրոնասիական հանրապետությունների ղեկավարները սկսեցին գիտակցել, որ Թուրքիայի կողմից տրված խոստումներն ու տնտեսական օժանդակության ծրագրերն իրականում չեն համապատասխանում այդ երկրի իրական հնարավորություններին: Բացի այդ, Թուրքիային, նախկինի նման չէին դիտում Արեւմուտքի հետ իրենց հարաբերություններում որպես «կամուրջ»: Այս առումով առավել բնորոշ է Ուզբեկստանի նախագահ Ի. Քարիմովի կտրուկ պատասխանը երկրում թուրք-եվրոպական համատեղ ձեռնարկություններ հիմնելու հեռանկարի վերաբերյալ թուրք թղթակցի հարցին. «Եթե ճիշտ հասկացա, Ուզբեկստանը պետք է հարաբերություններ կառուցի Եվրոպայի հետ Թուրքիայի միջոցով. մենք կբավարարավենք նաեւ առանց միջնորդների»[41]: Թուրքիան չկարողացավ կենտրոնասիական հանրապետություններին ֆինանսատնտեսական ոլորտում լայնամասշտաբ օգնություն ցույց տալ՝ չնայած թուրքական ղեկավարության տված շռայլ խոստումներին: Այդ երկրները Թուրքիայից սպասում էին շատ ավելին, քան իրականում էր եւ նման հանգամանքն էլ իր դերն ունեցավ Թուրքիայի նկատմամբ այդ երկրների սկզբնական դիրքորոշման վերանայմանը[42]:

Թուրքական նախաձեռնությունները չնպաստեցին Թուրքիայի եւ թյուրքալեզու հանրապետությունների միջեւ ինտեգրացիոն գործընթացներին, ինչն առավել ակնհայտ դրսեւորվեց 90-ականների կեսին: Կենտրոնասիական տարածաշրջանում եւ՛ Ղազախստանը, եւ Ուզբեկստանը գերակայություն հաստատելու հավակնություններ ունեին եւ առավել եւս չէին ցանկանում Թուրքիային դիտել տարածաշրջանում առաջնորդի կարգավիճակով: 1994 թ. Ղազախստանի նախագահը հանդես եկավ Եվրասիական միություն ստեղծելու նախաձեռնությամբ, ինչը հավանության

չարժանացավ Ուզբեկստանի ղեկավարության կողմից, քանի որ դա կնշանակեր Ղազախստանի դիրքերի ամրապնդում տարածաշրջանում[43]: Հետագայում ինտեգրացիոն նախաձեռնություններն իրականություն դարձան եւ Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի մասնակցությամբ ստեղծվեց Կենտրոնասիական միությունը, որին միացավ նաեւ Տաջիկստանը: Եվ միայն 1999 թ. այդ միությունում Թուրքիային տրվեց դիտորդի կարգավիճակ[44]: Նման զարգացումները խոսում էին այդ տարածաշրջանում Թուրքիայի ոչ ակտիվ դերի մասին, բացի այդ տարածաշրջանի երկրների կողմից Թուրքիան չէր դիտվում որպես տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին նպաստող գործոն: Տարածաշրջանի երկրները հանդես էին գալիս սեփական աշխարհաքաղաքական շահերի դիրքերից եւ փորձում առավել ներգրավվել տարածաշրջանային բազմակողմ համագործակցության համակարգերում:

Թուրքիայի եւ կենտրոնասիական հանրապետությունների միջեւ հարաբերությունները սառնացան հատկապես 1996 թ-ի կեսերից, երբ Թուրքիայում կառավարություն կազմեց իսլամիստական Բարօրություն (թուրք. Refah) կուսակցությունը՝ Նեջմեթթին Էրբաքանի գլխավորությամբ: Աշխարհիկ զարգացման ուղին ընտրած հանրապետությունների ղեկավարների մոտ նման զարգացումները խիստ բացասական տպավորություն թողեցին, քանի որ «կենտրոնասիական հանրապետություններին զարգացման աշխարհիկ մոդել առաջարկող Թուրքիան ինքն էր կանգնել խնդրի առջեւ»: Վարչապետ Ն. Էրբաքանը իր առաջին այցելությունները կատարեց մի շարք իսլամական երկրներ՝ Իրան, Լիբիա, Պակիստան եւ ոչ թե Կենտրոնական Ասիայի երկրներ[45]: Իսլամականների հաղթանակը Թուրքիայում հեղինակազրկեց այդ երկրի առաջարկած «թուրքական մոդելի» կարեւորությունը եւ նույնիսկ հակակրանք առաջացրեց: Այդ շրջանում կենտրոնասիական աշխարհիկ վարչակարգերն անհանգստացած էին հատկապես Տաջիկստանից եւ Աֆղանստանից իսլամական արմատականության տարածման վտանգից: Այդ իրադարձությունը «անակնկալ» եղավ հատկապես Ուզբեկստանի ղեկավարության համար, որը գտնվում էր իսլամական արմատականության դեմ պայքարի առաջին դիրքերում[46]: 1997 թ. ամռանը Էրբաքանի գլխավորած կառավարության տապալումից հետո նոր կառավարություն կազմած վարչապետ Մեսութ Յըլմազը 1998 թ. սկզբին պաշտոնական այց կատարեց կենտրոնասիական հանրապետություններ՝ նպատակ ունենալով հարթել նախկինում տեղ գտած խնդիրները:

Չհասնելով 90-ականների սկզբին փայփայած «համաթյուրքական միասնության» իրականացմանը՝ թուրքական ղեկավարությունը 90-ականների երկրորդ կեսից ուշադրությունը կենտրոնացրեց կասպյան էներգառեսուրսների արտահանման վրա: Կասպյան տարածաշրջանը դարձավ աշխարհաքաղաքական մրցապայքարի թատերաբեմ եւ Թուրքիան սկսեց ակտիվ ջանքեր գործադրել՝ էներգետիկ-տրանզիտային ծրագրերում իր ռազմավարական նպատակներն իրագործելու համար:

1994 թ. հոկտեմբերին Ստամբուլում կայացավ Թյուրքալեզու երկրների ղեկավարների երկրորդ գագաթնաժողովը, որի ընթացքում քննարկվեցին տնտեսական եւ մշակութային կապերի զարգացման, տարածաշրջանում քաղաքական կայունության եւ այլ խնդիրներ[47]: Ստամբուլյան հանդիպման վերջում ստորագրված հռչակագրով կարեւորվում էր քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների խորացումը մասնակիցների միջեւ, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններում տարածաշրջանային եւ միջազգային հարցերի հետ կապված ընդհանուր դիրքերից հանդես գալու մտադրությունը: Գագաթնաժողովի արդյունքները Թուրքիայի համար գոհացուցիչ էին, քանի որ թուրքական կողմը հասավ նրան, որ կենտրոնասիական երկրները սկզբունքորեն համաձայնություն տվեցին հետագայում նավթամուղերն ու գազամուղները դեպի Եվրոպա անցկացնել Թուրքիայի տարածքով: Թուրքիայի համար նման նախաձեռնությունը հսկայական հաջողություն էր, քանզի այն խոստանում էր ոչ միայն տնտեսական օգուտներ եւ էներգետիկ անկախություն, այլեւ ռազմավարական առումով կմեծացներ նրա դերը կովկասյան-կենտրոնասիական տարածաշրջանում: Թուրքիայի համար առաջնահերթություն էր դառնում Կասպյան էներգառեսուրսների արտահանման գործում ստանձնել առաջատար դերակատարություն: 1996 թ. Տաշքենդի գագաթնաժողովի ժամանակ կասպյան էներգառեսուրսների արտահանման համար որպես առավել նպատակահարմար ուղի նշվեց Կենտրոնական Ասիա-Կասպից-Կովկաս-Թուրքիա-Միջերկրական ծով երթուղին[48]:

1998 թ. հունիսին կայացած Թյուրքալեզու երկրների ղեկավարների հինգերորդ գագաթնաժողովի ընթացքում քննարկման առարկա դարձան հիմնականում էներգետիկ պաշարների արտահանման տարածաշրջանային եւ միջազգային տրանզիտային ուղիների, ինչպես նաեւ տարածաշրջանային անվտանգության հարցերը: Նշելով թյուրքալեզու երկրներում էներգետիկ հարուստ պաշարների գոյությունը՝ Թուրքիայի նախագահ Դեմիրելը հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ է ավելի նպատակասլաց եւ արդյունավետ այլընտրանքներ ներկայացնել այդ պաշարների արտահանման համար: Նա նաեւ անդրադարձավ «Մետաքսի ճանապարհի-Ipek Yolu» վերականգնման անհրաժեշտությանը որպես թյուրքական աշխարհի առաջընթացի լուրջ գործոն[49]:

Չնայած սկզբնական փուլում ձեռք բերված մի շարք համաձայնագրերին եւ պայմանավորվածություններին եւ դրանցից բխող սկզբնական հավակնոտ տրամադրություններին, այնուամենայնիվ, Թուրքիան լուրջ հաջողություններ չգրանցեց կենտրոնասիական հանրապետությունների հետ իր հարաբերություններում՝ հատկապես չկարողանալով իրագործել «համաթյուրքական միասնության» իր նպատակը: Որպես քաղաքական ղեկավարության համախմբման մեխանիզմ առաջ քաշված եւ բազմիցս կայացած Թյուրքալեզու երկրների ղեկավարների գագաթնաժողովները նույնպես չնպաստեցին ինտեգրացիոն գործընթացին: 2000 թ. ապրիլին Բաքվում կայացած վեցերորդ գագաթնաժողովի ժամանակ Ուզ-

բեկստանի եւ Թուրքմենստանի նախագահների բացակայությունն առավել բնորոշ դարձրեց «թյուրքական միասնության» խոցելիությունը: Ուզբեկստանի նախագահի բացակայությունը պայմանավորված էր նախ թուրք-ուզբեկական հարաբերությունների անկայունությամբ, ինչպես նաեւ Կենտրոնական Ասիայում Ուզբեկստանի ավելի ինքնուրույն քաղաքականության ձգտումներով[50]:

Ինչ վերաբերում է թուրք-ուզբեկական հարաբերություններին, չնայած սկզբնական շրջանում դիտվող ջերմությանը, 1994 թ. տեղավոխվեց անկայունության եւ անվստահության հարթություն: Հարաբերությունները սրվեցին հատկապես քաղաքական ֆոնի վրա, երբ ուզբեկական ընդդիմադիր «էրք» կուսակցության առաջնորդն ապաստան գտավ Թուրքիայում: Դրան հետեւեց Թուրքիայում Ուզբեկստանի դեսպանի հետկանչը[51]: «Ուզբեկստանը 21-րդ դարի շեմին» իր ծրագրային գրքում նախագահ Քարիմովը, քննարկելով իր երկրի ինտեգրումը համաշխարհային հանրությանը, նշում է այն երկրների ցանկը, որոնց հետ իր երկիրն ունի ամուր եւ հաստատակամ հարաբերություններ, ոչ մի անգամ եւ չի նշում Թուրքիայի անունը[52]: Հարաբերությունների լարվածությունն իր գագաթնակետին հասավ 1999 թ., երբ պարզվեց, որ Ուզբեկստանի նախագահի դեմ կատարված մահափորձում առկա է թուրքական հետքը:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ համաթյուրքական քաղաքական-տնտեսական միություն ստեղծելու ուղղությամբ Թուրքիայի հավակնությունները չէին արտացոլում այդ երկրի իրական հնարավորությունները: Իսկ թուրքական իշխանությունների կողմից քարոզվող «թուրքական մոդելը» աստիճանաբար կորցրեց իր նշանակությունն այդ երկրների ղեկավարների համար:

Թուրքիան հարաբերությունների հաստատումից հետո քայլեր ձեռնարկեց կենտրոնասիական հանրապետությունների հետ անվտանգության եւ ռազմական ոլորտում համագործակցության ուղղությամբ: Թուրքական կողմը հասկացել էր, որ տարածաշրջանում առանց ռազմական ներկայության հնարավոր չի իրականացնել քաղաքական նպատակներն ու ազդեցության մեծացումը: 1990-ականների սկզբից Թուրքիայի եւ այդ երկրների ռազմական ոլորտի ներկայացուցիչների միջեւ մի շարք փոխադարձ այցելություններ կատարվեցին: 1993 թ. մարտին Թուրքիայի Զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈՒ) գլխավոր շտաբի պետ Դողան Գյուրեշն այցելեց Ուզբեկստան, Թուրքմենստան, Ղրղզստան: Իսկ մեկ ամիս անց Թուրքիա այցելեց Ղազախստանի պաշտպանության նախարարը: Սկզբնական շրջանի հանդիպումների արդյունքում ստորագրվեցին ռազմական ուսուցման եւ կրթության մասին համաձայնագրեր[53]: 1992 թ. սկսած կենտրոնասիական հանրապետությունների սպաները սկսեցին վերապատրաստման կուրսեր անցնել թուրքական ռազմական հաստատություններում:

1998 թ. ելույթ ունենալով Վաշինգտոնի Ազգային պաշտպանության համալսարանում՝ Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Չեվիք Բիրը

նշել է, որ կենտրոնասիական հանրապետություններից, ինչպես նաեւ Ադրբեջանից մոտ 2300 կուրսանտներ եւ սպաներ են ավարտել Թուրքիայի ռազմական ուսումնարանները, իսկ հետագայում 1700-ը կավարտեն դասընթացները: Մինչեւ 1998 թ. միայն Թուրքմենստանը ուսուցման նպատակով Թուրքիա է ուղարկել ավելի քան 1000 զինվորականների[54]:

Թուրքիան տարածաշրջանում ռազմական ոլորտում համագործակցությունն իրականացնում էր հիմնականում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (այսուհետ՝ ԳՀԽ) ծրագրի շրջանակներում: Թուրքական կողմը մասնակցություն ունեցավ ռուսական եւ ամերիկյան զորամիավորումների հետ համատեղ անցկացվող «կենտրոնասիական խաղաղարար գումարտակի» վարժանքներին, որոնք անցկացվեցին 1998-2000 թթ. Ղազախստանում, Ուզբեկստանում եւ Ղրղզստանում[55]: Թուրքիայի պնդումների արդյունքում ՆԱՏՕ-ի ԳՀԽ ծրագրի շրջանակներում 1998 թ. Անկարայում հիմնվեց «Հրամանատարության ուսուցման կենտրոն», ուր ի թիվս այլ մասնակիցների, հաճախել են զինվորականներ Կենտրոնական Ասիայից[56]:

Թուրքիան մի քանի անգամ հարց բարձրացրեց հատկապես Ուզբեկստանին թուրքական տիպի տանկային տեխնիկա տրամադրելու վերաբերյալ: Մասնավորապես 1996 թ. մայիսին նախագահ Դեմիրելի Ուզբեկստան կատարած այցի ժամանակ պատվիրակության կազմում գտնվող ԶՈՒ գլխավոր շտաբի պետն առաջարկեց Ուզբեկստանում հիմնել թուրքական հետեւակի մարտական մեքենաների արտադրություն, ինչ ուզբեկական կողմից հավանության չարժանացավ: Նման քայլերը կրում էին ավելի շատ ոչ թե ռազմական-տնտեսական, այլ գովազդային-քարոզչական բնույթ[57]: Թուրքական կողմը շահագրգռված էր հատկապես ռազմական արդյունաբերության ոլորտում համագործակցության հաստատման համար եւ այդ բնագավառում համագործակցության համաձայնագիր ստորագրեց Ղազախստանի հետ[58]:

90-ականների կեսերից կենտրոնասիական երկրների համար առաջնային դարձավ Աֆղանստանից սպասվող իսլամական արմատականության դեմ համատեղ պայքարի հարցը: Թուրքիայի արտգործնախարարի օգնական Մեհմեթ Ալի Իրթեմջելիքը, ելույթ ունենալով Բիշքեքում 1998 թ. սեպտեմբերին, նշեց, որ թալիբների վտանգի հետ կապված Թուրքիան աջակցություն կցուցաբերի կենտրոնասիական երկրներին[59]:

Թուրքիան անվտանգության բնագավառում համագործակցության վերաբերյալ պայմանագրեր ստորագրեց Ղազախստանի, Ուզբեկստանի եւ Ղրղզստանի հետ ՝ իսլամականների ներխուժման դեմ քայլեր ձեռնարկուլու նպատակով: Թուրքական կողմը Ուզբեկստանին ֆինանսական օգնություն առաջարկեց 2000 թ. օգոստոսին իսլամականների հարձակումներից անմիջապես հետո եւ համաձայնվեց Ուզբեկստանի հակաահաբեկչական ստորաբաժանումները վարժեցնել իր ռազմական ակադեմիաներում: 2000 թ. հոկտեմբերին ստորագրված ռազմական համագործակցության պայմանագրի հիման վրա երկու երկրները պայմանա-

վորվեցին համատեղ պայքարել միջազգային ահաբեկչության եւ տարբեր հացագործությունների դեմ: Այդ ընթացքում քննարկվել են Ուզբեկստանին տրամադրվելիք թուրքական զինատեսակների եւ սպառազինության հնարավոր փոխադրման հարցեր: Թուրքիան ֆինանսական միջոցներ հատկացրեց նաեւ Ղրղզստանին, իսկ 2000 թ. աշնանը երկու երկրների նախագահները որոշեցին ստեղծել միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեղ փորձագիտական խումբ[60]: 1999 թ. Թուրքիան Ղազախստանին շուրջ 700 հազար դոլարի օգնություն տրանադրեց ռազմական կապի միջոցների արդիականացման համար, իսկ ավելի ուշ համաձայնվեց այդ երկրի պաշտպանության նախարարությանը հատկացնել 1 միլիոն դոլար: Կողմերի միջեւ համաձայնություն կայացվեց նաեւ Թուրքիայում ղազախ զինվորների վարժեցման, միջազգային ահաբեկչության դեմ համատեղ պայքարի եւ ռազմական այլ ոլորտներում համագործակցության վերաբերյալ[61]:

Թուրքիան ձգտում էր ակտիվ դերակատարություն ունենալ հակաթալիբյան պայքարում, ինչը հնարավորություն կտար ամրապնդելու իր ազդեցությունը տարածաշրջանում՝ հնարավորություն ստեղծելով ռազմական-անվտանգության ոլորտում ակտիվ կապերի հաստատմանը կենտրոնասիական երկրների հետ: Սակայն Ռուսաստանի ակտիվ ներգրավվածությունը տարածաշրջանում ինչպես նաեւ թուրք-ուզբեկական հարաբերությունների անկայունությունը նվազեցրեցին կենտրոնասիական երկրներին թուրքական ռազմական աջակցության անհրաժեշտությունը: Բացի այդ, Թուրքիայի ռազմական համագործակցությունը չէր կարող հաջողությամբ ու բազմակողմանիորեն իրականացվել առանց ԱՄՆ-ի ամբողջական նյութական ու քաղաքական օժանդակության: Թուրքիան այդքան միջոցներ չուներ այդ պետություններին էական օգնություն հատկացնելու համար, որոնց անվտանգությունը ենթադրում է համապարփակ միջոցառումներ պետական սահմանների պաշտպանության, հակաօդային պաշտպանության եւ անվտանգության հատուկ ուժերի հզորացման նպատակով[62]: Թուրքիայի կողմից տրամադրված ռազմական օժանդակությունը հիմնականում վերաբերում է ռազմական կրթության եւ ուսուցման ծրագրերին:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել, որ Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների նկատմամբ 90-ական թթ. լուրջ ձեռքբերումներ չգրանցեց եւ կարելի է ասել նույնիսկ ձախողվեց: Եթե դիտարկելու լինենք «թյուրքական միասնության» տեսանկյունից՝ գոյություն ունեին մի շարք խոչընդոտներ, որոնք չէին նպաստում Թուրքիայի քաղաքական հավակնությունների իրագործմանը: Նախ կենտրոնասիական հանրապետությունների միջեւ առկա էին սահմանային, էթնոտարածքային վեճեր, իսկ տարածաշրջանի երկու երկրների՝ Ղազախստանի եւ Ուզբեկստանի միջեւ առկա էր լուրջ դիմակայություն՝ տարածաշրջանում առաջնորդի կարգավիճա-

կով հաստատվելու համար, որոնք առավել եւս չէին ցանկանում Թուրքիայի ազդեցության մեծացումը իրենց տարածաշրջանում:

Բացի այդ Թուրքիայի քաղաքականության էմոցիոնալ, գաղափարական կողմը ճնշող ազդեցություն ունեցավ թյուրքալեզու երկրների ղեկավարների համար, որոնք սկսեցին կասկածանքով եւ վերապահությամբ մոտենալ թուրքական նախաձեռնություններին[63]:

Թուրքիան, չնայած տրված խոստումներին եւ վստահեցումներին, չկարողացավ թյուրքալեզու երկրներին տրամադրել լուրջ ֆինանսատնտեսական օժանդակությունը, ինչ էլ որոշ չափով հիասթափության առիթ դարձավ դեպի Թուրքիան այդ երկրների քաղաքական կողմնորոշման համար: Տնտեսական ոլորտում Թուրքիայի գործադրած ջանքերը ավելի շատ սեվական հնարավորությունների գերագնահատման արդյունք էին, այն չուներ ֆինանսատնտեսական մեծ հնարավորություններ թյուրքալեզու երկրներին բավարար չափով աջակցություն ցույց տալու համար, քանի որ ընկղմված էր տնտեսական խոր ճգնաժամի մեջ: Պատահական չէ, որ Թուրքիայի Պետական պլանավորման վարչության 2000թ. 8-րդ հնգամյա զարգացման պլանի շրջանակներում Թուրքիայի եւ թյուրքալեզու երկրների միջեւ հարաբերությունների վերաբերյալ կազմված հատուկ հանձնաժողովի զեկույցի մեջ նշվում էր, որ «Անիրագործելի խոստումներ չտալը եւ խոստումները կատարելը կբարձրացնի այդ երկրների վստահությունը մեր նկատմամբ»[64]:

Թուրքիայի համար կենտրոնասիական երկրների հետ առեւտրատնտեսական հարաբերությունների առումով խոչընդոտ էր հանդիսանում նաեւ այդ երկրների հետ ոչ անմիջական սահմանների առկայությունը՝ ի տարբերություն Ռուսաստանի, Իրանի եւ Չինաստանի: Կենտրոնական Ասիայի հանրապետությունները ակտիվ տնտեսական հարաբերություններ հաստատեցին Ռուսաստանի, ինչպես նաեւ Իրանի եւ Չինաստանի հետ: Ընդհանուր առմամբ տարածաշրջանի երկրների հետ առեւտրատնտեսական ոլորտում համագործակցության ցուցանիշով Թուրքիան զիջում էր Իրանին եւ Չինաստանին:

Հաշվի առնելով Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների նկատմամբ 90-ական թթ. քաղաքականության ձախողումը՝ Թուրքիան չի հրաժարվում իր քաղաքական հավակնություններից այդ տարածաշրջանում: 2001 թ. հոկտեմբերին Կենտրոնական Ասիա կատարած իր այցի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Ի. Ջեմը փորձեց «թյուրքականության» զգացմունքներ արթնացնել տարածաշրջանի երկրների ղեկավարների շրջանում: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է.«Մեծ ընտանիքի անդամները, որոնց այցելել եմ եւ կայցելեմ, հիմա ավելի լավ են հասկանում միմյանցից կախված լինելու հանգամանքը»: Նրա այցը տարածաշրջան նպատակ ուներ ցուցադրելու Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանում[65]:

Աֆղանստանի դեմ ամերիկյան ռազմական գործողությունների արդյունքում Թուրքիան փորձեց ակտիվորեն ներգրավվել աֆղանական

խնդրում՝ նպատակ ունենալով հաստատել իր ազդեցությունը, ինչպես նաեւ ռազմական ներկայությունը Կենտրոնական Ասիայում:

ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Igor Torbakov, The Turkish Factor in the Geopolitics of the Post-Soviet Space, http://www.eurasianet.org/departments/insight/articles/2002.

2. Sedat Laçiner, Orta Asya ve Türkiye, http://www.usakgundem.com/yazarlar.php?id=43&type=3.

3. Türkiye - Türk Cumhuriyetleri Ilişkileri Raporu Özeti, Dünyada Küreselleşme ve Bölgesel Entegrasyonlar (AT, NAFTA, PASİFİK) Ve Türkiye (AT, EFTA, KEİ, Türk. Cumhuriyetleri), Yedinci Beş Yıllık Kalkınma Planı, T.C. Başbakanlık Devlet Planlama Tekilatı Müsteşarlıgı, Yayın No: DPT: 2410-ÖIK:471, Kitab 5, Ağustos 1995, ss. 110-116, http://www.ekutup.dpt.gov.tr/kuresell/oik471.pdf.

4.Samuel Huntington, The Clash of Civilizations. Foreign Affairs, Summer 1993, volume 72, number 3. p 42.

5.Омер Коджаман, Южный Кавказ в политике Турции и России в постсоветский периуд, Москва 2004, с. 84.

6.Yelda Demirağ, Soğuk Savaş Sonrası Türkiyenin Orta Asya Siyasetinde Gelinen Nokta ve Gelecekte Bölgeye İlişkin İzlenmesi Gereken Dış politika Stratejisi, http://www.jeopolıtik.org/index.php?option=com_content&task=view&id=22&Itemid=28.

7.Ismail Cem, Turkey: Setting Sail to the 21st Century, Journal of International Affairs, Perceptions, September-November 1997, Volume 2.

8.Suleyman Demirel, Newly-emerging Centre, Turkish Review, Winter 1992, Vol. 6, N30, p.9.

9. Закир Чотоев, Влияние Турции на развитие государства Центральной Азии, "Центральная Азия и Кавказ", N2/26/, 2003, с.83.

10.Турция между Европой и Азией: Итоги европеизации на исходе XX века / Ин-т востоковедения РАН; Ин-т изучения Израиля и Ближнего Востока; Отв. ред. Н.Г. Киреев. Москва 2001. с.429.

11.Игорь Мурадяан, Региональные проблемы Турецко-Американских отношений, Ер. 2004, с.76.

12.Idris Bal, The Turkish Model and The Turkic republics, Journal of International Affairs, Perceptions, September-November 1998, Volume 3-Number 3.

13.Տե՛ս նույն տեղում:

14.Heinz Kramer, Will Central Asia Become Turkey's Sphere of Influence, Journal of International Affairs, Perceptions, March-May 1996, Volume 1- Number 1.

15.The full text of Foreign Minister Hikmet Cetin's speech at the Assambly of Turko-American Bussiness Council, Istanbul, Turkish Review, Winter 1992, Vol. 6, N30.

16.Закир Чотоев, с. 83.

17.Sedat Laçiner, նշվ.աշխ.:

18. Թուրքիան Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի եւ Ղրղզստանի անկախությունները ճանաչել է միեւնույն օրը՝ դեկտեմբերի 16-ին, իսկ Ադրբեջանի անկախությունը փոքր ինչ շուտ՝ նոյեմբերի 9-ին: Տե՛ս Türkiye ile Türk Cumhuriyetleri Ilişkileri ve Bölge Ülkeleri Iliskileri Özel Ihtisas Komisyonu Raporu , Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, T.C. Başbakanlık Devlet Planlama Teşkilatı Müsteşarlığı, Yaym No: DPT: 2511-ÖIK:528, Ankara, 2000; ss.32-57, http://www.ekutup.dpt.gov.tr/disekono/oik528.pdf.

19.Bayram SINKAYA, Turkey-Iran Geopolitical Competition Over Central Asia and Trnscaucasus:1989-2001, Avrasya Etüdleri, 27-28 Sonbahar-Kış 2005, s.78.
20.Ազգ, 07.02.1995.
21.Անուշ Հովհաննիսյան, ԽՍՀՄ-ի փլուզումը, «Թյուրքական միասնության» գաղափարը եւ Ղարաբաղյան հարցը 1990-95-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ, «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», xx, եր. 2001, էջ 76.
22.Müzaffer Özdag, Türkiye ve Türk Dünyası jeopolitiği, Ankara 2003, ss.307-308.
23.Ըստ նրա աշխարհաքաղաքական տեսության՝ Անատոլիան հանդիսանում է համաշխարհային միջնաբերդ եւ Անատոլիային տիրող երկիր Թուրքիան. որպես իր աշխարհագրության արդյունք՝ հնարավորություն ունի տիրել Եվրասիայում: Տե՛ս Prof. Dr. Ramazan Ozey, The Geopolitical importance of the Turkic World, http //www.ramazanozey.net/en_yazilar/yazidetay.asp?id=32
24.Թուրքիայում «Եվրասիա» հասկացության շուրջ քաղաքական մոտեցումների մասին ավելի մանրամասն տե՛ս. R. Safrastyan, The Concept of Eurasia and Turkey, s Regional Strategies, http://www.globalpolitician.com; Ռ. Սաֆրաստյան, «Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարեւանների միջեւ...», Հայաստանը եւ Թուրքիան տարածաշրջանային գործընթացներում, Երեւան 2003, էջ 3-8:
25. Prime Minister Suleyman Demirel's speech at John Hopkins University, Turkish Review, Summer1992, Vol. 6, p. 89.
26. Հայկ Դեմոյան, Թուրքիան, կենտրոնասիական հանրապետությունները եւ համաթուրքական առաջին գագաթնաժողովը (1991-1993), Բանբեր Երեւանի Համալսարանի, 3 (102), եր. 2002 թ , էջ 173:
27. А. Халмухамедов, Узбекистанско-турецкие отношение, Узбекистан: обретение нового облика, под ред. Е. Кожокоина, том 2, М. 1998, с. 383.
28.Heinz Kramer, Նշվ.աշխ.:
29.Թուրքական դիվանագիտությանը հաջողվեց իրագործել նրանց անդամակցությունը մի շարք կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ ԵԱՀԿ-ին, Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը, ինչպես նաեւ Տնտեսական համագործակցության կազմակերպությանը: Թուրքիան նաեւ դիվանագիտական հարաբերությունների միջոցով աջակցություն էր ցուցաբերելու թյուրքալեզու երկրներին միջազգային արենայում: Օրինակ՝ Թուրքիայի եւ Ուզբեկստանի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրությունում նշվում էր, որ «Եթե Ուզբեկստանի արտաքին գործերի գերատեսչությունը դիմի, ապա թուրքական դեսպանությունները պետք է ներկայացնեն եւ պաշտպանեն վերջինիս շահերը դեսպանը բնակալ երկրում»: Տե՛ս А. Халмухамедов, с. 373.
30.Idris Bal, Նշվ. աշխ.:
31. Gareth Winrow, Turkey and Central Asia, Central Asian Security, The New International Context, Brookings Institution Press,editors R. Allison, L. Jonson, 2001, p. 201.
32. Gareth M. Winrow, Turkey and The Newly Independent States of Central Asia and The Transcaucasus, Middle East Review of International Affairs, Vol.1, No. 2-July 1997. Թյուրքալեզու երկրների ղեկավարների առաջին գագաթնաժողովի արդյունքում ստորագրվեց 11 կետից կազմված հռչակագիր, որտեղ ընդհանուր ձեւով նշվում էին քաղաքականության, անվտանգության բնագավառում, տնտեսության, սոցիալական, կրթական-մշակութային տարբեր ոլորտներում համագործակցության ընդհանուր դրույթները: Առանձնակի կարեւորվում էր երկկողմ եւ բազմակողմ հա-

մագործակցությունը ցամաքային, օդային եւ ծովային հաղորդակցությունների եւ տրանսպորտի զարգացմանն ուղղված ենթակառուցվածքային նախագծերի իրականացումը, քանի որ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացումը դիտվում էր կարեւոր գործոն հետագա հարաբերությունների ամրապնդման համար: Առանձնակի նշվում էր նաեւ այդ երկրների արտաքին գործերի գերատեսչությունների միջեւ հաճախակի խորհրդակցությունների եւ շփումների անցկացումը: Որոշվեց գագաթնաժողովներն անցկացնել ամեն տարի: Ավելի մանրամասն տե՛ս Е Уразова, Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, М. 2003, с.171-172. Գագաթնաժողովի ժամանակ ձախողվեցին «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» պաշտոնական ճանաչմանն ուղղված թուրքական իշխանությունների ջանքերը: Բացի այդ, կենտրոնասիական երկրների ղեկավարները չստորագրեցին համատեղ հայտարարությունը՝ Հայաստանի հետ պատերազմում Ադրբեջանին օժանդակություն հայտնելու վերաբերյալ: Տե՛ս Հ. Դեմոյան, Թուրքիան, կենտրոնասիական հանրապետությունները եւ համաթուրքական առաջին գագաթնաժողովը, էջ 176.

33. Турция между Европой и Азией, с. 433.

34. Gareth Winrow, Turkey and Central Asia, p. 201-202.

35. Bayram SINKAYA, նշվ. աշխ., էջ 81.

36. Yrd. Doç. Dr. Ali Şen, Bölgesel Entegrasyonlar ve Ekonomik Performans: ECO Projesi, Türkiye ve Türk Cumhuriyetler, Avrasya Etüdleri, 27-28 Sonbahar-Kış 2005, s. 188-191.

37.Տե՛ս Թյուրքական համագործակցության եւ զարգացման գործակալության պաշտոնական կայք, http://www.tika.gov.tr.

38.Կազմակերպության ստեղծման որոշումը կայացվել է 1992 թ. Բաքվում Թուրքիայի եւ թյուրքալեզու երկրների մշակույթի նախարարների հանդիպման ժամանակ, իսկ 1993 թ. Ալմա-Աթայում արդեն ստորագրվեց ստեղծման մասին համաձայնագիրը: Հետագայում այդ կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ստացան «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը», Բաշկիրիան, Թաթարստանը, Յակուտիան, Տուվան եւ Գագաուզի ինքնավար շրջանը: Տե՛ս - կազմակերպության կայք, http://www.turksoy.org.tr.

39. Турция между Европой и Азией, с.436. Մինչեւ օրս գումարվել են 10 նման կոնգրեսներ, 11-րդը նախատեսվում է անցկացնել Բաքվում այս տարվա վերջին: Trend News Agency, 03.07.2007.

40. А. Халмухамедов, с. 369.

41. Д. Трофимов, Ташкент между Анкарой и Тегераном: уроки 90-х и перспективи, "Центральная Азия и Кавказ", N5 (17), 2001, с. 131.

42. 90-ական թթ. ընթացքում միայն Թուրքմենստանում ուղղակի ներդրումների չափով 10 երկրների մեջ Թուրքիան զբաղեցնում էր 10-րդ տեղը՝ 3 միլիոն 900 հազար ԱՄՆ դոլար գումարով, իսկ 1995 թ. դրությամբ Դրզստանում հաստատված արտասահմանյան ներդրողներից ամենաշատը չինական ձեռնարկություններն էին (138)եւ որից հետո նոր թուրքականը (80): Ավելի մանրամասն տե՛ս Е. Уразова, նշվ. աշխ.:

43. Gareth Winrow, Turkey and Central Asia, p. 223.

44. Նույն տեղում, էջ 210:

45. Նույն տեղում, էջ 202.

46. Թուրքիայի զարգացումները լուրջ տպավորություն գործեցին Ուզբեկստանի ղեկավարության շրջանում եւ մտավախություն առաջացրեցին, որ այդ երկիրը «ապահովագրված չէ իսլամական վերածննդի» վտանգից, ինչը նախագահ Քարիմովը հռչակել էր ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիք: Թուր-

քիայում ուսանող ուզբեկ երիտասարդների հավաքագրումը տարբեր իսլամական խմբերի մեջ առիթ դարձավ, որ 1997 թ. նախագահ Քարիմովը հետ կանչի նրանց Թուրքիայից: Տե՛ս А. Халмухамедов, с. 381-382. Նշեմ, որ 90-ական թթ. կենտրոնական Ասիայում, ինչպես նաեւ նախկին խորհրդային մի շարք երկրներում ակտիվություն էր դրսեւորում Ֆ. Գյուլենի «Նուրջու-Nurcular» իսլամական աղանդը: Մանրամասն տե՛ս Н. Киреев, Турция: поиски национальной стратегии Евразийского сотрудничества, "Центральная Азия и Кавказ", N 1(19), 2002, с. 92-101.

47.Турция между Европой и Азией, с. 434. Թյուրքական գագաթնաժողովների անցկացումը անհանգստություն էր պատճառում Ռուսաստանին եւ հենց ստամբուլյան հավաքի հետ կապված ՌԴ արտգործնախարարության խոսնակը հանդես եկավ հայտարարությամբ, որ էթնիկ հիմքերի վրա հիմնված հավաքները անհանգստացնում են Ռուսաստանին: Նախագահ Դեմիրելն էլ իր պատասխան հայտարարությամբ նշեց, որ դա ուղղակի համագործակցություն է եւ ոչ թե տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության մեծացմանն ուղղված քայլ: Տե՛ս Milliyet, 19 Ekim, 1994.

48. Натик Мамедли, Вопросы интеграции на саммитах глав тюркоязычных государств, "Центральная Азия и Кавказ", N 1(25), 2003, с.162.

49. Նույն տեղում, էջ 164.

50. Նույն տեղում, էջ 166: Նշեմ, որ 2006 թ. նոյեմբերին Անթալիայում կայացած Թյուրքալեզու երկրների ղեկավարների ութերորդ գագաթնաժողովի ժամանակ Թուրքմենստանը ներկայացված էր դեսպանատան ներկայացուցչի մակարդակով, իսկ Ուզբեկստանն ընդհանրապես ներկայացված չէր: Տե՛ս Zaman, 17.11.2006; Regnum, 17.11.2006.

51. Д. Трофимов, с. 131.

52. А. Халмухамедов, с. 381.

53.Gareth Winrow, Turkey and Central Asia, p. 207.

54. Նույն տեղում:

55. Закир Чотоев, с. 89.

56. Թուրքիան որպես ՆԱՏՕ-ի անդամ միակ երկիրն էր, որն ուներ ռազմական կցորդներ տարածաշրջանի երկրներում: Տե՛ս Gareth Winrow, Turkey and Central Asia, p. 216.

57. Д. Трофимов, с. 134.

58. Закир Чотоев, с. 88.

59. Gareth Winrow, Turkey and Central Asia, p. 211.

60. Mark Eaton, Major trends in military expenditure and arms acquisition by the states of the Caspaian region, The Security of the Caspaian Sea Region, ed. Gennady Chufrin, Oxford University Press, 2001, p. 110.

61. Նույն տեղում, էջ 100-101.

62. И. Мурадян, նշվ.աշխ., էջ.52.

63. Yelda Demirağ, նշվ.աշխ.:

64. Տե՛ս Türkiye ile Türk Cumhuriyetleri Ilişkileri ve Bölge Ülkeleri Ilişkileri Özel Ihtisas Komisyonu Raporu , Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, T.C. Başbakanlık Devlet Planlama Teşkilatı Müsteşarlığı, Yayın No: DPT: 2511-ÖIK:528, Ankara, 2000, ss.32-57, http://www.ekutup.dpt.gov.tr/dısekono/oik528.pdf.

65. Ռ. Սաֆրաստյան, նշվ.աշխ., էջ 12.

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔՄԵՆԱՍՏԱՆՈՒՄ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարական ալիքներ

Ամերիկացի գիտնական Սեմյուել Հանտինգտոնը գտնում էր, որ ժողովրդավարության զարգացումը մարդկության պատմության ընթացքում կարելի է պատկերել ալիքների ձևով: Ընդ որում, ինքն էլ առանձնացնում էր այդպիսի երեք ալիք: Առաջին ալիքը, ըստ նրա, սկսվել է ԱՄՆ-ում, տասնիներորդ դարի սկզբին և իր գագաթնակետին հասել Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ աշխարհում ձևավորվեցին 32 ժողովրդավարական պետություններ: Հակադարձ ալիքի սկիզբը նշանավորեց Մուսոլինին՝ 1922 թ., և 1942 թ. սկզբին աշխարհում մնացին ընդամենը 12 ժողովրդավարական պետություններ: Երկրորդ ալիքը սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և տևեց մինչև 60-ական թվականները: Այնուհետև սկսվեց հակադարձ ալիքը, երբ էլի գրանցվեց ժողովրդավարական պետությունների թվի նվազում 36-ից մինչև 30: Այս տրամաբանությամբ առաջիկա տարիներին պետք է ակնկալել, ըստ Հանտինգտոնի, երրորդ հակադարձ ալիքը: Նույնիսկ կան որոշ տվյալներ, որոնք հիմք են տալիս պնդելու, որ այդ ալիքն արդեն իսկ սկսված է. այսպես, Հանտինգտոնը մեջբերում է «Ֆրիդոմ հաուս» կազմակերպության տվյալները, ըստ որի 1992 թ. տաս տարվա մեջ առաջին անգամ այդ կազմակերպության հրապարակած թվերով ժողովրդավարական պետությունների թվում աճ չգրանցվեց:

Այսպիսով, Հանտինգտոնը գտնում է, որ ապագայում պետք է սպասել ոչ թե ժողովրդավարության ծավալում, այլ կոնսոլիդացիա, խորացում այն հասարակություններում, որտեղ այն արդեն արմատավորված է:

Մյուս կողմից, նույն 1990-ականների սկզբին ավելի քան 100 պետություն աշխարհի երկրների շարքում հռչակվեցին անցումային երկրներ: Այս գործընթացները ճապոնացի գիտնական Ֆրենսիս Ֆուկույամային հիմք տվեցին պնդելու, որ ժողովրդավարացումը միակ ճշմարիտ զարգացման ճանապարհն է մարդկության համար, խնդիրը միայն այն է, որ որոշ պետություններ ավելի արագ են դա հասկանում, մյուսները՝ մի փոքր ավելի ուշ: Սակայն իրականում այսօր, քսանմեկերորդ դարի սկզբին շատ հեղինակներ արդեն իսկ խոսում են անցումային տրամաբանության կրախի մասին: Թոմաս Կարոտերսն, օրինակ, գտնում է, որ անցումային որակված շուրջ 100 երկրներից միայն 20-ը կարող են համարվել քիչ թե շատ գործող դեմոկրատական պետություններ կամ թե գոնե այդ ուղղությամբ առաջընթաց արձանագրած երկրներ: Այդ երկրների թվում Կարոտերսի կարծիքով կարող են դասվել Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան, Էստոնիան, Ալովենիան, Չիլին, Ուրուգվայը և Թայվանը:

Որոշակի առաջընթաց արձանագրվել է նաև Ալովակիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Մեքսիկայում, Բրազիլիայում, Գանայում, Ֆիլիպիններում և Հրվ. Կորեայում: Անցումային երկրների մեծ մասում ժողովրդավարացման ուղղությամբ էական առաջընթաց չի արձանագրվել, ևս մի քանի երկրներում արդեն իսկ ակնհայտ է, որ սկզբնական փուլից հետո տեղի է ունեցել դեմոկրատական գործընթացի ձախողում, և պետությունը հայտնվել է ավտորիտարիզմի դաշտում: Խոսքը վերաբերում է մասնավորաբար, Ուզբեկստանին, Թուրքմենստանին, Բելոռուսիին և Տոգոյին: «Ինչպես է ժողովրդավարությունը առաջանում. խաբուսիկ կարգուկանոն» հոդվածում Կարոտերսը նշում է, որ Արևմուտքը և Միացյալ Նահանգները հատկապես պետք է վերանայեն ժողովրդավարության խթանման իրենց մոտեցումները: Որոշ պետությունների համար ավելի լավ է պահպանել գործող ավտորիտար ռեժիմը, քանի որ բաց համապետական ընտրությունների անցկացումը ոչ միշտ է լավ գաղափար, առանձնապես երբ խոսքը վերաբերում է այն երկրներին, որոնց հասարակությունները պատրաստված չեն դրան: Այս հասարակություններում նման ընտրությունների հետևանքում իշխանության կարող են գալ ծայրահեղականները, ոչ լիբերալ առաջնորդները:

Մյուս կողմից սակայն հասարակության պատրաստ չլինելը որոշ ռեժիմների համար ծառայում է իբրև քողարկում և արդարացում՝ ժողովրդավարական գործընթացների դանդաղ ծավալման և իրականում ավտորիտար միտումների հաստատման համար:

Չեզոք Թուրքմենստան

Այս տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ավտորիտար որակված Թուրքմենստանի դեպքի ուսումնասիրությունը: Այս պետության հանդեպ հետաքրքրությունը մի շարք առիթներ ունի. նախ այն գտնվում է այնպիսի պայթյունավտանգ և անկայուն տարածաշրջանում, ինչպիսին Միջին Ասիան է, որի կերպարը միջազգային հասարակության համար ամբողջանում է միջազգային ահաբեկչության և թմրաբիզնեսի, թրաֆիքինգի խնդիրներով: Մյուս կողմից, Թուրքմենստանը ունի բնական ռեսուրսների մեծ պաշարներ, որոնք ժամանակակից էներգետիկ պատերազմների ֆոնին մեծացնում են այդ երկրի միջազգային կշիռն ու կարևորությունը: Միևնույն ժամանակ Թուրքմենստանը հռչակել է իր չեզոքությունը միջազգային գործերում և ճանաչվել իբրև այդպիսին ՄԱԿ-ի կողմից: Այս բոլոր փաստերը ստիպում են առավել ուշադիր հայացք գցել Թուրքմենստանում ժողովրդավարական գործընթացների առկա վիճակին և դրանց ծավալման հնարավորություններին:

Որպես տեղեկատվական զանգված նշյալ ուսումնասիրության համար մենք կիրառել ենք ժողովրդավարության՝ աշխարհում առավել հայտնի և ընդունված չափման երեք համակարգերով Թուրքմենստանի վերաբերյալ առկա ինֆորմացիան: Խոսքը, մասնավորապես, առաջին հերթին «Ֆրիդոմ Հաուս» կազմակերպության, այնուհետև Պոլիարխիա և Փոլիթի IV հետազոտությունների մասին է: Այս երեք հետազոտական հա-

մակարգերը արդեն իրենք ունեն քաղաքական կշիռ և հեղինակություն, ուստի նրանց սանդղակում այս կամ այն գնահատականը ստանալը ուղղակի ազդեցություն է ունենում տվյալ երկրի միջազգային իմիջի և կշռի վրա: «Ֆրիդոմ Հաուսի» հետազոտությունը նկարագրում է ըստ Հանտինգտոնի առանձնացրած ժողովրդավարացման երեք փուլերի՝ երրորդ փուլի սկզբից՝ 1972 թվականից բոլոր քաղաքական անցումները և դասակարգում է դրանք: Այդ հետազոտության նպատակն է պարզել, թե ինչպես են անցման բնութագրիչները պայմանավորում հետանցումային պետության հատկանիշները: Հիմնական հիպոթեզն այդ թվում այն է, որ ոչ բռնի քաղաքացիական կոալիցիաների միջոցով իրականացվող ռեժիմի փոփոխությունները բերում են ժողովրդավարական համակարգի կայացմանը: Ըստ բնութագրման՝ ցանկացած երկիր դասվում է ազատ, մասամբ ազատ կամ ոչ ազատ երկրների շարքը՝ ըստ իր ստացած գնահատականների, որոնք կարող են լինել 1-7 սանդղակում, որտեղ 1-ը բնութագրում է ամենաժողովրդավար պետությանը, 7-ը՝ ամենա ոչ ժողովրդավար: Ընդորում, գնահատում կատարվում է երկու ուղղությամբ՝ քաղաքական և քաղաքացիական ազատություններ: Փոլիթի IV համակարգը ընդհանուր Փոլիթի համակարգի զարգացման չորրորդ փուլն է ներկայացնում, որը հիմնադրվել է 1974 թվականին, կոնկրետ Փոլիթի IV-ը ներառում է տվյալների հավաքում և դասակարգում 161 ժամանակակից պետությունների վերաբերյալ, որոնք 2002 թվականին արդեն միջազգայնորեն ճանաչված անկախ պետություններ էին և կես միլիոնից ավել բնակչություն ունեն: Այս համակարգում կիրառվում են ինստիտուցիոնալ ժողովրդավարության, ինստիտուցիոնալ ավտորիտարիզմի և համակարգի ճկունության հասկացությունները, որոնք օպերացիոնալացվում են որոշակի ցուցիչների միջոցով: Այս ուղղությամբ հավաքված տվյալների հիման վրա կառուցվում է բոլոր պետությունների դասակարգումը՝ ըստ քաղաքական համակարգի առանձնահատկությունների և փոխակերպումների բնույթի: Գնահատումը կատարվում է -10-ից + 10 սանդղակով, որտեղ դրական ուղղությամբ նշվում են ժողովրդավարական համակարգով պետությունները, բացասական առանցքում՝ ավտորիտար համակարգ ունեցողները: Պոլիարխիա համակարգով պետությունները դասակարգվում են ըստ ժողովրդավարության ինդեքսի, որը հաշվարկվում է մրցակցության և մասնակցության գործակիցներով, վերջիններս ոչ այլ ինչ են, քան ընտրությունների ժամանակ ընտրողների մասնակցության և հավակնորդների բազմազանության մասին տվյալները՝ տոկոսային տեսքով: Ըստ այդմ, ներկայումս գործող բոլոր պետությունները ստանում են որոշակի ժողովրդավարության ինդեքս: Համակարգը հիմնադրվել է 1968-1971 թթ. Վանհենենի կողմից: Համակարգը նկարագրում է ժողովրդավարության ինդեքսը սկսած 1810 թվականից: Ինդեքսը կազմավորվում է մրցակցության արժեքը բազմապատկելով մասնակցության տոկոսին և բաժանելով հարյուրի:

Թուրքմենստանի վերաբերյալ տեղեկատվությունները հետազոտական այս համակարգերում ներառվել են 1992 թվականից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո: Եթե դիտարկենք այդ տվյալները, ապա երեք համակարգերով էլ այս երկիրը ոչ ժողովրդավարական բնութագրումն է ստացել: Մասնավորապես, վերջին հրապարակված տվյալներով պատկերն այսպիսին է.

Պոլիարխիա - Մրցակցություն - 0 Մասնակցություն - 0 Ժողովրդավարության ինդեքսը - 0

Փոլիթի IV - Ինստիտուցիոնալացված դեմոկրատիա - 0

Ինստիտուցիոնալացված ավտորիտարիզմ - 9

փոլիթի - -9

«Ֆրիդոմ հաուս»

ընտրական գործընթաց	7
քաղաքացիական հասարակություն	7
անկախ մամուլ	7
ազգային ժողովրդավարական կառավարություն	7
տեղական ժողովրդավարական կառավարում	7
արդարադատական համակարգ և դրա անկախությունը	7
կոռուպցիա	6.75
ժողովրդավարության մակարդակը	6.96

Ընդ որում, դինամիկան արտահայտվել է այս կերպ. դիտարկման առաջին տարին՝ 1992 թվականին Թուրքմենստանը գնահատվել է իբրև մասամբ ազատ երկիր՝ քաղաքական ազատությունների 6 և քաղաքացիական ազատությունների 5 գնահատականներով: Սակայն այս առաջին տարվա համար մասամբ ազատ գնահատվել են հետխորհրդային բոլոր երկրները, ճիշտ է՝ գնահատականների ներքին տարբերություններով: Իսկ արդեն մյուս տարվանից սկսել են նկատվել առավել շոշափելի տարբերություններ. մասնավորապես, Թուրքմենստանը դասվել է ոչ ազատ երկրների շարքը, այնուհետև նրա տեղը այս խմբում մնացել է հաստատուն: Եթե փորձենք թուրքմենական պետության և հասարակության գործառնության առանձնահատկությունները տեսնել իրադարձությային շղթայի կոնտեքստում, ապա կարելի է առանձնացնել հետևյալ կարևոր, համակարգաստեղծ, կամ որ նույնն է թե՝ հետագա զարգացման տրամաբանության համար վճռորոշ իրադարձությունները.

- դեռևս 1990 թվականի հոկտեմբերի 27-ին Թուրքմենստանի Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Սափարմուրադ Նիյազովը դարձավ Թուրքմենստանի նախագահ, իսկ 1991 թվականի դեկտեմբերին Թուրքմենստանի Կոմունիստական կուսակցությունը դեմոկրատականի վերանվանվեց Թուրքմենստանի Դեմոկրատական կուսակցության, ինչով փաստորեն, ուղենշվեց համակարգի հետագա զար-

գացման տրամաբանությունը, այն է՝ նոր անուններով հին բովանդակություն: Ավելին, դեպքերի այս հաջորդականությունը նույնպես տիպական է, քանի որ ի սկզբանե ծավալվեց անձնային իշխանության ամրապնդման գործընթաց, այնուհետև, երբ պարզ դարձավ ԽՍՀՄ իրավական փլուզման անխուսափելիությունը, իշխող կուսակցությունը ավտոմատ վոխեց իր անունը՝ դրանով իսկ ի չիք դարձնելով դեմոկրատացման որևէ գործընթաց: Ասվածի վկայությունն է նաև այն, որ Թուրքմենստանը անկախություն հռչակել է 1991 թվականի հոկտեմբերի 27-ին՝ նախկին ԽՍՀՄ - տարածքի երկրներից գրեթե վերջինը: Այս պահից թուրքմենական հասարակության գործառնությունը ընթացել է սովետական բյուրոկրատական նոմենկլատուրայի և հենց թուրքմենական ցեղային սկզբունքների միախառնման միջոցով: Ըստ էության Նիյազովը կրկնեց սովետական մոդելը՝ առանց կոմունիստական գաղափարախոսության և առանց Մոսկվայի վերահսկողության:

- Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ԽՍՀՄ փլուզումը նաև գաղափարախոսական փլուզում էր նշանակում: Առաջացած գաղափարախոսական վակուումին եկան փոխարինելու ազգային զարգացման սեփական ուղու և բոլոր թուրքմենների առաջնորդի՝ Թուրքմենբաշու մասին գաղափարները: Ասվածի վառ օրինակը Նիյազովի «Ռուհնամե» երկիատորանոց աշխատությունն է, որը հռչակվել էր իբրև հոգևոր-դաստիարակման ամենակարևոր աղբյուր և լայնորեն դասավանդվում էր կրթական բոլոր օղակներում:

- Այս շրջանում թուրքմենական հասարակության գործառնությունը բնութագրվում է պարզունակացման և դեգրադացման միտումներով. միջնակարգ կրթության տևողության կրճատում մինչև 9 տարի, բարձրագույն կրթության հասանելիության նվազում հասարակության լայն շերտերի համար, գրադարանների համակարգի մեծածավալ կրճատումներ, զլմ-ների և լրատվական գործակալությունների թվի կրճատում, առողջապահական համակարգում մեծածավալ կրճատումներ: Բացի դրանից, պետական կառավարման համակարգում Մեջլիսի անդամների թվի կրճատումը խորհրդային շրջանի 175-ից մինչև 50-ի, ինչպես նաև որոշ մինչխորհրդային իշխանության ձևերի վերականգնումը տեղական ինքնակառավարման մակարդակում, ինչպես ավագանին՝ Ծերակույտի իմաստով, ակնհայտորեն ցույց են տալիս նման դեգրադացիոն գործընթացների ծավալումը:

- Հասարակության գործառնության տեսանկյունից բնութագրական է նաև տեղեկատվական ոլորտում տիրող իրավիճակը, մասնավորապես, 1995 թ. հուլիսին հակաթուրքմենական քարոզչության մեղադրանքով փակվեց ռուսական «Իզվեստիա» թերթի թուրքմենական գրասենյակը: 2006 թ. մարտի դրությամբ Թուրքմենստանում որևէ հավատարմագրված արտասահմանյան լրագրող չկար: Նիյազովը իրեն հայտարարել էր բոլոր զլմ-ների հիմնադիր:

• Պետական ապարատի դեգրադացիայի վառ ցուցիչ են 2001 թվականից սկսած՝ Նիյազովի պարբերական դիմումները Ազգային ժողովին՝ 2009 թվականին. մինչ իր յոթանասունամյակի լրանալը նախագահական ընտրություններ անցկացնելը և Ազգային ժողովի նույնքան պարբերական մերժումները՝ խնդրանքով, որ Նիյազովը ցմահ կառավարի երկիրը: Այսպիսով, Նիյազովի հեռացումը դիտարկվում էր իբրև ժողովրդի կամքի հաշվի չառնում, բռնություն ժողովրդի կամքի նկատմամբ:

• Միևնույն ժամանակ, մենք արդեն նշեցինք, որ Թուրքմենստանը տարածաշրջանային առումով գտնվում է այնպիսի հարևանների առկայությամբ, ինչպես Աֆղանստանը, նաև Պակիստանը, որտեղ ահաբեկչությունը միջազգային առումով դիտարկվում է իբրև խնդիր, ուստի այս կոնտեքստում 1995 թվականի դեկտեմբերի 12-ին ՄԱԿ-ի կողմից Թուրքմենստանի չեզոքության մասին հռչակագրի ընդունումը՝ վերջինիս նախաձեռնությամբ, իհարկե, յուրօրինակ պայմաններ ստեղծեց այս երկրի համար. Այլ կերպ ասած, Թուրքմենստանը որդեգրեց «ես ոչ մեկի գործերին չեմ խառնվում, դուք էլ իմ գործերին մի խառնվեք» փոխշահավետ նշանաբանը: Սա նշանակում էր արտաքին գործոնների համեմատական չեզոքացում հասարակության ներքին գործառնության նկատմամբ: Ասվածը լրացվում է այն փաստով, որ Թուրքմենստանը վերացրեց ոչ վիզային ռեժիմը ԱՊՀ երկրների միջև՝ նաև ելքային վիզաներ պարտադրելով սեփական երկրի քաղաքացիներին, հայտարարեց, որ չի ճանաչում օտարերկրյա բուհերի տված դիպլոմները: Այս և մի շարք այլ քայլեր Թուրքմենստանը դրեցին փակ հասարակական գործառնությունների շղթայում, որտեղ ցիրկուլյացիայի է ենթարկվում միայն այն ինֆորմացիան, որը կա ներսում: Իսկ քանի որ ներքին տեղեկատվությունը բավարար չէ արդի հասարակության ներսում տեղեկատվական կարիքները լրացնելու համար, ապա առաջացած տեղեկատվական վակուումը լցվեց ոչ թե դրսի տեղեկատվությամբ, արտաքին տեղեկատվությամբ, այլ դրա իմիտացիայով, ինչը վաղ թե ուշ բերում է տեղեկատվական պայթյունի և հեղաշրջման:

Սակայն հեղաշրջում՝ ժամանակային խտացման և հանկարծակիության տեսանկյունից տեղի չունեցավ, որովհետև բնությունը խառնեց քաղաքական հաշվարկները. 2006 թ. դեկտեմբերի 21-ին Նիյազովը մահացավ: Նրան փոխարինեց առողջապահության նախարար Կուրմանբուլի Բերտիմուհամեդովը, որը մեկ օրում նշանակվեց վարչապետ, սակայն նույնիսկ այս պարագայում, ըստ երկրի գործող սահմանադրության, չէր կարող ի պաշտոնե նախագահական գործառույթները ժառանգել, քանի որ այդ գործառույթը պետք է փոխանցվեր խորհրդարանի վերին պալատի նախագահին: Սակայն վերջինս մեկ օրվա մեջ պաշտոնանկ արվեց և բռնի ուժով հեռացվեց իր աշխատավայրից՝ ենթարկվելով քրեական հետապնդման:

2007 թ. փետրվարի 11-ին կայացան Թուրքմենստանի նախագահի ընտրությունները, որոնց առաջին անգամ հրավիրվել էին միջազգային

դիտորդներ՝ ի դեմս ԵԱՀԿ դիտորդական խմբի: Սակայն վերջիններս իրենց զեկույցում նշեցին, որ իրենց փոքրաթիվ լինելը ութ հոգի և ծայլերի հաշվարկին մասնակցելու թույլտվություն չունենալը, ինչպես նաև այն դիտարկումները, որ իրենք արել են երկրում գտնվելու ընթացքում, թույլ են տալիս ասել, որ տեղի ունեցածը ոչ թե ընտրություններ էին, այլ վատ բեմադրված ներկայացում: Ըստ էության, այն փաստը, որ ընտրություններին, ըստ պաշտոնական աղբյուրների, մասնակցել են ընտրողների 95 տոկոսը, որոնց ութսունհինգ տոկոսը քվեարկել է Բերտիմուհամեդովի օգտին, շատ բանով հիշեցնում է իրականում անույլընտրանքային ընտրությունները: Մյուս կողմից, Թուրքմենստանի նորընտիր նախագահը՝ Կուրմանբուլի Բերտիմուհամեդովը, արդեն իսկ հայտարարել է որոշ քայլերի մասին, որոնք առաջընթաց կարծանագրեն առկա իրավիճակի համեմատ, խոսքը մասնավորապես, միջնակարգ կրթության տևողության վերականգնման, ինտերնետի հասանելիության մեծացման շուրջ քայլերի ձեռնարկման, քաղաքացիական որոշ ազատությունների ուղղությամբ բարելավումներ անելու մասին է: Միևնույն ժամանակ, Թուրքմենստանի նոր նախագահը փորձում է ակտիվացնել երկրի արտաքին շփումները: Մասնավորապես, 2007 թվականի վերջին նախատեսված է Աշքաբադում ՄԱԿ-ի Կանխարգելիչ դիվանագիտության տարածաշրջանային կենտրոնի բացումը: Ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստում, 2007 թ. սեպտեմբերի 26-ին, Թուրքմենստանի նախագահը հայտարարեց, որ այժմ երկրում ծավալվում են ժողովրդավարացման գործընթացներ, և մարդը դիտվում է իբրև գլխավոր արժեք հասարակության և պետության համար, սակայն միևնույն ժամանակ իրենք ժողովրդավարական զարգացման որևէ ժամանակային շրջանակներ չեն դնում և արհեստականորեն չեն արագացնում գործընթացը: 2007 թ. օգոստոսի վերջին նախագահի հրամանով ստեղծվեց մարդու իրավունքների գծով միջգերատեսչական հանձնաժողով, որի առաջին նիստը տեղի ունեցավ սեպտեմբերի 15-ին: Միևնույն ժամանակ թուրքմենական և արտասահմանյան շատ աղբյուրներ շարունակում են բարձրաձայնել թուրքմենական հասարակությունում դե ֆակտո գործող անարդարությունների, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի և իշխանությունների կամայականությունների մասին: Այսպես, Թուրքմենստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ Թաջիգուլ Բեգմեդովան նշում է, որ վերոնշյալ գործողություններն ավելի շուտ կարող են դիտվել երկրի նախագահի արտաքին իմիջի ձևավորման տրամաբանության մեջ, իսկ ռեալ փոփոխությունների համար պետք է քաղաքական կամք և իրական լիբերալ քայլեր, ինչպես մարդու իրավունքները այս կամ այն կերպ խախտող օրենսդրության չեղյալ հայտարարումը կամ այսպես կոչված սև ցուցակների վերացումը, որում ներառված քաղաքացիները իրավունք չունեն դուրս գալ երկրից և սահմանափակ հասանելիություն ունեն աշխատանքի նկատմամբ: Մեկ այլ թուրքմեն վերլուծաբան էլ նշում է, որ Թուրքմենստանի քաղաքներում դե ֆակտո պարետային ժամ է գործում, որը խախտողները ոստիկանության կող-

մից տարվում են բաժանմունք: Մյուս կողմից, ակնհայտ է, որ Թուրքմենստանը արտաքին դաշտում խաղում է լարվածությունից հեռու, գազատարներից մոտ սկզբունքով: Ավելին, հայտարարելով բնական գազի բազմավեկտոր արտահանման ցանկությունների մասին՝ նա կարծես կանխում է միջազգային արենայում խոշոր կշիռ ունեցող երկրների հնարավոր քայլերը՝ Թուրքմենստանի ներքին խնդիրներին խառնվելու գործում: «Ես ձեզ չեմ խանգարում, ես բոլորի հետ կիսվում եմ», - ասում է պաշտոնական Աշքաբադը: Այս տարածաշրջանում սա թերևս այս պահին միջազգային հանրության համար գրեթե լիովին «բավարար է երջանիկ լինելու համար», ինչը լրացուցիչ գործոն է Թուրքմենստանի ժողովրդավարացման տեսանկյունից:

Բնականաբար, Թուրքմենստանում առկա խնդիրները ժողովրդավարության առումով բազմաթիվ են: Ժողովրդավարացման ընթացքը բարդանում է կրկնակի, նույնիսկ եռակի գործոններով.

- Նախ և առաջ, Թուրքմենստանին բնորոշ են այն բոլոր դժվարությունները, որոնք պետական կառուցվածքի և հասարակության գործառնության առումով հատուկ են գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններին, խոսքը և բյուրոկրատական կառավարման ապարատի, այսպես կոչված նոմենկլատուրայի, և ընտրական ավանդույթների բացակայության, և կոռուպցիոն ցանցի ծավալման մասին է:
- Երկրորդն այն է, ինչը շատ հեղինակների կողմից կոչվել է ցեղային ժողովուրդ անունով: Խոսքը նրա մասին է, որ մինչր սովետական կարգերի հաստատումը, ներկայիս Թուրքմենստանի տարածքում բնակվող մարդկային հանրույթին առավելապես կարելի էր բնութագրել իբրև տարբեր ցեղերի ամբողջություն, որոնք խոսում էին տարբեր բարբառներով, հաճախ լարված հարաբերություններ ունեին միմյանց հետ և չունեին մեկ միասնական միավորի՝ ազգի պատկանելու գիտակցում: Խորհրդային շրջանում սոցիալիստական ազգի կառուցման գաղափարը թուրքմենական ֆրագմենտար, մասնատված այդ հասարակության մեջ արհեստականորեն խթանեց որոշակի նոր գործընթացներ՝ կապված կուսակցական համակարգի ստեղծման, պետական բյուրոկրատիայի առաջացման, ինչպես նաև կրթական, առողջապահական համակարգերի և զբաղվածության ոլորտներում իրականացված մի շարք փոխակերպումների հետ: Սակայն մինչխորհրդային շրջանին բնորոշ ցեղային մտածելակերպը հասարակական լայն շրջանակների համար դեռևս մնում է բնորոշ: Հետևաբար հետխորհրդային Թուրքմենստանի ժողովրդավարացումը բարդանում է հասարակության սոցիալական կառուցվածքում ցեղային հատկանիշի՝ նշանակալի լինելու փաստով:
- Երրորդ բարդությունն արդեն զուտ արդի ժամանակի պտուղ է. խոսքը Թուրքմենբաշու ստեղծած պետական և հասարակական կառավարման համակարգի մասին է, որը իր մեջ վերցրել էր սովետական համակարգի և ցեղային ժողովրդի օրինաչափությունները և յուրօրինակ սինթեզ, համադրում կատարել:

Ուստի Թուրքմենստանում ժողովրդավարության համար պայքարը այս պայմաններում վերածվում է պայքարի եռագլխանի վիշապի դեմ, սակայն ամբողջ խնդիրն այն է, որ հեքիաթի վիշապի պես, այստեղ էլ գլուխները կարող են կտրելուց հետո նորից ու նորից աճել: Ու այդ դեպքում այս պայքարը կվերածվի հողմաղացների դեմ պայքարի, չնայած Բերտիմուհամեդովի և դոն Կիխոտի միջև կարծես թե ոչ մի նմանություն չկա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 1994. www.freedomhouse.org
2. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 1995. www.freedomhouse.org
3. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 1998. www.freedomhouse.org
4. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 1999. www.freedomhouse.org
5. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 2005. www.freedomhouse.org
6. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 2006. www.freedomhouse.org
7. Nations in Transit. Country Reports. Turkmenistan. 2007. www.freedomhouse.org
8. Huntington Samuel. The Crisis of Democracy. www.gumer.ru
9. Carothers Th., The end of the Transition Paradigm. Journal of Democracy 13:1 2002
10. Carothers Th., How Democracies Emerge: The "Sequencing" Fallacy. Journal of Democracy 18'2007
11. The Polyarchy dataset. Vanhanen's index of democracy http://new.prio.no/CSCW-Datasets/Data-on-Governance/The-Polyarchy-dataset/
12. Polity IV Country Report 2003 Series, including Polity Country and Regional Trends Graphs. http://www.cidcm.umd.edu/polity/
13. Adrienne Lynn Edgar. Tribal Nation:The Making of Soviet Turkmenistan www.springerlink.com/mdex/C51V44Q2T07J5203.pdf

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՄԲԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Անատոլիայի բարբառներն ըստ իրենց ձևաբանական, հնչյունաբանական և շարահյուսական առանձնահատկությունների բաժանվում են երեք գլխավոր խմբի՝ արևելյան, արևմտյան և հյուսիս-արևելյան:

Արևելյան բարբառային շրջանը հյուսիս-արևելքում ընդգրկում է Արդվինի կենտրոնը, Շավշատը, Արդանուչը և Յուսուֆելիին: Սահմանագիծն անցնում է Ռիզեի և Տրապիզոնի հարավից: Ռիզեի և էրգրումի միջև եղած վարչական սահմանը միևնույն ժամանակ նաև այս բարբառային շրջանի հյուսիսային սահմանն է[1]: Սահմանագիծն էրզինջանի, Թունջելիի և էլյուզըղի արևմուտքով անցնում է Սալաթիայի և Ադըյամանի արևելք և, դուրս թողնելով Ուրֆայի Բիրեջիք և Հալֆեթի իլչեները, հասնում է մինչև Սիրիա:

Շրջանի բարբառային առանձնահատկություններն արևելքում և հարավում քաղաքական սահմանները կտրում-անցնում ու արևելքում ադրբեջաներենը, հարավում և հարավ-արևելքում Իրաքի թուրքմենական բարբառներն են միավորում: Հարավում Ուրֆան արևելյան բարբառային շրջանը և Իրաքի թուրքմենական բարբառները կապողի դերում է: Արևելքում Թուզլուջա. Իգդիր, Արալըք իլչեների, Արփաչայում և մասամբ Կարս կենտրոնում առկա Կարսի ադրբեջանցիների, թերեքեմեների բարբառները, ինչպես նաև մեծ ու փոքր բազմաթիվ բարբառներ են մտնում այս շրջանի մեջ[2]:

Ժամանակի ընթացքում այս վայրերում հաստատված որոշ հանրույթներ, որպեսզի չձուլվեն տեղացի ժողովրդի հետ, պահպանել են իրենց բարբառների առանձնահատկությունները մինչև մեր օրերը: Այսպես, Կարսի Հանաք իլչեում ապրող ալեվի թուրքմենների բարբառն իր առանձնահատկություններով նման չէ ո՛չ Կարսի տեղական բարբառին, ո՛չ էլ Կարսի ադրբեջանցիների և թերեքեմեների բարբառներին: Այն միջին անատոլիական թուրքմենական բարբառների յուրահատկություններն ունի[3]:

Կարսի Չըլդըր, Աուսուզ, Աելիմ իլչեներում և Կարս կենտրոնին կապված գյուղերում ապրող թերեքեմեների, Թուզլուջա, Իգդիր, Արալըք իլչեներում և Արփաչայում ու Կարս կենտրոնին կապված գյուղերում ապրող ադրբեջանցիների բարբառային առանձնահատկությունները որոշ տարբերություններ են դրսևորում արևելյան խմբին բնորոշ առանձնահատկություններից[4]:

Հյուսիս-արևելյան և արևմտյան բարբառային շրջանների հետ սահմանամերձ բնակավայրերում ևս նկատում ենք շրջանի բնորոշ առանձնահատկությունների թուլանալը:

Չպետք է մոռանալ նաև գրական լեզվի ազդեցության մասին: Սակայն այս ամենով հանդերձ, արևելյան բարբառային շրջանի հիմնական խմբերն ու ենթախմբերը հետևյալն են[5]:

Հիմնական խմբեր	Ենթախմբեր
1-ին խումբ Աղրըի, Վանի, Մուշի, Բիթլիսի, Բինգյոլի, Սիիրթի, Դիարբեքիրի, Մարդինի, Հաքքյարի, Ուրֆայի, (Բիրեջիքի, բացի Հալֆեթիից), Փալուի, Քարաքոչանի (էլյազըղի) բարբառներ	1. Աղրի[6], Մանազկերտի (Մուշի) բարբառներ 2. Մուշի, Բիթլիս[7] կենտրոնի բարբառներ 3. Խլաթի (Ախլաթ), Արծկեի (թրք.Ադիլջևազ"),Բուլանըքի" (Մուշի), Վանի բարբառներ 4. Դիարբեքիրի բարբառ 5. Փալուի, Քարաքոչանի (էլյազըղի),Բինգյոլկենտրոնի, Քարլրօվայի, Սիիրթի բարբառներ
2-րդ խումբ Կարսի (Արդահանի, բացի Փոսոֆը), էրզրում կենտրոնի, Աշքալեի, Օվաջըքի, Հարմանի, Փասինլերի, Խորասանի, Խնուսի (Հընըս), Թեքմանի, Քարայազըի, էրզինջան կենտրոնի, Թերջանի, Չայըրլըի, Քեմահի, Ռեֆահիյեի, Գյումուշհանեի բարբառներ	1. Կարսի տեղական բարբառ 2. էրզրում կենտրոնի,Աշքալեի[10], Օվաջըքի, Նարմանի բարբառներ (Վերին Քարասու) 3. Փասինլերի,Խորասանի,Խնուսի,Թեքմանի,Քարայազըի (Վերին Արաքս) և Թերջանի բարբառներ 4. Բաբերդի(թրք.Բայբուրթ[11]), Իսպիրի (բացի Հանութի խումբը),էրզինջանիկենտրոնի, Չայըրլըի, Թերջանի (մի մասը) բարբառներ 5. Գյումուշհանեի բարբառը 6. Ռեֆահիյեի, Քեմահի բարբառը 7. Կարսի ադրբեջանցիների և թերեքեմեների բարբառը
3-րդ խումբ Արդահանի, Փոսոֆի (Կարս), Արդվինի կենտրոնի, Շավշատի, Յուսուֆելիի, Արդանուչի (Արդվինի), Օլթուի, Թորթումի, Օլուրի, Շենքայայի, Իսպիրի (էրզրում) բարբառները:	1. Փոսոֆի, Արդվինի[12] կենտրոնի, Շավշատի, Արդանուչի[13], Յուսուֆելիի բարբառներ 2. Արդահանի[14] Օլուրի, Օլթուի, Շենքայայի, Իսպիրի (Հանութ խումբը), Թորթումի (էրզրում) բարբառներ
4-րդ խումբ Քեմալիյեի, Իլիչի (էրզինջան), էլյազըղ կենտրոնի, Քերանի, Բասքիլի, Աղընի, Հարվուրի (էլյազըղի), Թունջելիի բարբառները:	1. Քեմալիյեի,Իլիչի,Աղընի[15] բարբառներ 2. Թունջելի կենտրոնի, Հոզաթի, Մազգիրթի, Փերթեքի բարբառներ 3. Հարվուրի բարբառ 4. էլյազըղ կենտրոնի, Քեբանի և Բասքիլի բարբառներ

Հնչյունափոխությունների տարբերակող առանձնահատկություններ

Արևելյան խմբի բարբառների մի մասում տարբեր պատճառներով առաջացող ձայնավորների քմայնացումը խախտում է ետնաքմայնացում-թուլացում ներդաշնակությունը:

Ետնաքմքային բաղաձայնների ազդեցությամբ առաջացող ձայնավորների քմայնացումներն ավելի հաճախ են հանդիպում շրջանի հարավում գտնվող Բինգյոլի, Բիթլիս կենտրոնի, Դիարբեքիրի, էլյազըղի, Մուշի, Ուրֆայի բարբառներում[16]: Օրինակ՝ gelduh, evlenmah, gidah, gidacahlar, edacahti, gezmağa, beklemağa, gelecah:

Աղրըի բարբառներում նկատվող անցյալ ժամանակի հոգնակի թվի 1-ին դեմքի խոնարհման ժամանակ, եթե նույնիսկ ձայնավորի քմայնացման դեպքեր հանդիպում էլ են, աներդաշնակությունն այլ բարբառների հետ համեմատած քիչ է. bindıh, verdıh:

Խլաթի (թրք. Ահլաթ) և Արծկեի (թրք. Ադիլջևազ) բարբառը, Բիթլիսի կենտրոնի բարբառի հետ համեմատած, ավելի ներդաշնակ է[17]:

Արդվինի կենտրոնի, Յուսուֆելիի, Շավշատի, Արդանուշի բարբառներում և Գյոլեում, Արդահան-Փոսոֆի տեղական բարբառում նման քմայնացումները շատ են[18]: Օրինակ՝ bekmezluh, tokeruh, sezmah, deduğumdan, binduh, getirduh, düşduğu, gedah:

Ձայնավորի քմայնացում նկատվում է նաև Փասինլերի, Խորասանի, Խնուսի, Թեքմանի, Քարայազըի, Օլթուի, Օլուրի, Շենքայայի, Թորթումի (էրզրում), Քեմահի, Ռեֆահիյեի (էրզինջանի), Մազգիրթի, Հուլաթի (Թունջելիի) բարբառներում. geldıh, geldoh, leşberlıh, diyecayıh, gelah, kesduk, girdih, ölecağam:

Էրզրում կենտրոնի, Աշքալեի, Օվաջըքի, Նարմանի և Իսպիրի, էրզինջան կենտրոնի, Քեմալիյեի, Իլիշի, Թերջանի, Ձայըրլըի բարբառներում, Հարփութի (էլյազըղ), Թունջելի կենտրոնի և Գյումուշհանեի բարբառներում այդ տեսակ աներդաշնակությունները քիչ են: Թորուլի բարբառում, ինչպես նաև Հյուսիսարևելյան խմբի բարբառներում, տեղ-տեղ վերջածանցի ձայնավորի մեջ քմայնացումներ են նկատվում (gelmezuk)[19]:

Այս աներդաշնակությունը շրջանի սահմաններից դուրս ձգվում է մինչև Հալֆեթիի, Բիրեջիքի (Ուրֆա), Ադըյամանի, Գազիանթեփի բարբառները: Հին անատոլիական թուրքերենում շրթնային ձայնավոր կրող վերջածանցներն այսօր էլ որոշ բարբառներում իրենց շրթնայնությունը պահպանել են: Երևույթը հաճախ հանդիպում է Արդվինի կենտրոնի, Շավշատի, Արդանուշի, Յուսուֆելիի բարբառներում, Արդահան-Փոսոֆի (Կարս) տեղական բարբառում, Իսպիրի, Գյումուշհանեի, Օլթուի, Օլուրի, Շենքայայի, Թորթումի, էրզինջան կենտրոնի, Թերջանի, Ձայըրլըի բարբառներում և Հարփութի (էլյազըղ) բարբառում[20]: Օրինակ՝ edarsuz, binsun, zamanun, çıhdum, benzaduğum, duzeruh, yedürmedi, bizdedür, açıh, ğarışuh:

Քեմահի, Ռեֆահիյեի, Քեմալիյեի, Իլիչի (էրզինջան) բարբառներում հայտնի որոշ ածանցների ձայնավորները շրթնային են. bişdük, getdük, alursız, biçarük:

Թունջելի կենտրոնում, Չեմիշքեզեքի, Փերթեքի, Փալուի և մասամբ էլ Բասքիլի, Աղընի բարբառներում ձայնավորի շրթնայնացումներ են նկատվում: Մազգիրթի (Թունջելի) բարբառում հոգնակի 1-ին դեմքի և անցյալ ժամանակի ածանցը շրթնային է. alurum, aluruh, seveceksuz, sevdügüm, evüm, gaşuh. sevindürdi, yendürdü.

4-րդ խմբի բարբառներից Բիթլիսի, Մուշի և Բինգյոլ կենտրոնի բարբառներում միայն հոգնակի թվի 1-ին դեմքի և անցյալ ժամանակի ածանցն է շրթնային ձայնավորով, ինչպես՝ gelduh, verduh, gelmişoh, usanduh:

Շրթնային բաղաձայնին հաջորդող ոչ շրթնային-նեղ ձայնավորը հնչյունափոխվում է շրթնային-նեղ ձայնավորի:

Այսօրվա գրական թուրքերենի "yağmur, yavuz, kavuşmak" և նման բառերում առկա շրթնայնացման երևույթը սկսվել է դեռևս հին թուրքերենում 'Divan-ü Lüğat-ıt-Türk"-ում նման բառերը հիմնականում շրթնային ձայնավորով են[21]:

Նման բառերի ոչ շրթնային-նեղ ձայնավորով ձևերը ավելի շատ հանդիպում են 1-ին, մասամբ 2-րդ և 4-րդ խմբերի բարբառներում (Բինգյոլի, Դիարբեքիրի, Քարաքոչանի, Քեմալիյեի, Իլիչի (էրզինջան), էրզրումի, Կարսի տեղական բարբառում, Մանազկերտի (Մուշ), Ուրֆայի, Մազգիրթի (Թունջելի), բարբառներում[22]: Այլ բարբառներում նման բառերը շրթնային ձայնավորով են. yağmır, çavış, nâmıs, çamırdır, ğavır, yagmır, ğarpız, armıt, hamır:

Արդահան-Փոսոֆի տեղական բարբառում և Կարսի ադրբեջանցիների ու թերեքեմեների բարբառներում, Շավշատի, Արդանուչի, Յուսուֆելիի, Օլթուի, Թորթումի, Իսպիրի, Գյումուշհանեի բարբառներում այս բառերը գրական լեզվի նման շրթնային ձայնավորով են. çamur, hamuri, çawuşe, tauh, namussuzum, dawulçilardan, davul, tavuhlarını, ğovuşdilar, tavuhlar, gavur, tabur, davullu:

Վանի, Բիթլիս կենտրոնի, Խլաթի (թրք. Ահլաթ), բարբառներում նույնպես նման բառերը շրթնային ձայնավորով են. sabun, daul, ğavun, davullar, avuç, çavuş, tavoh:

Երկու ձայնավորի միջև և վանկի վերջում գտնվող տոնայնացավածպայթական, ետնաքմքային "g" բաղաձայնը Անատոլիայի բարբառների մեծ մասում ձայնեղացել է: Շրջանի հարավային բարբառներում այս բաղաձայնը հիմնականում պահպանվում է: Այս բաղաձայնը ձայնեղ ետնաքմքային "ğ" բաղաձայնից տարբերվում է: Այն պահպանվել է 1-ին խմբի (Աղրըղի, Մուշի, Վանի, Բինգյոլի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Ուրֆայի, Սիիրթի) և մասամբ էլ 4-րդ խմբի (էյազըղի և Թունջելի-Յոզգաթի) բարբառներում կամ խորը քիմքային դառնալով՝ ձայնեղացել է[23]: Doğumliyim, dogri, oldığını, bulduğunu, kırmağa, sevmagi, çağri, gittığım, bağladi.

Իսկ 3-րդ խմբի Արդվինի բարբառում երկու ձայնավորի միջև և վանկի վերջում տարածված կերպով նկատվող միջնաքմքային "ġ" բաղաձայնը ետնաքմքային "ğ" բաղաձայնից տարբերվում է[27]: Օրինակ՝ erigun, tabaga, dıgun:

"ğ" հետնաքմային բաղաձայնի նման կիրառությունը նկատվում է նաև շրջանի սահմաններից դուրս գտնվող Ադըյամանի և Գազիանթեփի բարբառներում:

Ոչ տոնային, շնչեղ, պայթական հետնաքմքային "k̲" բաղաձայնը արևելյան խմբի բարբառների մեծամասնության մեջ բառասկզբում տոնայնանում, դառնում է "g": 1-ին խմբի (Աղրըի, Բինգյոլի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Էլյազըղի, Մուշի, Սիիրթի, Ուրֆայի Վանի) բարբառներում այն պահպանվում է, նույնիսկ արտաբերման կետը տեղափոխվում է հետին քիմքից խորքային քիմք. k̲ardaşlari, k̲api, kapısı, kari, kazu̲h, koyınǧı, kuru, k̲utigidir:

Խորքային քիմքում առաջացող բաղաձայնը այս բարբառներում բառամիջում նույնպես պահպանվում է. dokuz, yokuşunda, tokat, okula:

Բառասկզբում "k̲" բաղաձայնը պահպանող բարբառներում տեղ-տեղ հանդիպում ենք k̲>g_փոփոխությանը: Վանում այս երևույթը շատ տարածված է. ġuşe̲h, ġırǧınlıh, gazdıǧı, gızi, ġoydilar, ġavuşam, gızını, ġurban, ġız, ġahir:

'K̲' բաղաձայնն արևելյան խմբի բարբառների այլ ենթախմբերում բառասկզբում տոնայնանում է. gari, ġuzi, ġuyru̲h, gona̲h, gızı, ġuzu, galmışı̲h, ġurtulmiş:

Աղընի (Էլյազըղ) բարբառում "g" բաղաձայնը միջնաքմքային բաղաձայն է[28]: Այն էրզրումի բարբառում նույնպես բարակ ձայնավորի ազդեցությամբ փոխվում, դառնում է միջնաքմքային, ինչպես օրինակ "ġendil, ġiymet, ġerib" բառերում է[28]:

"H̲" բաղաձայնը պայթական, ոչ տոնային, առաջնաքմքային "k" բաղաձայնի ձայնեղացման արդյունքում առաջացող հնչյուն է: Նկատվում է 2-րդ խմբի (Կարսի, էրզրումի, Գյումուշհանեի, Քեմահի), մասամբ էլ 1-ին (Աղրըի, Մուշի, Վանի, Բիթլիսի) և 3-րդ (Կարսի, էրզրումի) խմբի բարբառներում:

Արդվինի Յուսուֆելի իլչեի Թորթումին մոտիկ գյուղերում նույնպես հանդիպում ենք "h̲" բաղաձայնին: Շրջանի արևելքից դեպի արևմուտք գնալով՝ "h̲" բաղաձայնը կորում է. tõh̲dük, etmeh, çıçeh, bõlüh̲, bõreh̲, çehmece, seh̲sen, ehmeh, gõh̲, beh̲le-, çeh̲diler, etmeh̲:

Իսպիրի (էրզրում) բարբառում բառի և վանկի վերջում "k" բաղաձայնը ձայնեղանալով դառնում է "kh". Geldükh, gelinnukh[27]:

Քեմահի (էրզինջան) բարբառում նույպես նկատվում է k>h փոփոխությունը. kehlik, kõpeh̲ler[28]:

Այս բաղաձայնն էրզինջանի այլ բարբառներում հազվադեպ է լսվում: Շրջանի հարավային որոշ բարբառներում նկատվում է արաբերենի ու պարսկերենի ազդեցությունը որոշ ձայնավորների ու բաղաձայնների վրա:

Օրինակ, "k" հնչյունի խորքային քիմքում արտաբերման մեջ հավանաբար արաբերենի ու պարսկերենի ազդեցությունը կա: Արաբերենի "ع" բաղաձայնը նույնպես շատ հաճախ պարզորոշ լսվում է այս բարբառներում: Թուրքի կոկորդին չվարժված այս հնչունին այլ բարբառներում չես հանդիպի: Ստորև բերվող օրինակները վերցվել են 1-ին խմբում տեղ գտած Բիթլիսի, Դիարբեքիրի, Մուշի, Սիիրթի և Ուրֆայի բարբառներից[29]. ma·vını, y'aşe, ba·zisi, 'ålim, 'åşık, ·asker, 'oyne...

Այս բաղաձայնը լսվում է նաև շրջանից դուրս՝ Գազիանթեփի և Ադըյամանի բարբառում:

Շրթնային, ատամնա-շրթնային բաղաձայնների կողքին "a, e" ձայնավորների շրթնայնացման մեջ էլ այս լեզուների ազդեցությունը կա: Փոփոխության ընթացքում "e" ձայնավորը դեպի լեզվի հետին մաս քաշվելով՝ մի քիչ քմայնանում է: Այս փոփոխությունը նկատվում է 1-ին խմբի Բինգյոլի, Բիթլիսի, Սիիրթի, Վանի բարբառներում. evlede, nåmıs, tåm, devåm, helvåyi, vår, mevsimi, ve:

4-րդ խմբի Բասքիլի բարբառում նույնպես նկատվում է շրթնային և ատամնա-շրթնային բաղաձայնների կողքին ոչ շրթնային-լայն ձայնավորների շրթնայնացում. vար, Bцskil[30]:

Արևելյան խմբի բարբառների մեծ մասում եզակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի ստորոգման վերջածանցները, ինչպես հին անատոլիական թուրքերենում, -am/-em, san/sen է՞': 1-ին խմբի բարբառներում (Աղրը, Բինգյոլ, Բիթլիս, Դիարբեքիր, Մուշ, Ուրֆա, Վան, Փալու) ածանցների այս կառուցվածքը ներդաշնակ է ու ճիշտ. kahmamışam, görmişsen, vurersen, hazırem, otirirram, doğasan, yapmışsan, sevmişem, güzelem...

Ածանցը 2-րդ խմբի էրզինջան կենտրոնի, Թերջանի, Չայըրլըի բարբառներում լայն ձայնավորով է. Քեմահի, Ռեֆահիյեի բարբառներում 1-ին դեմքի վերջածանցի ձայնավորը փակ է դառնում, 2-րդ դեմքում՝ նեղանում: Նույն խմբի Գյումուշհանեի բարբառներում (բացի Թորուլը, մասամբ էլ Շիրանն ու Քելքիթը) վերջածանցի ձայնավորը լայն է. yaparam, ölürem, baharsan, isdirem, gederem, güvenirem, bağırıysen:

Կարսի և Արդահան-Փոսոֆի տեղական բարբառում և Հանաքի թուրքմենների բարբառում նեղ ձայնավորով հանդես եկող այս ածանցները Կարսի ադրբեջանցիների և թերեքեմեների բարբառում լայն ձայնավորով է[32]: Օրինակ՝ gızmam, ağardıpsan, vurajahsan, bilmirem, ağliram:

Օլուրի, Օլթուի, Շենքայայի, Թորթումի և Իսպիրի բարբառներում (բացի Թորթումի տեղական բարբառը և Իսպիրի Բարհալ և Նորգյաի բարբառային խումբը) ստորոգման վերջածանցը նեղ ձայնավորով է, էրզրումի բարբառում՝ լայն[33]: Օրինակ՝ alırem, gelirem, alırsan, gelirsen:

3-րդ խմբի Արդվինի կենտրոնի, Շավշատի, Արդանուչի, Յուսուֆելիի բարբառներում ստորոգման վերջածանցները հիմնականում նեղ ձայնավորով են:

4-րդ խմբի բարբառներում ածանցի ձայնավորը նեղ է:

Արևելյան խմբի բարբառներում ներկա ժամանակի ածանցները կառուցվածքային տեսանկյունից բազմազանություն են ցույց տալիս: Այս բարբառային շրջանի հյուսիսում և հյուսիս-արևելքում –yer/-yir/-yr ձևերով հանդիպող ներկա ժամանակի ածանցը հարավ իջնելուն զուգընթաց եղանակելով, ընկնելով կամ երկարելով՝ կառուցվածքը փոխում է:

-yer/-yir/-yr ձևերը օգտագործվում են 2-րդ խմբի Քեմահի, Թերջանի, Չայըրլըի (էրզինջան) բարբառներում, 3-րդ խմբի Արդվինի կենտրոնի, Շավշատի, Յուսուֆելիի, Արդանուչի, Օլթուի, Իսպիրի (Հանութ խումբը) և Շենքայա-Օլուրի թուրքմենական բարբառներում, Կարսի Արդահան-Փոսոֆի տեղական բարբառներում և մասամբ Կարսի տեղական բարբառում՝. ediyer, goriyir, oyniyir, çaliyer:

Ավելի կոնկրետ ներկայացնենք ամեն խմբին բնորոշ առանձնահատկությունները.

1-ին խմոի բարբառներ

1. Չայնավորների քմայնացումը պատճառ է դառնում ետնաքմայնացում-թուլացում աններդաշնայության (geldıh, benim):
2. "ğ/g" բաղաձայնը երկու ձայնավորի միջև և վանկի վերջում պահպանվում է (bagladı, ağır):
3. "k/k" բաղաձայնը բառասկզբում պահպանվում է (kapi):
4. Զգացվում է արաբերենի ու պարսկերենի ազդեցությունը ձայնավորների ու բաղաձայնների վրա ('ayını, vâr, kapi):
5. 1-ին և 2-րդ դեմքի ստորոգման վերջածանցները լայն ձայնավորով են (gelirem, gelmişsen):
6. Պատմողական անցյալ ժամանակի ածանցը (բացի Ուրֆայի բարբառը) մեկ ձև ունի (görmiş):

2-րդ խմոի բարբառներում

1. Ետնաքմայնացում-թուլացում և ապաշրթնայնացում-շրթնայնացում աններդաշնակությունն այլ խմբերի համեմատ ավելի քիչ է:
2. Ետնալեզվային "ğ" բաղաձայնը երկու ձայնավորի միջև ձայնեղացել է (bağırdı):
3. Բառասկզբում տեղի է ունեցել "k>ğ" փոփոխությունը (ğapi):
4. Այս խմբում, որոշ բացառություններով, հաճախ հանդիպում է "k>h" փոփոխությունը (çehdi):
5. Եզակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի ստորոգման վերջածանցները սովորաբար լայն ձայնավորով են (gelmişem):
6. Ընդարձակ ներկա ժամանակի ժխտական խոնարհման եզակի և հոգնակի թվերի 1-ին դեմքերը գրական լեզվից տարբերվելով "-maz/-mez" ածանցով են արտահայտվում (sormazıh):

3-րդ խմբի բարբառներում

1. Հետնաքմքային բաղաձայնների կողքին առաջացող ձայնավորների քմայնացումը խախտում է ետնաքմայնացում-թուլացում ներդաշնակությունը, իսկ ձայնավորի շրթնայնացումը՝ ապաշրթնայնացում-շրթնայնացում ներդաշնակությունը:

2. Առաջին վանկից դուրս շրթնային բաղաձայնների կողքին գտնվող ձայնավորները շրթնային են (çamur):
3. Եզակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի ստորոգման վերջածանցները նեղ ձայնավորով են (gelmişim, gelmişsin) :
4. Որպես ներկա ժամանակի ածանցներ օգտագործվում են "-yèr/-yir"-ը (gelıyir, geliyer):
5. Պատմողական անցյալ ժամանակի ածանցը մեկ ձև ունի (olmiş):
6. Ընդարձակ ներկա ժամանակի ժխտական խոնարհման եզակիև հոգնակի թվերի 1-ին դեմքերը "-maz/-mez" ածանցներով են կազմվում (almazıh, almazım):

4-րդ խմբի բարբառներում

1. Տարածված է ետնաքմայնացում-թուլացում և մասամբ էլ ապաշրթնայնացում-շրթնայնացում աններդաշնակությունը (keserıh, bışdük):
2. 1-ին և 2-րդ դեմքերի եզակի թվի ստորոգման վերջածանցները նեղ ձայնավորով են (gelmişim, gelmişsin):

Այսպիսով Անատոլիայի բարբառների դասակարգման մեջ հիմնական չափանիշներ համարվող ձայնավորների ներդաշնակությունները և աններդաշնակությունները, ներկա ժամանակի և դիմային վերջածանցների հնչյունափոխությունները մանրամասն քննարկեցինք այս հոդվածում և եկանք այն եզրակացության, որ արևելյան խմբի բարբառները շատ մեծ ազդեցություն են կրել ադրբեջաներենից:

Ադրբեջանական բարբառների հարավային և արևմտյան խմբում տեղ գտած Նախիջևանի, Օրդուբադի, Ղազախի, Այրումի, Բորչալուի բարբառների և արևմտյան խմբի բարբառների միջև մի շարք տեսանկյուններից ընդհանրություններ կան. դիմային վերջածանցները, ներկա ժամանակի վերջածանցները, b-/m- փոփոխությունը, ձայնավորների թուլացումը և այլն:

Այժմ նշենք այն հիմնական առանձնահատկությունները, որոնց մի մասով արևելյան խմբի բարբառներն առանձնանում են հյուսիս-արևելյան խմբի բարբառներից, մյուս մասով էլ արևմտյան խմբից.

1. Փոխառյալ բառերի երկար ձայնավորները այս բարբառներում կարճանում են (çare):
2. Փոխառյալ բառերի հնչյունական կառուցվածքը հետադարձ առնմանության ճանապարհով փոփոխվում է (Ehmed): Միավանկ բառերի ձայնավորը որոշ բաղաձայների ազդեցությամբ բարակում է (ġelb):
3. Բազմավանկ բառերի վերջում եղած ı, u, Ɵ ձայնավորները փոխարինվում են i-ով (gözi):
4. h բաղաձայնը շատ բնորոշ է այս բարբառներին (aldıh):
5. r բաղաձայնը փոխվել է կամ դուրս ընկել (aldın, baa):
6. Առաջնաքմքային g բաղաձայնը երկու ձայնավորի միջև և վանկի վերջում պահպանվում է (döger):

7. Հայտնի որոշ բառերում առաջին y հնչյունը ընկել է (igit):
8 Հատկապես թվականների մեջ պայթական բաղաձայնները կրկնապատկվում են (yeddi):
9. g-r, p-r բաղաձայնների միջև դրափոխության երևույթը այս բարբառներում տարածված է (dorğu, torpaḫ):
10. Անունից անուն կազմող –çı բառակազմական ածանցի տոնայնացված ձևը այս բարբառներում չի նկատվում (yolçi):
11. Եզակի թվի 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերի անձնական դերանունների տրական հոլովը baan, sahan, oğan է:
12. Öyle, böyle բառերը ele, bele ձևով իրենց կառուցվածքը փոխել են:
13. Հոգնակի թվի 2-րդ դեմքի ստորոգման վերջածանցը -sız / siz է (gelesiz):
14. Հոգնակի թվի 2-րդ դեմքի պատկանելիության ածանցը և դիմային վերջածանցը -z է (geldiz, babaz):
15. Ներկա ժամանակի ածանցի ձայնավորը նեղ է (geliy, gelir, geli):
16. Ըղձական/հրամայական եղանակի եզակի թվի 1-ին դեմքի ածանցը վանկի ընկնելու հետևանքով կառուցվածքը փոխել է (söylim): Այս վերջածանցը շատ քիչ է օգտագործվում:
17. Ըղձական եղանակի ածանցն է –a/-e-ն, որը բոլոր դեմքերում աշխույժ կերպով օգտագործվում է (gelem, gelesiz):
18. Էրզրումի, Վանի, Մուշի, Աղբրի, Դիարբեքիրի, Ուրֆայի բարբառներում հետաքրքիր է եղանակային և դիմային վերջածանցների հերթականությունը. sorarsamse, bırahırsınsa, baciysahsa ..
19. Ի տարբերություն գրական լեզվի, որտեղ հարցական նախադասությունները կազմվում են հարցական մասնիկների, դերանունների, կապերի, ածականների և մակբայների միջոցով, արևելյան խմբի բարբառներում նախադասությանը հարցական իմաստ է տրվում առանց այս ածանցների ու կապերի, հիմնականում՝ վերջին վանկի վրա դրված շեշտով: Այս յուրահատկությունը առանձնացնում է արևելյան խմբի բարբառները մյուս բարբառներից. Yalnız geldin? İyisiz? Sütın hepsini dokecahsın? Beyándın bizim dügúni? Sen delisīn, serserisin? Sen yoğurt yersen? :

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Turgut Günay, Rize Ili Ağızları, Kültür Bakanlığı Yayınları, Ankara, 1978, s. 26
2. A.B. Ercilasun, Doğu Anadolunun Ağızlarının Sınıflandırılması, s. 221
3. A.B. Ercilasun, Kars Ili Ağızları, G.Ü. Yayınları, Ankara, 1983, s. 35-40
4. Տե՛ս վերոհիշյալ աղբյուրը, էջ 41-46
5. Leyla Karahan, Anadolu Ağızlarının Sınıflandırılması, TDK Yayınları, Ankara, 1996, s. 96
6. Աղրի- բնակավայր Արմ. Հայաստանում, Ալաշկերտի շրջանում, Թ.Խ.Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախշյան, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», Երևան, 1986, հ.1, էջ 199
7. Բիթլիս- (Բաղեշ, Սալնածոր)-քաղաք Արմ. Հայաստանում, Վանա լճի հվ.-արմ կողմում, լճափից 18-20 կմ հեռավորությամբ, տե՛ս նույն աղբյուրը, էջ 685

8. Աղըլջևազ- գավառ (սանջակ) Արմ. Հայաստանում, Վանի նահանգում: Տարածվում էր Վանա լճի հս.-արմ կողմում՝ Մանազկերտ, Արճեշ և Խլաթ քաղաքների միջև, կենտրոն ունենալով Արծկե (Աղըլջևագ-թրք. աղավաղված ձևն է) քաղաքը, գտնվում է լճի ափին, տե՛ս նույն աղբյուրը, էջ 33
9. Բուլանըղ-գավառակ Արմ. Հայաստանում, Բիթլիսի նահանգի Մուշ գավառում, նրա հս.-արլ. կողմում: Տարածքով հիմնականում համապատասխանում է պատնշմական Խոռխոռունիք գավառին, տե՛ս նույն աղբյուրը, էջ 749
10. Աշկալե- գյուղ Արմ. Հայաստանում, Էրզրումի նահանգի Բայազեդ գավառի Ալաշկերտ գավառակում, տե՛ս նույն աղբյուրը, էջ 292
63. Բաբերդ (Բայբուրդ)- գավառ Արմ. Հայաստանում, Էրզրումի նահանգում, վերջինիս հս-արմ մասում, Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանում: Հյուսիսից սահմանակից է Խաղտյաց լեռներին, արևմուտքից՝ Տրապիզոնի նահանգին, հարավից՝ Էրզրումի, արևելքից՝ Ապերի գավառներին, կենտրոնը Բաբերդ քաղաքան է, տե՛ս նույն աղբյուրը, էջ 526
11. Արդվին- քաղաք (ավան, գյուղ), Բաթումի մարզի Արդվինի օկրուգում, այս օկրուգի, իսկ ապա համանուն գավառի կենտրոնը, Ճորոխի ծախ ափին: Հնում մտնում էր Եգր (Եգերք) աշխարհի Նիգալ գավառի մեջ: Այժմ Թուրքիայի Արդվին նահանգի կենտրոնն է, տե՛ս նույն աղբյուրը, էջ 416
12. Արդանուչ- քաղաք (գյուղ, ավան, բերդաքաղաք, գյուղաքաղաք), Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կղարջք գավառում, տե՛ս նույն աղբյուրը, էջ 412
13. Արդահանն- բնակավայր Արմ. Հայաստանում, Դիարբեքիրի նահանգի Արղանամադենի գավառում: Գտնվում է Բալուից հվ-արմ, Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի ափին, տե՛ս նույն աղբյուրը, էջ 409
14. Աղըն- գյուղ Արմ. Հայստանում, Խարբերդի նահանգի Դերսիմի գավառում, Արաբկիրի շրջանում (Վաղավեր), տե՛ս նույն աղբյուրը, էջ 174
15. Sadettin Buluç, Kerkük Hoyrat ve Manilerinde Ağız Özellikleri, TDK 1966, Ankara, s. 112
16. Hamza Zülfikar, Van gölü Çevresi Ağızlarının Özellikleri, TDK Yayınları, Ankara, 1978, s. 310
17. Ahmet B. Ercilasun, Kars İli Ağızları, G.Ü. Yayınları, Ankara, 1983, s. 69
18. Sabri Özcan San, Gümüşhane Kültür Araştırmaları ve Yöre Ağızları, Kültür Bakanlığı, Ankara, 1990, s 232
19. Azerbaycan Dilinin Nahcıvan Grubu Dialekt ve Şiveleri, Baku, 1962, s. 32-34
20. Besim Atalay, Divanü Lügat-it-Türk, TDK Yayınları, Ankara, 1986 (2.baskı), s. 36, 283, 729
21. M.Şireliev, Azerbaycan Dili Dialektlerinin Türk Dili Dialektkeri ile Mukayiseli Öylcnilmesi, Ankara, 1960, s. 196
22. Sadettin Buluç, Kerkük Hoyrat ve Manilerinde Ağız Özellikleri, TDK 1966, Ankara, s. 112
23. Turgut Acar, Artvin ve Yöresi Ağızları, A.Ü. Doktora Tezi, Erzurum, 1972, s. 201
24. Ahmet Buran, Kaban,Baskil ve Yöresi Ağızları, Elazığ, 1986, s. 81
25. Efrasiyap Gemalmaz, Erzurum İli Ağızları, A.Ü Yayınları, Erzurum, 1978, s. 164
26. Տես վերոհիշյալ աղբյուրը, էջ 189
27. Mukim Sağır, Erzincan İli Ağızları, Erzurum, 1987, c.1., s. 86
28. Տե՛ս S.Buluջ-ի նշված աշխատությունը, էջ 113
29. Ahmet Buran, Keban,Baskil ve AğmYöresi Ağızları, Elazığ, 1986. s. 31
30. Faruk K. Timurtaş, Eski Türkiye Türkçesi, J.Ü. Yayınları, İstanbul, 1981, s. 110
31. Muharrem Ergin, Azeri Türkçesi, J.Ü. Edebiyat Fakültesi Yayınları, İstanbul, 1971, s. 125
32. Ahmet B. Ercilasun, Kars İli Ağızları, G.Ü. Yayınları, Ankara, 1983, s. 91

ՍԻՐԱՆՈՒՀԻ ԳԱԼՇՈՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՋՄ ԲԱՌԱԲԱՐԴՈՒՄՆԵՐԸ ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից թուրք գրող Յաշար Քեմալի (ծնվ. 1923-)[1] ստեղծագործություններին բնորոշ են ինքնատիպ, թուրքերենին հատուկ լեզվամտածողությունը, բառաստեղծման յուրօրինակ միջոցները, բառապաշարն ու ոճը. Յ. Քեմալը հաճախ հանդես է գալիս որպես բառաստեղծ, նրա լեզվում մեծ տեղ են գրավում ժողովրդախոսակցական, բարբառային ձևերը, որոնք գրողի գրչի տակ բառակազմական նոր կաղապարներով են ի հայտ գալիս: Յ. Քեմալի ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությամբ է պայմանավորված լեզվական հին և նոր միջոցների կիրառումը: Արանով էլ առանձնանում է գրողի ստեղծագործությունների լեզվաոճական յուրահատկությունը. հեղինակը, հատկապես, օգտագործում է հարադիր, կրկնավոր, կցական բարդությունները:

Սույն հոդվածում նպատակ ունենք զուգադրական մեթոդի կիրառմամբ քննել ժամանակակից թուրք գրող Յ. Քեմալի ստեղծագործություններում առկա բառաբարդումները՝ վեր հանելով դրանց բառիյուսական եղանակներն ու կաղապարածների առանձնահատկությունները, հայերենի հետ ունեցած նմանություններն ու տարբերությունները:

Յուրաքանչյուր լեզու իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառեր կազմելու իր յուրօրինակ միջոցները, բառակազմական միավորների համակցություններում հանդես եկող ձևաբանական ու հնչյունաբանական զանազան կարգի օրինաչափությունները, բառերի կազմության հետ կապված քերականական իրողությունները: Առհասարակ բառակազմական կաղապարները գործում են լեզվի որոշակի փուլերում՝ տվյալ լեզվավիճակում: Դրա հետ մեկտեղ պատմականորեն ժառանգվող բառապաշարի շերտի հետ, լեզվի զարգացման ամեն մի փուլում պահպանվում են նախորդ փուլերի բառակազմական համակարգերի իրողությունները՝ առավել կամ պակաս կենսունակությամբ և, կամ իսպառ վերանում են բառակազմական միավորները՝ երևան բերելով նորերը:

Հայ լեզվաբան Գ. Սևակը այդպես է գրում. լեզվական նման ձևի դրսևորումները մարդիկ ձեռք են բերել զարգացման համեմատաբար բարձր շրջանում և աստիճանաբար կատարելագործել ու հարստացրել են: Խոսելով հայերենի բառաբարդման եղանակների մասին՝ Գ. Սևակը այն բաժանում է մի քանի փուլերի՝ հնչյունափոխության միջոցով արմատներ ստեղծելու, նույն արմատի կրկնությամբ բարդ բառեր ստեղծելու, հարադրական ու կցական բարդությունների, իսկական բարդությունների, ածանցումների[2]:

Բառակազմական բարդություններին իր անդրադարձել է նաև Ա. Մ. Սուքիասյանը՝ դրանք ներառելով վերլուծական բարդություններ խո-

րագրի ներքո տալով հետևյալ բնութագիրը. «Այս կարգի բարդություններ-ը կազմվում են վերլուծական եղանակով, բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, ունեն ընդհանուր հիմնական շեշտ, գիտակցվում են բառային իբրև մեկ միավոր»[3]:

Ինչպես ցույց են տալիս լեզվական բազմաթիվ փաստերը, բառակազմության այս տիպերը և հայերենում, և թուրքերենում կառուցվում են խոսքի բոլոր մասերից ստեղծելով նոր կառույցներ, բառին հաղորդելով նոր շեշտադրություն և նոր իմաստ: Բառակազմության հիմնական դրսևորումներն են՝ ա)*ածանցում*, բ)*բարդացում (հարադրություն, կրկնություն, կցում)*, գ)*հապավում*, դ)*քերականական ձևերի քարացում*, ե)*բազմիմաստ բառերի իմաստների հեռացում*[4]: Առհասարակ, հարադրական բարդություններ բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, իրարից բաժանվում են արտասանական զգալի դադարով, պահպանում են իրենց ձևական անկախությունը, որ գրավոր խոսքում արտահայտվում է բաղադրիչ-բառերի կամ անջատ, կամ էլ միացման գծիկով. դրանք բաժանվում են երկու խմբի՝ *անվանական և բայական հարադրությունների:*

Անվանական հարադրությունները կազմվում են գոյական, ածական, մակբայ, թվական, շաղկապ, եղանակավորող խոսքի մասերի բառերի կրկնությամ՝ ev ev (տուն-տուն), köy köy (գյուղ գյուղ) bir bir (մեկ-մեկ), çok çok (շատ-շատ), erken erken (վաղ վաղ), kırmızı kırmızı (կարմիր կարմիր) vay vay (վայ-վայ), և այլն:

Բայական հարադրությունները կազմվում են գոյական+բայ կաղապարաձևով՝ dans etmek (պար գալ), selam vermek (բարև տալ), söz almak (խոսք վերցնել,ասել): Almak, vermek, etmek, olmak բայերը կատարում են օժանդակիչ դեր: Շատ դեպքերում կարող են վերացական իմաստ ձեռք բերել օր.՝ fikr etmek (միտք անել, մտածել): Բայական հարադրություններին բնորոշ են նաև բայ+բայ զուգակցական կաղապարաձևերը, օրինակ՝ yemek içmek (ուտել խմել), varmak, gitmek (հասնել, գնալ), almak göturmek (առնել, տանել):

Անվանական հարադրությունները իրենց հերթին լինում են՝

ա. շաղկապական անվանական՝ sıyah beyaz (սև ու սպիտակ), sıcak soğuk(պաղ ու տաք)

բ. հարակցական անվանական՝ gece gündüz (գիշեր ցերեկ), yaz kış (ամառ ձմեռ):

Հայերենում առկա նմանատիպ օրինակների հետ կապված հետաքրքիր անդրադարձ է կատարում Խ. Գ. Բադիկյանը իր «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» գրքում, ուր վերոհիշյալ քարացած օրինակները դասում է դարձվածքների շարքում: «Դարձվածային միավորները լինելով տարակազմ կառույցներ, իրենց թե՛ ձևով և թե՛ իմաստով շատ են նմանվում հայերենի հարադրություններին և շատ հաճախ նույնանում են հարադրական բայերին, դրանք իրարից տարբերակելը բավականին դժվար է, որովհետև հարադրական բայերի մի մասը

դարձվածային արժեք ձեռք բերելով, լրիվ կերպով վերածվել է դարձվածային միավորների, իսկ մյուսը՝ ոչ»[5]:

Ն. Քոչը թուրքերենի բառաբարդումների (İkilemeler) մասին խոսելիս՝ ընդգծում է, որ նման կաղապարները «բառին հաղորդում են նոր ձև և իմաստ՝ ավելացնելով ուժգնության երանգավորում. այդ ձևերը կազմվում են բառի կրկնությամբ, կամ էլ նույն՝ բառաստեղծման նպատակով, իրար նման ձայնավորներ ունեցող և իմաստով հակադիր բառերը կարող են միասին գործածվել բառաբարդումներում: Սրանք էլ ձևավորված են որպես ամբողջական բառ: Իմաստավորումը բարդություններ ձևավորող բառերի տեղերի փոփոխությունը թույլատրելի է դարձնում: Այս ձևը որպես նոր բառատեսակ կազմվում է բոլոր խոսքի մասերից, նույնիսկ առանձին ձայնարկություններից կազմվում են բարդություններ: Բառակազմական այս բարդությունները տարբերություններ ունեն նաև հնչյունական և բառակազմական տեսանկյունից»[6]:

Թուրք քերականագետները բառաբարդման կաղապարները ներառում են մեկ ընդհանուր հասկացության տակ՝ *կրկնավորներ*: Իսկ հայերենում դրանք, ըստ իրենց կառուցվածքի, խմբավորված են որպես առանձին բառակազմական միավորներ՝ հարադիրներ-վերլուծական եղանակով կազմվող այն բարդություններ, որոնք հանդես են գալիս հարադրաբար և արտահայտում են մեկ բառի իմաստ՝ բառ ու բան, մեծ ու փոքր և այլն, կցականներ–համադրության եղանակով կազմվող բարդություններ, որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար կամ կցումով՝ որևէ, հորեղբայր, մորաքույր և այլն, կրկնավորներ—վերլուծական եղանակով, նույն բառի կրկնությամբ բառաշերտեր, որոնք գրվում են գծիկով՝ խումբ-խումբ, տուն-տուն և այլն: Այդ իսկ պատճառով մենք դրանք կզուգակցենք հայերենի համարժեքների հետ՝հենվելով դասակարգման այլ ձևի վրա:

Թուրքերենի բառային նմանատիպ բարդությունների կառուցվածքային, ձևաբանական յուրօրինակություններին անդրադառնալով՝ Ն. Քոչը նշում է, որ կրկնավորները կազմվում են վերլուծական եղանակով՝ նույն բառի կրկնությամբ, կարող են կրկնվել հիմնականում միավանկ կամ կարճ բառերը, դրանք գրվում են անջատ, ինչպես հարադրական բարդությունները:

Բառաբարդման նման ձևերը նախադասությանը հաղորդում են որոշակի երանգավորում՝ *աստիճական, բացականչական, հուզական*. Քանի որ թուրքերենում սակավ են կետադրական նշանները, շատ դեպքերում նմանօրինակ գրության ձևերը նախադասության մեջ շեշտի, բութի բացականչական նշանի դեր են կատարում: Այս բարդությունների առաջնային դերը թերևս խոսքին յուրահատուկ հնչերանգ կամ հուզաարտահայտչականություն հաղորդելն է: «O Hızır olmasa bu dünya dünya olamaz» (Եթե այն Հըզըրը չլինի, աշխարհը՝ աշխարհ չի կարող լինել)[7] (Հզ. Ջ. լ., էջ 22), «Gökten takım takım kuş sürüleri geçiyordu,dünyayı cıvıltaya boğarak». «Երկնքում երա՞մ-երա՞մ (խու՝մբ խու՞մբ) թռչունների երամներն էին անց-

նում՝ աշխարհը լցնելով ճռվողյունով (Հզ. Ջ. լ. էջ 246), «O bu analar analar» «Օ՞ այս մայրե՞րը մայրե՞րը»: Օրինակում ոչ միայն շեշտում է մայր, մայրեր հասկացությունը, այլև բառը կրկնակի օգտագործելով նախադասությանը տալիս է անվերջության իմաստ, բաչակաևչական հնչերանգով:

Թուրք քերականագետ Մ. էրգինը, ի տարբերություն Ն. Քոչի, կրկնավորներ ներկայացնում է որպես առանձին միավորներ, դասակարգում դրանք՝ ցույց տալով դրանց գործածության ձևերը. «Կրկնությունները բառախմբեր են, որոնք գրվում են կողք կողքի: Դրանք երկու բառերի ամբողջությամբ, միմյանց կրկնող բառերի հավասարությունն է, որոնց ձևերը, շեշտադրությունն էլ իրարից տարբեր չեն: Վերջավորություն չունեցող բառերը իրար կողք գրվելով, յուրաքանչյուրը պահպանում է իրեն հատուկ շեշտը»: Թուրքերենի կրկնավորները էրգինը բաժանում է երեք խմբի՝ ա) Kuvvetlendirme –սաստկական (kara kara gözler-սև սև աչքեր), բ) Çokluk- բազմակիության, (kapı kapı dolaştım-դռնե դուռ ընկա), գ) Devamlık –շարունակական (koşa koşa- վազելով վազելով):

Այս ամենին զուգահեռ Մ. էրգինը առաջարկում է կրկնավորների իր դասակարգումը՝ **Aynen tekrarlar**- նույնատիպ կրկնավորներ (göz göz- աչք աչք), **Eş mânâlı tekrarlar**-նույնանիշ բարդ կրկնավորներ (çoluk çocuk- երեխա ընտանիք), **Zıt mânâlı tekrarlar**-հականիշ բարդ կրկնավորներ (iyi kotü-լավ վատ), **Ilâveli tekrarlar**-հավելված կրկնավորներ (սա էլ իր հերթին բաժանվում է): Առանձնացնում է նաև՝ ա) բարդություն երկրորդ բաղադրիչի սկզբում բաղաձայնի հավելմամբ (mal mul-ունեցվածք), բ) բառասկզբում մեկ կամ երկու վանկի փոփոխմամբ կառույցներ (çırıl çıplak- դիփտկլոր, ամբողջովին մերկ)[8]:

Վերը բերված օրինակներն ունեն հայերենում իրենց գրեթե նույնակի դրսևորումները: Սակայն Մ. էրգինը նման տարանջատման տակ է դրել ոչ միայն գոյական խոսքի մասը, այլև ողջ թուրքերենի անվանական համակարգը, ներառյալ բայական ձևերը: Այս դրսևորումն էլ նույպես գալիս է լրացնելու այն ամրագրված կարծիքը, որ թուրքերենի նմանօրինակ բառաշերտային կերպերը դեռևս գտնվում են զարգացման փուլում:

ա) Բարդություններ գոյականանի ուղղակի կրկնությամբ

Այս ձևերը կազմվում են գոյականի կրկնությամբ՝ կազմելով նաև ածականներ և մակբայներ: «Նմանատիպ բառաբարդումներն ունեն զանազանության, բազմակիության իմաստներ և ցույց են տալիս առարկաների կամ երևույթների հաջորդականություն»[9]:

«...ta Japonyada vapur vapur pirinç getirmek zorunda kalacaktı hükümet.» (Т. էջ28) (Ճապոնիայում կառավարությունը ստիպված էր լինելու շոգենավ առ շոգենավ (կամ շոգենավ շոգենավի հետևից, շոգենավերով) բրինձ բերել»: Այս օրինակը կարող ենք թարգմանել երեք ձևով. 1. առ շաղկապի միջոցով՝ (շոգենավ առ շոգենավ) այստեղ շեշտում ենք շո-

գենավերի քանակը՝ ավելին ցույց տալու համար, 2. երկրորդ բաղադրիչի սեռական հոլովի կիրառմամբ և հետադաս կապի համադրությամբ (շոգենավ շոգենավի վրա կամ հետևից), գործողության մեջ անընդհատություն մատնանշելու համար, 3. միևնույն բառի ուղղակի կրկնությամբ՝ շոգենավ, շոգենավ կամ ու, և շաղկապով):

Ինչպես թուրքերենում, այնպես էլ հայերենում տարբեր քերականագետներ լեզվական այս կամ այն իրողության վերաբերյալ ունեն իրենց ուրույն կարծիքը: Անդրադառնալով հայերեն նման կառուցվածքներին՝ կուզեինք հիշատակել Մ. Աբեղյանի կցականների վերաբերյալ ուսումնասիրությունը, ուր հատուկ կերպով խոսվում է առ գրաբարյան նախդիրի մասին. «Գրաբարում կան առ նախդիրով հետևյալ բայերը, որոնք աշխարհաբարում գործածական չեն. առանցանեմ-առաջ անցնել, առավելում–վրան ավելացնել այստեղից էլ մեր լեզվում միշտ գործածական առավել առավելություն, առ հավելում բառերը: Առ նախդիրով բայերը փիլիսոփայական գրվածքների մեջ մեծ մասամբ կազմված են հունարենի պրոս, երբեմն պրո, էպի նախաբայերով: Առ նախդիրը այս բառերում պահպանում է իր նշանակությունները՝ գործողության ուղղում դեպի որևէ մեկի մոտ, գործողության կատարում մեկի մոտ, վրա, վրան, առաջ, առաջը, դիմացը, ընդդեմ, դեմ[10]: Առ նախդիրը կարող է հանդես գալ որպես բազմապատկական կապ գոյականների հետ միասին: Այս նախդիրը կարելի է համեմատել տնետուն օրինակի հետ, որտեղ տնե-ի *-ի* հոդակապը կատարում է առ նախդիրի իմաստաբանական դերը: Այսինքն առ նախդիրը միայն բայերի հետ է հանդես գալիս, իսկ գոյականների հետ՝ բազմապատկական կապով: Օրինակ՝

«**At, başıboş Beyazıdın ortasına düştü ev ev, dükkan dükkan bütün Beyazıdı dolaştı**». (Ար. լեզ. էջ 77) «Ձին անսանձ Բայազեթի մեջտեղն հասավ, տնետուն (տուն առ տուն), խանութեխանութ (խանութ առ խանութ) ողջ Բայազեթը շրջեց»: Այսպիսի օրինակները բավականին շատ են հեղինակի ստեղծագործություններում: Այսպես՝

«**Bölük bolük turnalar dönüyordu**».«Երամ երամ (կամ երամ առ երամ) կռունկները վերադառնում էին»: Այստեղ բառի նույնակի կրկնությամբ էլ ընկալում ենք նախադասության մեջ կռունկների շարվեշարան գալու պատկերը: Կամ մեկ այլ օրինակ՝. «**Çıkın çıkın torba torba, çuval çuval altınları var....göğün yedinci katına kadar yıldız yıldız kaynaşıp savruluyor**».(Հզ. ց. լեզ էջ 98) «Կապոց առ կապոց, պարկ առ պարկ, մեշոկ սառ մեշոկ ոսկիներ կան...մինչև յոթերորդ երկինք աստղե աստղ (լեփլեցուն աստղերով և կամ աստղն աստղի, աստղից աստղ) միախառնվելով տարածվում՝ սփռվում է»: Այս նախադասության մեջ կապոց առ կապոց, պարկ առ պարկ, տոպրակ առ տոպրակ մանրակրկիտ թվարկումը խոսում է այն մասին, որ վերը նշված իմաստակից բառերը գործածելով Յ. Քեմալի նպատակն է եղել առավելագույնս շեշտադրել բառաշարքը, շարունակելով նախադասությունը, իր միտքը հասցնում է գագաթնակետի չափազանցության միջոցով, «թե դրանք հասնում էին մինչև յոթե-

րորդ երկինք ...» և այլն: Կամ այստեղ՝ «Pul pul kırmızı, sarı, aydınlık deliği, şimşek gibi ışıklar uçuştu kıvılcımlandı, başı döndü».(Հզ.g. լեզ. էջ 106)

«Փայլփլուն (Փայլ փայլ) դեղին, կարմիր լուսավորած խուց, կայծակի նման լույսեր ընկան, բոցավառվեց, գլուխը պտտվեց»: Թուրքերենում բառի կրկնությունը մեզ թույլ է տալիս հայերենում այն թարգմանել փայլփլուն ձևով, որն էլ կարծում ենք ավելի գեղեցիկ է:

«Ben bu kılıcı otuz yıl döverek, nakış nakış, ayet ayet ışleyerek yaptım». «Ես այս սուրը երեսուն տարի կռելով, նախշ առ նախշ, նշան առ նշան փորագրելով պատրաստեցի» (Հզ.g. լեզ.):

«...o an onlar buluşmuş olurlar, ki iş işten geçmiş olur. ...seni sabah sabah buraya çağırdım». «...այն պահին գտած կլինեն, որ բանը բանից (գործը գործից) անցած կլինի: Քեզ առավոտ կանուխ (վաղ կամ ծեգին) այստեղ կանչեցի»: Այս նախադասության մեջ հանդիպում ենք *առավոտ* բառի կրկնությանը, որն իհարկե կարող ենք թարգմանել վաղ առավոտ կամ կանուխ: Առահասարակ գոյականի տիպական կրկնությամբ ստեղծվում է նոր բառային միավորներ, «... որոնք կարող են իբրև մակբայ գործածվել, ինչպես փունջ - փունջ, տեսակ - տեսակ, թել - թել և այլն: Այս կրկնությունները՝ նայելով կիրառության ստանում են զանազանության, բազմակիության նշանակություն, կամ ցույց են տալիս համազգի բաների հաջորդություն. ուստի սովորաբար դրվում են հոգնակի գոյականի հետ. ինչպես տեսակ տեսակ հարցեր զանազան տեսակի, շատ տեսակի հարցեր»[11]:

Քեմալի մոտ հանդիպում ենք նաև կրկնության այլ դրսևորումների. հեղինակը մեկ պարբերության մեջ մի քանի անգամ կրկրնում է տվյալ բառը՝ դրանով իսկ ընդգծելով իր ասելիքը և տվյալ կրկնվող բառը դարձնում իր նախադասությունների առանցքը: Այսպես, օրինակ՝ «Ağrıdağı dünyanın üstüne oturmuş ayrı bir dünya gibidir, ağır heybetli. Çok zaman Agrının başı dumanlıdır: Bazı da bulutların yerini savrulan yıldızlar alır. Top top, dönen, bir boranda esen yıldızlar. Güneş uzun gecelerden sonra Ağrının böğründen bir kırmızı ateş harmanı gibi çıkar. Ağrıdağı gecelerde daha büyür,ağırlaşır,dünya yalnız Ağrıdağıymış gibi gelir insana.»(Այւ. լեզ. էջ 96): «Արարատը աշխարհի վրա նստած ուրիշ մի աշխարհի նման է, ծա՜նր, վեհաշուք: Շատ ժամանակ Արարատի գագաթն ամպոտ է: Երբեմն էլ ամպերի փոխարեն ձուլվում է աստղերին: Բույլք - բույլք պտտվող, ամպրոպի ու անձրևի ժամանակ բուրող աստղեր: Արևը՝ երկար գիշերներից հետո Արարատի ետևից կրակե կարմիր մի խառնարանի պես դուրս է գալիս: Արարատը գիշերվա ընթացքում ավելի է մեծանում, ծանրանում ու մարդուն թվում է, թե աշխարհում միայն Արարատն է եղել»:

Պարբերությունը լի է բնության հրաշալի նկարագրությամբ: Արարատ բառի բազմակի շեշտադրում-կրկնությամբ Յ. Քեմալին հաջողվել է կարմիր թելի պես ընդգծել պարբերության մեջ հեղինակի համար գլխավոր «հերոսի»՝ Արարատ լեռան դերը: Գրողն իր առաջ դրված նպատակը՝ լեռան անձնավորումը, նրան գերմարդկային հատկություններով օժտելը,

կարելի ասել կատարել է: Տեղին է մեջբերել Հ. Թումանյանի հետևյալ միտքը, որ բառը մի ամբողջ աշխարհ է: Նմանատիպ պարբերություններ հեղինակը կազմել է նաև ձի, սուր , թուր, քոչվոր, բազե և բառերի միջոցով:

բ) Գոյականակազմ բարդություններ հոլովական վերջավորություններով

Կազմվում են հոլովական գրեթե բոլոր վերջավորություններով: Գոյականները դուրս գալով իրենց բուն բառիմաստից, ձեռք են բերում նոր ժամանակային, տարածական իմաստ՝ ա) *բաղադրիչներից մեկը ստանում է բացառական հոլովի, իսկ մյուսը տրական հոլովի վերջածանց.*

օրինակ՝ «Gülbahar günden güne bu ağır yükün altında bitkindi». (Ար. լեգ. էջ 107) «Գյուլբահարն օրեցօր (հետզհետե, կամ գնալով) այս ծանր բեռի տակ ուժասպառվեց»: «Geren düş kuruyor, düşten düşe geçiyordu». «Ձերենը երազում էր, երազանքի գիրկն ընկնում (անընդհատ երազում)»: «Şeyh bayramdan bayrama bu paraları fikaralara paylaştırdı». «Շեյխը այս փողերը տոնից տոն (հազվադեպ) աղքատներին բաժանել տվեց»: Վերը բերված օրինակներում բացառական հոլովի –den, -den և տրական հոլովի _-a, -e վերջածանցների միջոցով կրկնավոր բառերը, մասնակի կորցրելով իրենց բուն՝ ժամանակի մակաբայի նշանակությունը, ձեռք են բերել ձևի մակբային հատուկ նուրբ երանգավորում:

բ) առաջին բաղադրիչը ստանում է հայց. հոլովի, իսկ երկրորդը՝ պատկանելիության վերջածանցին զուգահեռ կրկին հայց. հոլ.-ի, տրականի վերջածանց. օրինակ՝

«Bütün bu telgraflar çekildiği andan itibaren satırı satırına kasabada ezberle okuyordu». «Ինչ այս բոլոր հեռագրերը եկել են, ողջ ավանը դրանք տող առ տող \տողը տողի հետևից\անգիր էր ասում»: Իսկ այստեղ « Dişi dişini yiyor». բոց. «Ատամը ատամ է ուտում\ կամ խոտորնակին խոտորնակ\կամ գրաբ. ձևով՝ ատամ ընդ ատաման»: Այս օրինակներում հայց. հոլ.-ի -ı,-i-u,-u և տրակ. հոլ.-ի –a, -e վերջածանցների օգնությամբ կազմված բառերը, նույնպես իրենց մեջ ունեն մակբային հատուկ ձևի կարգ:

գ) *առաջին բաղադրիչը անփոփոխ է, իսկ երկրորդը ստանում է տրական հոլովի վերջածանց.օրինակ՝*

«Göz göze geldiler».Դեմ առ դեմ եկան \աչք աչքի \ հայացքը հայացքին\ եկան»:

«... Ortalık sel sele gitti ».«Շրջակայքը հեղեղվեց»: Այստեղ sel sele բառաբարդման ձևը կազմել է նոր բառ՝ *հեղեղ* իմաստով: «...kadınlar çığlık çığlığa dövmeye başladılar». «...կանայք ճիչ ճչի ետևից արձակել սկսեցին»: Կարելի է հանդիպել նաև հետևյալ օրինակին՝«Sadi Ustayla birlikte başa başa verip iki gün duşündüler». «Սադի ուստայի հետ միասին գլուխ գլխի\միտք մտքի\ տալով երկու օր մտածում էին»:

Քեմալի բառաբարդումների շարքում հանդիպում ենք նաև իմաստային և ոչ իմաստային բառերով կազմված կաղապարածևերի, որոնք միասնաբար գործածվելով՝ հանդես են գալիս որպես նոր բառեր:

գ) Գոյականակազմ բարդություններ հոգնակի թվով

Կապակցությունների առաջին բաղադրիչը թուրքերենի հնչյունական ներդաշնակության օրենքին համապատասխան ստանում է հոգնակի թվի lar, ler (-եր, -ներ), իսկ երկրորդը՝ հայցական հոլովի վերջածանց: «**Yıllar yılı o ev senin, bu ev benim**». «Արդեն քանի տարի է (երկար տարիներ, տարիներ տարիներ, տարիներ ի վեր) այն տունը քոնն է, այս տունը՝ իմը»: «**Işte şimdi yıllar yılı istediği şahin yavrusu kendısinin olacaktı**». «Ահա հիմա՝ այն բազեյի ձագը, որ երկար տարիներ ուզում էիր, քոնն էր լինելու»: Հոգնակի թվի գործածությամբ նախադասության իմաստը ավելի ընդհանրական է, վերացական՝ ժամանակի լայնածավալ հասկացությամբ: «**Eğer bir yıl buluşmayacak olsalar denizler deniz, topraklar toprak olmaktan çıkar.** «Եթե մի տարի լինի, որ չգտնեն, ամենալավ ծովը, ամենալավ հողը կհեռանան»:

«**Dakikalar dakikaları kovaladı**». «Րոպեները հետևեցին րոպեներին (Երկար րոպեներ անցան, րոպեներ րոպեներ անցան, րոպե առ րոպե անցավ)»: Այս օրինակում երկու բաղադրիչներն էլ ստացել են հոգնակիության վերջածանց: Հայցական հոլովի գրությամբ գրողը նախադասությունը դարձրել է տռավել շարունակելի, ընդգծելով ժամանակային դադարը:

դ) Բարդություններ կազմված պատկանելիության վերջածանցներով

Պատկանելիության վերջածանցները թուքերենումկատարում են այն դերը, ինչ որ հայոց լեզվում ստացական ս, դ, ն, ը հոդերը: Արանց հետ միասին բառաբարդման յուաքանչյուր կիրառություն առավել է անձնավորում գոյականը՝ սաստկացնելով սեվականության զգացողությունը:

«**Oğul evladım güzel kaymakamım gençsin uğraşma diyorum**»: Տղաս, որդիս իմ լավ քայմաքամ երիտասարդ ես, մի՛ վիճիր, - ասում եմ: **Oğul**-որդիս, **evlat**-ծագ բառերը հոմանիշներ են, հեղինակն այն օգտագործել է շեշտելու, ուժեղացնելու համար այն միտքը, որը մենք հետո կարդում ենք ...երիտասարդ ես մի վիճիր: «**Oğlum yavrum benim sözümden hiç çıkmaz**»: Որդիս, ծագուկս իմ խոսքից բոլորովին դուրս չի եկել (խոսքս չի մերժել): Կամ «**Ana babam yok**» (Բառ. մայր հայրս չկա, այսինքն ծնողներ չունեմ: Քանի որ մենք գործ ունենք երկու հոմանիշների հետ, ուստի նրանցից միայն վերջին բաղադրիչն է ստացել պատկանելիության առաջին դեմքի եզակի թվի m վերջածանցը, իսկ oğul գոյականը կրել է վերջինիս շարահյուսական փոփոխությունը: Նախադասությունը հայերենի վերածելիս ցայտուն նկատելի է ստացական ս հոդի առկայությունը հոմանիշ տղա, որդի բառերում: Երկրորդ օրինակում թարգմանաբար բառացի՝ «Մայրս,

հայրս չկան» իմաստային առումով ըմբռնելի է: Մեկ այլ ձևում հանդիպում ենք. **Çoluk çocuğum var.** «Ընտանիք երեխա,(տուն տեղ) ունեմ»: **Çoluk** տարբերակը չունի գործածության առանձին ձև, այն արդեն միաձուլվել է **çocuk** բառին՝ դարձել բառի իմաստային մի մասը: Այս օրինակներում տեսնում ենք հոմանիշ բառերի գործածության ձևեր, որոնք զուգորդվում են պատկանելիության վերջածանցներով:

ե) Գոյականակազմ բարդություններ հոմանիշներով

Նույնանիշ կոչվում են այն բառերը, որոնք ունեն նույն իմաստը, նույն նշանակությունը: Իմաստով և կիրառությամբ բացարձակ նույնական բառեր լեզվի մեջ քիչ են լինում: Դրանք ժամանակի ընթացքում իրենց կիրառությունից դուրս են գալիս կամ ձեռք են բերում այլ իմաստ, այլ կիրառություն: Հոմանիշները կամ նույնանիշները նախադասության մեջ կատարում են նույն շարահյուսական դերը: Կիրառության մեջ հաճախ կարող ենք տեսնել բազմիմաստ բառի իմաստային միայն մեկ տարբերակը: Նման բառերի գործածմամբ Յ. Քեմալը շեշտում է բառիմաստի առավելությունը, ընթերցողին հուշելով բացասական կամ դրական երևույթի նկատմամբ իր վերաբերմունքը: Այս կաղապարները գրողի լեզվին տալիս են կենդանի, խոսակցականին մոտ հնչերանգ՝ դարձնելով նրա ոճը ավելի սեղմ, պարզ ու մատչելի:

«...ne kadar dert bela içinde olursa olsun»: «Ինչքան ցավ ու վիշտ (դարդ -ցավ) ներսում լինում է թող լինի»: *Ցավ ու վիշտ*, հոմանիշներին զուգահեռ հանդիպում ենք նաև *դարդ (թրք.) ու ցավ* (հայ.) խոսակցական հոմանիշային տարբերակին: Սա մի ուրույն բառաբարդում է փոխառության միջոցով: **«Çeşmelerin, pınarların, çayların, başların beklerler».**«Ակունքների, աղբյուրների, առուների գլխին կանգնած սպասում էին»: Եռակի անգամ գործածելով միևնույն բառի հոմանշային տարբերակը, նկատում ենք, որ Քեմալը նման ձևով ընդգծում է հերոսների ամենուրեք լինելու փաստը: **«Yeryüzünü gökyüzünü bir yangındı»**: «Երկինք ու երկիր (երկնքի, աշխարհի երեսը) կրակի մեջ էր»: Այսպիսի մեծամասշտաբ պատկերավոր միջոցով էլ գրողը բնութագրում է, այն իրավիճակը, որում գտնվում էր ողջ աշխարհը՝ երկնքից մինչև երկիր: Իսկ այս նախադասության մեջ տեսնում ենք **«Eliyle koluyla telaşlı telaşlı olur işareti vermeye başladı»**: Բռց. «Ձեռքով, թևով շարժվեց, սկսեց կենդանության նշաններ ցույց տալ »: Այսինքն՝ «Ոտք ու ձեռքով շարժվեց, սկսեց կենդանալ»: Շեշտելով ձեռք, թև (թռչնի) բառերը ինքնաբերաբար հեղինակը ցույց է տալիս ողջ մարմնով կենդանանալը: Հայերենում նման ձևը կթարգմանք՝«ձեռք ու ոտքը ցնցվեց» տարբերակով, շեշտադրելով երկու լեզուներում գոյություն ունեցող լեզվամտածողության, տարբերությունը: **«Tozdan, dumandan ferman okunmayacak»**. «Փոշուց, ծխից (ծուխ ու փոշուց) ֆերմանը* չէր կարդացվելու»: Այստեղ **toz** և **duman** բառերի միջոցով շեշտվում է ֆերմանն ընթերցելու անհնարությունը: **«Kasabada ses seda**

yok». «Ավանում ձեն ձուն (շշուկ անգամ) չկա»: Հեղինակն իհարկե կարող էր բավարարվել միայն **ses** – ձայն բառի կրկնակի գրությամբ, սակայն այս ձևով շեշտում է ավանի լռությունը՝ անմարդաբնակ լինելը՝ «ձայն անգամ չկա» արտահայտությամբ: «**Resul Efendi aşkla şevkle gülümsedi**». «Ռեսուլ էֆենդին սիրով ուրախությամբ (քահ քահ, սրտաբուխ, անբռնազբոսիկ ծիծաղեց»:

գ) Գոյականակազմ բարդություններ հականիշներից

Հականիշներով կազմված բառհյուսական բարդությունները միմյանց հակադիր են: Սրանք հանդիսանում են միևնույն բնույթի հատկանիշի, երևույթի հակադիր որակումներն արտահայտող ձևեր: Ցույց են տալիս մարդու ֆիզիկական հատկանիշին, հոգեկանին, տրամաբանությանը վերաբերող հականիշ-հատկանիշներ. օրինակ՝

«**Genç yaşlı beş yuz kişi asker gibi tek sıra olmuşlar,vagonun karşısında**».«Ծեր ու ջահել հինգ հարյուր հոգի զինվորի պես, վագոնի ետևում մեկ շարք են կազմել»:

Այս հակադրությամբ հեղինակին հաջողվել է ցույց տալ մեծից փոքր շարք կազմելը՝ այսինքն ողջ ժողովրդի (բոլոր բոլորի կողմից) մասնակցությունը: «**Söyle de ağzını burnunu kırayım leşini yere sereyim**». «Ասա դե քիթ ու բերանդ (քիթ ու մռութդ) կջարդեմ, լեշդ կփռեմ»: Իսկ այս արտահայտությունը բնականաբար ժողովրդական մտածողությանն է հատուկ, որի գործածմամբ էլ հեղինակը ազգային ֆոլկլորին հավատարիմ լինելու միտումին զուգահեռ իր բացասական վերաբերմունքն է արտահայտում: «**Gece gündüz büyük, kalın, çok tüylü bir ayı postunun üstünde oturdu**». «Գիշեր ցերեկ (օր ու գիշեր) հսկայամարմին, շատ բրդոտ մի արջ մորթու վրա նստում էր»: Իսկ այստեղ՝ «**Gene korkudan eli ayağı titremeye başladı**». «Նորից, վախից ձեռք ու ոտքը սկսեց ցնցվել (ոտքից գլուխ սկսեց ցնցվել)»: Վերը թվարկված բոլոր բառաբարդման ձևերը նախադասության մեջ կատարում են մակբայի ձևաբանական ֆունկցիա՝ ժամանակի, տեղի, ձևի պարագաներով արտահայտված:

է) Գոյականակազմ բարդություններ, որոնց առաջին կամ երկրորդ բաղադրիչը իմաստազուրկ է

Չևերին հանդիպում ենք հիմանականում խոսակցական լեզվում: Այսպիսի կաղապարների է անդրադարձել նաև Յաշար Քեմալը՝ իր ստեղծագործական լեզուն ավելի ժողովրդական բառ ու խոսքին մոտ կառուցելու համար: Թուրքերենում ինչպես նաև հայերենում առաջին բաղադրիչն է որպես կանոն իմաստակիրը, իսկ երկրորդը գալիս է լրացնելու առաջինի միտքը, չնայած անիմաստ լինելուն: Թուրքերենում հանդիպում ենք՝ **adam madam** -մարդ մուրդ, **su** ԺԻ-ջուր մուր, **deniz meniz**- ծով մով տարբերակներին: Ինչպես տեսնում ենք վերը բերված օրինակներում

երկրորդ բաղադրիչը առաջինի ուղղակի կրկնությունն է՝միայն առաջին տառի հնչյունափոխությամբ, որով և երկրորդ բաղադրիչը իմաստազրկվում է: Շատ հաճախ երկրորդ բաղադրիչին գալիս է միանալու ոչ թէ m տառով սկսվող իմաստազուրկ բառը, այլ **filan** կամ **falan** (թարգ. և այլն) բառը:

Նշենք, որ կառուցվածքային նմանատիպ ձևերին չի անդրադարձել քերականագետ Նյուրեթթին Քոչը իր գրքում: Իսկ Յ. Քեմալի աշխատանքներում բավականին շատ տեղ են զբաղեցնում նման ձևերը: Այսպես օրինակ՝ «...ben **kanun falan dinlemem**».«... ես կանոն ֆալան (կամ այլ ձևով՝ կանոնի հետ կապված ոչինչ) չեմ լսել» «...**buraya haber geldi ki falan saat falan dakikada Kaymakam istasyonda olacak**». «...այստեղ լուր հասավ, թե ֆլան (ինչ որ) ժամին, ֆլան (ինչ որ) րոպեին Քայմաքամը կայարանում է լինելու»: Իսկ **falan** բառը առաջին բաղադրիչին իմաստային առումով լրացնելով, բառին հաղորդել է անորոշության երանգ, որի մեջ կա նաև վերացական իմաստ: Օրինակ՝ «**Ben elma falan yemem**». «Ես խնձոր ֆլան չեմ ուտում» (խնձորի նման այլ մրգեր չեմ ուտում): Կամ «**Benim defterim flanım yok**». «Ես տետր ֆլան չունեմ» (տետր և գրենական այլ պիտույքներ չունեմ):

Այս առնչությամբ, ի տարբերություն Ն. Քոչի, իր տեսակետն է հայտնում մեկ այլ թուրք քերականագետ Մ. Էրգինը «Շատ դեպքերում ոչ միայն կրկնավորի երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնն է փոփոխության ենթարկվում, այլև երկրորդ բաղադրիչի ներքին ձայնավորը,: Այսպես **şart şurt, mal mul** և այլն բառեր: **filan**-ով և **m**-ով կարող են կազմվել բոլոր կրկնավորները, ինչպես նաև հնուց եկած բարբառային ձևերում կտեսնենք նաև **ne** և **şey** բառերի միջոցով գործածության դեպքեր. օրինակ՝**su şey, su ne**»[12]: Այսպիսի՝բառի ներքին թեքմամբ ձևերը, բացարձակապես հատուկ չէն թուրքերենին, որն իր կառուցվածքով կցական լեզու է:

Իսկ Ն. Քոչը շեշտում է բառաբարդման մեկ այլ տեսակի կազմությունը, որտեղ բարդության երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնը փոփոխության է ենթարկվում՝ տվյալ բառը դարձնելով անիմաստ: «**Şaka maka anlamam**». «Կատակ մատակ (կատակային բաներ) չեմ հասկանում»: Կամ՝« **Burda çocuk mocuk yok**». «Այստեղ երեխա մերեխա չկա»: « **Kitap mitap istemiyorum**». « Գիրք միրք (գրքի հետ կապված այլ պարագաներ) չեմ ուզում». «**Ekmek mekmek yemem**». «Հաց մաց (հաց և այլ հացամթերքներ) չեմ ուտում»: «**Para mara vermem**. «Փող մող (փող և այլ նմանօրինակ բաներ) չեմ տալիս»:«**Masalarda örtü mörtü yök**». «Սեղաններին ափռոց մփռոց (և սեղանը ծածկող այլ պարագաներ) չկա»: Ինչպես ցույց են տալիս օրինակների թարգմանությունները, հայերենում նույնպես մ տառի միջոցով իմաստազրկվում է երկրորդ բաղադրիչը՝ դառնում անգործածելի առանձին գրության համար:

Իսկ Յաշար Քեմալի ստեղծագործություններում կարդում ենք՝ «**Şu zincir mincir altmış bin lira olmuş mu**». «Այդ ժնջիլ մնջիլները (շղթա և այլ զարդեր) յոթանասուն հազար լիրայի եղե՞լ են»: «**Telefon melefon**

gelecek olursa, bana seslen anladın mı». «Հեռախոս մեռախոս եթե գանգի, ինձ ձայնիր, հասկացա՞ր»: «Tifo mifo, ne bileyim insanın aklına bin bir çeşit şey geliyor». « Տիֆ միֆ, (այլ հիվանդություններ) ինչ իմանամ՝ մարդու խելքին հազար ու մի բան է գալիս»: Եվ կամ՝ «Hasip Bey kılıç mılıç görmek istemiyor». «Հասիփ Բեյը թուր մուր տեսնել չի ուզում»: m սկզբնատառին զուգահեռ հանդիպում ենք նաև t տառով երկրորդ բաղադրիչի անիմաստության: Օրինակ՝ «Imleri imleri belirsiz olmuştur». «Նախանշան մախանշան անհայտ են եղել»: Ի տարբերություն m սկզբնատառով բառային անիմաստություններին, t տառով անիմաստությունները դրանք նույն սկզբնական, առաջադաս բառերն են, որոնց վրա ավելանում է, որպես երկրորդ բաղադրիչի անիմաստություն՝ t տառը: Այսպիսով imleri imleri ձևը ընդհանրապես նման չէ tifo mifo ձևին: Կամ մեկ այլ օրինակում տեսնում ենք՝ «Yunus kendini gurbete atmış, bir daha da dönmemiş, imi timi bellisiz olmuştu». «Յունուսն ինքն իրեն պանդխտության էր մեկնել, այլևս երբևիցե չէր վերադարձել, իզով թոզով կորել էր)*: Հեղինակի մոտ հանդիպում ենք նաև «Özü sözü bir adamdı Ağa». 128 A.« Ուղղամիտ, ճշմարիտ, ազնիվ, մի մարդ էր աղան»: Առաջին հայացքից նկատում ենք özu sözü կրկնավորի հանգային առանձնահատկությունը: Ի տարբերություն, երկրորդ բաղադրիչի անիմաստությամբ կազմված կրկնավորների, որտեղ երկրորդ բաղադրիչը կամ իմաստազուրկ է, և կամ ուղղակի կրկնությունն է առաջին բաղադրիչի m, t, սկզբնատառերով, այս տարբերակում, թե առաջին, և թե երկրորդ բաղադրիչը իմաստազուրկ չեն: Նման ձևերի գործածմամբ հեղինակը ժողովրդական լեզվին հարազատ մնալու և իր գրականությամբ թուրքերենում նոր ոճ ձևավորելու միտում ունի:

ը) Գոյականակազմ բարդություններ հականիշ՝ ազգակցական կապերից

Այս ձևերում գործածվող հականիշները միմյանց հետ կապված են ազգակցական կապով: Կցական բարդություններում գործածվելիս իմաստային առումով գրեթե նույնացվում են՝ դառնում միատարր:

«Onlar gelin güveyi yağmurun altında dans ediyorlardı».« Նրանք հարս ու փեսա անձրևի տակ պարում էին»: «Bütün kasaba, çoluğu çocuğuyla, genci kocasıyla Kaymakam oyununu, dudaklarını sapırdatarak izler». «Ողջ ավանը՝ մեծ ու փոքր, ծեր ու ջահել շրթունքները չփչփացնելով հետևում էին Քայմաքամի խաղին»: Այս կերպ թվարկելով ավանի ողջ բնակչության մասնակցությունը, գրողը մտովի ասես շեշտադրում է բազմության հոծությունը:

«Baba oğul oraya geldiler».« Հայր ու որդի (հորով որդով, կամ տնով տեղով) այնտեղ եկան»: Ահա այս բոլոր օրինակներում նկատում ենք, որ բարդությունները կառուցվել են իրար հականիշ գոյականներից՝ շեշտելով ազգակցական կապը, ամբողջացնելով իմաստը: «Ana babam yok». «Հայր ու մայր չունեմ»: Այստեղ կարող ենք տեսնել նոր բառային կառույց՝ ծնողներ չունեմ: «Öyle çamur içinde çoluk çocuk, kadın erkek gelisi sok tesiri brakti.»: «Այսպես ցեխի մեջ տնով տեղով, կին տղամարդով գալը՝

շոկի մեջ գցեց»: Çoluk cocuk բարդության մեջ առաջին բաղադրիչը լրացնում է çocuk բառին: Օրինակ՝ «Hem de **çoluğunı çocuğumdan** bile öldürüyorsun». «Արդեն նույնիսկ ընտանիքս ես սպանում»: Մեկ այլ նախադասության մեջ հանդիպում ենք **«Kadınlar, erkekler, delikanlılar, yaşlılar gelecekler.»** «Կանայք, տղամարդիկ, երիտասարդներն ու ծերերը, գալու են»: Հակադիր բառերի միջոցով գրողը նկարագրում է մարդկանց մեծ բազմությունը, ընդգծելով նրանց ինքնությունը, ցույց տալիս ամբոխի խառնուխուռն լինելը: Այսպիսով վերը բերված օրինակներում տեսնում ենք, որ հարադիր բարդությունների առաջին և երկրորդ բաղադրիչները կարող են լինել միմյանց նկատմամբ թե՛ հոմանիշ, և թե՛ հականիշ, որոնք միասին գործավելու դեպքում կազմում են հիմնականում իմաստային նոր բառեր:

բ) Գոյականակազմ բարդություններ հետադրությունների միջոցով

Այս ձևերին անդրադառնալիս, կարող ենք ասել, որ սրանք կազմվում են հետադիր կապերի և գոյականների կրկնությամբ: «Ondan sonradır, kı geceleri **kapıya kilit üstüne kilit** vurdu». «Դրանից հետո է, որ գիշերները դուռը ամուր ամուր (կողպեք կողպեքի վրա) էր փակում»: «Ankaraya **heyet üstune heyet**». «Դեպի Անկարա պատվիրակություն պատվիրակության հետևից» (պատվիրակություն պատվիրակության վրա): Հեղինակը վերը բերված բարդության գործածմամբ շեշտադրել է գործուղության կատարումը իրար ետևից, անմիջապես, հապճեպ՝ վախից կամ հուզմունքից դրդված:

Երկու օրինակներում էլ նախադասությունը իմաստային ձևից չի շեղվել թարգմանության տեսանկյունից դիտարկելով, այլ պահպանել է նույնիմաստությունը, արտահայտիչ դարձնելով նախադասությունը՝ կապերի կիրառմամբ: Այսպես կարող ենք հանդիպել նաև **tel üstüne tel**-հեռագիր հեռագրի վրա, **demir üstüne demir**-երկաթի երկաթի, **altın üstüne altın**-ոսկի ոսկու վրա ձևերին: Կարող ենք նշել նաև որ, հեղինակի մոտ գերակշռում են թուրքերեն **üst** հետադրության հետ կիրառության ձևերը: Յ. Քեմալի մոտ հանդիպում ենք նաև երկու բառերի միասին գրության ձևերի**: Երկու տարբեր իմաստ ունեցող բառերի գրությամբ, ստեղծվում են նոր բառեր, իմաստային այլ արժեքներով. օրինակ՝ **başörtüsü**-գլխաշոր (**baş**-գլուխ, **örtü**-ծածկոց), **sütbeyaz**-կաթնագույն (**süt**-կաթ, **beyaz**-սպիտակ), **doludizgin**-ամբողջ հոգով (**dolu**-լիքը, **dizgın**-առիթ), **birdenbire**-հանկարծակի, մեկից մեկ (**bir**-մեկ, **den**-բացառ. հ., **bir**- մեկ, **e**-տրական հ.), **insanoğlu**-մարդուորդի (**insan**-մարդ, **oğul**-որդի), **başucun**-գլխավերև (**baş**-գլուխ, **uç**-ծայր), **sarmaşdolaş**-գրկախառնում (**sarmaşmak**-կառչել, ձուլել, **dolaşmak**-շրջել, թափառել), **kalakaldı**-գամվել -մնալ (**kala=kalmak**-մնալով, **kaldı=kalmak**-մնաց), **akşamüstü**-երեկոյանդեմ (**akşam**-երեկո, **üst**-վրա), **yabangülleri**-վայրի վարդեր (**yaban**-վայրի, **güller**-վարդեր), **gündoğudan günbatıya kadar**-արևածագից մինչ մայրամուտ (**gün**-օր, **dogu-**

ծնունդ,-dan բացառ. հ.-, gün-օր, batmak-մտնել, սուզվել), soğukkanlı-սառնասրտություն (soğuk-սառը, kan-արյուն), binbaşı-հազարապետ (bin-հազար, baş-գլխավոր), uğurboceği- երջանկության բզեզ (uğur-երջանկություն, bocek-միջատ), başaltı-ներքևի հարկի նավախցիկ անձնակազմի համար (baş-գլուխ, alt-ներքև), yüzbaşı-հարյուրապետ (yüz-հարյուր, baş-գլուխ, գլխավոր), ikindiüstü-երեկոյին մոտ (ikindi-կեսօրից հետո, üst-վրա), öteberi-ամեն մանրուք, տարբեր իրեր (öte-մնացածը, beri-այս կողմում), karındaş-եղբայր (karı-փոր, daş-...կից), köpekbalığı-շնաձուկ (köpek-շուն, balık-ձուկ), terütaze-շատ թարմ, շատ նոր (ter-քրտինք, taze-նոր):

Այսպիսով, հենվելով զուգադրական մեթոդի վրա, սույն հոդվածով ներկայացրեցինք թուրք ժամանակակից գրող Յաշար Քեմալի ստեղծագործություններում առկա գոյականակազմ բառաբարդման ձևերը՝ հենվելով տվյալ նյութին անդրադարձած, հայ և թուրք քերականագետների կարծիքներին:

ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յաշար Քեմալը (1923-) ծնվել է Օսմանիյեյի Համիդիյե գյուղում (այժմ Գյոքչեդամ): Մեր հոդվածի համար հիմք է ծառայել Քեմալի «Ağrı Dağı Efsanesi» (Արարատ լեռան լեգենդը), «Binboğalar Efsanesi» (Հազարացուլերի լեգենդը), «Üç Anadolu Efsanesi» (Երեք Անատոլիական լեգենդ) լեգենդների եռաշարքից, «Ölmez otu» (Անթառամը կամ Անմահ խոտը), «Yılanı Öldürseler» (Եթե սպանեն օձին), «Kuşlar da gitti» (Թռչուններն էլ չվեցին), «Teneke» (Թիթեղ), «Fırat Suyu Kan Akıyor Baksana» (Տես Եփրատն արյունահոսում է) ստեղծագործությունների լեզվական նյութը:
2. Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 246:
3. Սուքիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982 էջ 292:
4. Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 109:
5. Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան,1986, էջ 68
6. Koç N., Yeni Dil Bilgisi, İstanbul, 1996, s.500
7. Kemal Y., Binboğalar Efsanesi, İstanbul, 1998, s. 22. Այստեղ տե՛ս նույնի հայերեն թարգմանության հապավումը՝ Հազարացուլերի լեգենդը. /Հզ. Ց. լ./
8. Ergin M., Türk Dil Bilgisi, İstanbul, 2002, s. 377-379.
9. Սուքիասյան Ա, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 300:
10. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան 1965, էջ 186:
11. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան 1965, էջ 180:
12. M. Ergin, Türk Dil Bilgisi, İstanbul, 2002, s. 378.

* Քեմալական բառաստեղծման օրինակ է. İmi timi bellisiz olmak-ինչ լինելը, ուր գնալը չիմանալ կամ իզով քոզով կորչել

** Այս ձևերին հայերենում համարժեք են կցականները

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզվի դասավանդման մեթոդիկայի մշակման առումով մեծ կարևորություն է ստանում հայալեզում լսարանում ոչ հնդեվրոպական լեզուների դասավանդման գործընթացում փորձել համեմատությունների և դասակարգումների միջոցով բացատրել լեզվամտածողության տարբերությունների դրսևորումները այդ օտար լեզուների, տվյալ դեպքում՝ ժամանակակից թուրքերենի և հայերենի միջև զուգահեռներ անցկացնելով:

Այս առումով կարևոր է հետադրությունների իմաստների[1] ուսումնասիրությունը թուրքերենում և դրանց հստակ լեզվաբանական իմաստավորման հիման վրա հայերենով բացատրելու և հաղորդելու համակարգի մշակումը:

Ինչպես նշում է Ա. Ա. Ռեֆորմատսկին, խոսքի մեջ տարբերակվում է բուն խոսքը, որը լեկսիկոսեմասիոբանական միավոր է և բառույթը. այն նաև քերականական միավոր է: Այս երկու հասկացությունները կարող են հատվել, սակայն երբեք ամբողջովին չեն համընկնում: Նա գրում է.«Խուսքը կարող է լինել և չեզոք, և արտահայտչական, բազմիմաստ, եզրի նշանակություն ունեցող բանաստեղծական... Բառույթը կարող է լինել միաձևույթ, նախածանցային կամ վերջածանցավոր, պատկանել կոմպոզիտի այս կամ այլ տիպին, ծառայել որպես ստորոգելի»: Եվ եզրակացնում է. «Այսպիսով բառի կառուցվածքի և բառակազմության խնդիրները վերաբերում է բառույթի ոլորտին[2]:

Լեզուները այս առումով բաժանվում են հետևյալ տիպերի՝ արմատային կամ մեկուսացնող, կցական (ագլյուտինատիվ) կամ թեքական (ֆլեքսիվ): Երբեմն ավելացնում են նաև պոլիսինթեթիկ տիպը: Արմատային լեզուներում, օրինակ, չինարենում, բառը սովորաբար հավասար է արմատին: Կցական լեզուներում բառի կառուցվածքին հատուկ է մեծ քանակությամբ հատուկ կցական տարրերի օգտագործումը: Այս պատճառով էլ այս լեզուները անվանվում են ագլյուտինատիվ՝ (լատիներեն **agglutinare**՝ նշանակում է կպցել, միացնել, սոսնձել): Թուրքերենը կցական լեզու է, և չափազանց հետաքրքիր է՝ համեմատելով հայերենի հետ, ուսումնասիրել և այդ ուսումնասիրության օրինակով ցույց տալ թուրքերեն սովորող հայ ուսանողներին, թե ինչպես են հետադրությունների՝ մեկը մյուսին կցելու միջոցով այդ լեզվում փոփոխվում նշանակությունները, հասկացությունները, հարաբերությունները և իմաստները:

Յուրաքանչյուր լեզվում բառերը զգալիորեն տարբերվում են իրարից ինչպես իմաստային, այնպես էլ ձևական և կիրառական տեսակետից: Դեռևս միջնադարյան քերականություններից սկսած կատարվել են բառերի ավելի ընդհանրական դասակարգումներ՝ զանազանելով *թեքվող* խոսքի մասեր և *չթեքվող* խոսքի մասեր:

Ժամանակակից թուրքերենի խոսքի մասերը, ըստ իմաստագործառույթային հատկանիշների, լեզվաբան-թուրքագետ Ն. Կոնոնովը դասակարգում է երկու խմբի՝ անվանական և ոչ անվանական[3]:

Ժամանակակից թուրքերենի ***ոչ անվանական*** խոսքի մասերը առանձնանում են հետևյալ հատկանիշներով՝

ա) նախադասության անդամ լինել չեն կարող,

բ) սպասարկու- կապակցական բառեր են ու մասնիկներ,

գ) վերաբերական բառեր են:

Թուրքերենի հետդիրները (İlgeç/Edat/Sonta) ևս մտնում են ոչ անվանական, ինչպես նաև չթեքվող խոսքի մասերի խմբավորումների մեջ: Լինելով վերաբերական խոսքի մասեր՝ դրանք չեն կարող հոլովվել և հարաբերության մեջ մտնել այլ բառերի հետ: Ընդհակառակը, դրանք իրենք են արտահայտում հարաբերություններ, բայց իհարկե տարբեր տեսակի հարաբերություններ: Թուրքերենում հետադրությունները մեծ թիվ չեն կազմում և «որոշ դերանուններ, մակբայներ ու շաղկապներ նախադասության մեջ գոյականական հոլովների, բայի խոնարհումների և դերբայ կազմող ածանցների հետ միասին ձեռք են բերում հետադրության իմաստ և կիրառություն»[4]: Օրինակ՝ **senin için, bana göre, kardeşin gibi, evlendiğinden beri, anne olarak** և այլն:

Թուրքերենի հետադրությունները (**ile-la-le, için, üzere/üzre, gibi, kadar**) իրենց գործառույթով համապատասխանում են ժամանակակից հայերենի իսկական կապերին, որոնք զուրկ են նյութական իմաստից և հանդես են գալիս միայն որպես կապ՝ պահանջելով որոշակի հոլովառություն[5]: Ինչպես հայերենում, թուրքերենում ևս հետադրությունները մեծ մասամբ կարող են առաջանալ գոյականներից, ածականներից, մակբայներից, որոշ դեպքերում նաև բայերից (ղեկ՝ ,, **doğru** " (դեպի) ծագել է **doğmak**- (ծնվել) բայից):

Հետադրություններն արտահայտում են քերականական հարաբերություն (իմաստ): Դրվելով գոյականի կամ առարկայական դերանվան վրա՝ հետադրությունները ցույց են տալիս ստորադասական, կախյալ առնչությունը գերադաս բառի նկատմամբ:

Իրապես հետադրությունները թերիմաստ, սպասարկու, օժանդակ բառեր են, իմաստով հարում են մասնիկներին, իսկ անկախ գործածությամբ՝ լիիմաստ, նյութական իմաստ ունեցող բառերին, այսինքն՝ կարելի է անվանել բառ-մասնիկներ, որոնք սպասարկու դեր են կատարում լիիմաստ բառերի փոխհարաբերություններում:

Հետադրությունների ամենաբնորոշ գործառությունը պարագայի և խնդրի ստորադասական առնչության արտահայտումն է ստորոգյալի նկատմամբ: Այսինքն թուրքերենում ևս հետադրությունը ինքնին նախադասության անդամ չի կարող լինել: Դրանք միայն մասնակցում են նախադասության որոշակի անդամի (պարագա, խնդիր, որոշիչ, բացահայտիչ) ձևավորմանը[6]:

Չնայած որոշ դեպքերում կապերի և հոլովական վերջավորությունների դերի ընդհանրությանը, հետադրությունները չեն նույնանում և իրարից տարբերվում են ամենից առաջ նեղ իմաստով վերցրած, իբրև լեզվական միավորներ: Հետադրությունները նաև բառեր են և ունեն իրենց բառային ձևն ու իմաստը, որոնք գիտակցվում են նույնիսկ նախադասություններից դուրս[1]:

Ընդհանրացնելով նշենք, որ թուրքերենի հետադրությունները խոսքիմաստային կարգի մեջ մտնող բառեր են, որոնք՝

ա) <u>իմաստառանչողեն</u> բնորոշվում են նրանով, որ իրենք զուրկ լինելով նյութական իմաստից՝ արտահայտում են քերականական հարաբերություններ:

բ) <u>ձևաբանորեն</u> բնորոշվում են նրանով, որ դրանց մեծամասնությունը զուրկ է թեքման ձևերից, սակայն տարածական իմաստ արտահայտող հետադրությունների զգալի մասը հոլովվում է:

գ) <u>շարահյուսորեն</u> բնորոշվում են նրանով, որ առանձին նախադասության անդամ լինել չեն կարող: Դրանք միշտ գործածվում են գոյականների կամ գոյականական իմաստ արտահայտող բառերի հետ՝ ցույց տալով վերջիններիս գերադաս կամ խնդրառու լինելը բառերի նկատմամբ:

Պատմահամեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առհասարակ լեզվում գործող կապերը առաջացել են նյութական իմաստ ունեցող բառերից:

Թուրքերենի հետադրությունները լեզվաբանները դասակարգում են տարբեր հիմունքներով՝ իմաստաբանական, հոլովառության, դիրքային, ըստ սերման, կազմության, պատմական, կապակցման: Թուրքերենում ևս հետադրությունները (հետդիրներ) ունեն լայն կիրառություն: Արտահայտում են միջոցի, նպատակի, պատճառի և համեմատության հարաբերություններ:

Թուրք լեզվաբան Մ. էրգինը հետադրությունները բաժանում է երեք ենթախմբի.

a) **Ünlem edatları / ձայնարկություն- էդաքներ/**

Սրանք զգացմունք և հուզմունք, ուրախություն, վիշտ, նողկանք, ափսոսանք, խանդավառություն և նման հոգեվիճակներ արտահայտող բնական ձայներ, ձայնարկություններ, հաստատում, ժխտում, հարցում արտահայտող բառերն են: (օրինակ՝ <u>ünlemler</u> – **ah (ah), vah (vah), ay, oy, of, haydi... <u>seslenme edatları</u>- hey, ey, ya, yahu... <u>sorma edatları</u>- hani (haniye), acep (acaba), nite, nişe (niçin, nasıl)** և այլն):

b) **Bağlama edatları /կապական էդաքներ/** բառերը, բառային խմբերը և նախադասությունները իրար կապող հետադրություններ: Այսինքն այս խմբում Մ. էրգինը ներկայացնում է թուրքերենի շաղկապները[2]:

c) Բուն հետադրությունները Մ. էրգինի մոտ ներկայացված են երրորդ խմբում (**Son çekim edatları**), դրանք դիտարկվում են որպես տարբեր պա-

րագայական հարաբերություններ ծևավորող բառեր (İsimlerden sonra gelerek onların çeşitli zarf hallerini yaparlar)[9]:

Հարկ է նշել նաև, որ էրգինը հետադրությունները դասակարգում է ոչ միայն ըստ հոլովառության, այլ նաև ներկայացնում է հետադրությունների իմաստային դասակարգումը: Հետադրությունների արտահայտած հարաբերությունները բազմազան են: Դրանցից հատկանշականներն ու գլխավորները հետևյալներն են.

1. Vasita veya beraberlik edatları-

Միջոցի և միասնության հետադրություններ՝ ile(-la, -le), birle.

2. Sebep edatları

Պատճառի հետադրություններ՝ için, üzere (üzre), dolayı, ötürü (ötrü), naşi, diye և այլն:

3. Benzerlik edatları

Նմանության հետադրություններ gibi, bigi, tek և այլն:

4. Başkalık edatları

Բացառման հետադրություններ՝ başka, üzge, gayri և այլն:

5. Diğer hal edatlan

Այլ վիճակներ արտահատող հետադրություններ՝համապատասխանություն, պատկանելություն göre, nazaran, dair, ait, rağmen և այլն[10]:

6. Mikdar edatı

Չափ ու քանակի հետադրություններ՝ kadar, օգտագործվում են նաև արաբական ծագում ունեցող rütbe, mertebe, mikdar, derece բառերը:

7. Zaman edatları

ժամանակի հետադրություններ՝ beri, evvel, önce, sonra, geri և այլն:

8. Yer ve yön edatları

Տեղի և ուղղության հետադրություններ՝

kadar, dek, değin, doğru, dapa, yana, taraf, saru, sıra, içeri, üzre, ara, öte և այլն:

Վերջին ժամանակաշրջանի թուրք հեղինակների մոտ որպես հիմք ընդունվում են եվրոպական լեզվաբանության սկզբունքները, որոնք հետադրությունները /ilgeç/sontakı/ , այդ թվում և շաղկապները /bağlaç/ դիտարկում են որպես առանձին խոսքի մասեր:

ժամանակակից թուրք քերականագետ Ն. Քոչը հետադրությունները, համապատասխան իրենց կազմութան, տալիս է հետևյալ տարանջատումը՝

Yalın İlgeçler- պարզ հետադրութուններ՝ ancak, denli, diye, gibi, için, ile (-la, -le), kadar, olarak, sanki)

Yönelmeli İlgeçler- ուղղություն ցույց տվող՝ -a ait, -a bile, -a dair, -a değgın, -a değin, -a dek, -a doğru,-a göre,-a kadar, -a karşı, -a karşın, -a rağmen, -a kalırsa.

Çıkmalı İlgeçler-ծագում, սերում արտահատող՝-dan aşağı, -dan başka,-dan başlayarak,-dan beri, -dan bile, -dan dışarı, -dan dolayı, -dan itibaren, -dan önce, -dan öte, -dan ötürü, -dan sunra, -dan yana, -dıktan sonra, maden önce.

Bağlamalı İlgeçler-կապականություն ցույց տվող՝ -ın için, -m dibi, -ın kadar, -ın ile, -ınla

Eylem Çekim Ekleriyle Kullanılan İlgeçler-բայի խոնարհված ձևերի հետ կիրառվող -acak gibi, -acakmış gibi, -acak kadar, -ar (-er, -r, -ır, -ir, -ur, -ür) gibi, -dı gibi, -mış kadar, -sa bile, -yor gibi, - yorumuş gibi

Eylemsi Ekleriyle Kullanılan İlgeçler-դերբայների հետ կիրառվող հետադրություններ՝-acağı gibi, -dı ğı gibi, - acağı kadar, -dığı kadar, dı ğı için, --dığı üzere, - dı ğına göre և այլն[11]:

Թուրք լեզվաբան Հենգիրմենը հետդիրները բաժանում են 4 խմբի.

- Yalın durum isteyen ilgeçler - ուղղական հոլով պահանջող հետդիրներ
- Yönelme durumu isteyen ilgeçler- տրական հոլով պահանջող հետդիրներ
- Çıkma durumu isteyen ilgeçler - բացառական հոլով պահանջող հետդիրներ
- Tamlayan durumu isteyen ilgeçler - սեռական հոլով պահանջող հետդիրներ:

Թուրք լեզվաբան Ն. Քոչը այս շարքին ավելացնում է ևս երկուսը.

- Eylem çekim ekleriyle kullanılan ilgeçler - բայի խոնարհման ածանցների հետ օգտագործվող հետդիրներ
- Eylemsi ekleriyle kullanılan ilgeçler - բայական ձևերի /բայանուն, դերբայ, մակբայական դերբայ/ ածանցների հետ օգտագործվող հետդիրներ[12]:

Ինչ վերաբերում է թուրքերենի կապական կիրառության անուներին, ապա դրանք ինեց գորսուռույթով համապատասխանում են հայերենի անիսկական կապերին: Դրանք հարաբերության իմաստից բացի կարող են արտահայտել նյութական իմաստ և հոլովվել՝ ցույց տալով տարածական, ժամանակային և վերացական հարաբերություններ (դրանք են՝ alt, üst, aşağı, ön, etraf, hak (kı) bas, yü , sayı, karsı, iç, dıs):

ՕԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Stʻu Camep R., Logische Santax der Sprache, Wien, 1934, s. 207.
2. Реформатский А. А., Лингбистика и поэтика. М. 1987, с. 52.
3. А. Н. Кононов, Грамматика современного турецкого литературного языка, Москва-Ленинград, 1956, ст. 59:

4. N. Koç, Türk Dil Bilgisi, Istanbul, 1996, s. 229.
5. Ալ. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան, Թուրքերենի դասագիրք, Երևան 2004, էջ 45:
6. N. Koç, Türk Dil Bilgisi, էջ 229:
7. А. Н. Кононов,, Նշվ. աշխ , էջ 313:
8. Թուրքերենում գործող շաղկապները հիմնականում օտար ծագում ունեն և թուրքերենին անցել են այլ լեզուներից: Հիմնականում դրանք փոքր թիվ են կազմում: Կան նաև այլ խոսքի մասերից շաղկապներին անցած որոշ թուրքերեն բառեր(տես՝ M. Ergin, Turk Dil Bilgisi, Sofya, 1985, էջ 352):
9. M. Ergin, նույն տեղում, s. 218.
10. Այս հետադրությունները հայերենի նույն համապատասխանության կապերի գործառույթն ու իմաստն են արտահայտում (տե՛ս Մ. Ե.Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, էջ 402)
11. N. Koç, Türk Dil Bilgisi, էջ 230-237. Տե՛ս նաև F. Hepçilingiler, Türkçe Dilbildisi, Istanbul, 2004, էջ142-156.
12. N. Koç, Նշվ. աշխ, էջ 235-236:

ARMENO-TURCICA

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ Ն. ԱՂՈՆՑԻ ԵՎ Ա. ՋԻՎԵԼԵԳՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

1920 թ. օգոստոսի 10-ին եվրոպական դիվանագիտությունը ասպարեզ բերեց հայ ժողովրդի նկատմամբ իր «բարեհոգության» արտահայտություն հանդիսացող ևս մեկ փաստաթուղթ, որը շաղախված էր անորոշությամբ և, հատկապես Հայկական հարցում, զուրկ իրավագործվելու արտոնությունից:

Ասվածը հաստատելու համար անհրաժեշտ է վերլուծել Սևրի պայմանագրին նախորդող ժամանակահատվածը: 1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում բոլշևիկները իրականացրին անարյուն հեղաշրջում: Ամբոխային տրամադրություն ստեղծելու վարպետները շուտով լույս աշխարհ հանեցին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման, ավելի ճիշտ՝ Թուրքիային նվիրաբերելու դեկրետը: Նույն 1917թ. դեկտեմբերի 23-ին (դեկրետի ընդունումից վեց օր առաջ) Լլոյդ Ջորջը շարունակվող պատերազմի վերաբերյալ բնութագրող ու ծրագրային հայտարարություն արեց: Անգլիական կառավարության հիշյալ հայտարարությունը տրամաբանական պատասխան էր Լենինի կառավարության նույն թվականի նոյեմբերի 11-ի «Արևելքի աշխատավոր մահմեդականներին» ուղղված կոչի, որտեղ պրոլետարիատի առաջնորդը մոլեռանդ թուրքական ամբոխին զսպելու և դեպի իր կողմը գրավելու նպատակով՝ հայտարարում էր, թե պատռում է Թուրքիան բաժանելու բոլոր պայմանագրերը, առավել ևս՝ նրանից «Հայաստան խլելու» մտադրությունը: Հայկական հարցը լուծելու թաքուն և բացահայտ պայքարում հաղթանակեց բոլշևիզմը:

Աշխարհաքաղաքական փոփոխությունների առկայությունը նկատի ունենալով, դիրքերը չզիջելու, նոր ասպարեզներ նվաճելու վճռականությամբ՝ գործնական քայլերի դիմեց նաև ԱՄՆ-ը: 1918թ. հունվարի 8-ին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը Կոնգրեսում արտասանեց իր հայտնի, տասնչորս կետ պարունակող ճառը: Հաստատելով Անգլիայի վարչապետի տեսակետները՝ նախագահի ծրագրային ելույթը ամրակայում էր այն միտքը, որ Թուրքիայի հողային իրավունքները պետք է ճանաչել այն տարածքներում միայն, որոնք բնակեցված են թուրքերով, իսկ մնացած շրջանները, որտեղ բնակվում էին ուրիշ ազգություններ, ստանալու էին ազատություն: Բոլշևիկներին հակակշիռ քայլն արդեն պատրաստ էր: Թող այն տպավորությունը չստեղծվի, թե դիվանագիտական այդ պայքարում կենտրոնականը Հայկական հարցն էր: Խորացող հակամարտությունը ծնեց նոր փաստաթղթեր՝ Բրեստի և Բաքումի պայմանագրերը, որոնք, սակայն, թեև լռությամբ ընդունեցին «դաշնակից» պետությունները, բայց նրանք քայլ առ քայլ իրականացնում էին Անդրկովկասի նորանկախ պետությունների վրա քաղաքական ու տնտեսական գերիշխանություն հաստատելու իրենց խնդիրները:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց: Պարտված Թուրքիան սպասում էր մեծերի դատավճռին: 1918թ. հոկտեմբերին երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց, լուծարվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: 1918թ. հոկտեմբերի 30-ին դաշնակիցների ու Թուրքիայի միջև կնքվեց Մուդրոսի զինադադարը: Հայաստանի հանրապետության սահմանները ընդարձակվեցին՝ կազմելով 71 հազար քառակուսի կմ, հույսեր էին ծնվում Արևմտյան Հայաստանի ազատագրության համար, որովհետև մեծ տերությունները ակտիվորեն քննարկում էին Հայկական հարցը: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ՀՀ կառավարությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ կազմեց պատվիրակություն, որը մեկնեց Եվրոպա:

Հակակշիռ այդ ամենին՝ բոլշևիկներն ու թուրք քաղաքական գործիչները սերտացնում էին հարաբերությունները, որտեղ մեծ էր Էնվերի, Ջեմալի, Նազըմի, Բեհէդդին Շաքիրի դերը: Բեռլինում նույն ուղղությամբ էր աշխատում նաև Թալեաթը:

ՀՀ պատվիրակությունը (Ա. Ահարոնյան, Մ. Պապաջանյան, Հ. Օհանջանյան) Փարիզում հանդիպեց Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը և, համաձայնության գալով խաղաղության կոնֆերանս ներկայացրին համատեղ ծրագիր՝ Միացյալ Հայաստանի քարտեզով:

Թուրքիայի հետ ապագա պայմանագրի նախապատրաստմանն էր նվիրված Իտալիայի Սան-Ռեմո քաղաքում գումարված կոնֆերանսը, որտեղ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարներն ընդունում էին, որ պետք է ստեղծել միասնական հայկական պետություն, բայց չէին կարողանում որոշել, թե ինչպես պետք է կազմավորվի, պաշտպանվի և գոյատևի այդ պետությունը: Գերագույն խորհուրդը՝ ընդունելով Լ.Ջորջի նախագիծը, այն ներկայացրեց ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին՝ Հայաստանի մանդատը ընդունելու և ապագա պետության սահմանները գծելու առաջարկությամբ: Արդյունքում, 1920թ. ապրիլի 24-ին, ԱՄՆ-ը փաստացի ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ հունիսի 1-ին Սենատը՝ 23 կողմ, 52 դեմ հարաբերությամբ մերժեց Հայաստանի մանդատը:

Տեսնում ենք, որ Հայկական հարցի նկատմամբ ստեղծվել էր մեծ հետաքրքրություն, մեկ տարվա ընթացքում (1919-1920թթ.) այն լսվեց Փարիզում, Լոնդոնում, Սան-Ռեմոյում, արծարծվում էր թուրք-բոլշևիկյան բանակցություններում: Այս ամենը ոգևորիչ դեր էր խաղում: Կանխատեսվում էր լավագույն ապագա, բայց հայ քաղաքական գործիչները խորամուխ չէին (հնարավորությունների տեսանկյունից) մեծ ընդգրկում ներկայացնող միջազգային հարաբերություններին, որն էլ վճռորոշ դարձավ Հայկական խնդրի հետագա ճակատագրի հարցում:

1920թ. ապրիլի 26-ին, Ջեմալի՝ Լենինին ուղղված նամակով սկսվեց թուրք-բոլշևիկյան դավի նախապատրաստության առաջին փուլը, որտեղ որպես երաշխիք ապագա համագործակցության, Ադրբեջանը խորհրդայնացվեց: Սա ահազանգի դեր խաղաց դաշնակիցների համար:

Սկսվեց մի շրջան, երբ փորձարկվում էին նորաստեղծ պետությունների դիրքորոշումները: Քանի որ գործնական հողի վրա չէր տեղափոխվում դաշնակիցների ծրագիրը, ՀՀ կառավարությունը ժողովրդի ֆիզիկական գոյությունն ապահովելու նպատակով՝ բանակցություններ սկսեց բոլշևիկյան Ռուսաստանի հետ, որը որակվեց որպես ռուսասիրություն: Միայնակ թողնելով Հայաստանի հանրապետությանը՝ դաշնակից անվանյալները, բացի տնտեսական որոշակի օգնությունից, չդիմեցին որևէ գործնական քայլի դրանով իսկ նպաստելով թուրք-բոլշևիկյան մահացու հարվածի նախապատրաստմանը:

Ահա սրանք են Սևրին նախորդած ժամանակահատվածի նկարագրությունները, դիվանագիտական պատկերը, որը վճռորոշ դեր խաղաց մեծ աղմուկ ու ոգևորություն ծնած դաշնագրում: Պայմանագրի ստորագրումը տեղի ունեցավ 1920թ. օգոստոսի 10-ին՝ Փարիզի արվարձան Սևրում: Պայմանագրի երրորդ մասի վեցերորդ բաժնի 88-93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին:

Հայաստանը հռչակվեց Ազատ և Անկախ պետություն, Թուրքիան ճանաչեց հայկական պետության գոյությունը, դաշնակիցների կողմից գծված նրա սահմանները: Դաշնագրի գործադրումը, որ ըստ նախատեսվածի, գործի պիտի դրվեր ստորագրելուց երեք ամիս հետո, հետաձգվեց մինչև վեց ամիս, իսկ վերջնական արդյունքում այն մոռացության մատնվեց: Մոռացության մատնելու հիմքը դրվել էր նույն օգոստոսի 10-ին, մինչև պայմանագրի ստորագրումը, երբ գլխավոր հորջորջվող պետությունները մի առանձին պայմանագիր ևս ստորագրել պարտադրեցին հայկական պատվիրակությանը, որի իմաստը Հայաստանի վրա հսկողության սահմանում էր, ասել է՝ մեծերը շնորհ կատարելով Հայաստանին, բոլորովին էլ մտադրություն չունեին ապահովել և վկան լինել նրա բացարձակ անկախության ու ազատության:

1920թ. նոյեմբերի 22-ին, ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ կատարվել է սահմանագծման աշխատանքը: Ազատություն էին ստանում Արևմտահայաստանի էրզրում, Տրապիզոն, Վան եւ Բիթլիս վիլայեթներից առանձնացված 90 հազար քառ. կիլոմետր տարածքները, որոնք միանալով՝ Արևմտյան Հայաստանի արդեն ազատագրված շրջանների հետ կազմելու էին 161.330 քառ.կմ ընդհանուր տարածք:

Թվում էր, թե հայ ժողովրդի քսանական թվականների սերունդը լուծում էր ազգային գերխնդրի զգալի մասը: Բայց դա արտաքին տպավորություն էր, որովհետև թուրք-բոլշևիկյան գնալով ընդարձակվող կապերին խանդոտ նայող մեծերը, Թուրքիայից «կորզելով» բոլշևիզմի դեմ պայքարի խոստում և պատճառաբանելով, որ Հայաստանն արդեն անկախ չէ, որ հաստատվել է խորհրդային բռնատիրություն, հրաժարվեցին պայմանագիրն ի կատար ածելուց թույլ տալով մեծագույն դավաճանություն:

Ավելի՛ն, թե՛ գծված սահմանները, թե՛ դեպի ծով ելք տրամադրելը այդ օրերին արդեն անհավանական էին թվում, անհավանական այնքա-

նով, որ չդժգոհելով մեծերի քաղաքականությունից, թուրքական ներկայացուցիչը հիշեցրեց, թե դեպի հարավ Հայաստանի ընդարձակման անհրաժեշտություն չկա այսինքն՝ մեր դարավոր թշնամին այդ պահին արդեն ճիշտ էր ընկալել, որ հետաձգվող սահմանագծումն ունի միայն մեկ նպատակ՝ սպասել բոլշևիկների գործողություններին, և եթե հայությունը նորից կնախընտրի ռուսական կողմնորոշումը, ապա հրաժարվել պայմանագրից, փոփոխել այն և կարմիր Ռուսաստանի դեմ դուրս բերել նեղուցների պահակ Թուրքիային՝ զսպելով կարմիր հրեշի ծավալումը:

Այս ամենն արդյունքն էին ուժերի նոր տեղաբաշխման, տերությունների աշխարհաքաղաքական նոր ուղղությունների հստակեցման, գերիշխանության նոր տարածքներ նվաճելու քաղաքականության, որոնց խաչմերուկներում, արդեն քանիերորդ անգամ, խճճվում և լաբիրինթոս էր նետվում Հայկական հարցը: Այս գործում իրենց ավանդը ներդրեցին նաև ազգային գիտակցությունը կորցրած հայ բոլշևիկները, որոնք Թուրքիայի հետ կնքված պայմանագրով հրաժարվում էին Սևրի դաշնագրից և այն որակում նոր «տառապանք»:

Սևր Դաշնագրի պատմական մեծ ծառայությունը Հայկական հարցին այն էր, որ մեծերը պաշտոնապես ճանաչեցին իր Հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները:

Իրականության այդպիսի ընկալում ունեին նաև ժամանակակից հայ գործիչներից շատերը: Ոգևորության ընդհանուր պատկերի վրա կատարվում էին սթափ վերլուծություններ, կանխատեսումներ, Հայկական հարցի ճակատագրի նկատմամբ խորիմաստ եզրահանգումներ: Նշանավոր պատմաբան Ն. Ադոնցը ևս կիսում էր համակված ոգևորությունը, սակայն վերապահումներով. «Թուրքիայի ճակատագիրը վճռված է: ...Օսմանյան կայսրությունը, անկասկած, կործանված է: Նա ստացավ պատիժ, որին լիովին արժանի էր: Վերջապես Եվրոպան քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջապես խորտակելու, գեթ դուրս քաշելու թունավոր սողունի ատամները, որին նա դարեր շարունակ սնուցել էր իր իսկ սեփական քաղաքակրթության կրծքին», սակայն այդ ամենը չեն կարող գեթ սփոփանքի դեր խաղալ այն անլուր տառապանքների համար, որին ենթարկվեց հայ ժողովուրդը: Իսկ դաշնակիցները ոչինչ չարեցին «իրենց կրտսեր եղբոր՝ հայերի նկատմամբ», «ոչ մի միջոց ծեռք չառնվեց հրով ու սրով ցանուցիր արված հայերին» օգնելու համար: Հակառակ սպասվող խոստումներին, «Հայաստանի սահմանների կարևորագույն հարցը գործնականում բայց է մնում», «Սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև նույնպես մնում է չորոշված», և այդ ամենի արդյունքում՝ «Հայկական հարցի լուծումը, փաստորեն հետաձգված է... Հայաստանը, որ ասես եռացող կաթսա լիներ թուրքական հնոցում, կրկին դատապարտված է սպասելու»[1]:

Պատասխանելով իր իսկ առաջադրած ինչուներին, Ն. Ադոնցը բացառում է որևէ արգելք, որը կարող էր խոչընդոտել լիարժեք լուծում տալու Հայկական հարցին: Սակայն ամենազավեշտալին այն է, որ փոխա-

նակ արդարացի լուծում տան բազմաչարչար հարցին, դաշնակից հորջորջվողները խուսանավելու ընդարձակ ասպարեզներ բացեցին Թուրքիայի համար և ամենադավաճանական քայլը՝ Հայկական տարածքների վրա տեղակայեցին Քրդստան հասկացությունը: «Ապշեցուցիչ հարված» անվանելով եվրոպական դիվանագիտության հորինվածքը, Ն. Ադոնցը այդ նորամուծությունը համարում է թուրքական կառավարության քաղաքականության ընդօրինակում, նրա՝ Հայաստանը քրդացնելու ծրագրի իրագործում: Մեծ եղեռնը, հայրենիքի կորուստը ուրիշ ոչինչ չի նշանակում, եթե ոչ հայության նկատմամբ թուրք եվրոպական դաժան քաղաքականության իրականացում, որն ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ նաև «ժողովրդի հոգեկան բնաջնջում, որն ավելի ծանր է, քան նյութականը»[2]:

Քննելով հայրենիք հասկացության սկզբունքները, հայրենիքը համեմատելով կենդանի օրգանիզմի հետ, վիճակագրական ու մարդկային գործոնների քննություն կատարելով, վերլուծելով հայերի ռուսական կողմնորոշման դրդապատճառները, հայտնելով, որ քաղաքական այդ դիրքորոշումը եվրոպական դիվանագիտության պարտադրված քայլն էր, նրանց՝ հայերին իրենցից հեռացնելու քաղաքականության արդյունքը, Ն. Ադոնցը պատասխանում է Հայկական հարցի նկատմամբ տերությունների վերաբերմունքի հիմնական պատճառը. «Այն պահից, ինչ հայկական հարցը բարծրացավ, այդ երկիրը Եվրոպայի աչքին հանդես եկավ որպես մի մուրացկան, որը հովանավորություն է աղերսում իր բուն ֆիզիկական գոյության համար: Թերևս այդ պատճառով էլ եվրոպական դիվանագետները գտնում են, որ որևէ մի նվեր, լինի դա թեկուզ երկու կամ երեք վիլայեթ, լիովին բավական է մի մուրացիկ ժողովրդի համար[3]» Սակայն այդպես չէ իրականում: Հայերը, որ կրել են պատմական ճակատագրի դաժան հարվածները, երազել են իրենց մարդկային իրավունքների վերականգնմանը, «ինքնորոշման իրավունքի», «ազգային բաղձանքների» իրականացմանը, որին հասնելու համար փնտրել են գործակից ու դաշնակից, բայց ոչ մուրացկանություն. ավելին. «Հայաստանը կարիք ունի ոչ միայն աշխարհագրականորեն կլորացված սահմանների, այլ մշակութային դրացիության», ինչը համաշխարհային քաղաքակրթությանը ծառայելու հայերի բնածին հատկությունն է: Սակայն կատարվեց բոլորովին անսպասելին: Դաշնակիցները, որ նախագահ Վիլսոնի հետ միասին «քաջատեղյակ են Հայկական հարցին», այն լուծելու բոլորովին հակառակ ուղին ընտրեցին, «դաշնակիցների դիվանագիտությունը այլ կերպ գործեց և Հայաստանը դրեց անտանելի դրության մեջ: Երկիրը շրջապատվեց անքաղաքակիրթ մահմեդական պետությունների օղակով: Արևմուտքից Թուրքիայի և արևելքից Պարսկաստանի մերձավորությունը անբավարար թվաց, ուստիև թաթարական Ադրբեջանն ու Քրդստանը ստեղծվեցին հյուսիսում և հարավում»[4]:

Այստեղից էլ, Սևրի պայմանագիրը ոչ միայն չլուծեց Հայկական հարցը, այլ առավել խճճված վիճակ ստեղծեց հայ ժողովրդի համար, ժողովուրդ, որ դարեր շարունակ մաքառելով բռնատիրությունների դեմ,

ծգտում էր «ազատ և անկախ երկրի համար, բայց ոչ ցերեկվա լույսից փակ բանտի համար, բանտ, որին հսկում են թուրքերը, թաթարները, քրդերը և նրանց բարեկամները»[5]:

Միևչդեռ, դաշնակիցները Սևրի ընդարձակ սրահներում եթե մտահոգ էին հայերի ռուսական կողմնորոշման հարցում, ապա «ի զորու էին մեկընդմիշտ վերջ տալու հայկական ծգտմանը դեպի հյուսիս, խարխլելով դրա պատմական հիմքերը: Սակայն նրանք ավելի լավ բան չմտածեցին, քան սեղմել Հայաստանը մահմեդական պետությունների շրջանակի մեջ,,,»[6]:

Հիասթափությունը, պատմական անարդարությունը ժամանակավրեպ հասկացություններ են: Պատմական ճշմարտությունը երբեք չի կարող մոռացության մատնվել: Այն կբարձրանա նվաստացված վիճակից, քանզի քաղաքակիրթ մարդկությունը չի կարող ուրանալ մի ժողովրդի արդար դատը, որը ուրիշ ոչինչ չէ, քան մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների պաշտպանություն: Եվ, իբրև գալիքի կանխատեսում Ն. Ադոնցը եզրափակում է. «Հայկական հարցը վաղուց դադարել է սոսկ հայկական լինելուց: Այն ժամանակակից մարդկության գիտակցության հարցն է... Հայ ժողովուրդը դեռևս խեղդվում է արյունից ու անհամբեր սպասում է անկողմնապահ իրավացի վերջնական վճռի մի ակտի մասին, որն ստորագրել են դաշնակիցները՝ կանգնած մեկ միլիոն նահատակված հայերի դիակների վրա»[7]:

Ն. Ադոնցի վերլուծությունները քաղաքական շահամոլության ետևից վազող դիվանագիտության արդարացի գնահատականները լինելուց բացի, առօրյական են նաև: Առօրյական, քանզի Հայկական հարցի նկատմամբ ուրացության խորհրդանիշ Սևրի պայմանագիրը ուսանելի դաս է, քննադատական վերլուծության ուսուցանող ծեռնարկ, ապացույցը այն բանի, որ 87 տարի առաջ լույս աշխարհ եկած պայմանագիրը, Նրա կերտողները այսօր էլ շարունակում են նույն քաղաքականությունը, առանձնացում չտեսնելով քաղաքական պարտադրանքների ու զարգացումների մեջ, միևչդեռ ժողովուրդների պատմական ճակատագիրը երբեք չի կորցնում իր հիշողությունը և հակված է սրբագրելու այն անարդարությունները, որոնք բանտ են ստեղծում մի ժողովրդի համար, որն ինչքան էլ հեռանում է անցյալից, այնքան պարզ ու հստակ է ընդգծում հայրենիք հասկացության գաղափարը:

Հայկական հարցը, նրա նկատմամբ տերությունների ու հատկապես Ռուսաստանի վերա- բերմունքի խնդիրները, բազմաչարչար խնդրի վերաբերյալ պայմանագրերի քննությունները առանցքային տեղ են զբաղեցնում Ա. Ֆիվելեգովի ուսումնասիրություններում[8]:

1817-1920 թթ. իրադարձությունները քննելով ժամանակակցի տեսանկյունից Ա. Ֆիվելեգովը յուրահատուկ մեկնաբանություն է տալիս Հայկական հարցին, գրելով, որ այն ծագել է պետական բարձր քաղաքականության նկատմամբ հայերի վերաբերմունքից, երբ «հայերը հրաժարվում են համբուրել այն ծեռքը, որը նրանց հարված է հասցնում»[9]:

Հայերի նկատմամբ Թուրքիայում և Ռուսաստանում իրականացվող հալածական քաղաքականությունը արդյունք է հայերի հայրենիքը զավթելու ծրագրի: Եվ որպեսզի այն իրականանար, անհրաժեշտ էր թուրքացնել կամ ռուսականացնել բնիկ ժողովրդին: Տնտեսական շահն ընդունելով գործունեության ուղենիշ, Եվրոպական տերությունները ականատեսն ու վկան լինելով այդ քաղաքականության, ոչ միայն օգնության ծեռք չեն մեկնում հայերին այլև մտնելով խորը հակասությունների մեջ, գերադասելով թե՛ Ռուսաստանում, թե՛ Թուրքիայում ազդեցության ամրացման ընթացքը քաղաքակիրթ ժողովրդին փրկելու միջոցառումներ իրականացնելուց, իրենք են դառնում հայերի դժբախտությունների հիմնական պատճառները արմատավորողները: Այդպես շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտը: Չհավատալով, որ 1914 թ, ռուս-թուրքական համածայնագիրը բարեհաջող ավարտ կունենա, Ա. Չիվելեգովը կանխատեսում էր, որ այդ արծանագրությունը թաքնված հնարավորություն էր տալիս թուրքերին սրով լուծելու հայերի ճակատագիրը[10]:

Բազմակողմանի քննելով Հայկական հարցի լուծման ուղիները, Ա. Չիվելեգովը հանգում էր այն կարծիքին, որ խնդրի լուծման միակ տարբերակը ինքնավարությունն է: Եթե այն կարելի էր իրականացնել մինչև 1915 թ., ապա դրանից հետո անիմաստ է մտածել այդ ուղղությամբ, որովհետև Գերմանիայի հովանավորությամբ բնաջնջելով հայությանը, թուրքական պետությունը իրականացրեց իր վաղեմի երազանքը[11]:

Առաջին աշխարհամարտն ավարտվեց և հայերը, որ միլիոնավոր զոհեր էին տվել, հույս ունեին, թե կստանան «համապատասխան քաղաքական հատուցում»[12]:

Կիսելով ռուս քաղաքագետ Մ. Կովալևսկու միտքը՝ «Հայկական հարցը մեծ է և դժվարին», Ա. Չիվելեգովը քննելով ասվածի իմաստը, եզրակացնում է, որ հայերը լինելով «ռուս-թուրքական քաղաքականության զոհերը», հույս չեն կարող կապել նաև բոլշևիկյան Ռուսաստանի հետ, որը հրապարակելով Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին դեկրետը, փաստորեն այնքան դժվարությամբ նվաճված Հայաստանը վերադարձնում է Թուրքիային[13]:

Հայկական հարցում իրադարձությունների զարգացման կիզակետը Սևրի պայմանագիրն էր: Եթե սկզբում Ա. Չիվելեգովը շատերի նման հույս ուներ, թե վերջապես լուծում կստանա խնդիրը, սակայն պայմանագիրը իր բովանդակությամբ ու անիրականանալի միտումներով խոր հիասթափություն ծնեց, ինչն էլ Ա. Չիվելեգովին իրավունք էր տալիս պատկերավոր գնահատական տալ նրան. «Սևրի պայմանագրի որոշումները, պարզվեց փխրուն են, ինչպես սևերյան ճենապակին»[14]: Հայկական հարցում այն զուրկ էր իրական քայլ կատարելու հնարավորությունից, որովհետև այն ստորագրող տերությունները ոչ թե անհանգստանում էին հայերի ճակատագրով, այլ իրենց «իմպերիալիստական շահերով»[15]:

Եվ այսպես միջազգային դիվանագիտության գզրոցներում իր տեղը գրավեց Հայկական հարցի հետ կապված ևս մեկ պայմանագիր, որի

զորությանը այնքան հավատում էր հայ ժողովուրդը: Տառապանքների բովով անցած հայությունը չէր էլ կարող մտածել, որ դաշնակիցները, որոնց հաղթանակին այդքան զոհեր էր մատուցել, մոռացության կմատնեն իրենց արդար դատը: Այդքանը դեռ բավական չէր, նույն դաշնակիցներն ու բոլշևիկյան Ռուսաստանը նախածեռնեցին ու կազմակերպեցին Լոզանի շքահանդեսը և ուրանալով իրենց իսկ ստորագրած պայմանագիրը, վավերացրեցին հանրապետական հորջորջվող Թուրքիայի ծննդյան վկայականը:

Երիցս ճիշտ էր Ա. Ահարոնյանը, երբ մեկնաբանելով եվրոպական ու ռուսական դիվանագիտության դավաճանությունը, գրում էր. «Մեր լեռների վրա ծյունն ավելի ծանր էր, քան մեր լեռների տարողությունը: Մեր լեռների ծյունը չէր միայն մեր վրա թափվողը, այլ ամբողջ աշխարհի ծյունը: Մեր ծյունը շատ ծանր եղավ մեր ժողովրդի ցավը ծանր եղավ, մեր մեջքը խորտակվեց և երկրե երկիր ընկանք: Ժամանակն է, որ խորհենք, իրար հասկանանք»[16]:

Իրատեսական խորհուրդ, որն այսօր էլ օրապահանջ է և ուսանելի:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 12, 13, 16, 17:
2. Նույն տեղը, էջ 15, 19:
3. Նույն տեղը, էջ 24:
4. Նույն տեղը, էջ 26:
5. Նույն տեղը, էջ 33:
6. Նույն տեղը, էջ 33:
7. Նույն տեղը, էջ 33:
8. Զ. Կիրակոսյան, Алексей Дживелегов и его историко-публичистическое наследие, Երևան, 2007:
9. Նույն տեղը, էջ 74:
10. Նույն տեղը, էջ 115:
11. Նույն տեղը, էջ 143, 163:
12. Նույն տեղը, էջ 225:
13. Նույն տեղը, էջ 232:
14. Նույն տեղը, էջ 247:
15. Նույն տեղը:
16. Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Երևան 2001, էջ 117:

ԹՈՒՐՔ ԱՐՁԱԿԱԳԻՐ ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արշավը եւ Թուրքիայի եվրահնտեգրման գործընթացը նպաստում են թուրքական պետությունում Հայոց ցեղասպանության հիմնահարցի շուրջ հասարակության իրազեկության մակարդակի բարձրացմանը: Վտարանդի թուրք սոցիոլոգ, պատմաբան Թաներ Աքչամը «Հայկական տաբուն վերանում է. երկխոսությունն այլընտրանք ո՞ւնի» խորագրով հրապարակման մեջ այս առիթով նկատում է. «Ասես թուրք հասարակությունը սկսում է լրջորեն հետաքրքրվել իր խնդիրներով: Հայկական հարցի շուրջ մամուլով եւ գիտական շրջանակներում աննախադեպ ողջամտությամբ քննարկումներ են կազմակերպվում»[1]:

Այս պայմաններում աստիճանաբար տեղի են տալիս թուրքական պետության ներսում ձեւավորված բազմամյա տաբուները: Դրան զուգընթաց թուրքական իշխանությունները հետզհետե ավելի են դժվարանում ճնշել ժողովրդավարության թեկուզ եւ դանդաղ զարգացումը երկրում: Այդ մասին կարող են վկայել թուրքական մամուլում հայկական հարցի շուրջ համեմատաբար ազատամիտ հրապարակումների թվի տարեցտարի ավելացումը, Ստամբուլի «Բիլգի» համալսարանում Հայոց եղեռնի թեմայով գիտաժողովի անցկացումը 2005թ-ի սեպտեմբերին, ժխտողական գրականության կողքին հայկական հարցով պատմական եղելությունը արտացոլող պատմագիտական աշխատությունների եւ գրականության տպագրության աստիճանական ծավալումը: Իհարկե թուրքական ազգայնականությունը այս պայմաններում շարունակում է բավական հիմնավոր դիրքեր զբաղեցնել եւ իշխել ներքաղաքական կյանքում, մեծ դեր ունենալ հասարակական հարաբերությունների մեջ, ինչի ամենահիմնավոր վկայությունը թերեւս «Ակոսի» խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությունն էր 2007թ-ի հունվարի 19-ին:

Թուրքական ազգայնականությանը եւ մերժողականությանն իր հերթին ազդեցիկ հարված հասցրեց թուրք արձակագիր, գրականության ոլորտում Նոբելյան մրցանակի 2006թ-ի դափնեկիր Օրհան Փամուքը: 2005թ-ի փետրվարին շվեյցարական Ցյուրիխ քաղաքում լույս տեսնող «Թագես անցեյգեր» հանդեսի «Դաս Մագազին» հավելվածին տված հարցազրույցում նա հայտարարեց. «Մենք 30 հազար քուրդ եւ 1 միլիոն հայ ենք սպանել: Թուրքիայում ոչ ոք այս մասին չի համարձակվում ասել, իսկ ես ասում եմ»: Փետրվարի 9-ին թուրքական «Հյուրիեթ» օրաթերթի հրապարակումից հետո Փամուքի ելույթի մասին հայտնի դարձավ Թուրքիայում:

Երկրի պետական եւ պետականամետ շրջանակներն ու ազգայնա-

կանները նախածեռնեցին սուր արշավ Փամուքի եւ նրա ազատամտության դեմ: «Հյուրիեթ», «Թերջյուման», «Վաքան», «Ջաման», «Օրթադողու», «Ենի շաֆաք», «Ենի չաղ» թերթերում գրողի դեմ լուրս տեսան հրապարակումներ:

Էրզրումի համալսարանից էրոլ Քյուրքչյուօղլուն պնդում է, թե «Փամուքի հայտարարությունը հիմնված չէ որեւէ պատմական փաստաթղթի վրա»[2]: Քյուրքչյուօղլուն ավելի վաղ, թուրքական մամուլին հայտարարել էր, թե «ՀՀ սահմանադրության մեջ առկուս են Կարս, Արդահան, Աղրը շրջանների հանդեպ տարածքային հավակնություններ»: Թերեւս թուրք «պատմաբանը» լիարժեք պատկերացում չունի հայկական սահմանադրության վերաբերյալ կամ դիմում է միտումնավոր զեղծարարության, քանի որ նման կետ ՀՀ սահմանադրությունը չի պարունակում:

Թուրքիայի Պատմության ինստիտուտի Հայկական բաժանունքի ղեկավար Հիքմեթ Օզդեմիրը Փամուքի հայտարարությունը որակեց իբրեւ «մեծ սուտ», իսկ Բոսֆորի համալսարանի պատմության ֆակուլտետի ղեկավար Հալուք Ինալջըքը նշում էր, թե «Թուրքիայի հասցեին մեղադրական ելույթը Փամուքին վայել չէր»[3]: Թուրք գործարար Մեթե Քալյոնջուի տեսակետով, Փամուքն այս հայտարարությունը կատարել է ինքնագովազդի իր «Ձյունը» վեպի գերմաներեն տպագրության վաճառքն ապահովելու նպատակով[4]: Փամուքի համադասարանցի, ամերիկյան «Թըրքիշ ֆորում» տեղեկատվական հանգույցի խորհրդական էրգյուն Քըրլըքովալին համացանցով տարածած իր մի հրապարակման մեջ նշեց, թե «պմաչում է այն բանի համար, որ 1966-70թթ-ին ուսանել է Փամուքի հետ»[5]:

Գրողի դեմ Թուրքիայում ծայր առավ նաեւ դատական հետապնդման գործընթաց: Վերըննչյալ գործարար Քալյոնջուն հայց հարուցեց Ստամբուլի Շիշլի թաղամասի դատարանում, նույն թաղամասի առաջին ատյանի դատարանում հայց էր ներկայացրել Թուրքիայի իրավաբանների միութան վարչական խորհրդի անդամ Քեմսլ Քերինչսիզը: Նա գտնում էր, որ գերմանական «Դի Վելթին» տված մեկ այլ հարցազրույցում Փամուքի հատարարությունն այն մասին, թե «Թուրքիայի ժողովրդավարացմանը խոչընդոտում է բանակը» վիրավորում է թուրք զինվորի արժանապատվությունը[6]: ANASAM - «Անատոլիայի գիտության եւ գրականության արժեքները տնօրինողների արհեստակցական միություն» կազմակերպությունն իր կողմից դատ էր հարուցել Կայսերի քաղաքի դատարանում: Փաստաբան Մեհմեթ Ուչոքի կարծիքով, «Փամուքը ներգրավվել է ընդդեմ Թուրքիայի քրդական զինյալ պայքարն իրականացնող Քրդական բանվորական կուսակցություն/Կոնգրա Գելի եւ սփյուռքահայության քարոզարշավում»[7]:

Փամուքի դեմ ազգայնական հարձակումների «թագն ու պսակը» կարող էր համարվել Թուրքիայի Ընպարտա նահանգի Սյութչյուլերի գավառապետ Մուստաֆա Ալթընփընարի հրահանգը Փամուքի գրքերը գավառի գրախանութներից ու գրադարաններից հավաքելու եւ այրելու վե-

րաբերյալ: Միակ պատճառը, թե ինչու նացիստական ոճով արձակված հրամանն ի կատար չածվեց այն էր, որ գավառային ոչ գրադարաններում ու ոչ էլ գրախանութներում Փամուքի ոչ մի գիրք չկար[8]: «Այս պատահականության պատճառով Թուրքիայում կանխվեց գրքերի ցեղասպանությունը», նկատում է մեկ այլ լրագրող[9]: Ավելի ուշ Եվրամիություն-Թուրքիա համատեղ խորհրդարանական հանձնաժողովի համանախագահ Յուսք Լագենդայկը մտահոգություն հայտնեց, որ Թուրքիայի կառավարությունը ձեռնպահ մնաց գավառապետի հայտարարության հստակ դատապարտումից[10]:

Թուրք արձակագրին սատարող հրապարակումներն իրականում առավել փոքր թիվ կազմեցին. «Միլիեթի» թղթակից Հասան Ջեմալը զուգահեռներ է անցկացնում Փամուքի դեմ արշավի եւ Հումեյնիի «Սատանայական բանաստեղծությունների» թարգմանիչ Սալման Ռուշդիի դեմ Սըվազ (Սեբաստիա) քաղաքում մահափորձի նախադեպի միջեւ: «Հայրենիքի դավաճանության պատրվակով կախաղա՞ն է բարձրացվելու Փամուքը», գրում էր Ջեմալը: Հրապարակախոսը նաեւ կոչ է անում չմոռանալ, որ «Օրհան Փամուքը պատահական անձ չէ, այլ Թուրքիայի ամենաանվանի վիպասանը»[11]:

Փամուքին սատարեցին Թուրքիայի իրավապաշտպաններն ու մի քանի ոչ կառավարական կազմակերպություն: Ստամբուլի մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունում տեղ գտած միջոցառմանը տվյալ ժամանակահատվածում կառույցի ղեկավար էրեն Քեսքինը հայտարարեց, որ Փամուքի դեմ հարձակվողները դեմ են Թուրքիայի ժողովրդավարացմանը: «Ժողովրդավարացումն անհնար է առանց պատմության հետ հաշվի նստելու: Ժողովրդավարացման առաջին նախապայմանն է ազատ քննարկումների միջավայրի ապահովումը», նշեց նա:

Իսկ Մարդու իրավունքների լիգայի միջազգային ֆեդերացիայի անդամ Աքին Բիրդալն իր հերթին հայտարարել էր, որ «Օրհան Փամուքի դեմ հարձակումները հանդիսանում են հարձակում ազատ մտքի դեմ»[12]: Թուրք գրողին աջակցեցին նաեւ Թուրքիայի հրատարակիչների միության ղեկավար Մեթին Չելալը, Թուրքիայի գրադարանավարների միության ղեկավար Ալի Ֆուաթ Քարթալը[13]:

Թուրք արձակագրին սատարող հայտարարությամբ հանդես եկավ նաեւ «Աբանոզը» համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս Հալիլ Բերքթայը: «Օրհան Փամուքի քայլը արժանապատվության եւ համարձակության տեսանկյունից չափազանց կարեւոր եմ համարում: ... Վերջին ժամանակներում Թուրքիայի եվրոպականացման նպատակով ժողովրդավարական կառույցների ձեւավորման իմաստով զգալի աշխատանք է տարվել: Բայց ժողովրդավարացումն ավելի շատ տեղի է ունենում ինստիտուտների ձեւավորման հարթության վրա: Ժողովրդավարության մշակույթը դեռ լուրջ տարածում չի գտել:... 1915-1916թթ-ին գուցե 800 հազար հայ է սպանվել, գուցե՝ 1 միլիոն: Երբ նախկինում, որպես

պատմաբան, այդ մասին հայտարարում էի, ինչպես Փամուքն այս օրերին, ես եւս ենթարկվում էի մոլեռանդ ազգայնականների հարձակումներին»[15].- նշեց Բերքթայը: Ի պաշտպանություն իրենց գրչակցի հայտարարությամբ հանդես եկան նաեւ արդի գրական աշխարհի խոշորագույն ներկայացուցիչներ Գաբրիել Գասիա Սարկեսը, Խոսե Սարամագոն, Գյունտեր Գրոսը:

Արդի Թուրքիայի լավագույն հեղինակներից մեկի հանդեպ «խաչակրած արշավանքը» կամ ավելի ճիշտ «ջիհադը» շատ արագ դարձավ գործոն Եվրոպա - Թուրքիա բանակցային գործընթացում: Եվրահանձնաժողովի Անկարայի ներկայացուցիչ Հանսյորգ Քրեշները մտահոգություն հայտնեց, առ այն, որ «որեւէ բարձրաստիճան պաշտոնյա հրապարակայնորեն չքննադատեց կամ չփորձեց միջամտել Օրհան Փամուքի դեմ ուղղված սպառնալիքներին»[16]: Եվրախորհրդարանում ընթացավ ստորագրահավաք ի պաշտպանություն աշխարհահռչակ գրողի: Թեման թերեւս սպասվածից ավելի մեծ շրջանառություն ունեցավ համաշխարհային մամուլում: Ավելի ուշ տվյալ շրջանում արտգործնախարար, Թուրքիայի ներկայիս նախագահ Աբդուլահ Գյուլը հայտարարեց, թե «Փամուքի շուրջ միջազգային նման արձագանքի մեղավորը լրագրողներն էին»: Օրհան Փամուքի դատը տեղի ունեցավ 2005-ի դեկտեմբերի 16-ին, հետաձգվեց մինչեւ 2006-ի փետրվարի 7-ը, ապա հունվարի 23-ին արդարադատության նախարարի միջամտությամբ՝ դատը փակվեց: Այս պայմաններում Օրհան Փամուքը հայտարարեց, որ այլեւս չի զբաղվելու ազգային հարցերով: Սակայն ավելի ուշ «Սաբահին» տված հարցազրույցում նա վերահաստատեց իր մոտեցումը. «Երբ խոսում եք մութ պատմությունների կամ լուրջ բաների մասին այնպիսի բաներ, որ շատերը չէին ցանկանա լսել, ապա պետք է դրա դիմաց հատուցեք: Բայց ես չեմ ափսոսում: Ես ասացի այն ինչ գիտեի եւ ինչին որ հավատում էի: Եւ այսուհետ եւս պետք է ասեմ», հայտարարեց գրողը[18]:

Հետագայում, այն բանից հետո, երբ թուրքական լրատվամիջոցները հաղորդեցին, թե գրողն իբր հրաժարվել է նախկինում կատարած իր հայտարարությունից Օրհան Փամուքը վերստին անդրադարձավ հարցին: Ֆրանկֆուրտում Գերմանիայի գրողների միության մրցանակը ստանալու օրերին նա նշեց. «Հայկական հարցով իմ ասած խոսքերում հետեւողական եմ»[17]: Իսկ մոտ մեկ շաբաթ անց Նիդեռլանդներում իր գրքերից մեկի ֆլամանդերեն թարգմանության կապակցությամբ այցին, հայտարարեց, որ «հայկական ջարդերի թեման առայսօր Թուրքիայում արգելված թեմա է» եւ «եթե Թուրքիայում շարունակեն աճել ազգայնական տրամադրությունները, պատրաստ է հեռանալ այնտեղից»[18]: Բրիտանական BBC-ին տված հարցազրույցում հայկական թեմայով գրողը նշեց, որ «Թուրքիայում նոր եմ սկսում խոսել Հայկական հարցի մասին, եւ այն նոր է դադարում տաբու լինել»:

Ինչպես գրողն, այնպես էլ Թուրքիայում նրա գրքերի հրատարակությամբ զբաղվող «Իլեթիշիմ» հրատարակչատունը փետրվարյան հայ-

տարարությունն անելուց ի վեր սպառնալիքներ են ստացել[19]:

Ընդ որում Օրհան Փամուքն առաջին անգամը չէ որ դատապարտում է «թուրքական տաբուները»: Ստամբուլի մարդու իրավունքների կազմակերպության կողմից հրատարակված հատորյակում գրողը ժամանակին դատապարտել էր պոլսահայերի իրավունքների ոտնահարման փաստերը: Իսկ 2004թ-ին Եվրոպայի եւ Թուրքիայի «Կանաչների» կողմից «Եվրահանճնաժողովի զեկույցը եւ Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու մասին որոշումը» թեմայով Ստամբուլում կազմակերպված հավաքի ժամանակ նա հայտարարել էր. «Պետք է վերջ տրվի 30 հազար մարդու կյանք խլած թուրք-քրդական առճակատմանը եւ ուսումնասիրվեն դրա պատճառներն ու հետեւանքները, քանի որ միայն այդպես կարելի է հասնել Եվրոպայի նախանշած ազատություններին եւ ժողովրդավարությանը: Թուրքն ավելի պակաս թուրք, քուրդն ավելի պակաս քուրդ, իսկ յուրաքանչյուրն ավելի շատ եվրոպացի պետք է դառնան»[20]:

Օրհան Փամուքը ծնվել է 1952թ-ին Ստամբուլում: 1976թ-ին ավարտել է Ստամբուլի համալսարանի Լրագրողության ֆակուլտետը: Ինքն անձամբ նշում է, որ ժամանակին ձգտել է նկարիչ դառնալ, սակայն 1974-ից անցել է գրական աշխատանքի: 1979-ին տպագրել է «Ջեւդեթ բեյը եւ զավակները» վեպը, որը շահել է «Միլիեթ» թերթի, ապա «Օրհան Քեմալի» անվան մրցանակները:

90-ականների վերջերից թուրք գրողը սկսեց համաշխարհային համբավ ձեռքբերել: Նրա «Անծայր տուն» (1983), «Սեւ գիրք» (1990), «Նոր կյանք» (1994), «Իմ անունն է կարմիր» (1998), «Ձյուն» (2002) վեպերը համաշխարհային ճանաչում բերեցին: «Անծայր տունը» 1991-ին Ֆրանսիայում արժանացավ նաեւ «Prix de la decouverte Europeen'e» (Եվրոպական հայտնագործություն) մրցանակի: Փամուքի երկերը թարգմանվել են մոտ 40 լեզվով եւ սպառվել ավելի քան 1 միլիոն տպաքանակով:

Հայկական թեման առկա է նաեւ գրողի «Ձյունը» վեպում, որը Փամուքը նվիրել է իր դուստր Ռույային: Գրքում իրադարձությունները զարգանում են Կարս քաղաքում: Վեպը ներկայացնում է մերօրյա Կարսը, քաղաքի բնակիչների, կրոնական խավի ներկայացուցիչների, պետական իշխանությունների ու ՄԻԹ գաղտնի ոստիկանության փոխհարաբերությունները: Գրքի գլխավոր հերոսի անվան սկզբնատառերը, թուրքերեն տարբերակով վեպի անվանումն ու քաղաքի անունը ակնհայտորեն փոխկապակցած են. գրական հերոսի անվան սկզբնատառերը՝ KA (Kerim Alakusoglu), վերնագիրը՝ «Kar» («Ձյուն»-թրք) եւ Kars: Շվեյցարական հանդեսին արված հայտարարությունից մոտ 3 տարի առաջ տպված գրքում, խոսելով պատմական տարբեր ժամանակահատվածներում կատարված ոճրագործությունների մասին՝ «խաչակրած արշավանքներ, հոլոքոստ, ամերիկյան հնդկացիների բնաջնջում, Ալժիրում ֆրանսիական ջարդարարություններ» գրքի հերոսը նաեւ հարց է առաջադրում. «Իսկ ի՞նչ եղան Կարսի ու ողջ Անատոլիայի միլիոնավոր հայերը»[22]:

Վեպում հաճախ են հանդիպում հիշատակումներ Կարս քաղաքի

երբեմնի հայ ազգաբնակչության մասին.

«Կարսի անվտանգության վարչությունը ռուսներից եւ հայ հարուստներից մնացած...եռահարկ երկար շենք էր: ...Սերդար բեյը, ցույց տալով բարձր առաստաղները, ասաց, որ 1877-1918թթ-ի ռուսական ժամանակաշրջանի ընթացքում մի հարուստ հայի 40 սենյականոց առանձնատունն է եղել, ավելի ուշ եղել է ռուսական հիվանդանոց (էջ 17):

Ընդ որում նշվում է նաեւ, որ հայկական շինություն է եղել ոչ միայն անվտանգության վարչությունն, այլ նաեւ Կարսի քաղաքապետարանի շենքը:

«Հայերից մնացած եռահարկ գեղեցիկ քաղաքապետարանի շինությունում որեւէ մեկը չկար» (էջ 164):

Հեղինակը նշում է քաղաքի հայ դարբինների, 20-րդի դարասկզբի առեւտրական մեծահարուստ Գրիգոր Չիզմեջյանի, հայ արհեստավորների ու հայկական եկեղեցիների մասին:

«Օսմանյան ժամանակաշրջանում բազմաթիվ ժողովուրդների, օրինակ հազար տարի առաջ կառուցված եւ մինչեւ օրս ողջ վսեմությամբ կանգուն հայկական եկեղեցիների վայրն է այս վայրը...» (էջ 25):

«Կարսը նման էր լքված քաղաքի: Ես թակում էի տների դռները, որոնք կամ հայկական տներ էին, ուր 80 տարի մարդ չէր բնակվել կամ ներսի բնակիչները, ծածկված բազմահարկ վերմակների տակ, ասես քուն մտած կենդանիներ, դուրս չէին գալիս իրենց տներից» (էջ 57):

Նա խոսում է նաեւ «հայերից մնացած տեսիլքների քաղաք Անիի մասին»: Հայտնի է, որ Թուրքիայի պաշտոնական պատմագիտությունը Անիի հայկական քաղաք հանդիսանալու հանգամանքը ձգտում է շրջանցել, հաճախ ընդհանուր համատեքստում նշվում է քաղաքի «թուրքական, քրդական, վրացական եւ հայկական ծագման» մասին, իսկ բուն Անիի ավերակներում չկա որեւէ ցուցանակ նրա պատմական հայկական մայրաքաղաք լինելու վերաբերյալ: Վեպում Փամուքը, ակնարկելով հայկական 1-ին հանրապետության ժամանակարջանը, գրում է նորագույն շրջանում Կարսում հայկական կարճաժամկետ հսկողության մասին, իսկ որպես Կարսի հետամնացության պատճառ նշում «փակ սահմանադռների եւ Հայաստանի հետ չդադարող վեճերի մասին»:

Հայկական հարցին առավել սրտացավ եւ օբյեկտիվորեն մոտենալու գրողի կեցվածքին եւ հատկապես նրա վերջին հայտարարությանն ի պատասխան Թուրքիայում գրողի դեմ քարոզչական «պատերազմը» շարունակվեց նաեւ դատական «մարաթոնի» ավարտից հետո: Օրհան Փամուքին մեղադրում են գրագողության մեջ (տես «Ենի Չաղ», 11.02.2005թ, «Orhan Pamuk Neye Kosuyor») անվանում են «դավաճան», «գրագող», «Թուրքիայի թշնամի» կամ «հրեա», նրա հայտնի հայտարարությունը ձգտում շաղկապել Նոբելյան մրցանակ ստանալու գրողի ցանկության հետ: Պատմական անարդարությունների մասին ձայն բարձրացնելու արվեստագետի անկեղծ ձգտումը միանգամայն անտեսվում է: Մինչդեռ, ա-

վելի վաղ, հեղինակն այս առիթով մի անգամ նկատել էր. «եթե փորձում եք ճնշել հիշողությունները՝ նրանք մեկ օր վերադառնում են»[22]:

ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Taner Akcam, "Ermeni Tabusu Aralanirken: Diyalog'dan baska bir Cozum Var mi?", , Ստամբուլ, 2000թ, օգոստոս, էջ 9, «Սու» հրատարակչություն
2. www.tnnhaber.com, 18.02.2005
3."Orhan Pamuk", "Vatan", 10.02.2005
4."Tarihi Iftira Savciya Emanet", "Tercuman", 18.02.2005
5. Ergun Kirlikovali, "Swedish Sources That Refute the AAG", www.turkishforum.com
6."Pamuk'a Yeni Dava", "Zaman", 25.10.2005
7. "Tercuman", "Tarihi Iftira Savciya Emanet", 18.02.2005
8. Terkan Cetin "Pamuk'un Kitaplari Imha Edin", "Milliyet", 30.03.2005
9. "Kitap Soykirimi Ucuz Atlatildi", Yalcin Peksen, "Aksam", 31.03.2005
10.Lagendijk: "Avrupa Hayal Kirikligina Ugradi", www.ntvmsnbc.com, 05.04.2005
11. Hasan Cemal, "Orhan Pamuk" "Milliyet", 06.03.2005
12."The Intelligentsia and Writers have backed Orhan Pamuk, Threatened by Racists", www.roj.tv, 16.02.2005
13. "Orhan Pamuk'a Destek Yagiyor", "Radikal", 01.04.2005
14. "Orhan Pamuk Uzerine", "Vatan", 11.02.2005
15."Ankara, Kretschmer Exchange Fire", "Turkish Daily News", 04.03.2005
16."Orhan Pamuk'tan Ozel Aciklamalar", "Sabah", 16.07.2005
17."Orhan Pamuk: Ermeni Meselesiyle ilgili sozlerimin arkasindayim", "Milliyet", "Zaman", 22.10.2005
18. "Pamuk: Milliyetcilik Artarsa giderim", NTV, 01.11.2005
19. Orhan Pamuk'a Destek Yagiyor", "Radikal, 01.04.2005
20. «Թուրքն ավելի պակաս թուրք...», «Արմենպրեսս», 22 հոկտեմբերի, 2004թ
21. Orhan Pamuk, "Kar", Istanbul 2002, էջ 279
22. "Time" magazin, 13.09.1999

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1 9-ՐԴ ԴԱՐՈՒՄ[1]

Վերջին տասնամյակում թուրքական գիտական շրջանակներում հետաքրքրության հատուկ առարկա են դարձել Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների մշակութային հարցերը: «Tarih ve Toplum» ստամբուլյան գիտական ամսագրում ժամանակ առ ժամանակ հրատարակվում են հպտնկ ժողովուրդների այբուբեններով ստեղծված թուրքալեզու գրականությունների մասին հոդվածներ, ուր մակերեսորեն ներկայացվում են նմուշներ այդ գրականությանից, դրանց առաջացման ու զարգացման խնդիրները: Այն ինչ վերաբերում է հայատառ գրականություններին (հայատառ թուրքերեն[2], հայատառ ղփչաղերեն[3], հայատառ քրդերեն[4]), շատ հեռու են իրական, գիտական ուսումնասիրություններ համարվելուց, քանի որ ծայրաստիճան քաքաղականացման միտումների վրա են կառուցված: Այս ամսագրի էջերում պարբերաբար տպագրվող հայ մատենագետ Գևորգ Բամպուկճյանի հոդվածներն իրենց ժամանակին հավասարակշռել են թյուր մոտեցումներն այս խնդրի շուրջ ու ներկայացրել իրերի իրական վիճակը, գիտական փաստարկներով ամրապնդված:

Օսմանյան կայսրության հպատակության ներքո գտնվող ժողովուրդները, մասնավորապես քրիստոնյա հպատակները հարյուրամյակներ շարունակ կանգնած են եղել բռնի մահմեդականացման, ուծացման վտանգի առջև, քանզի հպատակների թուրքացման քաղաքականության առաջին քայլը՝ բռնի ուժով թրքալեզու դարձնելը մասամբ հաջողությամբ էր պսակվել: Մեր ժողովրդի մայրենին կորցրած այս հատվածին կրկին իր լեզվին, կրոնին, մշակույթին վերադարձնելու և հետագա ուծացումից փրկելու խնդրին է ծառայել հայատառ թուրքերեն գրականությունն իր գոյության շրջանում: Հայատառ թուրքերեն գրականությունը ստեղծվել է հայ ժողովրդի ոչ թե հիմնական մասի համար, այլ նրանց, որոնք կորցնելով սեփական լեզուն, այնուհանդերձ պահպանել էին իրենց հավատքը, քրիստոնեական դավանանքը, ազգային ավանդույթները:

Նույնպիսի վիճակ էր քրիստոնյա այլ ազգերի, հպատակների մոտ, օրինակ՝ հույների: Սակայն հունատառ թուրքերենը[5] չէր կարող նման մասսայականություն ունենալ, պատմական դեր խաղալ Օսմանյան կայսրության զարգացման համար, ինչպիսին խաղացել է հայատառ թուրքերեն գրականությունը, քանզի հունարենը չէր արտահայտում թուրքերենի ողջ հնչյունական կազմն այնպես, որքան լավագույնս արտահայտում էր հայերեն այբուբենը:

Հայատառ թուրքերենի աշխարհագրական սահմանները չեն սահմանափակվում Օսմանյան կայսրության տարածքով: Հայատառ թուրքերեն, հայատառ թաթարերեն ու հայատառ ղփչաղերեն ձեռագիր ու տպա-

գիր նշանակալի գրականություն են ստեղծել այն հայերը, որոնք բռնելով պանդխտության ճանապարհը, քարավաններով հասել են Ուկրաինա, Լեհաստան, Արևելյան Եվրոպայի երկրներ: Հայատառ թաթարերեն և հայատառ ղփչաղերեն գրականությունը հայ մշակույթի անբաժանելի մասն է կազմում և որոշակի պատմաբանասիրական արժեք ունի: Այն հայատառ թուրքերեն գրականության վաղ մի տարբերակն է և առաջացել է 13-14-րդ դարերում: Այս ձեռագրերը պատկառելի թիվ են կազմում և գտնվում են աշխարհի տարբեր հայկական, օտար ու մասնավոր ձեռագրատներում: Մեզ են հասել հիմնականում 16-րդ դարի ձեռագրեր, որոնք ստեղծվել են մասնավորապես Ղրիմի, Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, որոնց մի մասը թրքախոս էր և ունեցել են հույժ ազգային բնույթ, ծառայել են համայնքի ամենօրյա կենցաղային, հոգևոր-ծիսական խնդիրներին: Դրանք քարոզգրքեր, աստվածաշնչային պատմություններ են, համայնքի համար որպես օրենսգիրք ծառայած երկեր, եկեղեցական, արարողակարգային ձեռագրեր, աղոթքներ, ժամագրքեր, սաղմոսագրքեր, վարք սրբոց, համայնքի կանոնադրություններ, եկեղեցական հաշվառման, ամուսնական դաշնագրերի ու ծնունդի մատյաններ, պարգևագրեր, անդորրագրքեր, կահագրքեր, հաշվեմատյաններ, թղթակցություններ, պատմություններ (Խիկարի պատմությունը և այլն), տաղեր և այլն[6]: Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը, դրա 10 գլուխների հայատառ ղփչաղերեն թարգմանությունը որպես կանոնագիրք է ծառայել, հայ գաղութների ապրելու օրենք:

Հայատառ ղփչաղերեն ձեռագրերը[7] պարունակում են նաև բժշկարաններ, թարգմանական գրականության օրինակներ, կենցաղում օգտակար գրականություն: Կարևոր հանգամանք, որ կարող էր ծառայել ոչ միայն զուտ հայկական շրջանակներին, այլև շրջապատում այդ լեզվովով խոսողներին: Այս ձեռագրերում են միայն պահպանվել հայերի հեղինակած ղփչաղերենի եզակի քերականությունները[8]: Ասպարեզում չկա նման և ոչ մի այլ քերականություն: Վերջիններս անուրանալի արժեք են ներկայացնում այսօրյա թյուրքական ժողովուրդների համար և իզուր չի նրանց տասնամյակներ շարունակվող «պայքարը», ներկայացնելու հայատառ այս գրականությունը որպես «ինքնական ղփչաղությունը գերադասած և ղփչաղացած հայերի, ղփչաղների», այսինքն թյուրքական ժառանգություն[9]: Վերոհիշյալ և՛ ծիսական, և՛ առօրյա կենցաղային, և՛ օրենքներն իրենց արտահայտությունն են գտել նաև հայատառ ղփչաղերենով, թաթարերենով, ստեղծելով նշանակալի մշակութային արժեքներ:

Երբեմն հայատառ թուրքերեն, հայատառ թաթարերեն և հայատառ ղփչաղերեն բաժանումները մեզ հայտնի ձեռագրացուցակներում հարաբերական են՝ կախված այն կազմողների հայեցողությունից, ձեռագրերի ստեղծման ժամանակային ու լեզվական նրբություններին տիրապետելուց: Հետագայում այս ձեռագրերի մի մասը տպագրվել է առավելապես Լվովում[10], Լեյդենում:

Հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19- դդ.): Տպագիր շրջանը գոյատևել է մոտ 250 տարի: Այս շրջաններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել: Մինչ անատոլիական որոշ թուրքախոս գավառների արևմտահայության մի ամբողջ սերունդ Օսմանյան կայսրությունում պիտի դառնար հայախոս, դեռ երկար տասնամյակներ, մինչև 19-րդ դարի կեսերը, (երբ բացվեցին աշխարհիկ հայկական դպրոցներ), անհրաժեշտ էր թրքախոս այդ հայերին հաղորդակից դարձնել ազգային զարթոնքին ու մտավոր վերելքին նրանց համար հասկանալի լեզվով՝ հայատառ թուրքերենով, այսինքն հայերեն տառերով, սակայն թուրքերեն լեզվով կատարված հրատարակություններով: Այս հանգամանքով պետք է բացատրել հայատառ թուրքերեն ձեռագիր և հատկապես տպագիր գրականության զարգացումը, հարյուրավոր կրոնադավանաբանական, պատմական, գեղարվեստական և այլ գրականության, իսկ ավելի ուշ՝ թերթերի ու հանդեսների առաջացումը: Երևույթ, որը մեծ նպաստ է բերել կայսրության թուրքախոս այլ ազգերին ևս:

Արդեն միայն հայատառ թուրքերեն աշուղական գրականությունն իրական գանձարան է ոչ միայն հայկական մշակույթի, այլև կայսրության այլ ժողովուրդների, և առաջին հերթին թուրք ժողովրդի մշակույթի համար: Հայատառ թուրքերեն ձեռագրերում պահպանվել են ոչ միայն հայազգի, այլև թուրքական, արևելյան բազմապիսի ու բազմաոճ հազարավոր թուրքերեն տաղեր, երգերի ոչ միայն բառերը, այլև դրանց հեղինակների անունները, երաժշտությունը՝ հայկական ու եվրոպական նոտագրությամբ: Մի խոսքով՝ լիմոնճյանական[11] ձեռագիր մի հսկայական, եզակի ու անգնահատելի ժառանգություն, որը սպասում է իր հայ և թուրք ուսումնասիրողներին, արժանի ուշադրության, նոր արժևորումների, բացահայտումների փոխադարձ ակնկալությամբ[12]:

Հայատառ թուրքերեն տպագիր գիրքը տպագրվել է թե՛ Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում և թե՛ նրա սահմաններից դուրս ամենատարբեր պատճառներով: Ավելի քան 250 տարիների ընթացքում հայատառ թուրքերեն տպագրված գրքերի թիվն անցնում է 2000-ից: Հրատարակվել են դրանք աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում: Յուրաքանչյուր տպարան, հրատարակչություն ունեցել է իր դեմքը, իր սոցիալ-քաղաքական ու կրոնական կողմնորոշումը, իր գրական, լուսավորական նպատակները, իր նախասիրած թեմատիկան, հետաքրքրությունների նախընտրած շրջանակը և ընթերցողները: Հայատառ թուրքերեն տպագիր գրականության երկուս ու կես դարյա պատմության ուսումնասիրությունը փաստում է հայերի բազմակողմանի կյանքի գոյությունն ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր: Սա ինքնուրույն ու ինքնաբավ մի գրականություն է, հարուստ, որակով, միմյանց չկրկնող՝ հանուն արևմտահայության ու Օսմանյան կայսրությունում զարթոնքի ու ազգային ինքնագիտակցության բարձրացման:

Միայն Ստամբուլում հայատառ թուրքերեն գրքեր հրատարակվել են մոտ 85 հայկական տպարաններում: Բացի հայերեն, հայատառ թուրքերեն պարբերականներից հայերը հրատարակել են օսմաներեն, ֆրանսերեն լեզուներով թերթեր, ամսագրեր: Հրատարակչական կենտրոններ են եղել նաև Մխիթարյան միաբանության Վենետիկի սբ. Ղազար կղզու, Տրիեստի, Վիեննայի վանքերն իրենց տպարաններով, Երուսաղեմը, ապա Լիբանանը, Սիրիան, Եգիպտոսը, Ֆրանսիան, Ամերիկան, Բուլղարիան, Մալթա կղզին, Ռուսաստանը և այլն:

Հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրությունը կարևոր է հիմնականում հետևյալ նկատառումներով.

ա. Հայատառ թուրքերեն մատենագիտությունը այն անփոխարինելի ու եզակի աղբյուրներից է, որը ներկայացնում է նաև Օսմանյան կայսրության պատմությունը: Բազմաթիվ ժամանակագրություններ (նաև չափածո խրոնիկաներ) իրենցից միակ գրավոր ու հավաստի աղբյուրներն են հանդիսանում Կայսրության որոշակի ժամանակաշրջանում կատարված դեպքերի ու կարևոր դեմքերի մասին: Այս առումով կարևոր էր ստամբուլահայ մատենագիր ու բանասեր, բազմաթիվ թուրքական պարբերականներին ու հանրագիտարաններին իր հայ և թուրք մշակույթի ու նրա գործիչների, առանձին գրական, գիտական հուշարձանների ու պատմական առանձին դրվագների մասին իր 1000-ի մոտ հոդվածներով աշխատակցած Գևորգ Բամպուկճյանի (1923-1996) թուրքերենով եղած աշխատությունների քառահատոր գիտական հետմահու հրատարակությունը Օսման Քյոքերի կողմից[13]: Դեռ երկար տարիներ հայատառ թուրքերեն մատենագիտությունը անսպառ աղբյուր կներկայացնի Թուրքիայի պատմության ու կյանքի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար:

բ. Մամուլին զուգահեռ հայատառ թուրքերեն տպագիր գրականությունը հսկայական ազդեցություն է ունեցել իր ընթերցողների վրա՝ նպաստելով նրանց մտավոր զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի բարձրացմանը, հաղորդակից դարձնելով նրանց արևմտաեվրոպական առաջադեմ մտքի նվաճումներին:

Տպագիր շրջանն ի տարբերության ձեռագրական շրջանի, դուրս է եկել իր նախնական առաքելության շրջանակներից ու սկսել է ծառայել ոչ միայն հայերի թրքախոս հատվածին, այլև ողջ արևմտահայությանը, Օսմանյան կայսրության թուրքախոս այլ ժողովուրդներին և առաջին հերթին՝ թուրքերին:

Այս գրականությունն Օսմանյան կայսրության եվրոպականացման, նոր գաղափարների ներթափանցման, զարթոնքի ընդհանուր շրջանի ծնունդ տվողներից ու շարժիչ ուժերից է հանդիսացել: Այս լեզվով են թարգմանվել ու կարդացել համաշխարհային, եվրոպական ողջ դասականներին ու ժամանակի հայտնի, բուլվարային, արկածային գրականության արքաներին: Այս աշխատանքային լեզվով են հիմնականում գործել հայկական թատերախմբերը, ներկայացնելու համար թուրքերեն լեզ-

վով իրենց խաղացանկը: Հայատառ թուրքերենով են գրել, թարգմանել, փոխադրել հայ թատրոնը շրջապատած թուրք լուսավորիչները՝ ծնունդ տալով թուրքական դրամատուրգիային, թուրք նոր գրականությանն ու գրական «թուրքերենին»: Այս լեզվով տպագրվել են տասնյակ պարբերականներ, որոնք աննկարագրելի պատմական դեր են ունեցել Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական, գիտական, մշակութային կյանքում, կենցաղում, նոր աստիճանի բարձրացնելով հայ լրագրողական մշակույթը, միաժամանակ ծնունդ տալով ժամանակահունչ թուրքական լրագրողական մշակույթին: Դրանք թուրք ու թրքախոս մտավորականների ու պաշտոնյաների նախընտրած մամուլն են հանդիսացել ժամանակի արտաքին ու ներքին լուրերի, նյութերի ներկայացման հրատապությամբ ու որակով: Նույն այս շրջանակը ներկայացնողները թղթակցել են հայատառ թուրքերեն պարբերականներին, այդտեղ տպագրելով նաև իրենց ստեղծագործությունները, թարգմանությունները:

Հայատառ թուրքերեն պարբերական հարուստ մամուլը, ինքնուրույն ու թարգմանական, մասնավորապես ֆրանսիական արկածային գրականությունը օրը օրին, սովորության ուժով կարդացվում էին հասարակական վայրերում, սրճարաններում (սովորաբար մեկը կարդում էր, մյուսները լսում էին), թեյարաններում, պաշտոնատեղիներում, դիվանագիտական հաստատություններում, անգամ հարեմներում՝ հարյուրապատիկ մեծացնելով ընթերցողների շրջանակը:

Ստեղծվել է հայատառ թուրքերեն մեծաթիվ գրականություն: Այդ թվում՝ օսմաներեն լեզվի ուսուցման դասագրքերի, բառարանների աննախընթաց առատություն: Ամենից շատ այն օգնել է նոր թուրքերեն լեզվի կայացմանը, նրա բառացանկի հարստացմանը: Հայ լեզվաբանների հեղինակած թուրքերենի (հայատառ թուրքերենով և օսմաներենով) դասագրքերով սեփական լեզուն տասնամյակներ շարունակ սովորել են թուրքերը, նորաբաց մասնագիտական տարբեր, նույնիսկ զինվորական ուսումնական հաստատություններում հայատառ թուրքերենով մասնագիտական գրականության հետ միասին:

Հայատառ թուրքերեն գրականությունն օգտագործվել է ստեղծելու համար կայսրություն մուտք գործող գիտության, տեխնիկայի, գյուղատնտեսության, արհեստների ու մշակույթի գրականություն, որը կոչված էր ծառայելու ոչ միայն հայ, այլև Օսմանյան կայսրության թուրքախոս ազգերին, թուրքերին:

Հայատառ թուրքերենը եղել է կենդանի օրգանիզմ և ծառայել է ողջ կայսրության շահերին: Իզուր չէ, որ պալատական շրջանակներում 19-րդ դարի կեսերից սկսած հարց է առաջացել օսմաներեն լեզվի արաբական այբուբենը փոխարինելու հայկականով, որի կենսունակությունն արդեն ապացուցված էր:

150 տարվա պատմություն ունեցող հայատառ թուրքերեն մամուլը միայն 1850-1890-ական թվականներին Ստամբուլում հրատարակված ավելի քան 100 անուն հայ պարբերականների կեսից ավելին է եղել՝ 54-ը:

Այս պարբերականները լայն ժողովրդականություն են վայելել, հրատարակվել տասնյակ տարիներ շարունակ մեծ տպաքանակով, ունեցել բաժանորդներ և բազմաթիվ թղթակիցներ տարբեր գավառներում, արտասահմանում, կարդացվել տարբեր ազգերի կողմից: Այս պարբերականներն իրենցից անհատնում աղբյուր են ներկայացնում Օսմանյան կայսրության կյանքի բոլոր կողմերի ուսումնասիրության համար սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի, կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և այլն: Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը ներկայացրել է արևմտահայերի բազմադեմ կյանքի ամենօրյա հայելին: Գավառին նվիրված հոդվածները ճանապարհորդի, թղթակցի տպավորությունների հետ միասին ընդարձակ տեղեկություններ են տվել այդ գավառների բնության, պատմական հուշարձանների, ազգային, կրոնական ավանդույթների, սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, գավառներում հայ և այլազգի մյուս բնակիչների կրած հալածանքների մասին: Մի հանգամանք ևս, որն այս գրականությունը դարձնում է անփոխարինելի հարուստ աղբյուր գավառների բազմազգ կյանքի ուսումնասիրության համար:

Վերոհիշյալ պարբերականները հրատարակվում էին ժամանակի ֆրանսիական պարբերականների նմանությամբ և բազմաթիվ ընթերցողների համար տեղեկատվության միակ բարձրակարգ աղբյուրն են հանդիսացել: Եվրոպական պարբերականներից թարգմանվել են բազմաթիվ օտար տերությունների պատմության, ազգագրության մասին հոդվածներ, պատմական կարևոր դեպքերի, ժամանակակից իրավիճակի, մշակույթի, այդ երկրներում գիտության, բանակի, անգամ բյուջեի , քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ նյութեր: Նույն ֆրանսիականի նմանությամբ շատ պարբերականներ, անգամ՝ մանկականները, ունեցել են թերթոնների բաժին, ուր ամեն օր շարունակաբար տպագրել են հիմնականում ֆրանսիական հայտնի վեպեր, երբեմն էլ հայ ու նույնիսկ թուրք հեղինակների գործեր: Հայատառ թուրքերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այբուբենը և ամեն օր կարդացել այդ թերթերը, նախընտրելով այն օսմաներենով հրատարակվող պարբերականներից: Մեզ են հասել թուրք հայտնի գրող Մեհմեդ Էմինի մի շարք բանաստեղծությունները՝ «մեր բանաստեղծ կուսակալը» վերնագրով, գավառի հայատառ թուրքերեն պարբերականներում, երբ նա կուսակալ էր:

Հայատառ թուրքերեն գրականությունն անկասկած իր հսկայական ազդեցությունն ունեցավ թուրք գրողների ու հասարական գործիչների նոր սերնդի ձևավորման ու զարգացման վրա: Վերջիններս հանդես էին գալիս հանուն Օսմանյան կայսրությունում սահմանադրական բարեփոխումների անցկացման և թուրք հասարակության մեջ աշխարհիկ, մշակութային կյանքի զարգացման:

1850-1870-ական թթ., քաղաքական կյանքի համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի թրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Հրատարակվել են գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական աշխատություններ, գիտական, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, քարտեզներ, իրավագիտական ակտեր, օրենքներ, տարբեր տեսակի ուղեցույցներ, բժշկական, կենցաղային գրքեր՝ երգարաններից մինչև երազահաններ ու խոհարարական, առողջապահական հրատարակություններ, մանկական գրականություն և այլն: Օսմաներենով եղած նմանատիպ սուղ գրականությունից ավելի թուրքերի համար նախընտրելի են համարվել հենց հայատառ թուրքերեն հրատարակությունները, նաև իրենց պարզ ու դյուրըմբռնելի լինելու համար:

Նույնիսկ աբդուլհամիդյան բռնապետության դաժանագույն գրաքննության տարիներին, երբ խստագույնս արգելք էր դրված ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող յուրաքանչյուր գրքի ու հոդվածի վրա, երբ արգելված էին անգամ հայերեն թատերական ներկայացումները, հայատառ թուրքերեն գրականությունը կարողացավ հայատառ թուրքերենով կատարել իր քաղաքացիական պարտքը՝ Օսմանյան կայսրության առաջադեմ խավերին մշակութային, հասարակական-քաղաքական համախմբման առաքելության առումով:

Հայատառ թուրքերեն գրականության մի խոշոր հատված իրենից ներկայացնում է թարգմանություններ՝ կատարված թատրոնի համար: Այդպիսի ստեղծագործությունների թիվն անցնում է 500-ից: Իհարկե, դրանց մեծ մասը չի հրատարակվել, սակայն այդ պիեսները ներկայացվել են ավելի քան հարյուրավոր անգամներ: Այնուամենայնիվ, հրատարակված չլինելով հանդերձ, այս գրականությունը նշանակալի դեր է խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու թուրքերեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու թուրքերենին տիրապետողների թիվը՝ սահմանափակ: Դրանք բոլորը միասին դիտել և հասկացել են բեմում հնչող թուրքերենը:

Դերասանապետ Հակոբ Վարդովյանի (Գյուլլի Հակոբ) «Օսմանյան թատրոնի» հետ համագործակցության շրջանը թուրք մտավորական երիտասարդների մի կարևոր հատվածի համար ճակատագրական նշանակություն է ունեցել: Հետագայում նրանք լրջորեն տարվել են թատերական գրականությամբ, հատկապես դրամատուրգիայով: Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների

ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա լրիվ ցուցակը: Այն է՝ Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Ամի, էբուզզիյա Թեֆիք, Ռաջաիզադե էքրեմ, Ալի Հայդար, Հասան Բեդրեթթին, Աբդուլհակ Համիդ և շատ շատերը: Բացի նյութական կողմից, թատրոնը թուրք լուսավորիչներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել նրանց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության հեղափոխական տրամադրությունները: Թատրոնի հանդես գալուց հետո նոր ժամանակների համար պայքարի մի մասը տեղափոխվել է բեմ: Թուրք թատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդն իրավացիորեն նկատում է, որ Հ.Վարդովյանի թատրոնը նաև արժանի է ուշադրության որպես թուրքական գրականության ձևավորման կենտրոն: Թատրոնի համար, հայ դերասանապետների պատվերով գրված, փոխադրված գործերը, դրանց ազդեցության տակ ստեղծված սեփական երկերը հանդիսանում են թուրք նոր գրականության դասականների ամենահայտնի ստեղծագործությունները:

Թուրքական թատրոնի պատմաբանների կողմից այս շրջանն ուսումնասիրվում է որպես թուրքական ազգային թատրոնի սկզբնավորման ժամանակաշրջան (Աեթհի Անդ, Ահմեդ Ֆեհիմ և ուրիշներ):

Թուրք թատերագետները, դերասանները արդարացիորեն նշում են, որ եթե չլիներ Հակոբ Վարդովյանի, Մարտիրոս Մնակյանի, Թ.Ֆասուլաճյանի, Ա.Պենկլյանի և մյուս հայկական թատերախմբերը, նրանց կողմից նյութական վարձատրությամբ թուրք հեղինակներին տրվող պատվերները, ապա դժվար թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան: Մեր ասածն ամբողջական չէր լինի, եթե չխոսեինք Տիգրան Չուխաճյանի ու նրա գործընկերների մասին, որոնց անունները նույնացվում են թուրքական օպերայի, թուրքական երաժշտական թատրոնի, օպերետի հիմնադրման պատմության հետ: Տիգրան Չուխաճյանի հեղինակած ու ղեկավարած ներկայացումները ժամանակի մեշակութային մեծագույն իրադարձություններից են համարվել: Նրա գրչին պատկանող երեք հիմնական օպերետների լիբրետտոներ եղել են թուրքերեն (հայատառ թուրքերն): Նրա անվան հետ է կապվում նաև թուրքական քայլերգային երաժշտության զարգացումը: Նա հայտնի է որպես մի քանի սուլթանական քայլերգերի հեղինակ:

Օսմանյան կայսրությունում լուսավորական շարժման զարգացման գործում նկատելի դեր են խաղացել հայկական թատերախմբերի երկրով մեկ կատարած հյուրախաղերը, մինչև Բալկաններ, Եգիպտոս: Այս հյուրախաղերը համընկել են «զուլումի» տարիներին, երբ Կ.Պոլսում ոչ միայն արգելված էին հայերեն ներկայացումները, այլև թուրք հեղինակների ու եվրոպական թարգմանական պիեսների մեծ մասը: Նշենք, որ արևելյան այդ գավառներում շատերն առաջին անգամ էին կյանքում շփվում թատրոն կոչված երևույթի հետ: Առաջին անգամ էին տեսնում դերասանների, շփվում դրամատուրգիայի, այդ թվում նաև դասականների

ստեղծագործությունների, հայ և թուրք հեղինակների գործերի հետ: Ներկայացվում էին ժողովրդի մեջ հայտնի արևելյան սիրավեպերը, մելոդրամներ, վոդևիլներ, ֆարսեր: Ավելի քան 50 ծիգ տարիներ Թուրքիայի բնակչության ամենատարբեր, թրքախոս և թուրքերենին տիրապետող խավերը այսկերպ հաղորդակցվել են թատերական մշակույթի հետ:

Թուրքական հարեմներում փակված կանայք թատրոնում ականատես էին լինում այնպիսի տեսարանների, երբ տղամարդը ծնկաչոք սեր էր աղերսում կնոջից, իսկ վերջինս մերժում էր, ստիպելով տղամարդուն տանջվել: Միայն այս հանգամանքը բավական էր, որպեսզի հարեմական կյանքով սահմանափակված կինը հասկանար, որ իր բանտարկյալ ու ստրկական վիճակը, որ իրեն գնել-վաճառելու-նվիրելու փաստն ի վերուստ կարգադրված երևույթներ չեն և ոչ էլ մարգարեական պատգամներ: Այս ամենին ավելանում էր սովորելու, զարգանալու, և դրանով իսկ որոշ չափով կյանքի հարվածներին դիմագրավելու կոչերը՝ որպես կարևոր պայման կյանքում կույր գործիք չլինելու համար: Այստեղից բխում էր, որ պետք է սովորեն բոլորը՝ կին, տղամարդ, հարուստ, աղքատ: Եվ եթե Օսմանյան սահմանադրության վերականգնման տարիներին թուրք կինն աստիճանաբար հասարակական ասպարեզ մտավ և Թուրքիայում ծայր առավ կանանց էմանսիպացիայի խնդիրներին ուղղված շարժումը՝ այն միանգամայն կարելի է վերագրել մասամբ Մարտիրոս Մնակյանի թատրոնի՝ հատուկ կանանց համար տրվող ցերեկային ներկայացումների դաստիարակչական մեծ ազդեցությանը: Ներկայացումները նպաստում էին կնոջ սոցիալական ու մշակութային մտահորիզոնի ընդարձակմանը: Թատրոնն այդ կանանց համար դառնում էր եվրոպական քաղաքակրթության հետ շփվելու լավագույն հնարավորությունը: Այն մղում էր հարեմի և հանդիսատես մյուս կանանց կարդալու ֆրանսերենից առատորեն թարգմանվող վեպերը: Հայատառ թուրքերեն սիրային, արկածային վեպերը տարածված էին Ստամբուլի ողջ հարուստ ու միջին խավի ընտանիքներում, հարեմներում ու ամեն մի կնոջ ու երիտասարդ աղջկա բարձի տակ կարելի էր այն գտնել: Իրենք, թրքուհիները, հաճախ են շնորհակալության զգացումով խոստովանել այս մասին:

Հայատառ թուրքերենի ծաղկուն շրջանը 19-րդ դարում Օսմանյան կայսրության բոլոր առաջավոր, մտավորական ու լուսավորական ուժերի համագործակցության հրաշալի շրջան է եղել, որն իր պտուղներն է տվել ի դեմս թուրք նոր ինքնուրույն ու թարգմանական գրականության, լեզվի, մամուլի, գիտությունների, արվեստների զարգացման: Այս համագործակցությունը 20-րդ դարի արշալույսին արդեն գոյություն չուներ...

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպես զեկուցում այն կարդացվել է Անկարայում, ICANAS-38 միջազգային արևելագիտական գիտաժողովում 2007թ. սեպտեմբերին:

2. 1990-ական թթ. ամսագրերի համարյա բոլոր համարներում տարբեր նյութերի առթիվ անդրադարձ կա հայատառ թուրքերենին: Դրանց մի մասի հեղինակները թուրք գիտնականներ են, իսկ մյուսները հիմնականում Գևորգ Բամպուկճյանի գրչին են պատկանում:
3. Tarih ve Toplum, Ist., 1984, N 16, s.6 –8.
4. Tarih ve Toplum, Ist., 1988, N 54, s.59-63.
5. «Քարամանլիդիկա» կոչվող հունատառ թուրքերեն գրականությունը Օսմանյան կայսրության տիրապետության տակ ապրող հույն ժողովրդի համար նույն՝ հայատառ թուրքերեն գրականության ստեղծման ու զարգացման զուգահեռ տարբերակներից է:Այն ևս մեծ ծավալ է ունեցել, սակայն ծառայել է հիմնականում ազգային խնդիրներին:
6. Հայատառ թաթարերեն ձեռագրեր տես՝ Վիեննայի Կայսերական մատենադարանի ձեռ. 13 (1580թ.) և ձեռ. 3 (1638թ.): Տես նաև՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռ. 468 (1575թ.), 559 (1583թ.), 446 (1608թ.), ձեռ. 525 (1618թ.), ձեռ. 447 (1643թ.), 479 (1660թ.), 480 (1661թ.), 536 (ԺՋ), ձեռ. 1300(ԺԸ), 1609(ԺԸ) և այլն: Տես նաև՝ ՄՄ ձեռ. 1731, 9789:
7. Կամենեց-Պոդոլսկում և մյուս մշակութային հայկական կենտրոններում գրի առնված և տպագրված հայատառ ղպչաղերենով (հին թաթարերեն) մեծ թվով գրականություն է պահվում Ուկրաինայի, Լեհաստանի արխիվային ֆոնդերում: Հայատառ ղփչաղերեն ձեռագրեր տես նաև՝ Փարիզի Ազգային գրադարան, ձեռ.176 (1568թ. Լվով) «Դատաստանագիրք Լէոպոլտի Հայոց» և ձեռ. 194, « ժողովածոյ» (Ուկրաինա, ժէդ. կեսեր):
8. ՄՄ, ձեռ. 3522, «Քերականութիւն ղփչաղ լեզուի». (1634թ. Լվով, 353 թերթ), ձեռ. 3883, «Բառք քերականականք» (ԺՋդ., 383թերթ), ձեռ. 3521 «Թուղթ առ Դիոսկորոս» (1609թ, 220 թերթ) և այլն:
9. Tarih ve Toplum, Ist., 1984, N 16, s.6 –8.
10. 1619թ. Լվովում տպագրվել է «Աղօթք հասարակաց քրիստոնէից» գիրքը Հովի. Քարմատանեանցի տպարանում: Գտնվում է Լեյդենի համալսարանի գրադարանում:
11. Այս ձեռագրիր տաղարան-ժողովածուների կազմողները եղել են հիմնականում իր ժամանակի ամենահայտնի երաժշտագետ, նոտագետ Համբարձում Լիմոնճյանը՝ Պապա Համբարձումը (1769-1839), նրա աշակերտներն ու հետևորդները:
12. Մատենադարան, ձեռ. 10295,10876,11042 և Նոր հավաքածոյից՝ ձեռ. 197,201.204,205,206,213, 214,215, 229, 245 և այլն:
13. Kevork Pamukciyan. Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar. Yayma hazırlayan Osman Köker. Aras Yayıncılık. İstanbul. 2002 –2003. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler; Cilt 3- Zamanlar,

Mekânlar, İnsanlar; Cilt 4- Biyografileriyle Ermeniler. Գէորգ Բամպուքճեանի մասին կենսագրական և ուսումնասիրություններու մասին տես՝ Կարօ Աբրահամեան. «Վաղահաս ու անփոխարինելի կորուստ մը՝ Գէորգ Բամպուքճեան (1923-1996)», «Հասկ», է տարի, Անթիլիաս, Լիբանան,1995-96թթ., էջ 659-670. Գ.Բամպուքճյանը եղել է այն եզակի գիտնականը, որի համագործակցությանն են ապավինել թուրքական մի շարք ծանրակշիռ հանրագիտարաններ՝ հայկական նյութերը ներկայացնելու համար Դրանք են՝ Րէշատ էքրեմ Գօչույի "Istanbul Ansiklopedisi", Յըլմազ էօզթունայի "Türk Muzikisi Ansiklopedisi", Մուստաֆա Աքդաղի խմբագրած "Türk Dili ve Edebiyatı Ansiklopedisi", "Անա" հրատարակչատան "Genel Kültür Ansiklopedisi" և "Ana Britanika", "Belleten" լուրջ հրատարակությունները:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ՝ ԲՌՆԻ ԿՐՈՆԱՓՈԽՎԱԾ ՀԱԱՇԵՆՑԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱԵՎՈՐՈՒՄ

Էթնիկական դիմադրողականության և ինքնապաշտպանության գլխավոր միջոցներից մեկը լեզուն է, որն արտահայտում ու պահպանում է ազգային յուրօրինակությունն ու սահմանները[1]: Լեզվամտածողության, բառապաշարի, բանահյուսության մեջ են ամրագրվում ազգային ինքնության հատկանիշները, տվյալ էթնոսին բնորոշ բազմաթիվ առանձնահատկությունները: Լեզուն է, որ սերունդներին է փոխանցում ազգային մշակույթը, ավանդությունները՝ կատարելով նաև էթնոտարբերակիչ դեր:

Հին ժամանակներից հայերենի՝ որպես մայրենի լեզվի, գործածությամբ է որոշվել անհատի պատկանելությունը հայկական էթնոսին: Արդեն իսկ լեզվական ուրույն և համախմբված հանրության գոյությամբ է նաև պայմանավորվում հայերենի՝ հնդեվրոպական նախալեզվից վաղ զատվելու հանգամանքը[2]: Ինչ վերաբերում է հայերենի՝ Հայկական լեռնաշխարհի բնիկ լեզու լինելուն, ապա այն բազմաթիվ ուսումնասիրություններով վերջնականապես ապացուցված է[3]:

Լեզուն և ազգային ինքնագիտակցությունը մշտապես գտնվել են սերտ կապի մեջ: Հայոց լեզուն հայերի ազգային ինքնագիտակցության և ինքնության ձևավորման, թերևս, ամենաորոշիչ գործոններից է եղել[4]:

Հայերենն այն բացառիկ լեզուներից է, որ դեռևս հնագույն ժամանակներում ունեցել է բարբառներ, ենթաբարբառներ, խոսվածքներ: Առհասարակ, յուրաքանչյուր բարբառ գրական լեզվի և բարբառի մանր միավորների՝ տարածքային խոսվածքների հետ ունենում է ակնհայտ ընդհանրություններ, սակայն այն տարբերվում է իր հնչյունական, քերականական ու ոճական առանձնահատկություններով: Հայերենի բարբառների մասին առաջին հիշատակությունները հանդիպում են դեռևս հինգերորդ դարի հայ պատմիչների երկերում[5]: Բայց այդ մասին որոշակի տեղեկություններ ու դիտարկումներ տալիս է VIII դարի հայ մատենագիր, աստվածաբան, քերական ու երաժիշտ Ստեփանոս Սյունեցին. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և գԽութային և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ և աւգտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»: Սյունեցին որպես հայերենի եզերական (ծայրամասային) բարբառներ տարանջատում է Կորճայքը, Տայքը, Խութը, Չորրորդ Հայքը, Սպերը, Սյունիքն ու Արցախը[6]:

Հ. Աճառյանի կարծիքով Համշենի բարբառում պահպանվել են գրաբարյան լեզվական շերտեր՝, որոնք էլ վկայում են բարբառի հնագույն լինելու մասին: Այս բարբառով խոսվել է Համշեն գավառում, որը գտնվում

էր Այուենցու հիշատակած Տայք նահանգում: Համշենի հայկական իշխանությունը հիմնվել է VIII դարում Մեծ Հայքի Տայք աշխարհի Խաղտիք գավառում, մի տարածքում, որը համարվում է հայ ժողովրդի կազմավորման օջախներից մեկը[8]:

Համշենի հայկական իշխանության հիմնադիրներ Շապուհ և Համամ Ամատունիները, 789-790թթ. 12 հազար հայ բնակիչներով[9], այլևս չդիմանալով արաբների վարած տնտեսական և իրավական ծանր քաղաքականությանը, հավանաբար Արագածոտն և Կոտայք գավառներից[10] գաղթում են Բյուգանդական կայսրության սահմաններում գտնվող Խաղտիք գավառը և հաստատվում Տամբուր քաղաքում: Համամը վերակառուցում է ավերված քաղաքը՝ այն անվանելով Համամաշեն[11]:

Կարելի է ենթադրել, որ տեղաբնիկ և վերոնշյալ գաղթած հայերի խոսակցական հայերենների միախառնումից էլ ձևավորվել է Համշենի բարբառը: Լեզվաբան Գ. Ջահուկյանն իր V դարի բարբառների և բարբառախոս վայրերի դասակարգման աղյուսակում 32 բարբառներից որպես Արևմտյան կամ բյուզանդահայ բարբառների 7-րդ ենթաբարբառ առանձնացնում է «Խաղտիքահայ (ճանիկահայ) (~*Համամշենի>*Համշենի) ենթաբարբառը՝ «*Ջանիկ, *Ջեֆանոս, *Մալա» խոսվածքներով: Գ. Ջահուկյանը նշում է, որ իր առաջադրած բարբառային միավորների անվանումների մեջ հաշվի են առնված աշխարհագրական հին անունները և վարչական հին բաժանումները: Իսկ աստղանիշներն ունեն որոշ պայմանականություն. «որոշ վայրեր V դ. թեև չեն հիշատակված, բայց բացառված չէ նրանց այդ ժամանակ արդեն գոյություն ունենալու հնարավորությունը»[12]: Այդ պատճառով է, որ լեզվաբանն այս ենթաբարբառն անվանում է «Խաղտիքահայ-Համշենի»:

Օսմանյան լեզվաքաղաքականության նպատակները ու միջոցները

Յոթը դար գոյատևած Համշենի գրեթե անկախ հայկական իշխանությունը XVI դարում հայտնվում է Օսմանյան կայսրության ենթակայության տակ[13]: 1555թ. Ամասիայում թուրք-պարսկական հաշտության պայմանագրի կնքումից հետո օսմանյան իշխանություններն Արևմտյան Հայաստանի գավառներում սկսեցին իրականացնել բռնի մահմեդականացման քաղաքականություն՝ բնակչության ընբոստ ոգին կոտրելու, նոր գրավված այդ երկրամասերը վերջնականապես հպատակեցնելու և յուրացնելու հեռագնա նպատակով:

Այս տարածագոտում կրոնափոխության ալիքները տարբեր դարերում ունեցել են իրենց մակընթացությունները ու տեղատվությունները: Համշենի գավառը մինչև XVIII դարի վերջերը կարողացել է պահպանել իր ազգային դիմագիծը՝ լեզուն, հավատքը, սովորույթները: Սակայն XVIII դարի առաջին քառորդը Համշենի, Սև գետի (Այուրմենե) և հարակից գավառների հայության համար մահմեդականացման հզոր ալիքներին դիմագրավելու բուռն ժամանակաշրջան էր: Նրանց մի մասը ստիպված էր ընդունել մահմեդականություն, որոշ դեպքում՝ առերես: Շատերն էլ դիմել

են փախուստի՝ թաքնվելով Տրապիզոնի և Սամսունի (Ջանիկի) անտառներում ու քարանձավներում: Որոշ հատվածն էլ սփռվել է Ճորոխի ավազանում և Սև ծովի առափնյա շրջաններում: Համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության փուլերին, նպատակներին և հետևանքներին մենք անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածում[15]:

Օսմանյան կայսրության ծուլողական քաղաքականությունը ընթանում էր բռնի և տարաբնույթ ձևերով կրոնափոխության, ինչպես նաև լեզվական ասիմիլյացիայի միջոցով: Հասկանալով լեզվի էթնոտարբերակիչ դերը, օսմանյան իշխանությունները խիստ կարևորում էին կայսրության լծի տակ գտնվող ժողովուրդներին թրքախոս դարձնելը՝ ամբողջականացնելով նրանց ծուլման գործընթացը: Այդ էր պատճառը, որ ուրացյալ հայերին արգելվում էր հայերեն խոսել, հակառակ դեպքում, ինչպես ստորև կտեսնենք, նրանց սպասվում էին ծանր պատիժներ:

Օսմանյան կայսրության այս քաղաքականությունից զերծ չի մնացել նաև հայոց Համշեն գավառը: Ինչպես գրում է Պ. Թումայանցը, մոլլաները, ճնշում գործադրելով, արգելում էին հայերեն խոսել. «Գարատէրէի քանի մը հազար ընտանիքն նոյնպէս և Համշէնի սմենքն ալ մահմեդական եղած և քրիստոնէութեան ամէն նշան կորուսած են. միայն ազգային գաւառական բարբառը իբրև մայրենի սեպհական լեզու զուտ պահած են և ամենն ալ ցարդ կը գործածեն, սակայն այս մասին բաւական նեղութիւն կը կրեն իրենց մոլլաներէն, որոնք տասներկու տարիէն իվեր երբ քանի մէ ընտանիք ասոնցմէ վերստին քրիստոնեայ եղան, հայ լեզուն արգելել կը ջանան և եօթը հայերէն բառը մուսուլմանի մը համար հայհոյութիւն մէ ըսելով՝ ժողովուրդը կը գաղթակղեցընեն ու կը վախցնեն»[16]: Ս. Հայկունին այս առիթով պատմում է, որ 1840 թ. Համշենում և Սև գետում թուրք մոլլաները դարձյալ մեծ ճնշումներ էին բանեցնում, «որ այլևս հայերէն չխոսին. «Հայերէն եօթը բառը մի հայհոյութիւն է» ասացին, մօլլաները տնէ տուն մտան, ստիպեցին հայերէն խօսիլն արգիլել, կանայք նեղ մնալով քանի գիւղերից փայտի հարուածներով արտաքսեցին զմօլլաներն, իսկ այր մարդիկ երկիւղ կրելով թէ կոտորած առաջ պիտի գայ, կը հաւաքուին իրենց աղայի մօտ, ուր որոշում կանեն թէ ով որ հայերէն խօսի, իրենց աղային հինգ ոչխար տուգանք տայ»[16]:

Էթնոհոգեբան Ա. Նալչաջյանը, տիրապետող էթնոսի՝ ենթակա էթնոսին ուղղված ծուլման սպառնալիքների և իրական ճնշումների մասին խոսելիս ընդգծում է, որ «գերուժեղ ճնշման արտահայտություններն են՝ մայրենի լեզուն օգտագործելու և ազգային դպրոցներ հիմնելու վրա դրված արգելքները, սեփական մշակույթից հրաժարվելու պահանջները, կրոնափոխ լինելու պահանջը, ֆիզիկական հաշվեհարդար տեսնելու սպառնալիքը և դրա իրագործումը՝ ընդհուպ մինչև ցեղասպանություն»[17]:

Բազմազգ Օսմանյան կայսրության իշխող շրջանակները շատ լավ էին հասկանում, որ սյալազգիների ծուլումը բավականին բարդ գործընթաց է, մանավանդ, որ տիրապետող ազգի և մյուսների միջև գոյություն ուներ, ժամանակակից էթնոհոգեբանության տերմինով ասած, «էթնիկա-

կան անհամատեղելիություն»[18]: Որպես էթնիկական անհամատեղելիության երկու կողմ Ա. Նալչաջյանն առանձնացնում է ժառանգական տարբերություններն ու մշակութային անհամատեղելիությունը[19]: Տվյալ դեպքում՝ Օսմանյան կայսրությունը շատ լավ ըմբռնում էր, որ այս գործոնները կարող են միշտ վառ պահել իր ենթակայության տակ հայտնված ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունը: Ուստի օսմանյան աշխարհաքաղաքական ընկալումներից բացի՝ այս հանգամանքների վերացմամբ էր պայմանավորված այլազգիների նկատմամբ կայսրության (հետագայում նաև Թուրքիայի Հանրապետության) որդեգրած ձուլման և ոչնչացման քաղաքականությունը:

Մահմեդականացված համշենահայերը նույնպես չխուսափեցին բռնություններից: 19-րդ դարի ամբողջ ընթացքում և 20-րդ դարի սկզբում նրանց հալածում էին հայերեն (Համշենի բարբառով) խոսելու համար: Անգամ իսլամացումը համշենցիներին չէր փրկում ֆիզիկական ոչնչացումից: Քանի դեռ նրանք շարունակում էին խոսել հայերեն, համարվում էին անհուսալի տարր և մշտապես գտնվում էին սպառնալիքի տակ: Ինչպես վկայում է Դրոզդստանի Կըզլ-Կիյսւ քաղաքում բնակվող աքսորյալ մահմեդական համշենցի Դուրսուն Կարաբաջակօղլին, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իր ազգականները, ցանկանալով հեռու մնալ արհավիրքներից, ընտանիքով որոշում են մեկնել Կոստանդնուպոլիս, բայց նավի վրա հայերեն խոսելու պատճառով թուրքերը նրա ողջ ընտանիքը մորթում են և նետում ծովը: Ըստ Կարաբաջակօղլուի, թեև այդ ժամանակ նա փոքր էր, բայց ինքն ու գյուղի իր հասակակից երեխաները շատ լավ հասկանում էին, որ հայերեն խոսելը վտանգավոր էր, սակայն այլ լեզու չգիտեին[20]:

Նման ճնշումների արդյունքում՝ հայերենի հաշվին մեծ չափով տարածում գտավ թրքախոսությունը: Թեև Թուրքիայում մնացած համշենահայությունը սկզբնական շրջանում առերես էր ընդունել մահմեդականություն, ցավոք, ժամանակը ինչպես նաև միջավայրը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական հետևողական ձուլման քաղաքականությունը, վախի և զանազան հալածանքների մթնոլորտը կատարել են իրենց դերը: Եվ այսօր նրանց մի մասի հայկական ինքնությունն արտահայտվում է ընդամենը գենետիկական ծագման մասին հիշողությամբ և մշակութային որոշ շերտերի պահպանմամբ:

Հատկապես լեզուն ազգային ինքնագիտակցության, թերևս, առաջին գործոնն է, որի բռնի ոչնչացումը աղետաբեր հետևանքների է հանգեցնում տվյալ էթնոսին:

Գերմանացի հեղինակ Մ. Հունբերը գրում է, որ «չի կարելի տիրանալ ինքնությանը, այն ինքնաբերաբար է առաջանում, բայց երբ արդեն ձեռք է բերվում, այն դեռ չի կարելի ապահով համարել: Մշտապես կա ինքնությունը օտարից պաշտպանելու կարիքն ու անհրաժեշտությունը»[21]:

Գերմանաբնակ համշենցի Ալիե Ալթը նկատում է, որ լեզվի ճնշման արդյունքում համշենցիները մերժում են իրենց հայկական արմատները, կրոնը և ինքնությունը: Ըստ Ալթի, այս առումով տուժել են հատկապես «արևմտյան համշենցիները»[22]:

Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության հետևանքով ցեղասպանությունից վերապրած քրիստոնյա համշենահայերի մեծ մասը հաստատվեց Սև ծովի հյուսիսային ափերում՝ պահպանելով իր լեզուն, հավատքը, ազգային սովորությունները: Նրանց խոսակցական լեզուն ուսումնասիրել է Հ. Աճառյանը՝ այն համարելով Համշենի ինքնուրույն բարբառ[23]: Համշենի բարբառը պատկանում է արևմտյան խմբակցության *կը* ճյուղին: Խոսվել է Արդվինի, Համշենի, Տրապիզոնի, Սամսոնի (Ջանիկ), Կերասունի, Օրդուի տարածքներում և հարակից վայրերում, Ճորոխի ավազանի բնակավայրերում: Համշենի բարբառը, ըստ սփռվածության, ունի իր խոսվածքային յուրահատկություններն ու տարբերությունները: Տրապիզոնից հեռու, լեռներում մեկուսացած գյուղերի բարբառը Հ. Աճառյանը համարում է ամենից բնիկ ձևն, իսկ քաղաքամերձ շրջաններում արդեն այն կրում է փոփոխություն: Նրա կարծիքով, Համշենի բարբառի բնիկ ձևը պահպանել են Սալա գյուղի բնակիչները[24]: Ինչպես արդեն նշել ենք, Համշենի բարբառում առկա են գրաբարյան շերտեր, այն «հարուստ է գրաբարի այնպիսի հազվագյուտ բառերով, որ ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել»[25]: Լեզվաբանը հնագույն բառերից առանձնացնում է՝ անք կամ անութ>*օնք* «գիրկը», անալութ>*օնլութ* «եղնիկ», զերծանիլ>*զեյծնուշ*, ողն>*էօղ, օղօն* «երկարանիստ բլրակ» և այլն: Բարբառը աչքի է ընկնում նաև նորակերտ բառեր կազմելու ներունակությամբ[26]:

Այս բարբառով շարունակում են խոսել Սև ծովի հյուսիսայինի՝ կովկասյան ափերում, նաև տարբեր երկրներում սփռված համշենահայերի զգալի մասը, ինչպես նաև Արդվինի նահանգի մեջ մտնող Խոփա և Բորչկա գավառներում և հարակից գյուղերում ապրող մահմեդականացված համշենահայերի սերունդները:

Իսկ բուն Համշենի գավառում (այն ընդգրկում է Թուրքիայի Ռիզե նահանգի՝ Չամլըհեմշին և Փազարհեմշին գավառակները) ապրող բաշհամշենցիներն արդեն թուրքախոս են, սակայն պահպանել են հայկական որոշ ծեսեր և ավանդույթներ, կենցաղային սովորություններ, երգեր ու պարեր, շարունակում են գործածել հայերեն բազմաթիվ բառեր: Հոլանդացի լեզվաբան Ու. Բլեսինգը բաշ-համշենցիների լեզուն ուսումնասիրելով, նրանց գործածական թուրքերենում գրի է առել բազմաթիվ հայերեն բառեր՝ *(բառավ<պառավ, ահբեր<աղբեր<եղբայր, թելխաշ<թերխաշ, փեյփու<փրփուռ, փոչղուշ, էթմեք<փոցխել, քեյնիչ<քերիչ, քերենդի<գերանդի, քելթաք<գելթաք<գայլաթաթ, հարավ<հարսիկ, վառեգ, մոզի, նախըր<նախիր, ագոս<ակոս, գոշք<կոշտ, քաղոն<քաղհան, խեներչի<խնոցի, բափիչ, գեթող<կթող, գեթիչ<կթիչ, խավիչ<խավիծ, խաչիլ, գայգութ<կարկուտ, մեշուշ<մշուշ, խելեզ<խլեզ*[27] և այլն: Պահպանվել են նաև մի շարք հայկական տեղանուններ և որոշ անձնանուններ՝ *Ագինչօյ,*

Աղփեննէ, Աղվեչուր, Անուշդեղ, Այդեր (Արտեր), Բուչեղաչօյ, Էնթիփոս, Սանթիփոս, Հեդիփոս, Քեթմեչ (Գետմեջ), Փալաքչուր (Բարակջուր), Փալովիք, Սալ, Սալեչուր (Սալայջուր), Արդեշեն-Արդաշեն, Ավելօր, Ջեմաքդաւի, Չեյմաքչուր (Ճերմակջուր), Գաղնուք (Կաղնուտ), Գալեր (Կալեր), Քոյդուք, Մայք, Մեչովիք, Մեղվոր, Փոքուք, Սոխովիք: Անձնանուններից Ու. Բլեսինգը գրանցել է՝ *Ափել, Ավեդիք, Առաքել, Արաքիմ-օղլու, Մեղդեսի-օղլու (մահտեսի բառից)*[31]:

Բաշ-համշենցիներին անվանում են նաև արևմտյան համշենցիներ, իսկ հարևան լազերը նրանց կոչում են «արմենի»: Ավելի տարածված, այսպես ասած, ոչ-պաշտոնական դիմելաձևը «հաստակող հայն» է: Հատկապես բաշ-համշենցիները հայտնի են որպես լավագույն հրուշակագործներ և հացթուխներ: Թուրքիայի մեծ քաղաքներում և անգամ Հաքքարիում հայտնի փռերն ու հրուշակեղենի սրճարանները պատկանում են բաշ-համշենցիներին[32]:

Եթե այսօր կրոնափոխ բաշ-համշենցիները, պահպանելով բազմաթիվ հայերեն բառեր, այդուհանդերձ, մոռացել են հայերենը, մեծ մասն էլ մերժում է հայկական ծագումը, ապա Խոփայի գավառի մահմեդական համշենցիները (կամ արևելյան համշենցիները), չնայած ճնշումներին և հալածանքներին, մեծավ մասամբ, խոսում են Համշենի բարբառով (որոշ խոսվածքային յուրահատկություններով), ինչը նրանց թուրքական միջավայրում առանձին էթնիկ միավոր զգալու և հաճախ իրենց հայկական ծագման մասին հիշողության խթանիչն է:

Ժամանակի ընթացքում Խոփայի համշենցիների բարբառում ներմուծվել են թուրքերեն բառեր և արտահայտություններ, բարբառը թուրքերենից կրել է նաև հնչյունական ազդեցություններ:

Առհասարակ Համշենի բարբառն, իր բոլոր խոսվածքներով հանդերձ (հատկապես կրոնափոխների լեզուն) հայերենի խրթին բարբառներից է, ունի ինքնատիպ բառապաշար և քերականական կառույցներ: Արևմտյան գիտնականներ Ռ. Բենինգհաուսի և Մ. Մեքերի դիտարկումների համաձայն Արևելյան խմբի համշենցիները հայերենը լավ են պահպանել, և Թուրքիայի հայերը գրեթե հասկանում են Խոփայի համշենցիների բարբառը, բայց վերջիններս բոլորովին չեն հասկանում մյուս հայերին[33]:

Խոփայի համշենցիների խոսակցական լեզվով է պայմանավորված նաև նրանց ինքնանվանումը «հոմշեցի»: Շատ դեպքերում Խոփայի համշենցիները խուսափում են իրենց հայկական ծագման մասին խոսել: Նրանք իրենց հայտարարում են առանձին էթնիկական միավոր, որն ունի նաև առանձին լեզու: Ըստ Բերթ Վոքսի՝ համշենցիներն իրենց լեզուն կոչում են «հոմշեցմա»[34]: Կրոնափոխ համշենցիների բարբառի և բանահյուսության առաջին ուսումնասիրողներից մեկի՝ Սերգեյ Վարդանյանի համաձայն՝ Միջին Ասիա աքսորված համշենցիները և Խոփայի համշենցիներն իրենց խոսակցական լեզուն անվանում են «հոմշեցնակ» կամ «համշեցնակ»: Թերևս տեղական բարբառով կարելի է պայմանավորել այն, երբ համշենցիների շրջանակում նրանց հայ լինելու մասին քննար-

կումներ կամ վեճեր են լինում, «արևմտյան համշենցիները» ասում են, որ «ոչ թե մենք ենք, այլ Խոփայի համշենցիներն են հայ»[33]:

Համշենցիների ծագման և ինքնության մասին հետաքրքիր հրապարակում եղավ նաև թուրքական մամուլում:

Թուրքական հայտնի «Ռադիկալ» թերթում տպագրված «Հեմշենցիների մասին, հեմշինցիները հայե՞ր են» հոդվածի, թուրք հեղինակը թեև խուսափում է մի քանի կարևոր հարցերի պատասխանները տալուց, այնուամենայնիվ, ինչպես նկատում է Ս. Վարդանյանը, այդ հոդվածը ուշադրության է արժանի որպես «թուրքական մամուլում մահմեդական համշենցիների մասին քիչ թե շատ անաչառ խոսք ասելու առաջին փորձերից մեկը»[34]: Հենվելով «էթնիկական խմբերը Թուրքիայում» գրքում հրապարակված Պ. Անդրյուսի տեղեկությունների վրա, հոդվածագիրը՝ Ջան Ուղուր Բիրյոլը, գրում է, որ Խոփա-Քեմալփաշայի կողմերում ապրողներն «իրենց ճանաչում են որպես հոմշեցի: Այս արևելյան խմբի հեմշինցիների հիմնական բնակավայրերը Արդվինի նահանգում, Խոփայի և Քեմալփաշայի միջով անցնող գետային ցանցի վրա են գտնվում: Արևելքում Ճորոխ գետը բնական սահման է ստեղծում: Արևելյան հեմշինցիների լեզուն հայերենն է: Նրանք խոսում են նաև արևմտյան բարբառով և թուրքերենով: Շրջանի բնակիչներն ինչքան էլ պնդեն, որ խոսում են հեմշիներեն, իրականում այդպիսի լեզու չկա»[35]: Հեղինակն արձանագրում է, որ առևտրի նպատակով Սև ծովի արևելյան կողմը ժամանած հայերի և տեղի բնակչության միջև լեզվական տեսանկյունից ընդհանրություններ էին նկատվում: Այնուհետև Ջ. Ուր. Բիրյոլը եզրահանգում է, որ «որքան էլ ներկայումս հեմշինցիներն իրենք իրենց իբրև հայ չեն ճանաչում, այն լեզվով, որով խոսում են, հայերեն է, և որոշ աղբյուրների համաձայն՝ հայերենի մի բարբառ»[36]:

Համշենցիների բարբառն ունի խոսվածքային տարբերակներ: Ցավոք, նրանց բարբառը դեռևս համալիր կերպով ուսումնասիրված չէ: Այդուամենայնիվ, այդ բարբառով բանահյուսական որոշ նյութեր գրառվել են: 1960-ական թթ. ֆրանսիացի լեզվաբան Ժ. Դյումեզիլը գրառումներ է կատարել Ատամբուլում սովորող կրոնափոխ համշենցիներից[37]: Ս. Վարդանյանը գրի է առել և 1989թ. հրատարակել Խոփայից հարակից Աջարիայի սահմանամերձ գյուղերից 1944թ. Միջին Ասիա աքսորված կրոնափոխ համշենցիների խաղիկներն ու հեքիաթները՝ կազմելով նաև համապատասխան բառարան[38]: Ս. Վարդանյանը նրանց լեզուն համարում է Համշենի բարբառի առանձին խոսվածք, որը «զգալի տարբերություններով հանդերձ համեմատաբար մոտ է Տրապիզոնի շրջակա գյուղերի խոսվածքին»: Այն բաժանվում է երկու ճյուղի. «...ադլեցիների և քուրցևանցիների (այսինքն՝ Արդալա գյուղի բնակիչների և դրսեցիների)»[39]:

Թուրքական իշխանությունները, չկարողանալով Արդվինի նահանգի մահմեդական համշենցիներից վերջնականապես արմատախիլ անել հայախոսությունը, պաշտոնական պատմագրության միջոցով ոչ միայն խճճում և աղավաղում են Համշենի պատմությունը, համշենցիների ծա-

գումնաբանությունը, այլև հայտնի կեղծարար Մ. Սաքաօղլուի միջոցով հայտարարում, որ համշենցիները բացի թուրքերենից ուրիշ լեզու չեն իմացել: Նրանց թուրքերենն էլ հին Օղուզի կամ Սաքա ցեղի բարբառն է, որի ձայնավորով սկսվող բառերի սկզբում «H» կամ «Kh» է ավելանում: Մ. Սաքաօղլուն գրում է, որ անասնապահությամբ զբաղվող որոշ համշենցիների լեզվում տեղական կովկասցիների (իմա՝ լազերի–L.U.) հետ հարաբերությունների և բարեկամության արդյունքում, մի քանի բառ է ներմուծվել[10]:

Մ. Սաքաօղլուն իր գրքում նշում է նաև համշենցիների թուրքերենում այսօր էլ գործածական մի շարք բառերի օրինակներ՝ որևէ խոսք չասելով, որ դրանց մի մասը մնացել է նախկինում հայախոս համշենցիների խոսակցական լեզվից՝ օնվաք/օվանք (ջրում եփվող անասունակեր), հեղեզ (խորխորատ), շիմ (շեմ), քեթեման (կովերի աղի աման), Փալովիթ (տեղանուն), էսեվ Ասփա(ծ)-բացականչության արտահայտություն (Աստված), աղու (թույն), Չեմակ (ճերմակ), շերադ (պանիր պատրաստելուց հետո մնացած ջուրը, շիճուկ), քաքանոչ (արտաքնոց), քող (հավի թուխս նստելը), աշ/չաշ-եգիպտացորենից և ցորենից պատրաստված ապուր (ճաշ), փելիթ–(բլիթ, բացված հաց)[11]: Ի դեպ՝ դրանցից մի քանիսը որպես հայկաբանություններ կան Ու. Բլեսինգի կազմած ցանկերում[42]:

Մեկ այլ թուրք կեղծարար՝ Մ. Քըրզըօղլուն, ընդունելով Խոփայի համշենցիների լեզվի հայկական բարբառ լինելը[43], այն կրողների ծագման մասին առաջարկում է հորինովի տեսություններ, որոնք, ինչպես վկայում է Ա. Ալթը, համշենցիների շրջանում, ցավոք, մեծ հանրաճանաչություն են ձեռք բերել: Ըստ նրա՝ Մ. Քըրզըօղլուի մշակումները դարձել են համշենցիների ինքնության անբաժանելի մասը: Շատերն այնքան են հեռացել հայկական արմատներից, որ իրենց համարում են օղուզական կամ բալքարական, կամ աքադական ցեղերի սերունդ, կամ էլ Միջին Ասիայից ու Խորասանից եկած մի ժողովուրդ[44]: Ա. Ալթը նշում է, որ համշենցիներն իրենց վերագրում են ամեն տեսակի ծագում, բայց ոչ «մահմեդական հայ» և «միայն հատուկենտ համշենցիներ են գիտակցում այս տարբերությունները»[45]: Ա. Ալթն ավելացնում է նաև, որ այսօր, ըստ էության, գրեթե չկա կրոնավտխված, մահմեդականացած որևէ համշենցի, որն իրեն հայ է ճանաչում. «Պատմական իրականությունը բացառելու, մշտական լռության և իրենց ծագումը մերժելու հանգամանքն, անշուշտ, վկայում է, որ համշենցիների մոտ նկատվում է ինքնագիտակցության և ինքնության կորուստ»[46]:

Կրոնափոխ համշենցիների երգերը

Այնուհանդերձ, իրենք իրենց «հոմշենցի, հոմշեցի» անվանող հայախոս մահմեդականների մերօրյա սերունդները վերջին մի քանի տարիներին սեփական արմատների որոնման հետաքրքիր դրսևորումներ ունեցան. նրանց բարբառով Թուրքիայում նկարահանվեց «Մոմի» ֆիլմը, թո-

ղարկվեցին նաև Համշենի բարբառով երգեր ընդգրկող 2-3 խտասկավառակներ: Հատկապես արժեքավոր է 2005 թ. Թուրքիայի համշենցիների նախաձեռնությամբ թողարկված «Վովա» "Vova" («Ո՞վ է») (Համշենցու խաղ, Hemshin Ezgileri) երգերի սկավառակը: Նրան կից հրապարակված գրքույկում համառոտ ներկայացված է Համշենի և համշենցիների պատմության երկու տարբերակ. մեկը՝ համշենցիների հայկական ծագումը հավաստող, իսկ մյուսը ծանոթացնում է թուրքական հորինված վարկածին: Գրքույկը եռալեզու է՝ կրոնափոխ համշենցիների բարբառով՝ թուրքերեն տառադարձումով, և այդ նույն տեքստերի անգլերեն, թուրքերեն թարգմանությունները: Նշենք, որ թուրքերեն տառադարձման հետևանքով որոշ բաղաձայն հնչյուններ ճշգրտորեն չեն արտացոլվել, թուրքերեն բաժնում կան նաև առանձին բառերի ոչ ճիշտ թարգմանություններ:

Տեքստերն ու երգերը վերականգնել և թարգմանել ենք ժամանակակից հայերենի: Թարգմանության ընթացքում մի շարք բարբառային բառերի ճշտումների և արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, բանասեր-ազգագրագետ Ս. Վարդանյանին:

«Գասթէվի թա համշէցնօուն[47] ավալուբաբիյէ Իսացան հէդէվ 780 դաին Անադօլուց էգաց, Սէվ ձօվուն վէթու ջօթին սաթօուն նէսթած ին: Չիյափ շինած ունին, օնունը մեծվօրին օնունը թիյած՝ Համամաշէն ասթած ունին, ասօր Հեմշին ա: Սաթօուն մեծին Խաչի Քար ասթած ունին, ասօր Քաչքար ա:

Գասին թա համշէցնօուն ավալուբաբիյէ՝ Ամաթունիքը, Անադօլուսիվա էմմէնու առաջ էգօղ խիրիսթիյան թուրք ին: էրմէնէսթանուն հէդէ թէրգէցութին աղած ունին, գէսէ էրմէնէսթանուն լիզուն սօրված ա, ուինցը համշէցի աստած ունին, լիզվէնուն ալ համշէցնագ[48]: Հէդէվ թուրքնու Անադօլուզ առած ունի մուսլիման աղած ին:

Գասին թա համշէցնօուն ավալուբաբիյէ՝ Ամատունիքը, Անադօլուից ... Սէվ ձօվուն վէթու ջօթէ էգօղ, անդաղ դուն-թուր շինօղ, անդաղ աբրօղ էրմէնի ին: Հէդէվ գէսը Սէվ ձօվուն էնթու ջօթնիյուզ քէնաած ին, Անադօլու գինօղնիյէ թուրք ու մուսլիման աղած ին: Ասօր Խօփաի համշէցիքը համշէցնագ խաբրէլ գաին, մէգալօքը համշէցնագ խաբրէլ չի գաին: Համշէցնօուն Սէվ ձօվուն էնթու ջօթին աղբէրդաքը խիրիսթիյան ին, ինքնուինցը մէգ համշէցի հայ իք գասին:

Գասին թա համշէցիքը թադան ին, լէրէնցի ին, սօյ ին ...

Գասին թա իսպան ա, գասին թա իման ա ...»

«Ասվում է (պատմվում է), թե համշենցիների նախապապերը Հիսուսից հետո 780 թվականին Անատոլիայից եկել են Սև ծովի վերի ծայրը նստել (բնակություն հաստատել): Քաղաք[49] են կառուցել, անունը դրել են մեծավորի անունը, Համամաշեն են ասել, այսօր Համշեն է: Սարերից մեծին Խաչի Քար են ասել, այսօր Քաչքար է:

Ասում են, թե համշենցիների նախապապերը՝ Ամատունիները, ամենից առաջ Անատոլիա եկած քրիստոնյա թուրք են: Հայաստանի հետ

դրկիցություն (հարևանություն) են արել, կեսը Հայաստանի լեզուն սովորել է, իրենց համշենցի են ասել, լեզվին էլ՝ համշեցնակ: Հետո թուրքը, որ Անատոլիան գրավել է, մուսուլման են դարձել:

Ասում են, թե համշենցիների նախապապերը՝ Ամատունիները, Անատոլիայից ... Սև ծովի վերին ծայրը եկող, այնտեղ տուն-տեղ շինող, այնտեղ ապրող հայ են: Հետո կեսը Սև ծովի այն (դիմացի) կողմն է գնացել, Անատոլիա մնացողները թուրք ու մուսուլման են դարձել: Այսօր Խոփայի համշենցիները կարողանում են համշեցնակ խոսել, մեկելները համշեցնակ խոսել չեն կարողանում: Համշենցիների՝ Սև ծովի այն կողմի եղբայրները քրիստոնյա են, իրենք իրենց ասում են. «Մենք համշենցի հայ ենք»:

Ասում են, թե համշենցիները աշխատասեր են, լեռնեցի են, լավ են ...

Ասում են, թե այսպես է, ասում են, թե այնպես է ...»:

Բերված լեզվական փաստերը ցույց են տալիս, որ Խոփայի համշենցիների բարբառն այսօր էլ կենսունակ է. համշենցիները շարունակում են նրանով խոսել, պատմություններ և երգեր հյուսել:

Բացառիկ արժեք ներկայացնող երգերի շարքում տեղ են գտել համշենցիների այն խաղիկները, որոնք արդեն երիտասարդ սերունդն աստիճանաբար մոռացության է մատնել: Դրանք հիմնականում գրանցված են Արդալա, Արդանուչ, Մաքրիալ, Չարղինա, Խիգո. Զուրփիջի, Չավուշլու, Չխալա, Զալունա, Խալբասի, Քյոփրիջի բնակավայրերից: Իրենց տաղաչափությամբ ու բովանդակությամբ այդ երգերը հիշեցնում են հայկական քառատող քնարական երգերը՝ խաղիկները: Դրանցում հիմնականում և անմիջականորեն դրսևորվում են հերոսի անձնական զգացումները, մեծ տեղ է գրավում սիրո թեման:

Ներկայացնում ենք Խոփայի համշենցիների մի քանի երգեր՝ բարբառով և զուգահեռ գրական հայերեն թարգմանությամբ:

Գրավոր այս փաստերն արժեքավոր նյութ են մատուցում ոչ միայն հայ բանահյուսությանը, այլև բարբառագիտությանը: Դրանց միջոցով կարելի է պարզել կրոնափոխ համշենցիների և Սև ծովի հյուսիսային ափերին հաստատված քրիստոնյա համշենահայերի խոսվածքների հնչյունական, քերականական և բառապաշարի ընդհանրությունները, շեղումներն ու տարբերությունները և պատկերացում կազմել նրանց այսօրվա լեզվավիճակի, ինքնության պահպանման մասին:

ՀԱՄՇԷՑՈՒ ԽԱԴ
Համշէցի

ՔԻՄԱՆԱՔ ԹԱ, ՀՕՋԱ ԻՔ

Մէգ քէդի մէ ջօթին իք, մէգ արդի մէ նապրին,
Մէգ սարի մէ քէլխին իք, մէգ լէրի մէ փօսին,
Ցէն ցքիք ուք, գօնչիք ուք, խօսիք ուք,

Մարիգ, դադիգ, քուրիգ, յարիգ,
Դուն ունիք, թուր ունիք, փօն ունիք,
Չօվ ունիք, սար ունիք, լէր ունիք,
Սէրդօուզ սէրդէրդիյուզ ջօմփա ունիք:

ԳԻՏԵ՞Ք, ԱՅՍՏԵՂ ԵՆՔ

Մենք մի գետի եզրին ենք, մեկ արտի ծայրին,
Մենք մի սարի գլխին ենք, մեկ լեռան հարթավայրում,
Չայն ենք տալիս, երգում ենք, խոսում,
Մայրիկ, հայրիկ, քույրիկ, յարիգ,
Տուն ու տեղ ունենք, գործ ունենք,
Ծով ունենք, սար ունենք, լեռ ունենք,
Մեր սրտերից ձեր սրտերը ճամփա ունենք:

ՄԱՆ, ԱԱՔԱԳ, ՍՍՍ

Մա՛ա, աաքաագ, մա՛ա,
Գունգի մի ծօվուդ վաան,
Հաքվան հէդէք էգօդ ում,
Գունգած իմ խաբրիզ[60] վաան,

Աաքաագը շադ փարցն ա,
Ջաբէ մաիր օչ, գասիմ,
Իսա դայիս ինչուգ աշուն,
Ջաբէ օսնիր օչ, գասիմ:

Յէ[61] մար, ծաղը[62] քաղէցի,
Գօթէջաքէ վօ՞վ ժօղվա,
Յէ՛ մար, սօղէ[63] գարքօղ էս,
Ինչուգ աշուն ալ բաա:

ՄԱՅՐ ՄՏԻՐ, ԱՐԵԳԱԿ, ՄԱՅՐ ՄՏԻՐ

Մայր մտիր, արեգա՛կ, մա՛յր մտիր,
Մի կանգնիր ծովիդ վրա,
Աջավոտյան հետդ գալու եմ,
Ես իմ խոսքիս տերն եմ:

Արեգակը շատ բարձր է,
Ասում եմ, թող բոլորովին մայր չմտնի,
Այս տարի մինչև աշուն,
Ասում եմ, թող բոլորովին չանցնի:

Մա՛յր, եգիպտացորենի տերևը քաղեցի,
Ցողունները ո՞վ ժողովի,
Մա՛յր, ի վերջո, ամուսնացնելու ես,
Մինչև աշուն էլ պահիր:

ՍՍԱ՛, ՕՆԴԷՐ, ՍՍՍ՛

Սսա՛ օնդէր, ասա՛, քու դարդդ շադ ա,
Բազի բիր քալէ գուս օղն ի վէր փաուս,
Քա, քու հագուդ գաբաճ[64] մերաքլի[65] խաղա[66]
Բազի բիր քալէ գուս սարն ի վէր փադա.
Քաուն քա, օղնուքէ կուկուն գօնչա գու՛.
Աղչկէնին քալի գուն արդն ի վէր բօրխա[67],
Օմար քա լէրնուքէ ծաղիգ ծաղցի գու,
Բարվէնին քալի գուն փօսնիճէ[68] չուրա:
Չօմէին օղնիճէ լալօվ քալէցէր,
Քա՛, քօլէցէր ինձի, թուն ալ աէցար
Սաքրիյալ փօսնիճէ լալով քալէցէր,
Քա, քօլէցէր ինձի, թուն ալ աէցար,
էրգինքուցէ աաքագէդ ինձ ամա,
Իգվան աղավ, մաէցար ու յէդ անցար,
Պարցէ սարի ծաղիգէդ թուն ինձ ամա,
Աղիմ էէդ աէցար ու բօրգցար:
Ֆադի՛, քա օղքինդ փօբին նաղ աղավ,
Քու մարին քօվուշէ սըղդիս խաչ[69] սղավ,
Ֆադի[70], ցէ բերանէ մեծ հարսնիք աղավ,

ԱՍՍ՛, ԱՆՑԵՐ, ԱՍՍ՛

Ասա՛, անտեր, ասա, քո դարդը շատ է,
Երբեմն քայլում ես ջուրն ի վեր փայտի,
Քու հագիդ կապած՝ հետաքրքիր ծալերով,
Հաճախ քայլում ես սարնիվեր փայտի,
Գարուն կգա, ջուրներում կկուն կկանչի
Աղջիկները քայլում են արտնիվեր թորխ անելու
Ամառ կգա, լեռներում ծաղիկ կծաղկի,
Պառավները գնում են ջրի:
Ժամի ջուրից լալով քայլեցիր,
Աղջի՛, վառեցիր ինձ, դու էլ այրվեցիր
Մաքրիյալի հարթավայրով լալով քայլէցիր,
Աղջի՛, վառեցիր ինձ, դու էլ այրվեցիր,
Երկնքից արեգակ ես դու ինձ համար,
Երեկո եղավ, մայր մտար ու կորար (անցար)
Բարձր սարի ծաղիկ ես ինձ համար,
Սաթույց էիր, վառվեցիր ու մրմոացիր:
Ֆադի՛, քո ոտքի կոշիկը նեղ եղավ,
Քո մոր ողբը սրտիս խաչ եղավ,
Ֆադի՛, ձեր դռանը մեծ հարսանիք եղավ,

Քո մարին քօվուշէ սէրդիս խօչ աղավ.	Քո մոր ողբը սրտիս խաչ եղավ,
Զէնդիդէ՞ քէզի ամա քիլիսէ աղավ,	Զենդիդը քեզ համար եկեղեցի եղավ,
Զուռփիջին՞ խէչէցավ ձօվուն չայէ ինչավ,	Զուրփիջին փլվեց ծովի ծայրն իջավ,
Աոդալա՞ խէչէցավ ձօվուն չայէ ինչավ,	Արդալան փլվեց, ծովի ծայրն իջավ,
Ֆադի՛, իսա աշխարհէս մէզի զօր աղավ:	Ֆադի՛, այս աշխարհը մեզ դժվար եղավ:

Երգում թեև կան մի քանի թուրքերեն բառեր, բայց գերակշռողը հայերենն է՝ Համշենի բարբառը: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երգի թե՛ բառապաշարը, և թե՛ բարբառի ինքնատիպ քերականական ձևերը: Այս երգի մեջ հատկապես ուշադրության են արժանի «քիլիսե» (եկեղեցի), «խոչ» (խաչ), «խեչեցավ» բառերը. դրանք լեզվական փաստեր են, որոնք հիշեցնում են մահմեդականացված համշենցիների նախկին դավանանքը:

Այսպես՝ «խօչ»-ը խաչ բառի հնչյունափոխված ձևն է, այն կրել է Համշենի բարբառին բնորոշ բառամիջի ա>օ հնչյունափոխությունը: Ըստ Հ. Աճառյանի՝ «խաչ» նախապես նշանակում էր «սրածայր փայտ, ցից, յետնաբար՝ խաչ» ... դասում է բնիկ հայկական բառերի շարքին՝ «ճիւղ ծառոյ, որ իցէ բուսեալ երկայն և ուղիղ»: Համշենի բարբառում «խսւչ» նշանակում է նաև «եկեղեցի»[86]: Հ. Աճառյանը «խոչ» բառհոդվածի դիմաց գրում է «ոտքին զարնելու քար, փայտ, ցից, սւչքի փուշ, արգելք»: Այստեղից էլ խոչընդոտն, անխոչ «անարգել», «խոչառ լինել՝ անասունների ոտքը բան մտնելով կամ վնասելով՝ կաղ ի կաղ քայլել»: «Ծագմամբ նույն է խէչ, խաչ բառերի հետ՝ որոնց բուն նշանակությունն է «փայտ, ցից»: Խոտորջրի բարբառում՝ խօչ «անպէտք փոքր փայտի կտոր»[87]: Կրոնափոխ համշենցիները, պահպանելով այս բառը, այսօր այն օգտագործում են «սրածայր ոստ» իմաստով: Ըստ երևույթին «խեչեցավ» բառի հիմքում ևս ընկած է խաչ>խեչ բառը:

Խաչի հետ կապված մինչև այսօր հետաքրքիր մի արարողություն են պահպանել կրոնափոխ համշենցիները: Մի համշենցու վկայությամբ՝ հարսանիքից հետո տուն մտնելիս փեսան դռան վերևը դանակով խաչ է գծում, կամ խաչը խորհրդանշող չորս խազ է անում[87]:

Այս երգի մեկ այլ ավելի համառոտ տարբերակ 1991թ. «Փյունիկ» թերթում հրատարակել է Ս. Վարդանյանը: Այն 1978թ. ձայնագրվել է Խոփայի Չավուշլու գյուղում: Ձայնագրությունը Ս. Վարդանյանը ձեռք է բերել Դրոզդստանում՝ 1984-ին[88]:

Ցունէ էյվ փէռնէց չամի դալինէ,
էրօնդ ախչիգ դէսա լէռնսւն քալինէ:
Ալի քսւուն կուքա, թօրխ ընօղ չէս թա,
Փէրգը ափթ առնօղ ու մօն թառնօղ չէս թա:
Ինձի ալ քօլէցէր, թուն ալ աէցար,
Չէռնալին[89] օղնիվէր լալօվ նէն օնցար:
Ասա, բիձիգ, ասա, քո դարդըդ շադ ա,
Բազի բիր քալէս կու ասրդնիվէր փադա:

ՆԷՆՆԻ, ՆԷՆՆԻ
Նէննի, նէննի, ամաո, ամաո,
Չէվադնէցաո՛՞ փադ այի,

Նէննի, նէննի յար,
Շալագէ թէնէլ չկարցի.

Նէննի, նէննի, ամաո, ամաո,
Օննդէր իսա աշխարիս,
Նէննի, նէննի յար,
Հազ աի, առնուլ չկարցի:

Ինա էնթու փօսիյէ,
Սարի ծադիգ ձաղած ա,
Իսա դայի, օֆ, քաշէլօվ
Սրդիս աղուն գալված ա:

Յես էրթօո ում, էրթօղ ում,
Գավուրէ՛՞ նէն ասնօղ ում,
Դա՞՞, քէզի բա առնում օ՛չ,
Յես ինձի ձօվէ ցքօղ ում:

ՀԷՅ ԴԱՆԷ
Մօմի քաաչին[73] ունիս բա,
Քօղքիդ աղչիգ ունիս բա,
Քէզի էնիշքա գէլլիմ,
Գաղին, գագալ ունիս բա:

ԿՈՒԿՈՒՆ ԿՈՒԿԱ, ԳՕՆՉԱ ԳՈՒ
Կուկուն կուկա գօնչա գու,
Ալիմին քէլօխն ի վար,
Ասպած գէրագէ դա քօղ
Յազիջի քէլօխթիվար:

Մադմանէդ մօնա, մօնա,
Բիթուն քու մօէ փօն ա,
Քա[74], թուն ինձի քօլէցէր,
Քեզի ալ Ասպած քօլա:

Դա՛, մալիյէդ հէյ աա,
Գօբալախէ փէի գում,
Դա՛, թուն մի բա խէնդաս օչ,
Յէս Խարխանընն ժէմնի գում:
Քա՛, քու բարէ քօրցա գու[75],
Ուրթաթ օրիյէ բէչաղ՞՞,
Քա՛, թուն մի բա խէնդաս օչ,
Նէշանլու էս բա գերչաղ[77]:

ԷՐԱՆԴ
Քա՛, աշուն ու քա անա,
Դօնզէցան խաչաղ քաղա,

ՆԵՆՆԻ, ՆԵՆՆԻ
Նեննի, նեննի, ամաո, ամաո,
Ծիվաղենուց վառելափայտ պատրաստե-
ցի,
Նեննի, նեննի յար,
Շալակը դնել չկարողացա,

Նեննի, նեննի , ամաո, ամաո,
Այս անտեր աշխարհումս,
Նեննի, նեննի յար,
Սիրեցի, առնել չկարողացա:

Այնտեղի հարթավայրում
Սարի ծաղիկ է ծաղկել,
Այս տարի, օֆ, քաշելով
Սրտիս արյուն է կապվել:

Ես գնալու եմ, գնալու եմ,
Գավուրից այն կողմ եմ անցնելու,
Տղա, եթե քեզ չառնեմ,
Ես ինձ ծովը կգցեմ:

ՀԵՅ ԴԱՆԵ
Մամի, անձրուկ ունե՞ս,
Կողքիդ աղջիկ ունե՞ս,
Քեզ փեսա կլինեմ,
Կաղին, ընկույզ ունե՞ս:

ԿԿՈՒՆ ԿԳԱ, ԿԿԱՆՉԻ
Կկուն կգա, կկանչի,
Ալիմի գլխին,
Աստված կրակ թող տա
Գրագրի գլխին:

Իլիկդ մանիր, մանիր,
Բոլորը քո մոր գործն է,
Աղչի՛, դու ինձ վառեցիր,
Քեզ էլ թող Աստված վառի:

Տղա՛, ոչխարներդ հեռու քշի,
Ես մահակը կբերեմ,
Տղա՛, ինչո ւ չես ուրախանում,
Ես խարխանում կհասնեմ քեզ:
Քա՛, քո պապը գործում է,
Ուրթաթ օրերը սանձի փոկեր,
Ինչո ւ դու չես ուրախանում,
Նշանվելու ես, իսկապես:

ԳԵՂԵՑԻԿ
Քա՛, աշունը, որ գա
Տանձենուց խաղող քաղի,

Քա՛, յէս քէզի առնօղ չիմ,
Իսքարսէն վէվէր խաղա:

ԷԼԼԱ, ԷԼԼԱ
էլլա, էլլա, մեց էլլա,
էնթու քաղէ վի յէլլա,
էնթու քաղին աղչքէնին, յար,
Ասքի քաղսիյուզ յալլա:

Լուսնիկա էրանդ քիշէր,
Հա՛յդէ, էրթագ աս քիշէր,
Հէդէվ չախ ցէմէռ գէլի,
Վի յէլ, էրթագ աս քիշէր:

Այէ՛, գարմիլիգ, այէ՛,
Սօղինիդ ալ առ, այէ՛,
Սօղինէդ, քա, օչ աննա,
Ջուր մէ խավաղ ա՛ռ, այէ:
Ջօվէլէին օղնուքէ,
Քուքուլի իմ, քուքուլի,
Դէվէք ինձի իմ սէվդան,
Յես ալ Ասքէձուն քուլի:

Աղչի՛, ես քեզ առնող չեմ,
Ինչքան ուզում ես վերվերի պարիր:

ԵՂԱ. ԵՂԱ
Եղա, եղա, մեծ եղա,
Այն գյուղը վեր ելա,
Այն գյուղի աղջիկներին, յար
Ասացի՝ իմ գյուղից գնացեք:

Լուսնկա սիրուն գիշեր,
Հայդե, երթանք այս գիշեր,
Հետո անձրևոտ ծմեռ կլինի
Վե՛ր ել, երթանք այս գիշեր:

Արի՛, կարմրիկս, արի՛,
Կողքինիդ էլ առ, արի՛,
Կողքինդ, եթե չգա,
Մի ճուր խաղող ա՛ռ, արի:
Ջովելեի բլուրները,
Կռունկ եմ, կռունկ,
Տվեք ինձ իմ սիրելիին,
Ես էլ Աստծուն ծառա:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լեզվի էթնոպաշտպան դերի մասին ավելի մանրամասն տե՛ս Նալչաջյան Ա.. էթնիկական հոգեբանություն, Երևան, 2001, էջ 81-83:
2. Hübschmann H. Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischenSprachen, KZ, 23, 1875.
3. Տե՛ս Капанцян Г. А., Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947. Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. 1-2, Тбилиси, 1984. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1987: Samuelian T., Armenian Origins. An Overview of Ancient and Modern Sources and Theories, Yerevan, 2000.
4. Առհասարակ լեզվի և ազգային ինքնագիտակցության կապի մասին մանրամասն տե՛ս Бромлей Ю. Б., Очерки теории этноса, Москва, 1983, с. 110-117, 241-243, 327-332. Տե՛ս նաև Այվազյան Ա., Հայկական ինքնության հիմնաքարերը. բանակ, լեզու, պետություն, Երևան, 2007, էջ 58-60:
5. Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 16: Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 41:
6. Հ.Հյուբշմանը և Հ. Աճառյանը սխալ ընթերցումով լուրջ թյուրակարծության տեղիք են տվել՝ իբր հիշյալ տարածքների բնակչությունը եղել է այլազգի: Ակադ. Գ. Ջահուկյանը այս հարցին տվել է հետևյալ հիմնարար բացատրությունը. «Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը հակված են այստեղ հիշատակած անունների տակ հասկանալու Հայաստանի տերիտորիայում խոսված լեզուներ (հմմտ. Hubschmann H.. Armenishe Grammatik, 1895, էջ 519: Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 128-132): Այս հեղինակները հաշվի չեն առնում Այուններու երկի մեկնողական բնույ-

թը և դրանից անհրաժեշտ եզրակացություններ չեն անում: Մասնավորապես, պետք է նշել Հ. Աճառյանի ապացուցման մեջ թույլ տրված հետևյալ վրիպումները, խոսելով տվյալ տեքստում «զՄիջերկրեայսն» և «զՈստանիկսն» ծևերի հոգնակիության մասին՝ Հ. Աճառյանը մոռանում է, որ նախ տվյալ դեպքում խոսքը բառերի մասին է և ոչ բարբառների, երկրորդ՝ Սյունեցին շատ լավ տարբերում է շրջակա լեզուների և սեփական լեզվի բարբառների իմացությունը, նշված հատվածից առաջ Սյունեցին գրում է հենց շրջակա լեզուների մասին» (*տես* Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, էջ 17):

7. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 12:
8. Капанцян Г. А., Хаиаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947, с. 27. Տե՛ս նաև Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н. э., «Պատմա-բանասիրական հանդես», ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1998, N 1-2, էջ 233-246:
9. Պատմութիւն Դեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887. էջ 167-169: Հղումը տես նաև Խաչիկեան Լ., Էջեր համշինահայ պատմութիւնից, «Աշխատութիւններ», հատոր Բ,«Գանձասար» Աստուածաբանական կենտրոն, Երևան, 1999, էջ 122-123:
10. Խաչիկեան Լ., Նշվ. հոդվ., էջ 124-125:
11. Սամիկոնեան Յ., Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941. էջ 284: Տե՛ս նույնի աշխարհաբար թարգմանությունը՝ Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 113:
12. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 182:
13. Համշենի հայկական իշխանության մասին տե՛ս Խաչիկեան Լ., Էջեր համշինահայ պատմութիւնից, էջ 132-138:
14. Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Երևան, 2006, էջ 207-229: Տե՛ս նաև նույնի՝ Օսմանյան կայսրությունում համշենահայերի նկատմամբ վարած բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները և «Երկիր» շաբաթաթերթ, սեպտեմբերի 8, 2006, էջ 10-11, «Ձայն համշենական» ամսաթերթ, NN 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2006, էջ 2-3:
15. Թումայանց Պ., Պոնտոսի հայերը. աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի, «Լումայ», Տփիւիս, գիրք Բ (յուլիս), 1899, էջ 175:
16. Հայկունի Ս., Կորած ու մոռացուած հայեր. (Տրապիզօնի հայ-մահմետական գիւղերն, նրանց աւանդութիւնները եւ սովորութիւնները), «Արարատ», 1895, օգոստոս, էջ 297:
17. Նալչաջյան Ա., էթնիկական հոգեբանություն, էջ 429:
18. Նալչաջյան Ա., Նշվ. աշխ., էջ 427:
19. Նալչաջյան Ա., Նշվ. աշխ., էջ 427-428:
20. Ս. Վարդանյան, Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, «Ձայն համշենական», ամսագիր, NN 3-4, մարտ-ապրիլ, 2006, էջ 7:
21. Hübner M. "La beurette" Vom aus der Vorstaedte ins Herz der französischen Gesellschaft, Frankfurt am Main, 1996, p. 23.
22. Alt A., Tarihin ve Bugünün Aynasında Hemşin Ermenileri, İST, 2005, s. 36.
23. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947:

24. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, էջ 14-15:
25. Աճառյան Հ., նույն տեղում, էջ 12:
26. Աճառյան Հ., նույն տեղում, էջ 12-13:
27. Bläsing U., Armenischcs Lehndut im Türkeitürkischen am Beispiel von Hemşin, Amsterdam-Atlanta, GA 1992. Տե՛ս նույնի՝ Aemenisch-Türkısc Etymologiseh Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hemşinge nebst eingien Anmcrkungen zum Armenischen, insbesondere dem Hemşindialekt, Amsterdam-Atlanta, GA 1995.
28. The Hemshin. History, society and identity in the Highlands of Northeast Turkey, Edited by Hovann H. Simonian, London and New York, 2007. Տե՛ս ժողովածուի՝ Bläsing U., Armenian in the vocabulary and culture of the Turkish Hemshinli, p. 282, 283, 285, 287, 288, 289, 293.
29. Նշվ. աշխ., էջ 295.
30. Biryol C. U., Hemşinliler üzerine, Hemşinliler Ermeni mi?, Radikal, 2005, Haziran 12. Տե՛ս նույնի հայերեն թարգմանությունը, Ջ. Ու. Բիրյոլ, Հեմշինցիները հայե՞ր են, հեմշինցիների մասին, թուրքերենից թարգմանեց՝ Լ. Սահակյանը, «Ջայն համշենական» ամսաթերթ, NN11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 2006: Նույնը տե՛ս «Ազգ», 17 փետրվար, 2007, N 30:
31. Hemşin Gezimi, İkinci Bölüm, Türk Araştırmacıları, İstanbul, 1997, s. 85. Meeker M, The Black Sea Turks: Some Aspeckts of Their Ethnic and cultural Background, in: International Journal of Middle East Studies, Cambridge, 1971, p. 318-345.
32. The Hemshin. History, society and identity in the Highlands of Northeast Turkey, Edited by Hovann H. Simonian, London and New York, 2007. Տե՛ս այդ ժողովածուի՝ Bert Vaux, Homshetsma. The language of the Armenians of Hamshen, p. 257-278.
33. Տե՛ս Քայել Մարգարօղլու.«Կան համշենցիներ, հատկապես երիտասարդների մեջ, որոնք իրենց բացահայտ հայ են համարում», զրույցը վարեց Ռուբեն Մելքոնյանը, «Հանրապետական», N 7 (49), Երևան, 2007, էջ 44:
34. Վարդանյան Ս., Թուրքերեն հոդված մահմեդական համշենցիների մասին, «Ջայն համշենական» ամսաթերթ, NN11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, 2006: Տե՛ս նաև «Ազգ», 17 փետրվար, 2007, N 30:
35. Ethnic Groups in the Republic of Turkey, Wiesbaden, 1989, p. 181-184. Biıyol C. U., Hemşinliler Ermeni mi?, Radikal, 2005, Haziran 12. Տե՛ս նույնի հայերեն թարգմանությունը, Ջան Ուղուր Բիրյոլ, Հեմշինցիները հայե՞ր են, հեմշինցիների մասին, թուրքերենից թարգմանեց Լ. Սահակյանը,«Ջայն համշենական» NN11-12, 2006թ.:
36. Տե՛ս նույն տեղում:
37. Տե՛ս Dumezil G., Notes sur le parler d'yn arme'nien musulman de Hemşin. Memoires d'l Acade'mie Royale de Belgique. Classe des Lettres 57:4, 1964, Bruxelles, p. 5-52. Տե՛ս նույնի՝ Notes sur le parler d'un Armenien Musulman d' Ardala. Revue des E'tudes Arme'niennes. Paris, 2/1965p. 135-142. Trois recits dans le parle der Arme'niens musulmans de Hemşm. Revue des E'tudes Arme'niennes. Paris, 4/1967. Dokuments Anatoliens sur les langues et les traditions du Caucase, IV. Recits lazes en dialecte d' Arhavi (parler de Şenköy). Bibliotheque de l'E'cole des Hautes E'tudes, Section des Sciences Religieuses; Volume LXXIV. Paris, 1967. Un roman policier

en arme´nien d'Ardala. Revue des E´tudes Arme´niennes, Paris, 20/1986-87, p.7-27.

38. Ջայն համշենական, գիրք երրորդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ս. Վարդանյանը, Երևան, 1989, էջ 201-246:
39. Ջայն համշենական, գիրք երրորդ, էջ 207:
40. Sakaoğlu M. Ali, Dünden Bugüne Hemşin. Karadeniz'den Bir Tarih, Yeniyurt Yayınları, Ankara, 1990, s. 53
41. Sakaoğlu M. Ali, նույն տեղում, էջ 54-55:
42. Bläsing U., նշվ. աշխ.:
43. Kırzıoğlu M. F., I. Selim Çağında Hopa ile Arbavi Köyleri, TFA içinde, yıl 17, cilt 10, no. 201 (Nisan 1966), İstanbul, s. 4104.
44. Alt A., Tarihin ve Bugünün Aynasında Hemşin Ermenileri, s. 39-40.
45. Alt A., նշվ. աշխ. էջ 41:
46. Alt A., նշվ. աշխ. էջ 39:
47. Համշէցնօուն-նշանակում է համշենցիների, տեքստում տպված է համշեսքանում, ինչը, կարծում ենք, սխալ տառադարձման հետևանք է:
48. Համշեցնագ(կ)-նշանակում է Համշենի լեզվով, համշեներեն, տեքստում տպված է համշեսքագ, ինչը, կարծում ենք, սխալ տառադարձման արդյունք է:
49. Թուրքերեն և անգլերեն տեքստերում գրված է համապատասխանաբար şehir, city-(քաղաք), իսկ բարբառային տարբերակում՝ ծիափ:
50. Խաբրիզ-իմ խոսքը, այստեղից էլ՝ խաբարդաքէ-զրույցները, խոսակցությունները, խարբեցին-խոսեցին (տե՛ս Ջայն համշենական, գիրք երրորդ, էջ 243):
51. Յէ-ավագին, տարեցին դիմելածև:
52. Ջաղ-եգիպտացորենի տերև:
53. Սօղէ-հետո, ապա, ի վերջո:
54. Գաբա-կապա-1. շապիկի վրայից և վերարկուի տակից հագնելու երկար զգեստ, պարեգոտ: 2. կնոջ երկար ու լայն զգեստ:
55. Մերաքլի – անցել է թուրքերենից «merakli», բարգմանաբար՝ «հետաքրքիր»:
56. Խաղ-թուրքերեն «kat», բարգմանաբար՝ «շերտ, ծալք»:
57. Գօնչա գու-երգում է, այստեղ՝ կկանչի:
58. Ճօրխ- թոխր, քլունգի կամ ուրագի նման աշխատանքային գործիք:
59. Փօս-հարթավայր:
60. Խօչ-սուր փայտ, ոստ:
61. Ֆադի-կնոջ անուն:
62. Ձենդիդ-գյուղ Արդվինի նահանգի Խոփա գավառում: Համշենցիներն այս գյուղի մասին ունեն նաև թևավոր խոսք՝ «Ձենդիդէ փարցէ կյաղ ա, Ջուրէ հիվանդի քսղ ա» (Ձենդիդը բարձր գյուղ է, ջուրը հիվանդի դեղ է): Նմանօրինակ թևավոր խոսքեր տարածված են նաև Հայաստանի մյուս գավառներում՝ «Ալաշկերու բարձր տեղ ա, օդ, ջուր հիվանդու դէղ ա», «Արծափը բարձրը գեղ է, ջուրն ալ հիվանդու դեղ է» (Ժողովրդական խաղիկներ, խմբագրեց Մ. Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, 1940, էջ 161):
63. Ջուրփիջի-գյուղ Արդվինի նահանգի Խոփա գավառում:
64. Արդալա-գյուղ Արդվինի նահանգի Խոփա գավառում:

65. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 334:
66. Աճառյան Հ., նույն տեղում, էջ 397:
67. Տե՛ս Քայել Մարգարօղլու.«Կան համշենցիներ, հատկապես երիտասարդների մեջ, որոնք իրենց բացահայտ հայ են համարում» զրույցը վարեց Ռ. Մելքոնյանը, «Հանրապետական», N 7 (49), Երևան, 2007, էջ 45:
68. Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, «Փյունիկ», 1991, N 1, տե՛ս նույնը «Իրան- նամէ», 1993, N 4, էջ 13:
69. Ըստ Ս. Վարդանյանի բանավոր հաղորդման՝ հիմնականը «ջօմէին» տարբերակն է, բայց երբեմն երգողներն ասում են իրենց գյուղի կամ մեկ այլ տեղանքի անունը:
70. Չէվաղնեցան-ծիվաղենի ասում են դափնեկեռասին (թուրք.՝ քարայեմիշ):
71. Գավուր-Գավառ տեղանուն կա Մաքրիալի մոտ:
72. Դա-դիմելածև տղային:
73. Քապչին-ևսնձրուկ (տառեխանմանների կարգին պատկանող ձկնատեսակ):
74. Քսւ-դիմելածև աղջկան:
75. Այս քառատողը նույնությամբ 1984թ. Ղազախստանի Չիրկինո գյուղում գրառել է Ս. Վարդանյանը, ինչն ապացուցում է, որ չնայած ժամանակային և տարածքային հսկայական տարանջատումներին, Թուրքիայի և Միջին Ասիայի կրոնափոխ համշենցիներն ունեն մշակութային անժխտելի նույնականություն (Տե՛ս «Չայն համշենական», գիրք 3-րդ, էջ 213):
76. Բէլչաղ-թուրքերեն «**balçak**» բառն է, բարբառի ազդեցությամբ «**belçağ**», նշանակում է սանձ, երախակալ, դնչակալ, կենդանիների դնչին հագցնելու ցանց:
77. Գերչաղ-թուրքերեն «**gerçek**» բառն է, բարբառի ազդեցությամբ՝ «**gerçağ**», նշանակում է «իրական», «իսկապես»:

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր (2 օրինակ) և համակարգչային շարվածքով (MS WORD ծրագրով), «Anal Armenian» (հայերեն), «Times New Roman» (ռուսերեն, անգլերեն, թուրքերեն) տառատեսակներով, 11 տառաչափով (ֆոնտով):

2. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, ունենա լուսանցքներ, ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածի վերնագրերը պետք է թարգմանված լինեն հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուների:

3. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են վերջում՝ ըստ որում, հղումներն ու դրանց համարակալումը պետք է անել ձեռքով՝ չդիմելով ծրագրի ավտոմատացված տարբերակին: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ հայերեն, с. ռուսերեն, p. անգլերեն և այլն: Ծանոթագրությունները բերվում են 10 տառաչափով, տողերի միջև բացվածքը՝ 1, բնագրի լեզվով, օրինակ՝

- Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. մասն առաջին., հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 379;
- Архив внешней политики Российской Федерации МИД РФ (далее – АВП РФ), ф.04, оп.39, п.232, д.53001, л.7;
- Насонов А.Н. История русского летописания XI - начала XVIII века. Очерки и исследования. - М., 1969. - с. 499;
- Ali Yaşar Sarıbay, 1976 Yılı Sosyoloji Konferansları. 14. kitap -"Ziya Gökalp ve Türk Devrimi", İstanbul 1976, s.89;
- 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf
- Hugh Poulton, Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish nationalism and the Turkish Republic, New York, New York University Press, 1997, p. 146;

ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԵՆԻՑ

Թուրքերեն եզրերն ու հատուկ անունները տառադարձվում են ժամանակակից թուրքերենում գրելաձևին և հնչողությանը համապատասխան. օրինակ՝ Mahmut – Մահմութ, Pamuk – Փամուք և այլն: